891 99
4-20

ՋՈՋԱՆՑ ՏՈՒՆ

ԿԱՄ

ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ

ՎԷՊԻ

ԵՐԵՔ ՓՈՓՈԽԱԿ

Յ. Բ. Ալիշանի Հրատարակեց

Խմբագրեց եւ հրատարակեց

ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ
Ալեքսանդրապոլ
Публичная библиотека

Վ. ԱԳԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
1910

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ.
1. Յառաջաբան	Ա—ԼԲ.
2. Թլէօլ Դաւթի խէքիմի . . .	1 — 36
3. Զոլանց տուն	37—101
4. Զոլանց տուն կամ Սասմայ ծոեր . .	103—123
5. Յաւելուած	123—124
6. Յանկ	124—128

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Բովանդակութիւն.

1. Զոջանց տան կամ Սասմայ ծռեր վէպի ցարդ հրատարակուած տասներեք հին փոփոխակները եւ նորերը ճիւղագրութեամբ։

2. Նոր փոփոխակների կարեւորութիւնը. վէպիս նշանակութիւնը. պատմականը, Մ. Աբեղեանի ուսումնասիրութիւնը եւ վէպիս լեզուական ու գրական արժէքը։

3. Զոջանց վէպի մեր ուսումնասիրութեանց եւ «Զոջանց վէպի պատմականը» աշխատութեան քննադատութիւնը։ № 10-ի Ղումրիկ Թագաւորն է № 17-ի Կումրին։

4. Մեր երեք փոփոխակների նորութիւնները։ № 16-ի «Արեւելից եւ Արեւմտոց» Թագաւորն է Հայոց արքան եւ Բիւզանդացոց կայսրը. դլխատման օրէնք. Զոջանց գիւցազներն աստղաբաշխ եւ սուրբ։

5. № 15. վկայութիւններ վէպիս նոր շերտաւորութեանց մասին. ձիեր, Բոգ-Դիտաֆին. Քուռկին Զալալին, ոչ քուրդ ջալալ ցեղի, այլ Զալալ հայ իշխանի ձիու սերունդ. Ֆրանկի պապը։

6. № 14-ի կանանց անուններ. Խոսրով Թագաւոր, Պարոն Պռոշ. Համլան ոչ Թէ օտար՝ այլ հայ իշխան Գրիգոր Պահլաւունին է. Պարոն Բուէք Ֆռնտայ՝ խաչակիր. Օհան Ագբակեցին՝ Ագբաթեցի։

7. Պարոն Աստղիկ Սասնոյ Թագաւոր եւ «չար» Երզնկացի. Աստղիկ դիցուհին արական անձն, Զմշկիկ սուլթանն իդական Շիտութեանց հաւանական պատճառները. կարեւոր հանգամանք։

8. Գրական արժէքի նմուշ. Քաջանց տունն Արշակունիք են. Սասմայ ծռերի Զոջանց տուն կոչելուս պատճառը։

9. Մեր այս երեք՝ № 14, 15 եւ 16 փոփոխակների խմբագրութեան եւ այլ հանդամանքներ։

---

§ 1. Արարատի ընթերցողներին անշուշտ յայտնի է, որ Զոջանց տուն կամ Սասմայ ծռեր մեր ազգային ժողովրդական վէպի մինչև մեր այս վերջին երեք փոփոխակների հրատարակութիւնն Արարատում՝ զանազան ժամանակ սկսեալ 1874—1906 թուականը լոյս են տեսել հետեւեալ տասներեք փոփոխակները.

1. Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ. Գարեգին Սրուանձտեանց, Կ. Պոլիս 1874. Մշոյ բարբառ խառն Բաղեշու։ Արտատպուած ի Матеріалы для изученія Армянскихъ Нарѣчій, Выпускъ II, Мушскій діалектъ էջ 1—27. К. П. Патканов, Санктъ Петербургъ 1875:

2. Դաւիթ և Մհեր, ժողովրդական դիցազնական վէպ, Մ. Արեղեան, Շուշի 1889, էջ Գ—ԺԸ+11—16. Մոկաց բարբառ։

3. Սասմայ ծռեր, Սասունցի Դաւիթ, ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ. Գարեգին սարկաւագ, Թիֆլիս, էջ Ա—ԺԸ+1—60. Արարատի բարբառով։

4. Նոյնը էջ 61—151, Մոկաց բարբառով։

5. Տղայ Դաւիթ և աղջիկ Խանդութի հեքիաթը. Արարատ 1895 ամի, թիւ ԺԱ, էջ 431—438, թիւ ԺԲ, էջ 484—487. Խ.(աչիկ) վ.(արգապետ). Տաճկահայոց բարբառների խառնուրդ, սակայն տիրողը Վանայ բարբառն է։

6. Սասունայ Դաւիթ, Խլաթայ բարբառով, Արարատ 1898, թիւ ԺԱ—ԺԲ, էջ 520[1]—525[2], անստորագիր. սակայն յայտնի է, որ Սարգիս Հայկունունն է։

7. Սասմայ փահլիւաններ կամ Թըլօր-Դաւիթ և Մհեր, Հայ-ժողովրդական դիցազնական վէպի նոր վարիանտ, Մոկաց բարբառով. Բ. Խալաթեանց, Վաղարշապատ 1899. էջ Ա—Է+1—74։

8. Էմինեան Ազգագրական ժողովածու հրատարակութեամբ Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց։ Հատոր Բ. ժողովրդական վէպ և հէքէաթ. հաւաքեց Ս. Հայկունի։ Ժողովրդական վէպ 1. Սանասար և Բաղդասար (Մոկաց ճիւղ) էջ 19—50. Մոսկուա-Վաղարշապատ 1901։

9. Նոյն. Հատոր Դ. հաւաքեց Ս. Հայկունի, Մոսկուա-Վաղարշապատ 1902։ Յաւելուած. Հայ ժողովրդական վէպեր. Դաւիթ և Մհեր (Շատախի բարբառով) էջ 369—398։

10. Նոյն, Դաւիթ և Մհեր (Արարատեան ճիւղ). Յաւելուած էջ 399—462։

11. Թլուատ Դաւիթ ժողովրդական վէպ, գրի առաւ Ա. Աբեղեան։ Արտատպուած Ազգագրական Հանդիսից. Թիֆլիս 1902, էջ 3—75. Մոկաց բարբառ։

12. Նոյն. Սասնայ ծռեր, Արարատեան բարբառով. Ա. Աբեղեան։ Արտատպուած Ազգագրական Հանդիսից Թլուատ Դաւթի հետ միասին, էջ 46—73. Թիֆլիս 1902։

13. Սասմայ ծռեր ժողովրդական վէպ. Նոր-Բայազէդի բարբառով. գրի առաւ Ե. Լալայեան, էջ 1—48. Արտատպուած Ազգագր. Հանդիսից (1906 ամի, թիւ 1, էջ 37—82) Թիֆլիս 1906։

Այս տասներեք փոփոխակների ճիւղագրութիւնները տպուած են մեր «Զոյանց Տան Պատմականը» աշխատութեան մէջ[1] հէնց այս կարգով և համարով, որով լինելու են այստեղ և մեր ցուցմունքները։

---

1. Արարատ 1907. Հոկտ.—Նոյեմբ. էջ 983—999. Արտատպութիւն էջ 4—48։

Այնուհետև հետզհետէ իմ տրամադրութեան տակ դրուեցան այս երեք նոր փոփոխակները, որ տպագրուեցան Արարատի 1909 թուականի համարներում[1]։

14. Մեր առաջինը «Թլէօլ Դաւթի խէքեաթ» (էջ 1—35). որ պատմել է Հայուձորայ անկշտանցի Կազարեան թառօն (§ 150) ստացել ենք Գիւտ քահանայ Աղանեանից. և կը նշանակենք № 14, ԳԿԱ. ՀՁԲ։

15. Մեր երկրորդը «Զոջանց տուն» (էջ 37—101). «Ասած է Մոկաց Հաղին գիւղացի Թումա Պետրոսեանը» (էջ 37). մեզ յանձնելէ հանգուցեալ Սարգիս Հայկունին=15, ՀԿԱ, ՄԲ։

16. Մեր երրորդը, «Զոջանց տուն կամ Սասմայ ծռեր» (էջ 103—123). գրի է առել Յ. Աւշեանը Գաւաշու բարբառով, որ տուել է մեզ հրատարակելու=16, ԱԿԱ. ԳՇԲ։

17. Այս երեք նոր փոփոխակներից առաջինի մի մասը դեռ նոր էր լոյս տեսել, երբ միաժամանակ Վիեննայի Մխիթարեանց Հանդէս Ամսօրեայ թերթում սկսուեց հրատարակուել տաճկահայ յայտնի բանահաւաք Տիգրան Զթունու «Սասմանց տուն, հայ ժողովրդական դիւցազնավէպի նոր վարիանտ, Կարկռու բարբառով»[2], որի տպագրութիւնը տակաւին չէ վերջացել.=№ 17, ԶՎՄ, ԿԿԲ։ Ահա և ճիւղագրութիւնը.

№ 14, ԳԿԱ, ՀՁԲ.

Աստղիկ Սասնայ քաղաքի թագաւոր[1]

Սուսան Խաթուն[1]—Ֆհաչանց թագաւորի լաճ[1].

Սանասար[2]—Սուռաթ խաթուն, Ֆաչանց թագաւորի աղիջկ[3] — Պաղտասար[2].

Մս. թա-գուհի[5] — Ճոչիկ Մհ.[4] — Սինամ[1]. Զէն. Յով[1]. — Կիւլիզար[4]. Թառլան Վէգօ[4] — Ճիւտ Կիւլակ[4].

Մելիք[5]. Տգա-Դաւիթ[6] — Խանտիւթ Կապոտ Կողայ թգ. աղջիկ[7]

Պզտիկ Մհէր[8]

1. Ա, § 2, 4։—2. Ա. § 4։—3. Ա, § 10, 14։—4. Բ, § 19։—5. Բ, § 20—21։—6. Գ, § 22։—7. § 113, 125։—8. ԺԲ, § 126։

1. Արարատ 1909. Մարտ էջ 1—16. Մայիս-Յունիս էջ 17—48, Յուլիս-Օգոստոս էջ 49—80. Սեպտեմբեր էջ 81—96 եւ Հոկտ.-Նոյեմբ. էջ 97—124.

2. Հանդէս Ամսօրեայ 1909. Թիւ 4 էջ 111—118. Թիւ 6 էջ 186—190. Թիւ 7 էջ 212—216 եւ Թիւ 9—10 էջ 274—279 (շարունակելի)։

№ 15, ՀԿԱ, ՄԲ.

Յէօվան[5] Հայուհի[2] — Մեծ Դաւիթ[1] — Մսրայ Մելիքի կին[3]. Վերդ[6]
Մելիք[2]

Պզտիկ[4] Թաւլան[6] Դաւիթ[4] — Խանաբեթ խաթուն, Խոյից, Իրանից[7].
Մհեր, պապկէ անուն[8]

1. Ա, § 1։—2. Ա, § 4։—3. Ա, § 5։—4. Ա, § 10—11։—5. Գ, § 61։
6. Ե, § 174։—7. Ը, § 257, 270։—8. Թ, § 379։

№ 16, ՀԿԱ, ՄԲ.

Արեբլից հայ թագաւոր[1]

Աղջիկ[1] — Աջմու թագաւորի տղայ[1].

Սանասար[2] — Քեռասուն ճող ծամ Գէօհար Բաղտասար[2] — թագաւորի աղջիկ
Զինմաչինայ թագաւորի աղջ.[3].

Մհէր[5] —

Վարդան[5]. Յէօվան[5] — Գէօհար[6]. Վերդ

Թլէօլ Դաւիթ[6] — Խանդիւթ, Հնդու Եամանար թագաւորի աղջիկ[7].

Մհէր[7].

1. Ա, § 1—2։—2. Ա, § 19։—3. Գ, § 75։—4. Բ, § 43—55, 100։
5. § 121—123։—6. § 140։—7. § 130, 136։

№ 17, ԶՎՄ, ԿԿԲ.

Հայոց խաչապաշտ թագաւոր Կումրի[1]

Մանիշակ[2] — Կռապաշտ թագաւոր[2].

Սանասար[3] — Բազդասար[3]

Փեառսուն-ճոզ-ծամ Գրհար[4].

1. Ա., § 1, 11։—2. Ա., § 10, 20, 24։—3. Ա., § 37—45։—
4. Ա., § 146, 171։

---

§ 2. Մեր երեք նոր փոփոխակները Արարատին տպագրութեան յանձնելով՝ խոստացել էինք մի յառաջաբան գրել[1], որով ի հարկէ պէտք է բացատրէինք այս երեքի ինչպէս և առհասարակ նոր փոփոխակների հրատարակութեան կարևորութիւնը։

Եթէ այսքան փոփոխակների հրատարակութիւնից յետոյ ևս վստահացայ այս երեքն ևս ի լոյս ընծայելու, պատճառը մեր այս ժողովրդական դիւցազնավէպի մեծ նշանակութիւնն է։

Մի ազգի կեանքը ոչ մի պատմագրութիւն չէ կարող այնպէս արտայայտել, ինչպէս ժողովրդի ստեղծագործութիւնը. և մեր դիւցազնական այս վէպը այնպիսի նշանակութիւն ունի մեզ համար ինչպէս Հոմերոսը Յոյների, Շահնամէն Պարսիկների, Նիբելունգների երգը Գերմանացոց և Կալեվալան Ֆինլանդացոց համար։ Այս դիւցազնավէպը ներկայացնում է հայութեան դարաւոր կռիւը բարբարոսութեան և հայ-քրիստոնէութեան մաքառումը մահմեդականութեան դէմ, յաղթանակի ապահով գիտակցութեամբ։ Իզուր չէ, որ Դաւիթը Մրսրայ Մելիքին ասում է. «Աստծուց այնպէս գրած չէ, որ մեր ազգը ձեր ազգի դէմ փախնի»[2], իսկ միւս դիւցազնը, Մհէրը, Քուլբնկի դևին յայտնում. «Աստծուց բացի մենք, մեր ազգը մարդից չենք վախենայ»[3]. Գերմանիայում առած դարձած խօսք, որ դարեր յետոյ Բիսմարկը շպռտեց իւր հայրենիքի ոսոխներին։ Ջոջանց տան վէպի այս երկու դիւցազների երկու խօսքը

---

1. Արարատ 1909, Թիւ 3, էջ 244։
2. № 10, Բ. էջ 412։
3. Անդ. Գ. էջ 454։

բնորոշում են մեր այս վէպի հիմնական գաղափարը։ Ապա այս վէպի մէջ երևում է հայ ժողովրդի դիւցազնների և իւր բարոյական և կրօնական սկզբունքները, հաւատալիքները, կենցաղը, յարաբերութիւնը, սովորոյթները, զգեստները. մի խօսքով ինչ որ կարող է մի նահապետական ժողովրդի կեանք ունենալ. ընտանեկան կեանքը և մանաւանդ կնոջ դերը, որ համարեա բացակայում է մեր պատմութեան մէջ, այստեղ ճշտօրէն արտայայտուած է ենեն։ Մի այսպիսի ազգային ժողովրդական վէպի փոփոխակները, եթէ կարող են նորութիւն տալ, մի նոր գիծ աւելացնել, պէտք է գրի առնել և չթողնել, որ նշանախեցն անդամ կորչի։

Ապա Արարատի ընթերցողներին մեր 1906 թուականից իւրեր այնտեղ հրատարակուած ուսումնասիրութիւնից, մանաւանդ այդ աշխատութեան վերջի մասը կազմող «Զոջանց տան կամ Սասմայ ծռեր Դաւիթ և Մհէր ազգային ժողովրդական վէպի պատմականը» երկից յայտնի է արդէն, թէ այդ վէպի զանազան փոփոխակներում գործող դիւցազների մեծ մասը հայ և օտար թագակիրներ, յատկապէս Է—ԺԳ դար ապրող իշխաններ, գլխաւորաւորապէս Մամիկոնեաններ, Արծրունիներ, այլ և Բագրատունիներ են. որտեղ մնացել են հնագոյն դիւցարանական (Պատիկ Մհէր, Պարոն Աստղիկ) և առասպելական պատմական զրոյցների (Հայկի և Արայի) հետքեր և այլն։ Ուստի և կարևոր են այն տեսակ փոփոխակներ, որտեղ երևան են գալիս նորանոր աշխարհագրական և անձնանուններ, որ լրացնելով հին փոփոխակները, բաց կանեն մեզ նոր հորիզոններ։ Մի քանի տարի զբաղուելով թէ Զոջանց տուն—Մամիկոնեանց և թէ Քաջանց տուն—Արշակունեաց վէպով, այլև Քէօռ-Օղլիով և կարդալով մեր ցարդ տպագրուած և անտիպ հէքաթներն ու նաղլները—զրոյցները, եկել ենք այն համոզման, որ շատերը պատմական աստառ ունին և այսպիսիները համարեա այն արժէքն ունին, ինչ որ Մ. Խորենացու Ա. գիրքը և առհասարակ նորա աւանդած առասպելներն ու զրոյցները, կամ Փ. Բուզանդացու մանաւանդ թէ Յովհան Մանդակունու վիպական պատմագրութիւնները։

Մեր վերոյիշեալ աշխատութեանց հետ համարեա միաժամանակ հետզհետէ լոյս տեսաւ Մ. Արեղեանի «Հայ ժողովրդական վէպը»[1], Սասմայ ծռերի մի ընդարձակ և բազմակողմանի ուսումնասիրութիւն, որ յիշատակելով վերոյիշեալ 13 փոփոխակները «նոր պատմուածքների անհրաժեշտութիւն» վերնագրի տակ ի միջի այլոց ասում է. «Նիւթի այս սակաւութեան պատճառով վէպի

---

1. Ազգագրական Հանդէս XIII. էջ 5—56. XIV էջ 38—68. XV էջ 5—52 XVII էջ 5—36. XVIII էջ 5—24։ Թիֆլիս 1906—1908։

կատարեալ ուսումնասիրութիւնն այժմ դեռ կարելի չէ։ Եւ եթէ հիմա նորից ձեռնարկում ենք այդ, այդ միայն նրա համար, որ կարծում ենք ժամանակ է այս խնդիրն անուշադիր չթողնել»[1]։

Ապա շեշտելով նոր փոփոխակների կարևորութիւնը շարունակում է. «Ժողովրդական պատմուածքի, առանձնապէս վէպի վերաբերեալ ոչ մի բան անուշադիր չպիտի թողնել։ Ինչքան էլ նման պատմուածքներ տպուած լինին, նոր պատմուածքը միշտ մի որ և է նորութիւն, կեանքի մի գիծ, սովորութիւն կամ հաւատալիք, ժողովրդական մի նոր աշխարհայեցողութիւն և այլն մէջ կը բերէ։ Էլ չենք ասում թէ նոր պատմուածքի մէջ կարող են այս կամ այն դիպուածը փոքր ինչ ուրիշ տեսակ պատմուած լինել՝ որով մի պատմական յիշողութիւն կամ առասպել աւելի կարող են պարզուել։ Որքան էլ աղճատուած և աննշան երևան և նոյն իսկ անիմաստ թուին վէպի պատմուածքները,—ինչպէս և ամեն ժողովրդական բանահիւսութեան արդիւնք,—դարձեալ ունեն իրենց արժէքը։ Մի բառ, մի խօսք մի յատուկ անուն լոկ կարող է երբեմն բանալ ուսումնասիրութեան առաջ մի ամբողջ պատմական դիպուած, մի հնացած պատմական երևոյթ և աւելի ևս հասկանալի դարձնել վէպը։ Կատարեալ ուսումնասիրութեան համար ոչ մի պատմուածք անուշադիր չպիտի թողնել, ուստի և անհրաժեշտ է, որ շատ տեղերի և բազմաթիւ պատմուածքներ ունենանք»[2]։

Ընդունելով հանդերձ այս դիտողութեանց ճշտութիւնը պէտք է սակայն խնայել և ժամանակն ու աշխատանքը. և նոյն իսկ ուսումնասիրութեան գործը դիւրացնելու համար մենք պէտք է փոփոխակների ընտրութիւն անենք ամեն կողմից և լոյս ընծայենք նոր փոփոխակներից այն, ինչ որ նոր է կամ տարբեր, բաց թողնելով այն՝ ինչ որ անարժէք է. օրինակ կրկնութիւն նախընթաց փոփոխակների, ուրեմն կրճատումներով, որի համար սակայն քաջ հմտութիւն անցեալ փոփոխակների ինչպէս և զգուշութիւն է պէտք։ Այս տեսակէտով մենք աւելորդ ենք համարում Տ. Զթունու կարկառու բարբառի փոփոխակին կից գրական լեզուով թարգմանութիւնը. դժուար հասկանալի բարբառների համար պէտք է կամ ծանօթութիւններով և կամ լաւագոյն ևս կցուած բառարանով բաւականանալ։

Այնուհետև մոռանալու չէ լեզուն ու գրական արժէքը։ Հայերէնի լեզուագիտական ուսումնասիրութեան մեծ զարգ կը տայ բարբառների ուսումնասիրութիւնը, որ մեզնում անցեալ դարու վերջերից սկսուել է, ուստի ցանկալի էր Զոլանց տան

---

1. Ազգագր. Հանդէս XIII. էջ 15։
2. Անդ. XIII, էջ 16։

վէպը գոնեա նշանաւոր բարբառներով ունենալ։ Այս կողմից ցարդ գրի առնուածներից բարեխղճութեամբ և հմտութեամբ է կատարուած Տ. Զիթունունը։ Այսպիսով միւս կողմից կը հարստանայ մեր աշխարհաբարը նոր բառամթերքով և լեզուն գեղեցիկ, աշխարհաբարին յատուկ արտայայտութիւններով։ Աշխարհաբար գրող լաւագոյն հեղինակները լեզուի կողմից նոքա են, որոնք գրաբարի հետ միասին լաւ տեղեակ են մի որ և է բարբառի, առաւել ևս լաւ, հարուստ, ճոխ և պատկերաւոր կը լինի լեզուն անշուշտ, եթէ մի քանի կամ բոլոր բարբառներին լաւ ծանօթ լինին մեր հեղինակները։ Վերջապէս պէտք է ուշք դարձնել այս վէպի գրական բանաստեղծական արժէքի վերայ, որով ճոխանալով այս վէպը կարող է և այս կողմից մեր գրագէտներին և բանաստեղծներին կրթիչ հանդիսանալ, մինչև որ կը գայ սպասուելիք հայ Հոմերոսը կամ Ֆիրդուսին և թարգման հանդիսանալով հայ ժողովրդի՝ նորա մտքի, սրտի և խանդի այս արգասիքի բոլոր փոփոխակներից կը հիւսէ մի ամբողջութիւն, որ նոր լինելով հանդերձ կամփոփէ իւր մէջ ժողովրդի ստեղծագործութիւնը։

Մեր ժողովրդական բանահիւսութեան մէջ կան և այլ բարձր գրական արժանիքներ ունեցող, օրինակելի, ընտիր և հրաշալի ստեղծագործութիւններ։ Բաւական է ուշադրութեան առնել Թոստամ Զալի վէպը, որի նիւթն օտար լինելով հանդերձ՝ հայ ժողովուրդը վերամշակել, հայացրել է իրեւ ինքնուրոյն մի ստեղծագործութիւն։ Բազմաթիւ հրատարակուած փոփոխակներից առանձնապէս ուշադրութեան արժանի է Գարեգին վարդապետ Յովսէփեանինը ուսումնասիրութեամբ [1]։

§ 3. Տեսնենք այս տեսակէտներով մեր երեք փոփոխակները։ Բայց նախ ուզում ենք № 17-ի, Տ. Զիթունու Կարկառու բարբառով փոփոխակի տուած նոր անձնանունների մասին խօսել։ Այսպիսով կերևի թէ ինչպէս մի նոր անուն լոյս է սփռում նախորդ փոփոխակներում մութ մնացած կէտերի վրայ։

Յայտնի է ընթերցողներին, որ Զոջանց տան վէպի փոփոխակներում նախ և առաջ մեզ հետաքրքրում է պատմականը։ Մեր մամուլը մինչև այժմ այդ աշխատութեանց մասին կամ լուռ է մնացել մեզ անհասկանալի պատճառով և կամ լոկ գրուատել է, բայց քիչ քննադատել։ Այսպէս Գրիգոր Բալասանեանը խօսելով Բ. Խալաթեանի «Սասմայ փահլիւաններ կամ Թըլօր-Դաւիթ և Մհեր և Ա. Աբեղեանի «Թլուատ Դաւիթ» հրատարակութեանց մասին ասում է. «Նորերս «Արարատում» կարդացի Ստ. Կանայեանցի մի շատ հետա-

---

1. Թոստամ Զալ. ժողովրդական վէպ (Մակաց բարբառով)։ Արտատպուած Ազգագրական Հանդիսից։ Թիֆլիս 1905։

քըրքական ուսումնասիրությունը[1]»։ Այս վերաբերում է մեր Արարատի 1906 թուականի չորս համարներում տպագրածին[2]։ Մինչդեռ Ստ. Մալխասեանը առանց այս ի նկատի ունենալու, քննության առնելով սոյն նիւթի միայն շարունակությունը, որ լոյս տեսաւ նոյնպէս Արարատում[3] և առանձին արտատպությամբ, իւր մի ընդարձակ բանասիրականում խօսելով մեր Քաջանց տան [=Արշակունեաց[4]] վէպի մասին Տփխիսում արած դասախօսության առթիւ և անցողակի քննության առնելով և «Զոջանց տան պատմականը» յանկում է հետևեալ եզրակացության. «Չէ կարելի ասել, որ համեմատությունները բոլորը աջող են և համոզիչ. բայց աջողած համեմատությունների շարքը ստիպում է ընթերցողին խոստովանել, թէ այդ նմանությունները լոկ պատահական երևոյթներ չեն, այլ թէ արդարև կայ ծննդաբանական կապ եօթներորդ դարի հայ պատմության ու նշանաւոր գործիչների մէջ մի կողմից և Սասմայ ծռերի կամ «Զոջանց տան» հերոսների ու նրանց գործերի մէջ միւս կողմից[5]»։

Մեզ թուում է որ քննադատը անյաջող համեմատությունները պէտք է յառաջ բերէր և այն էլ հիմնաւորուած, որպէսզի հեղինակին առիթ արուի կամ նորանոր ապացոյցներով հանդէս գալու և կամ համոզուելով քննադատի զօրեղ առարկության հրաժարուի իւր թեզիսից։ Յամենայն դէպս «աջողած համեմատությունների շարքն» էլ բաւական է մեզ մեր տեսության վրայ պնդելու նորանոր հատուկտոր ապացոյցներով, ապագային թողնելով նիւթի ամբողջական վերամշակությունը։

Կան սակայն մեր Զոջանց վէպում անձնանուններ, որ ոչ մի և ոչ իսկ տնյաջող փորձի չէին ենթարկուում, յատկապէս Ղումբիկ

---

1. «Զարկ» շաբաթաթերթ 1907, № 5. էջ 71. Տփխիս։

2. Մամիկոնեանց պատմ. եւ Յաւելուած. Արարատ 1906. Ապրիլ էջ 528—542. Յունիս—Յուլիս էջ 597—605. Օգոստ.—Նոյեմբեր էջ 712—752 եւ Դեկտեմբեր էջ 861—879։

3. Արարատ 1907. «Զոջանց տան... պատմականը» Հոկտ.—Նոյեմբեր էջ 984—1008 եւ 1908. Յունուար էջ 102—124։

4. Քանի որ Քաջանց տան վէպի մասին մեր այս յառաջաբանում յետոյ յիշատակութիւններ են լինելու եւ մեր այդ վէպի ընդարձակ ուսումնասիրությունը տակաւին լոյս չի տեսել, ուստի ընթերցողները կարող են առժամանակ ի նկատի ունենալ Ստ. Մալխասեանի այդ յօդուածը եւ մեր նամակը Տփխիսի Հովիւ շաբաթաթերթում 1908 ամի. № 18. Իսկ Քաջանց տան վէպի երեք փոփոխակներից յատկապէս «Խոսրով Քաջաւորը» (Ազգագր. Հանդէս XIV, էջ 86—89. Թիֆլիս 1906)։

5. «Մշակ» լրագիր 1909. № 11-ի թերթում. էջ 2—3. Թիֆլիս։

խաչապաշտ թագաւորը, որի աղջիկն առնում է կռապաշտ թագաւոր [№ 10, էջ 995—996 (14—15)]։

Բոլոր Ադրամելիքի և Սանասարի գրոյցը բովանդակող փոփոխակներից № 1, 3, 4, 6, 8, 10, 12, 13, 14 և 16, մանաւանդ վերջնից, պարզ երևում է որ այդ Հայոց թագաւոր է, իսկ № 13-ը արդէն ունի «Պապ Կապուտկոզի թագաւոր»։ Արդ ո՞վ է այդ Ղումրիկը, ո՞ր հայ թագաւորը կամ գոնեա իշխանն է։ Եւ որովհետև մեր հայ թագակիրների մէջ չկայ մի այնպիսի անուն, որ թէկուզ հեռաւոր նմանութիւն ունենար այս անուան, ուստի ես մտածում էի նախ քան № 17-ի գոյութիւնն իմանալս այսպէս։ Մեր վէպում թագակիրները կոչւում են համարեա միշտ քաղաքների անունով. Կաղզուանու ամիրայ, Բաղդըտու խալիֆայ (№ 1), Կապուտկոզի թագաւոր (№ 10) Մարայմելիք և այլն. և ինչպէս պաշտօնի անուն արաբերէն ամիրայ բառը մի տեղ որ և է անհասկանալի պատճառով դարձել է անձնանուն Ամիրան[1], այնպէս էլ կարող էր Կապուտկոզի տեղ բռնել Է—Ը. դարերում նոյն կողմերը արդէն յայտնի Կումայրի-Կիւմրին, այժմ Ալեքսանդրապոլ։ Բայց Կումրիի թագաւորը Կումրի հնչուելով փոխուել դարձել է Կումրիկ, ինչպէս հիմի, հիմիկ, պատի, պատիկ. իսկ Կումրիկը հնչուել է Ղումրիկ, ինչպէս որ ցարդ հայերն ասում են Կուբրան, Ղուբրան, Կուբան և Ղուբան, որ և համարուել է անձն, թագաւոր։ Արդ № 17-ի «Հայոց խաչապաշտ թագաւոր Կումրի»-ն գալիս է միանգամայն հաստատելու մեր այդ ենթադրութիւնը, որ ժամանակին միայն ծանօթներիս ժպիտն էր յարուցանում[2]։

Կումրի թագաւորի դուստր Մանիշակի անցքը, որին նման են և այլ փոփոխակներ, մեզ յիշեցնում է Տիգրանուհու (և Ա.ժդահակի) զրոյցը, և այս կարծիքին ոյժ է տալիս դիւցազնուհու այս կամ այն դիւցազնի հոյր լինելը (№ 1, 6, 12, 13 և մեր այս 17-ը)։

---

1. «Կապուտկոզի Ամիրանի մօտ... ասաց Ամիրան». որ ունի հետեւեալ ծանօթութիւնը. «Դաւթի հանները, Խանդութ-Խաթունի հայրը» (Դր. Բալասեան. Պատիկ Մհեր. VII, էջ 7. Բաթում 1904)։

2. Նոր-Բայազիտի հայոց դպրոցի ուսուցիչ Սարգիս Նասխիդեանցն ինձ պատմեց, որ իր պապը Դորու գաւառի Ախալ-Սոփէլ գիւղից. Անուց զաղթածներ, ասում է, եղել. «Երբ մենք թողեցինք Կումբրի գնալ եւ աղօթել. մեր գործն այլեւս յաջող չէ գնում. իսկ մեր ոնք, ո՞ւրդի, գնում էին Օնի աղօթելու»։ Ակնայեղից երեւում է մասամբ եւ հասկանալի դառնում Կումրիի նշանակութիւնը մեր վէպում, այլ եւ այն, որ Կումրին եւ Օնին, այսինքն Անին, նոյնն են համարուել կամ մէկը միւսի տեղ բռնել. ինչպէս որ Բաբելոնի տեղ Բաղդատը, սորա տեղ Մուսուլը, որ եւ շփոթուել է եւ ծուլուել Մարայ՝ Եգիպտոսի հետ եւ այլն։

Ինչ վերաբերում է անուան պէտք է ասել Տիգրանուհի յատուկ անուն չէ, ինչպէս և անոյշ և դուխտ վերջաւորուած բառերը, այլ մէկի դուստր կամ քոյր է նշանակում, այնպէս որ գուցէ թէ Տիգրանուհու իսկական անունն է Մանուշակ, Նուբար-Նունուֆար[1], և կամ գուցէ նորան փոխարինել են նման պարագաներում համանուններ յետագայ դարերում։ Մանուշակ անուան մենք հանդիպում ենք և մի այլ հեքաթում, «Անգին Բիլբուլ ու տիկին Մանուշակ», որ նոյն տողում կոչւում է Կիւլլի փէրի[2]։

§ 4. Այժմ դառնանք մեր երեք նոր փոփոխակներին։

№ 16-ը նման է շատ բաներով և պատմուածքի ընթացքով № 17-ին. ունի հետևեալ նոր գործող անձերը. Հնդու Եամանար թագաւոր, Կլիճ-Բաթման և Քեամուսէ-Քեաշան օտարներ, և հայ Վարդան։ Առաջինը մենք չգիտենք ով է, երկրորդը յիշեցնում է մեզ Կլիճ (=սուր) մակդիրով միջնադարեան թուրք սուլթան Կլիճ-Արսլանի նման մինը Սասունի հարաւում, ինչպէս որ կայ Բաթմանայ Բիւղէն. Քեամուսէ Քեաշանը թուում է Շահնամէից անցած. իսկ Վարդանը՝ անշուշտ Մամիկոնեան ծանօթ համանուն քաջերից մինն է։

Գլխաւորն այն է, որ այս վէպով պարզւում է մեր հէքաթներում յաճախ գործածուած «Արևելից» և «Արևմտոց» թագաւոր անորոշ բառերը։ Զնայելով որ Մ. Խորենացին Հայոց աշխարհը «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» է կոչում, բայց և այնպէս մեր այս փոփոխակում «Արևելից թագաւոր» (№ 16, § 1, 101, 111) Հայոց թագաւորն է։ «Արևելից տուն» է կոչւում Մեծ Հայքը և ԺԲ դարու յիշատակարաններում[3] անշուշտ «բնիկ հայկազանց աշխարհը» Կիլիկիայից տարբերելու համար։ Իսկ Արևմտոց կամ Արևպտոց թագաւորը որ յիշւում է և մի այլ փոփոխակում (№ 1, Ե, էջ 15) Բիւզանդիոնը[4] պէտք է հասկանալ։

Հետաքրքրական է և սորա մի իրաւագիտական տեղեկու-

---

1. Գերմանացի գիտնականներ Բելկ եւ Լեհման բազմաթիւ փաստերով ապացուցեցին, որ ոչ թէ Համիդ-Դիարբեքիրն է մեր հին Տիգրանակերտը, այլ այժմեան Ֆարկինը (Նփրկերտ, Մարտիրոսաց քաղաք)։ Արդ Տայլորը Ֆարկինի տեղական հայերից լսել է, որ այդ քաղաքը շինել է Նուֆար [=Նուբար թէ Նունուֆա՞ր] Տիգրանի քոյրը (C, X. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, էջ 406, 539. Berlin 1910):

2. Էմինեան Ազգագր. ժող. Գ. § 33, էջ (217—225) 217, 220, 221. Մոսկուա-Վաղարշապատ 1902։

3. Սամ. Անեցի. Յաւելուածներ. Գ, էջ 213։ Ե. էջ 240. Վաղարշապատ. 1893։

4. Մանանայ էջ 171—214, թիւ 4—6 հեքաթները Բաջանց տանգրոյցի հետքեր ունին. Երազատեան էլ կարծես Արշակ Բ. է։

թիւնը։ «Տղով կնկայ» և ծծկեր երեխաներ ունեցող մօրը պլխատել չի լինի (№ 16 Ա, § 14—22. Տես և № 17. Ա, § 41—44). ճիշտ նման Պարսից Կարնամակ վէպում Արտաւանի դստեր, Շապուհ Ա.-ի մօրը, պատահած անցքին[1]։ Պարսկական այս օրէնքը հաւանօրէն և հայկական է։ Պարսից մեծ վէպի Շահնամէի ազդեցութիւնը ևս մեծ է, մանաւանդ մեր Քաջանց տան վէպի վրայ. օրինակ «բազպանդը», որով Ռուստամը Զոհրապին ճանաչում է, կայ թէ Քաջանց և թէ Զոջանց տան վէպում (№ 11, Դաւիթ և Պզտիկ Մհեր, Ա., էջ 38)։ Այսպէս էլ Բաղդասարին դարան լարելով փշալից փոս քցելը (№ 16, Դ, § 103—108) յիշեցնում է Ռուստամի Զալի վախճանը։ Բ. Խալաթեանի, Գարեգին վարդապետի և Ս. Հայկունու հրատարակութիւններից երևում է, որ Շահնամէի դիւցազները դարձել են մեր Զոջանց տան դիւցազների ազգական և շատ անգամ արտասանում նոյն խօսքերը, երդումը կամ աղօթքը։ Շահնամէն և Կարնամակը յայտնի են եղել և հին հայերին այժմեան ընագրից սակաւ ինչ տարբեր բովանդակութեամբ, ինչպէս երևում է Մ. Խորենացու աւանդածից[2]։

Ոչ պակաս հետաքրքրական նորութիւն է Թուր Կէծակի, Քուռկու Զալալի, Թամք Սատաֆի և Գուրզն ի դորոգի[3] ծագումն ու գործածութիւնը (№ 16, Բ, § 27—30. 58—61. լաւագոյն ևս № 17, § 58—64) և անդրանիկ որդու Վարդանի աստղաբաշխ կոչումը, որ «աստղեր կը ճանչնէր»։ Մի այլ ղրոյցում այսպէս է բացատրւում այս բառը. «Ես աստղաբաշ եմ, ես էլնեմ դուռ աստղերը իշկամ, նեղութենի էղիք կիմանամ ձեղի կը խասնեմ, իմ շնորքս էս ա»[4]. ուրեմն աստղաբաշխը աստղագէտի մտքով է, որ հնագոյն ժամանակներում, մանաւանդ միջին դարերում իմաստութեան հոմանիշ էր. Իկոնիոնի սուլթան Ալատինի մասին ասուած է «այր իմաստուն և աստղաբաշխ[5]»։ Այսպիսի յատկութիւն ունին այլ փոփոխակներում Զոջանց տան այլ դիւցազներն ևս Սանասար, Բաղդասար, Զէնով Յովան և այլն։ Զարմանալի է, որ մեր այս դէ միամիտ դիւցազներին այսպիսի յատ-

---

1. Ֆ. Թիրաքեան. Արտաշիր Պապական Կարնամակ. ԺԳ. § 18—19. էջ 25. Պարիզ 1907։

2 Խորեն. Ա. «Ի Պարսից առասպելից էջ 62—64 եւ «Առասպելք Պահլաւկայ» Բ. հ. էջ 150—151, Վենետիկ 1865։

3. Արդեօք «Գուրզն ի դորոգի»ն կապ չունի՞ զօրաւոր «Գորոզոյ խաչի» հետ (Վարդան պատմ. Հէ, էջ 132. Վենետիկ 1862. Զամչեան Գ. ԺԹ. էջ 150)։

4. Ազգապր. Հանդէս XIX. «Զանգեզուր» էջ 124. Թիֆլիս 1910։

5. Սմբատ Կունդոստապլ. Տարեգիրք, էջ 119. Պարիզ 1859։

կութիւններ են վերագրում, մինչև իսկ սուրբերի զօրութիւն։ Դաւիթը իւր ձեռքն անիծում է Թուլանում է։ Մհէրին անիծում է, և ասողն աւելացնում է. «Նորանց ցեղի բերանը կրակ էր, ինչ անիծէր, այնպէս կը լինէր» (№ 14, § 129, և էջ 36)։ Արդեօք այս գաղափարը նախնական էր, որ բղխում էր Զոջանց տան միհրական ծագումից, թէ յետոյ է աւելացել, երբ Մամիկոնեանք խնամութեամբ՝ Սահականոյշի և Համազասպ Մամիկոնեանի ամուսնութեամբ Լուսաւորչի տան ժառանգ դարձան։ Նման գաղափար կայ Լոռու Դսեղ գիւղում ապրող Թումանեանների մասին, ինչպէս մեզ պատմել է մեր բանաստեղծ Յ. Թումանեանը, որոնք Մամիկոնեան են համարւում։ Շեշտենք և այն, որ Զոջանց տան փոփոխակ առաջին անգամն է հրատարակւում Դաւաշու բարբառով, որ և լեզուական մի քանի ինքնուրոյնութիւններ ունի։

§ 5. Ինչ վերաբերում է № 15-ին՝ պէտք է ասենք, որ չնայելով Մոկաց բարբառով եղած հինգ փոփոխակների հրատարակութեան (№ 2, 4, 7, 8 և 11)՝ մենք հրատարակեցինք և այս իբրև մի բաւական ընդարձակ և հանգամանօրէն պատմուածք։ Չպէտք է անուշադիր թողնել և պատմող Թումասի այն դիտողութիւնը, որ ըստ բանահաւաք Ս. Հայկունու էր. «Իւր ասածը ստոյգ կը համարէ, իսկ ուրիշ ճիւղերը նոր յերիւրուած աւելորդաբանութիւն» (№ 15, էջ 39, ծանօթ. 2)։ Ուշադրութեան արժանի է այս հանգամանքը. հմուտ վիպասացներ արդէն նկատել են, որ մեր վէպում նորութիւններ, ուրեմն դարերի շերտաւորումներ են աւելանում, շատ անգամ ի հարկէ տեղական։ Նոյնն է հաստատում Վարդան Մոկացին, «Որ Հայր մերի պէս սերտած էր, կասէր շատ վարժ..., որ չէր կարող իւր գիտցածին վերայ մի նախադասութիւն անգամ աւելացնել կամ պակասացնել. նա իբրև Աստուծմէ շնորհեալ մի աւանդ կը պատմէր, շատ անգամ լրջաբար կը զայրանար այն անձանց վերայ, որ իւր գիտցածէն աւելի կը պատմեն և այդ աւելին յերիւրուած, շինծու կը համարէր, հետևաբար ասելն ևս մեղք է, քանի որ ողորմիներ կան, ինչ որ աւանդուած է, այնպէս ասելու է, կասէր նա» (№ 8, էջ 50. հմմտ. № 14, էջ 2, ծանօթ. 1)։

Բացի այդ այստեղ կան հետաքրքրական նորութիւններ։ Այս կողմից նախ աչքի է ընկնում Քուռկիկ Ճալալ ձիու ծագումը, մասամբ և բացատրութիւնը (№ 15, էջ 63—64 ծանօթ.)։ Այս ձին յիշւում է և Քաջանց տան վէպում, որի գլխաւոր դիւցազն է Արշակ Բ. Անուշ և Շիրին շահ անունով։ Եւ որովհետև այստեղ նկարագրած Քուռկի Ճալալու ծագումը շատ նման է Քէօռ-Օղլու Ղռաթ ձիու ծագման, ուստի մեր ունեցած այլ ապացոյցների վրայ աւելանում է մի նորն ևս, որ Քէօռ-Օղլին մեր Արշակ Բ. է. իսկ այդ ձին յիշեցնում է մեզ Տիրան Բ.-ի, Արշակ Բ.-ի հօր, հռչակաւոր

Ճարտուկ Ճանճկէնը, որի համար պատերազմ ծագեց Պարսից և Հայոց մէջ[1], և որը, եթէ Քաջանց վէպում «Թուր Կէծակի» հետ միասին յիշուած «Բոզ ձին Աբսկին» չէ, անշուշտ մեր Զոքանց տան մի փոփոխակում «Քուռիկ Ջալալու» հետ անմիջապէս յիշուած «Բօզբէ-Դաւին[2]» է (№ 6, էջ 523[2]). Այս երեք անուններից վերջինը նշանակում է սպիտակ, պիսակաւոր կամ խայտեր ունեցող ձի, որ յատուկ է Քաջերին[3] և Քաջքերին[4], ուրեմն և Քաջանց տան դիւցազներ Ջիւան շահ—Տիրան Բ.-ին և Շիրին շահ—Արշակ Բ.-ին։

Բայց ինչ է նշանակում Ճալալի կամ Ջալալի Քուռկիկ ձին։ Այդ անունով մի քուրդ ցեղ այժմ էլ բնակւում է Հայաստանում, որքան մեզ է յայտնի, Մասիսի շուրջը. և որովհետև քուրդերը յայտնի են իրանց ձիասիրութեամբ, լաւ նժոյգներով, որոնց ցեղարանութիւնը պահւում է թղթով սերունդէ սերունդ, ուստի Քուռիկ Ճալալի կարող է նշանակել այդ ցեղի ձի, ինչպէս ասում են արաբական, անգլիական ձի և այլն։ Պէտք է կարծել, որ Քուռկիկ Ջալալին յիշուել է և Քէօռ-Օղլու դիւցազներգութեան մէջ, ուստի

---

1. Փ. Բուզանդ, Գ. Ի—ԻԼ. էջ 49—58. Վենետիկ 1889.

2. Այս ձին «Բոզ-Բէդաւին» յիշւում է Ասլան աղայի ժողովրդական երգում (Գարեգին սարկ. Յովսէփեանց «Փշրանքներ» ժողովրդական բանահիւսութիւնից էջ 5—9. Թիֆլիս 1895). եւ «Մոկաց Միրզէն» երգում «Բոզ-Դիղաֆին» անունով (Անդ, էջ 19). Երկու ձին էլ մի աւելի հաստատուն ապացոյց են Արշակ Բ.-ի Քէօռ-Օղլին լինելուն։ Ինչպէս Քէօռ-Օղլին բացի Ղրաթից ունի եւ մի Բ.-ը Արաբաթ կամ Դորաթ. այնպէս էլ Արշակ Բ.-ի հայր Տիրան Բ.-ը պիտի ունեցած լինի. որ սակայն Խորենացին վերագրում է Տիրան Ա.-ին (Խորեն. Բ. ԿԲ). Դատաբ. Դատաբէ, Դատաբէն նախարարի անունը. որ յիշւում եւ Բուզանդում Խոսրով Բ.-ի ժամանակ եւ երկուսի մէջ էլ Բզնունի է կոչւում, Դիդաֆին է, ինչպէս որ Տատեանք—Տատեանը (Խորեն. Բ, ԿԲ. 140) փոխուել է Տէաաէն (Ալիշան, Այրարատ. Ի. § 209. էջ 517). Ղրաթը հաւանօրէն Տրդատ—Արտաշէսի «սեաւ գեղեցիկ» ձին է, ինչպէս որ Թուր կէծակին կամ Հաւլունի սուրը. որ յիշւում է եւ Դաշանց Թղթում, նորանն է, ապա անցած Տրդատ Մեծին եւ իր յաջորդներին. բայց այս մասին այլ տեղում։

3. Ատենահաս Ս. Սարգիսը սպիտակ կամ բոզ ձի ունի։ Վասակ սպարապետի որդի Մուշեղ Մամիկոնեանն էլ «ճերմակաձի» է (Բուզանդ. Ե. Բ. 194. Վենետիկ 1889. Հմմտ. Մեսրոպ երէց. Պատմ. մնացորդաց Հայոց եւ Վրաց. Ե. էջ 87—88 Մադրաս 1775. Սոփերք Զ. ԺԱ. էջ 70. Վենետիկ 1853).

4. Սեբէոս. Պատմ. Գ. Գ. էջ 38. Ս. Պետերբ. 1879.

և Առաքել Դաւրիժեցին Քէօռ-Օղլուն համարում է ԺԶ. դարու վերջերում ապրող Ջալալի քուրդ իշխան[1]։ Սակայն ով որ կարդացել է Ա. Դաւրիժեցու պատմութեան մէջ Ջալալի քուրդերի, այս մարդ հրէշների, արարմունքը մեր երկրում, դժուար կարողանայ հաւատալ, որ մի այսպիսի հրեշ ցեղի հրեշաւոր իշխանը մի երկրի պատուհաս լինելով հանդերձ՝ նորա ժողովուրդներին սիրելի դիւցազն դառնայ։ Գուցէ կարելի էր կարծել, որ Ջալալիների մէջ էլ եղել է որ և է մէկը Քէօր-Օղլի անունով, ինչպէս որ 1795—1840 թուականը Տրապիզոնի կողմերում[2]։ Բայց երբ Ա. Դաւրիժեցին Քօռ-Օղլու մասին յաւելացնում է. «Որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշուղներն եղանակեն» և անմիջապէս յարում. «Գղիր-օղլի Մուստաֆա ըէկ ռ. մարդով (ապստամբեցաւ ի Թագաւորէն). և սա ևս ընկեր է Քօռօղլուոյն՝ զոր յոլով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ», այդ ցոյց է տալիս, որ խօսքը ժողովրդական վէպի դիւցազն Քէօռ-Օղլու մասին է, որ նա շփոթում է մի համանուն ճալալի իշխանի հետ։ Քանի որ Քէօռ-Օղլուն է, վերագրւում միջնադարեան ասպետների խօսքը. «Երբ վառօդն երևեցաւ, անձնական քաջութիւնը կորաւ», ուստի նա վառօդի գիւտի ժամանակակից է համարուել, և ուրեմն դիւցազն Քէօռ-Օղլին ԺԶ. դարու վերջերից շատ առաջ էր ապրում։

Արդ մեր այս փոփոխակի ծանօթութեամբ մի այլ մեկնութիւն է տրւում Քուռկիճ Ճալալուն։ «Ճալալ էլ ի՞նչ է.—Ճալաթ, այսինքն Ճալաթ, ամենին տաս ոտքի տակ, զարկես սպանես». ուրեմն ճալաթ նշանակում է ըստ այսմ Ջալլաթ, այսինքն դահիճ. մի ժողովրդական անարժէք լեզուարանական բացատրութիւն, որով այս երկու բառերը պատահական նմանութեամբ կապւում են։ Այսօր էլ ժողովուրդը Գեղարդ ուխտ գնալուց յետոյ՝ ծնած տղայի անունը Գեղամ դնելով իրար է կապում այդ ոչ մի նմանութիւն չունեցող անուններն էլ լոկ պատահական սկզբնական հնչիւնների նոյնութեամբ, որ մեզ յիշեցնում են Խորենացու Արագած, Մասիս և այլ անունների բացատրութիւնները։ Սակայն Ջալաթ կամ Ջալադ ձևը ունին միայն մի քանի փոփոխակներ, 17 փոփոխակներից ընդամենը երեքը[3]. մինչդեռ մնացեալները,

---

1. Ա. Դաւրիժեցի Պատմ. Է. էջ 87. Վաղարշապատ, 1896։

2. Ս. Հայկունի. Յուսէփցի Ազգատոհմ եւ տարօրինակ աւապակ Արքիեօմ Տրապիզոնի հայ գիւղերու մէջ. § 7. էջ 35. Վաղարշապատ 1905։

3. «Քուռկէ—Ջալլաթին (№ 3 Ա. փոփոխակ. Գ. էջ 29. 30). Քուռկէ—Ջալադին» (№ 12. դ. էջ. 66—68. Քուռկէ—Ջալադ. դ. էջ 72) եւ «Քուրկէջալաթ» կամ «Քուրկէջալադ» (№ 13 էջ 7—8 (41—42). 12 (46). 22—24 (56—58) եւայլն.

բացի երկուսից (№ 1 և № 5), որ բնաւ չեն յիշում, բոլորն էլ ինչպէս և Ջալաթ բացատրողը ունեն Ջալալի[1], որ մեզ թուում է ճշտագոյնը և Ջալալ անուան սեռականը։

Ջիերը ընդհանրապէս կոչւում են երկրի անունով. ինչպէս այժմ մեզնում ասում ենք Ղարաբաղի ձի, Արարատոյ ձի՝ Արարատ, և նայելով գոյնին. ինչպէս ճերմակ՝ Մուշեղինը, դեղին—կարմիր՝ Դորաթը, սև՝ Ղարազայտան[2] (զարազատա=սեացեղ), Քէօռ-օղլու Ղրաթը և Տրդատ—Արտաշէսինը. բոզ ձին Բոզ-դիդաքին և Ս. Սարգսինը, Ճարտուկ[3] Ճանճկէն՝ Տիրանինը և այլն։ Բայց իմաստաւորի տիրոջ անունով, Ս. Սարգսի, Դիդաքի, Տիրանի, Մուշեղի, Քէօռ-օղլու, Ռուստամի ևն. այսպէս էլ, կարծում եմ այստեղ է։

Արդ ԺԳ. դարում Սիւնիքում կայ մի հռչակաւոր հայ իշխան Հասան Ջալալ Դօլա (1214—1261) «Տէր Խաչենոյ», «Մեծ իշխան Խաչենոյ և կողմանցն Արցախոյ», «իշխանաց իշխան արքայաշուք», «Մեծ կողմնակալ», «Ինքնակալ իշխանաց իշխան», «Իշխան Խաչենոյ և Ըռանայ», «Արքայ» և «Մեծ արքայ» տիտղոսներով կոչուած մեր յիշատակարաններում, արձանագրութեանց մէջ և պատմագիրներից։ Սա խնամութեամբ կապուած է եղել Արղութեանց, Տարսայիճ Օրբէլեանի, Թաթարների (Ռուզուքան—Ռուզան) և մեր Ռուբինեան հարստութեան հետ։ Եղել է Թաթարստանում և մասնակցել Թաթարների արշաւանքներին Իկոնիոյ Ղայասէդդին Քայ Խոսրով Գ.-ի դէմ և հասել ուրիշների հետ մինչև Կարին, Երզնկայ և Սեբաստիա։ Այս արշաւանքներին, որ աւելի մի յաղթական թափորի է նմանել, ազատել է «յայտնի և գաղտնի» շատ քրիստոնեայ գերիներ։ Սիրելի է եղել Բաչուին, Զարմաղանին, այնուամենայնիւ մոռոլ Ռուզան,—անուանակից թուրք Ռուզայի, Զոջանց վէպում Բաթմանայ Ռուզէի,—քանդում է Ջալալի բերդերը, չարչարում նորան, բայց Ջալալը Ոսկէ—Օրդայի խան Բատիի որդու

---

1. «Քուռկիկ—Ջալալին» № 2 (Ջ. էջ 21—24 եւայլն.), № 3 (Բ. փոփոխակ. Գ. էջ 25. իսկ 36 էջում երկու անգամ «Քուռկէ—Ջալին». երեւի սխալմամբ). № 7 (էջ 25. 26. 71. 72). Քիւռկիկ—Ջալալին № 8 (էջ 6 32—35. 41). № 4 (Գ. էջ 104). № 9 (էջ 381—382 եւայլն) եւ Քիւռկիկ—Ջալալէն № 11 (էջ 22. 31). որ ունի եւ Քէօռկիկ եւ Քէօռիկ Ջալալին (էջ 29) ձեւերը. եւ «Քիւռիկ Ջալալին» № 4 (Ա. եւ Բ. փոփոխակներով. Գ. էջ. 104—107 եւ այլն). № 10 (էջ 428. 410) եւ № 11 (էջ 19). վերջապէս «Քուռիկ Ջալալին № 6 (էջ 523 2).

2. Դարեկին սարկ. Ցովսէփեան. Փշրանքներ. Ջան-Փոլաղ էջ (90—101). 91. Թիֆլիս 1893.

3. «Ճարտուկ» եւ «Ճերմակ» բառերը տես եւ H. Hübschmann-ի Armenische Grammatik, էջ 189—190. Leipzig 1895:

Սարտակի օգնութեամբ նա է ստանում, սոցա հետ գնում է Մանդալիա, շատ հայ իշխանների օգնում ելն ելն։ Զալալը նշանաւոր է և իւր երկրից դուրս բարեգործական հաստատութիւններով իւր կին Մամքանի հետ, որ Հաղբատայ Զարեհ իշխանի[1] քոյրն էր։

Չնայելով որ Զալալը մակդիր է. «Բայց այդ մակդիրը այնպէս է կպել Հասանին, որ աւելի յաճախ միայն այդ անունով է կոչւում է առանց բուն անուան, հաւանօրէն բաւական բաղմաթիւ այլ Հասանների հետ չշփոթելու համար» (էջ 411) ասում է Օրբէլին։ Մենք պիտի աւելացնենք և այն, որ չնայելով այսօր էլ այդ ցեղի ազգանունը Հասան—Զալալեան է, անշուշտ մեր Հասան—Զալալի անունով, սովորաբար միայն Զալալեան է կոչւում։

Արդ այս Զալալի հայր Վախտանկ Տոնկիկը մի զարմանալի ձի պիտի ունեցած լինի։ Վրաց տարեգիրները պատմում են, որ Թամարա Թագուհու մարդը՝ Դաւիթ Սոսլանը, Զագամի ճակատամարտին, Շամքորի մօտ, նստել էր մի ձիու վրայ, որ գնել էր Վախտանգ Խաչենացուց, ոչ աւել և ոչ պակաս քան մի բերդ և մի գիւղ վճարելով (էջ 407)։

Խնդիրն այն չէ, թէ որքան պատմական է այս դէպքը, այն էլ բաւական է, որ ժամանակի մատենագիրներ հաւատացել են և հաղորդում են. կարելի է ուրեմն երևակայել, թէ ինչպիսի չափազանցութիւններով այդ ձիու գովքը կը հնչուէր Հայոց աշ-

---

1. Հասան Զալալ Դոլայի եւ իւր տոհմի մասին տեղեկութիւնները մենք քաղում ենք І. А. Орбели, Гасанъ Джалалъ. князь Хаченскій (Извѣстія Императорской Академіи Наукъ, էջ 405—436 С.-Петерб. 1909) սիրուն աշխատութիւնից։ Հեղինակը քննելով մի ժողովրդական աւանդութիւն. որով այս Զարեհը դառնում է ժամանակակից Աշոտ Ողորմածին (Ռոստոմբէգ Երզնկեանց. Հնախօսական Տեղագր. Հայաստան, էջ 92—97. Վաղարշապատ 1886. Արտատպ. Արարատ Ամսագրից) եւ անհնարին համարելով այդպիսի կոպիտ սխալ մի կեղծած գրաւոր ապրիւրում. կասկածում է եւ աւանդութեան իսկութեան վրայ (էջ 415. ծանօթ. 4)։ Մենք յամենայն դէպս մի բան կարող ենք հաստատապէս ասել ի պաշտպանութիւն Երզնկեանի. որ նա այս աւանդութիւնը հաւանաբէն քաղել է Տփխիսի «Արարատ լրագրի 1850. Հ. 6. էջ 81—84. Հ. 7. էջ 104—107. Հ. 9. էջ 124—135 «Արդար դատաստան Աշոտոյ Հայոց Թագաւորի» անուսուցիչ պատմուածքից. որի նիւթը, ճիշդ ինչպէս միևնոյն լրագրի 1851 Թուականի Հ. 18, էջ 278—282 «Հնարագիտութիւն Սմբատ Հայոց Թագաւորի կնոջ՝ Մարիամ Թագուհւոյ» պատմուածքը, անպայման ժողովրդական է (Հմմտ. Էմինեան Ազգագր. ժողովածու. Գ. § 11 «Գտածուրիկ փարէն» էջ 89—92)։ Բայց թէ ով է գրի առել կամ շարադրել. մնում է անյայտ.

խարհի բոլոր կողմերում, որտեղ անծանօթ չէր Զալալը իւր քաջութիւններով, բարի գործերով և եղերական վախճանով։ Հասկանալի է, որ մի ձի չէր կարող այսքան երկար ապրել, բայց նորա սերունդը յաջորդաբար նոյն անունով կը կոչուէր. և Զոլանց տան վէպում յիշւում է, որ Ջալանգ դիւցազնի ձին իւր հօր ձիու սերունդից էր։

Մի նորութիւն ևս ունի այս փոփոխակը, այն է Բապը Ֆրէնկի (№ 15, Թ, § 317—337)։ Այս անունը «Պապէ, Պապը Ֆրէնկէ աղջիկ» կայ և մի հէքեաթում[1]. այլ և ունի Զոլանց տան № 1—13 փոփոխակներից մինն ևս «Բարա Ֆրէնկի և Ֆրէնկի Պապ» (№ 10, էջ 424, 430), որին ինչպէս և Ասողիկ Պարոնին, Աճմուշահին և Սուլթան Մուրադին դիմում է Մարայ մելիքը և օգնութիւն խնդրում։ Զոլանց վէպը ճիշտ պահել է Ֆրանկի այսինքն Եւրոպայի պապի մասին գաղափարը, որ խաչակրութեան առաջնորդը և հոգին է եղել. իսկ Եւրոպայի ժողովուրդներից, մանաւանդ առաջին խաչակրութեան յատկապէս ֆրանկներն են մասնակցել, ուստի և արևելքում, ֆրանկ, Ֆրանկստան Եւրոպա, ֆրանսացի և կաթոլիկ է նշանակում։ Պարզ է որ այստեղ խօսքը հռոմէական կաթոլիկ եկեղեցու պետ պապի մասին է. թէ որքան պատմական հող ունի յատկապէս № 15-ի միջնադէպը դժուար է պնդել, զուցէ այստեղ Մհէրի գործը անցել է Դաւթին,—մեր Զոլանց փոփոխակներում չատ անգամ մէկի գծերը միւսին են անցնում,—իսկ Մհէրը նոյնացել է մեր Մլեհի հետ[2]։ Ապա յայտնի է մեր Կիլիկեան իշխանների և թագաւորների ջերմ մասնակցութիւնը և յարաբերութիւնը խաչակրութեան հետ։ Խաչակրութեան ազդեցութիւնը յատկապէս երևում է և պարոն տիտղոսից, որ կրում է այստեղ և այլ ուրեք Ասողիկը (№ 2, 7), որ այլապէս կոչւում է Ասողիկ Երզնկացի (№ 3, Բ)։ Պարոն կոչւում են և № 14-ի մի քանի դև—դիւցազները, որ բռնել է մեր իշխան կամ նախարար անուան տեղ։ Այս են հաստատում Դաւթի աջ թևի մէջ խաչը, կրած ս. նշանը, «խաչ պատրաստին», կամ վեսորապին (խաչ փարող—խաչապաշտ) ելն։ Յայտնի է որ խաչակիրները խաչ էին կրում իրենց աջ թևին, որից և ծագել է այդ անունը։ Խաչը իւր պաշտամունքով մեզնում սկսուելով է. դարից՝ տարածուել է խաչակրութեան ժամանակ զանազան մասունքներով, որ ունի և վէպը (№ 1, Դ, էջ 13). ցարդ շատ «օջաղ»—տներ ևս ունին Կարմիր Աւետարան, նարեկ և այլ սրբութիւններ։ Հետաքրքրական է այս կողմից այն պարագան, որ մեր վիպասաց-

---

1. Էմինեան Ազգ. ժողովածու Գ. § 6 «Լուսաւոր մորթ». էջ 55։

2. Զոլանց տան պատմեանը [Արարատ 1908. Յունուար, էջ 113—114 (39—40)]։

ներից մինը, Բարսամը, Զոջանց տան վէպն ասելուց յետոյ՝ վերջն աւելացնում է իրրև «բարեխօս» 90-ից աւելի սրբավայրերի, սրբերի, վանքերի, ժամերի, նարեկների, աւետարանների և խաչերի անուններ (№ 10, էջ 450—462)։

§ 6. Այժմ անցնենք մեր № 14-ին. որ ոչ միայն այս երեքից, այլև հրատարակուած բոլոր փոփոխակներից ամենահետաքրքրականն է։ Նախ բարբառը, Հայոց ձորի, նոր է. ունի բացի աշխարհագրական նոր յատուկ անուններից և անձնանուններ, մանաւանդ կանանց։ Սոցանից մի քանիսը հաւանօրէն լոկ գովասանական մակդիրներ են, ինչպէս որ քառսուն-ճող-ծամ շատերի մակդիրն է, և մի քանի փոփոխակներում դարձել է յատուկ անձնանուն. մինչդեռ տղամարդկանց մակդիրը կրկնւում է միշտ անձնանուան հետ. Զէնով Յովան, Սարգիս, Ցռան Վէգօ, Զոջ և Պատիկ Դաւիթ, Մհէր, Առիւծաձև Մհէր, Թառլան—Թլոր—Թլուատ Դաւիթ, Ճոռ Վիրապ, խոր-Գուսան, Վժիկ Միսо և այլն։ Եւ ինչպէս այդ մակդիրները գիւցազների այս կամ այն յատկութեան բնորոշ արտայայտիչն են, այնպէս էլ կանանց անունները նոցա գեղեցկութեան. այսպէս Սիւռաթ=պատկեր, Կիւլակ=խոպոպիք կրսպ, Կիւլիզար կամ Կիւլլիզար=վարդոսկի, Խանդուտ կապւում է խանդ, վառվռուն բառի հետ և Սառան, Սինամ (անշուշտ Սանամ, որ շփոթուել է № 6-ի Սինամ—քերիմ՝ Սենեքերիմ արական անուան ազդեցութեամբ) այսօր էլ հայ կանանց գործածական անուններ են։

Ինչպէս սոքա այնպէս էլ Գոհար (№ 3 Ա, Պաճիկ[1] թագաւորի աղջիկ, և № 7, 10, 16), Գեղձուն (№ 3 Բ, 10 Բ), Շիրին Անախուն Գիւհար (№ 11), Փիրզատ և Նազլու (№ 13) ցնում են անյայտ, թէ ինչ պատմական անձեր են, գլխաւորապէս այն պատճառով, որ մեր պատմութիւնը կանանց շատ քիչ տեղ է տուել, ուստի և կանանց քիչ անձնանուններ են յայտնի։ Հաղիւ ուրեմն Շմշիկ (№ 12) և Իսմիլ (№ 4, Գ, էջ 80—83) կամ Իսլիմ[2] անունների մէջ հնչում է Շամիրամ և Իշտար անունների հետքերը, որ

---

1. Ղ. Փարպեցին ունի «Պաճոկ ի Մարզպետական գնդէն» (Պատմ. Գ. Ղ., էջ 162. Էջմիածին—Տփղիս 1904). այսինքն ցեղից (gens,-tis)։ Սա Վահանի «ուխտակից»ներից էր. որ գնաց պատգամաւոր Նիխորի մօտ։ Հետաքրքրական է որ այս պատգամաւորների մէջ է Մամիկոնեանց խնամի Կամսարականը. այստեղ էլ հաւանօրէն մարզպետական—Արծրունիների Մամիկոնեանց հետ ունեցած խնամութեան հետքն է.—պատմութիւնից յայտնի.—որ պահել է վէպը։

2. Դր. Բալասեան. Սասունցի Դաւիթ. պատմական պոէմ. VII, էջ 12. Թիֆլիզ 1905։

պատմուածքն էլ յիշեցնում է սրա և Արայի աւանդութիւնը[1]։

Բոլորովին նոր են, առաջին Խոսրով թագաւոր,—որ ցարդ ոչ մի վերախնամակ չունի,—որի հօրը Մարամելիքին Դաւիթն ապտնելուց յետոյ՝ նորան թագաւոր է անում (№ 14, § 104)։ Այս Խոսրովի դէպքն անշուշտ յուշիկ է Սասանեան Խոսրով Նուշիրուանի, Խոսրով Պարուէզի և Ֆերբուխ կամ Խորբեզադ Խոսրովի պատմական անցքերի, որոնց մէջ հայերը և յատկապէս Մամիկոնեանք դեր են խաղացել. այսպէս ըստ Սեբէոսի և Յովհան Մամիկոնեանի մի Մամիկոնեան Մուշեղ[2] Խոսրով Ապրուէզի կուսակից է, իսկ մի ուրիշը՝ Խաթի որդի Մուշեղը մասնակցել է Հերթիջանի (=Կադիսի ջայի) կռուին 636/37 թուականին[3], թերևս սա կամ իւր հայրը, Դաւիթ, օգնել են և վերջին Խոսրովին գահ բարձրանալու։

Երկրորդ հետաքրքրական է շատ այստեղ Պարան Պոշ կամ Պոժ և Պարան Բուէք ֆլուռնայ դիւցազնների իբրև «դևերի» հանդէս գալը (№ 14, § 116—118, 120)։ Դև, ֆէրզ, վահլևան, ինչպէս Քաջանց վէպի ուսումնասիրութեան մէջ ցոյց եմ տուել հոմանիշ բառեր են և նշանակում են քաջեր, դիւցազներ։ Պոշը՝ տարակոյս չկայ, մեր պատմութեան մէջ ԺԳ. դարում յայտնի հայ իշխանն է, որ Պարան այսինքն պարոն է կոչւում։ Պոշը յայտնի է ոչ միայն Հիւսիսային Հայաստանում այլ և հարաւում. Բաղէշում ցարդ կայ Պոշեան մի ազգատոհմ, ինչպէս ինձ պատմել է հանգուցեալ Պերճ Պոշեանը։ Իսկ Բաղէշի Խիզան կամ Հիզան գաւառի Շէնաձոր գաւառակում կայ մի գիւղ «Պրոշէնց» անունով[4]։ Յայտնի է և Պոշ թագաւորի հրաշագործ թրի աւանդութիւնը կապուած Խաչլուայ[5] լճի հետ. մի թուր, որ յիշեցնում է նախ Քէօռ-օղլու Զլֆկար թրի պատմութիւնը և ապա թուր կեծակին, որ Հալունի թուրն է։

Այս առթիւ հարկ եմ համարում յայտնելու, որ ես Քոջանց վէպի մէջ պատմականը փնտռելով և ի նկատի առնելով, որ Խանդուտ Խաթունին ուզող և Դաւթի հետ կռուող դիւցազների մէջ միայն օտար անուններ կային, ես Համզան օտար համանուն

---

1. Քոջանց տան Պատմականը. էջ 25։

2. Ա.բարատ 1906. Դեկտեմբեր. էջ 872—875 եւ ծանօթութիւն.։

3. Սէբէոս. Պատմ. Գ. Լ. էջ 107. Ս. Պետերբ. 1879։

4. Ս. Էփրիկեան. Բնաշխարհիկ բառարան, Բ. խիզան. էջ 171. Վենետիկ 1907։

5. Անդ. «Խաչլուայ լճակ»-ի տակ մէջ է բերուած ամբողջ հետաքրքրական աւանդութիւնը։ Ա.յստեղ թուրը շինելու աւանդութիւնը միեւնոյնն է. ինչ որ Քէօռ-Օղլու Զլֆկարինը։

իշխան եմ համարել[1]։ Բայց այժմ տեսնելով և հայ Պռոշ իշխանին նոցա թուում, աւելի հաւանական եմ համարում, որ մեր վէպի փոփոխակներում «Լօռուայ Հըմզայ փահլևանը» (№ 1, էջ 19, 21, 22), «Լօռու, Լօռուայ Համզէն» (№ 13, էջ 31), 37—39 (65, 71—73 և № 3, էջ 46) հայ իշխան լինի։ Նա ըստ ամենայն հաւանականութեան վէպի Համզան ժ. դարում ապրող իշխան Պահլաւունի Գրիգոր Համզէն[2] է, որ իւր կին չքնաղ Շուշանիկի հետ նշանաւոր են թողած յիշատակներով։ Պահլաւունիք Լոռուայ սահմանի մօտերը կալուածքներ ունէին Բջնին, Ջաղկաձոր—Դարաչիչագը, ինչպէս յայտնի է Մ. Ուռհայեցու տարեգրութիւնից և Կեչառուվանքի արձանագրութիւններից. բացի այդ Գրիգոր Համզայի թոռ Գրիգոր Մագիստրոսի կալուածքն են եղել «Կայան և Կայծոն»[3], որոնցից առաջինը այժմ էլ իւր աւերակներով և միևնոյն անունով յայտնի Լօռուայ Կայանու բերդն է։ Դիլիջանի մօտ էլ կայ Բոզի կամ Համզա գիւղ և Ղազախի մի գաւառամասը կոչւում է սոյնպէս Համզա[4]։ Ուստի և շատ հասկանալի է Գրիգոր Համզայի Լօռուայ Համզայ կոչումը։ Այս Գրիգոր Համզէի որդի Վահրամն էլ յայտնի է, որ ոչ միայն մեզնում, այլ և Վրաց մէջ դիւցազնական հռչակ է վայելել[5], ինչպէս և երբեմն Վահագն Վիշապաքաղը[6]։

Վերևը մենք տեսանք խաչակրութեան ազդեցութիւնը մեր Զոջանց վէպի վրայ. ուստի մեզ թուում է Պարան Բուէքը, որ միշտ կոչւում է «Պարան Բուէք Ցռանցայ» (№ 14, § 116, 117, 120), պէտք է լինի Ցռընկայ, այսինքն ֆռանկ։ Ցռընտայ՝ անծանօթ բանահաւաքը բացատրում է փակագծում, որ մենք ներքև դրինք, «թևաւոր, թռուցիկ»։ Այստեղ ժողովրդական ֆռալ, թերևս ֆռընտալ բայով է բացատրուած։ Բայց մեզ թուում է, որ այդ ժողովրդական բացատրութիւնը նման է ջալալ—ջալաթի մեկնութեան և հէնց այդ հնչման նմանութեան շնորհիւ Հայոց Զորում ժամանակին անծանօթ ֆրէնկի-ն դարձել է ֆռնտայ, դևին հասկանալի մակդիր[7]։ Մենք տեսանք, որ ժողովուրդը հնչիւնների նմանութեամբ բոլորովին տարբեր ծագում ունեցող բառերը նոյն է համարում. բացի այն որ մի քանի բարբառներում կ և տ ձայնների փոփոխութիւններ ևս կան։ Այսպէս պռունգ կամ պռուկ (որից պռոշ, պռոշտի) խոյեցիք ասում են «պռկէ պռուկ», բայց

1. Արարատ Ամս. 1906. Ապրիլ. էջ 338—341. ծանօթ. 5.
2. Ալիշան, Ճիրակ էջ 52—53. Կ. Կոստանեան. Գր. Մագիստրոսի Ջղթերը ԺԱ. էջ 43 եւ յառաջաբան ԺԳ—ԺԵ. Ալէքսանդրապոլ 1910.
3. Վարդան վրդ. Պատմ. ծնե. էջ 99. Վենետիկ 1862.
4. «Սուրհանդակ» լրագիր. 1910. № 134. էջ 4. Թիֆլիս։
5. Կ. Կոստանեան, Գր. Մագիստրոսի Ջղթերը. ԺԱ. էջ 39—40.
6. Խորեն. Ա. Լ. 57—58.
7. «Դևք ... թեաւորք». Ջենոբ, էջ 32. Վենետիկ 1889.

կայ «պոռն պուունգ լիքը»[1]։ «Ուսկա կուգաս»[2] և Պօլսում «ուսկէ» փոխանակ ուսոր, «Հերիք չէ՞, որ գաղտուր երթաս գաս»[3], այսինքն գաղտուկ, գաղտնի։ Եւ մեր Զոջանց տան վէպի Ցուան—Վերէօ—Վեէօն երկու փոփոխակում դարձել է ՎերՌօ—ՎեՌօն (№ 16 և 13)։ Ուստի մեզ թուում է, քանի որ Ցոբնտայ անունով մի որ և է հայ իշխան յայտնի չէ, պէտք է Ցոնտայ Բուէք դեր լինի խաչակրութեան մասնակցող Ֆրէնկ Բոդուէնների մինը և թերևս Բուվէնի դիւցազն Ֆիլիպ Բ. Օգիւստ Ֆրանսիոյ թագաւորը, որ նոանդագին մասնակցել է երրորդ խաչակրութեան։

Այժմ, կարծում եմ, կարելի է ասել, թէ ով պիտի լինի այն Օհան Աղբակեցին, որին, Դաւիթը մի աւերակ վանք նորոգելով, նշանակում է պահապան վերակացու (№ 3, Գ. էջ 32—33 ծանօթութիւն)։ Անկասկած այստեղ խօսքը Հաղբատ կամ Աղբակ վանքի մասին է, որ շփոթուել է Վասպուրականի Աղրակ գաւառի անուան հետ. երևի բացի անուան նմանութիւնից և այն պատճառով, որ երկուսն էլ նշանաւոր են վանքերով։ Մենք արդէն ցոյց ենք տուել, թէ ինչպէս Զոջանց տան վէպը Դաւիթ Անհողին իւր Դաւիթն է համարել. իսկ Դաւիթ Անհողինը իշխում էր Լոռիին, որտեղ են նշանաւոր Հաղբատ ու Սանահին վանքերը, իրար շատ մօտիկ։ Արդ այս վանքերը ծաղկել են ԺԱ—ԺԳ. դարերում. վարդապետների սպանութեան դէպք, մեր վէպի նման, պատմում է և այժմ, թէև, եթէ չեմ սխալում, Սանահնում։ Եւ Լանկթամուրի արշաւանքին դէպի Հաղբատ, պատմում էին ինձ տեղացիները, եկեղեցին աւերել են, վարդապետներին տանջել և այլն։ Այս երկու պատմուածքներն ստուգում են Ամիր Սպասալար Մխարգրձելու արձանագրութեամբ[4]. Հաղբատը հռչակաւոր է և իւր հրաշագործ Սուրբ Նշանով, որ համարւում է Վարագայ Ս. խաչի մասը[5]։ Վերջապէս բացի այն որ այստեղ է թաղուած նշանաւոր Յովհաննէս սարկաւագ վարդապետը († 1109), որ Հաղբատայ առաջնորդ է եղել. յիշւում են ԺԲ—ԺԳ դարը Յովհաննէս անունով չորս առաջնորդ կամ վանահայր, առաջին երեքը յաջորդարար[6] և շի-

1. Տ. Նաւասարդեանց, Հայ ժողովրդական հէքիաթներ Գ. դիրք. էջ 29. Թիֆլիս 1884. եւ Ե. դիրք, էջ 14. Տփխիս 1889։

2. Էմինեան Ակադր. ժող. Բ. § 5. էջ 153. Զարսանեակի բարբառ։

3. Անդ. § 22. էջ 524. Բաղէշի բարբառ։

4. Ռոստոմ բէգ Երզնկեանց, Հնախօսական Տեղագր. Հաղբատայ աշխարհահռչակ վանից Սրբոյ Նշանի. Արտատպ. Արարատ Ամսագրից. Բ. էջ 9. Վաղարշապատ 1886։

5. Անդ. ԺԸ—ԺԹ, էջ 76—83։

6. Անդ. Ի, էջ 86—87։ Հմմտ. Կիր. Գանձակեցի, էջ 56. Վենետիկ 1865։

նարար են եղել։ Այս բոլորից յետոյ պէտք է որ հասկանալի դառնայ Օհան Աղբակեցին Վասպուրականի Աղբակ գաւառի և նորա հրուշակաւոր Բարթուղիմէոս վանքի հետ կապ չունի, այլ Հաղբատի Օհաններից մէկն ու մէկն է և կամ շատերն ի մի ձուլուած։

§ 7. Պարոն Ատղիկն այստեղ Սասնոյ թագաւոր է (№ 14, Ա, § 2, 8—9), որ հաստատում են № 2 և 7, ըստ որոնց պարոն Ատղիկը Վերդոյի տղան է. մինչդեռ ըստ մի այլ փոփոխակի նա ծագմամբ անյայտ է և Երզնկացի, կոչւում է «չար Ատղիկ» և սպանւում է Պատիկ Մհէրից, որ Ատղիկի նշանած Դեղձոնը, Փիրմուս հալիւորի աղջիկը, խլեց և կին տուաւ Խանդութի եղբայր Քեռի Թորոսիկի որդուն, Խոր-Մանուկին (№ 3, Դ, էջ 55—56)։ Ատղիկ Պարոնի Զոջանց ցեղի հետ թշնամի լինելը երևում է և մի այլ փոփոխակից, ուր Մսրայ մելիքը Սասունի վրայ արշաւելիս դիմում է «եօթ թագաւորի» օգնութեան, որոնցից յիշւում են միայն Բաբա Ֆրէնկին կամ Ֆրէնկի Պապը, Ատղիկ Պարոնը, Աճմու շահը և սուլթան Մուրադ (№ 10, Բ, էջ 424—425 և 430)։

Մեզ թւում է, որ աւելի ճիշտ է Ատղիկի Սասունցի լինելը, որի բազինը կար Սասունի կողքին Աշտիշատում, կից հաջութեան աստուած Վահագնի մեհեանին, որի կինն էր. ինչպէս որ այս փոփոխակում Ատղիկի աղջիկը՝ Սառանը, «Զոջանց թագաւորի լաճու» կինն է դառնում։ Եւ եթէ Ատղիկի դուստրը ջրով է յղանում և զաւակներ ծնում, ըստ հնագոյն ժողովրդական երգի Վահագն ինքն էլ ծիրանի ծովից է ծնւում։ Ատղիկի թոռ Սանասարն էլ կին է առնում Քաջանց թագաւորի աղջիկ Սուռաթ խաթունը և Տղայ Դաւիթը՝ Կապռտ Կողայ թագաւորի աղջիկ Խանդիւթը (№ 14)։ Եւ որովհետև Զոջ Մհէրի մօրական պապը, Կապուտկողի թագաւորը, Պապն է (№ 13), որ յիշւում է իբրև Քաջանց թագաւոր Քաջանց տան վէպում. ուստի պարզ է, որ № 13 և 14 պահել են Զոջանց տան—Մամիկոնեանց և Քաջանց տան—Արշակունեաց փոխադարձ խնամական կապերը[1], ինչպէս այդ պահել է և Քաջանց վէպը. որ երբեմն Մամիկոնեանց ևս ուզում է «Քաջանց» կոչումը տալ, և որ կարծես վաւերանում է Մ. Խորենացու պարսից Պահլաւ տոհմերի ծագման զրոյցով (Խորեն. Բ, ԻԸ, ԿԸ հմմտ. ԼԳ, էջ 110)։ Մենք հիմքեր ունինք ենթադրելու, որ այդ գլուխները վերաբերում են ոչ թէ, ինչպէս Խորենացին ասում է, Պարսից Պահլաւ արշակունիներին այլ հայ. ուրեմն սպարապետի Պահլաւը այդտեղ մեր հայոց սպարապետական տունը—Մամիկոնեանք պիտի լինին։ Սակայն այս մասին այլ ուրեք։

---

1. Արարատ Ամս. 1906. Դեկտեմբ. էջ 870. Հմմտ. Զոջանց պատմականը. էջ 26 Արարատ Ամս. 1907. Հոկտ.-Նոյմբ. էջ 1007։

Միւս կողմից Աստղիկի Երզնկացի կոչումը ևս անհիմն չէ։ Յայտնի է որ Աշտիշատում Վահագնի և Աստղիկի մեհեանին կից էր և Անահտինը, որով կարծես մի մերձաւոր կապ և միութիւն կայ այս երեքի մէջ։ Եւ քանի որ Անահտի մի նշանաւոր մեհեանն ևս գտնւում էր Երիզա—Երզնկա աւանում, ուստի այս դէպքում Անահիտը բռնել է Աստղիկի տեղը։

Անհասկանալի է միայն մնում թէ ինչպէս Աստղիկը մի կողմից Զոջանց տան թագաւորն է, բայց միւս կողմից թշնամու Այտեղ իմ կարծիքով երկու աւանդութիւն և հաւատալիք պահպանուած են և ամփոփուած Զոջանց վէպում։ Բաջանց տունը աստուածային ծագումն ունի, այսպէս էլ Զոջանցը, որ երևում է թէ Բաջանց հետ ազգակցութեամբ կապուելով և թէ մանաւանդ ջրային ծագմամբ, ինչպէս որ Վահագնինն է. թերևս այստեղ Աստղիկն իրրև աստղ երկինքն է, որ նոյնպէս Վահագնի ծնունդն երկնում էր։ Եւ որովհետև Աստղիկ Երզնկացին սպանում է Պատիկ Մհէրից. իսկ սա ինչպէս ցոյց եմ տուել Միհր-արեգակն է, ուստի այստեղ Աստղիկը գիշերուայ, խաւարի, ներկայացուցիչն է հանդիսանում։ Այս վերջին աւանդութեամբ ուրեմն պահուած է լուսոյ և խաւարի յաւիտենական կռիւը։

Աւելի զարմանալին այն է սակայն, թէ ինչպէս Աստղիկ դիցուհին Զոջանց տան վէպում դարձել է դիւցազն, արագան անձն։ Այս կարող էր ըղխել ճիշտ վերջին հանգամանքից. եթէ Պատիկ-Մհէրը, ուրեմն Միհր-արեգակը տղամարդ է, նորա հակառակորդ և թշնամին նոյնպէս պիտի լինի. կամ այստեղ չէ՞ ազդել հայ ժողովրդի հաւատալիքը թէ լուսինը, ուրեմն այս դէպքում Աստղիկը, եղբայր է. վերջապէս աստղները կարող են երկու տեսակ լինել, այսպէս Լէյլին ու Մէջլումը, որ Համբարձման գիշերն իրար «ողջունում են»։ Հայոց հէքեաթներից առած Ղ. Աղայեանի Արեգնազանը աղջիկ լինելով՝ վերջը տղայ է դառնում։ Առհասարակ հայ ժողովրդի հէքեաթներում կան էլ աւելի շփոթ բաներ. օրինակ մի զրոյցում կայ Ուլի քաղաք [1], որ մի հէքեաթում կոչւում է Ուլի (Ուլի՞ա, Ուվի՞—Ովէ—Յովան) բազրկան [2]—ճիշտ Յովհաննէս վանքապետի և Մարիամ թագուհու անցքը. և մենք տեսանք նոյնպէս, որ Կումբի քաղաքը դարձել էր Ղումբիկ թագաւոր։

Աւելի ևս տարօրինակ է և մեր Զոջանց տան վէպում երևացող Զմշկիկ-Զմուցկիկ սուլթանը [3]։ Անտարակոյս սա Բիւզանդիոյ

---

1. Էմինեան Ազգագր. ժողովածու Բ. § 6 «Բլեթ Ազչիկ» էջ (163—182) 177։

2. Անդ. Գ. § 11 «Գտածուրիկ փարէն». էջ (89—92) 90։

3. № 2. (էջ 37. 46. 47. 51. 52) եւ № 7 (էջ 44—45. 54—56

հայ կայսր Յովհաննէս Զմշկիկն է, բայց սա վէպում կին արմատ է և կոչւում է «շատ դեղալ փեհլուան» (№ 2, ԺԲ, էջ 37)։ Յայտնի է որ նա շատ հռչակաւոր էր, եղել է Տարօնում և դաշնակցութիւն ունեցել Աշոտ Ողորմածի հետ։ Սորա այս սեռափոխութիւնն էր միայն, որ մեզ տարօրինակ էր թուում և դժուարացնում ցարդ այս կարծիքը յայտնելու. սակայն երբ Աստղիկ դիցուհին Զոջանց վէպում Պարոն և դիւցազն է դարձել, այլևս զարմանալու չէ։

Այս տարօրինակ հանգամանքը Բ. Խալաթեանը բացատրում է Մ. Ուռհայեցու յիշած դէպքով։ Զմշկիկը պաշարում է Սմիդ քաղաքը, որի տէրը կին էր և Համտուն Տաճկաց ամիրայի քոյր, առաջ Զմշկիկի սիրականը. Զմշկիկը տուել էր Համիդը իւր այդ «կնոջը», որ Զմշկիկի հայրենիք Խողանայ գաւառի կողմերից էր։ «Իւր հերոսի մահը հիմնաւորելու համար, որ ընկնում էր իւր դաւաճանութեան համար Զմեշկիկ սուլթանի ձեռքից, ժողովուրդն անգիտակցաբար փոխադրել է վերոյիշեալ աւանդութիւնը Դաւթի վերայ, կայսեր անունը տալով նորա սիրուհուն [1]»։

Այս բացատրութիւնը թերևս յաջող համարուէր, եթէ չլինէր Աստղիկի հակառակ դէպքը, մանաւանդ որ ըստ № 3-ի և 9-ի, ոչ թէ Սուլթան Զմուշկը, այլ սորա աղջիկն է Դաւթին սպանողը։ Մեզ թուում է, որ այստեղ շփոթութեանց պատճառը Հայոց անունների սեռական վերջաւորութիւն չունենալն է. ուստի և չնայելով պատմական անցքերի յիշողութիւնը ճիշտ են պահուած, այսպէս «Զմշկեր սուլթանի աղջիկը» Դաւթի «սերմն էր»,—ակնարկ է Զմշկիկի հայ ծագման,—որից և միայն կարող էր սպանուել (№ 3, էջ 51), բայց և այնպէս շփոթութիւն է յառաջացել, այսպէս էլ Աստղիկի դէպքը։

Հայ ժողովուրդը չնայելով որ գիտէ սուլթանը թուրք թագաւոր է. բայց նա այսօր էլ շատ աղջիկների անուն դնում է Սուլթան։ Սուլթան, Սիոն անունը մեզնում այժմ և տղամարդի և կինարմատի անուն է. իսկ Արշալոյս, Յուսիկ, Սիրական Վարդ և այլն, որ

եւ այլն). Սուլթան Զմշկեր կամ Սուլթան Գրմիժ (№ 3. էջ 40—42. 49—55). Սլթան Զմուչ. Զմուչկ (№ 11. էջ 58—42) եւ Սլթան Զմուշ (№ 9. էջ 585. 592—595)։ Այս փոփոխակներից լաւագոյն են № 7 եւ 9։

1. Բ. Խալաթեանց. Հայ ժողովրդական դիցաբանական վէպք հանդերձ քննագատութեամբ. էջ 52—53. Վիեննա 1903։ Այս գրուածքին մենք ծանօթացել ենք 1908 սկիզբներին շնորհիւ մեր ընկեր Ա. Զամինեանի ցուցմունքի. ուստի մեր ցարդ Զոջանց տան մասին գրածներն անկախ են։ Ընթերցողը մի ակնարկով կը համոզուի այդ բանին. մանաւանդ որ զանազանութիւնները շատ խոշոր են եւ աչքի ընկնող. իսկ նմանութիւններն են միայն Դաւիթ եւ Մհէրն, այն էլ շատ տարբերութիւններով։

այլ ազգերի մէջ իգական սեռի անուններ են, մեղնում ճիշտ հակառակը. ուստի երբ ժամանակի ընթացքում մթակնում է անցեալի յարաբերութիւնը, յառաջանում են այսպիսի շփոթութիւններ. եթէ Ֆրանկի պապը՝ Կաթոլիկ եկեղեցու կուսակրօն պետը, «աղջիկ» ունի, ինչու Զմշկիկ սուլթանն էլ կին չէր դառնայ, իսկ պարոն Աստղիկը կամ Աստղիկ թագաւորը տղամարդ։

Մոռանալու չէ մի շատ աւելի կարևոր հանգամանք ևս։ Արդէն ասացինք, որ հիմք կար Աստղիկն Անահիտի հետ շփոթելու. աւելի ևս կարելի է այդ պնդել Նանէի համար։ Երիզայի Անահիտը համապատասխանում է Արտեմիսին, թիլ աւանի Նանէն՝ Աթենասին[1]։ Եւ որովհետև թիլն էլ շատ մօտ է Երիզային, ուստի «Այն կապակցութիւնը, որով Նանէն յունաց Աթենասի հետ է համեմատուած, միայն ցոյց է տալիս այսպիսով, որ նա ռազմական յատկանիշներ ունէր. ինչպէս և մօտաւորութիւնը Անահտական մի տաճարի չէ հակասում այն կարծիքին, որով նա Անահտին հնագոյն ժամանակներում էապէս նման էր»։ Այլ հիմքեր ևս կան ենթադրելու, որ Անահիտը նոյնանում է Աստղիկի հետ, երբ Բաբելացոց Անահիտ-Անատը իբրև պատերազմական դիցուհի զարդարուած և առիւծ նստած՝ գլխին կրում է Աստղիկ աստղը[2], մինչդեռ Աստղիկը նոյնանում է Նանէ-Նանայի հետ[3]։ Այս նոյնացումներով միայն բացատրւում է մեր վէպի Աստղիկի ռազմական ոգին, մանաւանդ թէ արական անձն փոխակերպուելը։ Նանան և Աթենասը կրում են պատերազմական նշաններ, ինչպէս որ Արտեմիսն ևս ունի. իսկ Նանա անունը երկու սեռին ևս յատուկ է, ինչպէս և իւր պաշտամունքը տարածուած է Փոքր և Առաջաւոր Ասիայում[4]։ Արդ Եկեղեաց գաւառի սահմանակից Վերջանի բազայարիճ գիւղում կար Մրհական[5] մեհեանը, այդ անունով երկու գիւղ այժմ էլ կան Դարանաղիքում[6],—իսկ «սպիտակափառ դիցն

---

1. Ագաթանգեղոս, Ե. § 490. Էջմիածին-Տփղիս Հմտ. Խորեն. Բ. ԺԴ. 88. Վենետիկ 1865։

2. G. Hoffmann, Auszüge, Excurse 4, էջ 136—138, Leipzig 1880:

3. М. Эминъ. Очеркъ Религіи языческихъ Армянъ, էջ 22. Москва 1864:

4. G. Hoffmann, Auszüge, 4, էջ 157, 161:

5. Ագաթանգեղոս, ծփ. § 790. էջ 411. Տփղիս-Էջմիածին 1909։

6. H. Hübschmann, Altarmen. Ortsnamen, էջ 284, Strassburg 1904: Մենք մեր Ջոջանց տան պատմականը երկում (Արարատ Ամս. 1908. յունուար. էջ 123—124. Արարատ. 48—50) ցոյց ենք տուել. որ Վրաց Ամիրանը մեր Մրիր—Մհէրն է։ Այսուհետև պիտի աւելացնենք. որ նորա հօր

Բարշամինայ» մեհեանը[1], գտնուում էր միւս սահմանակից Դարանաղեաց գաւառի Թորդան գիւղում, որի հնագոյն անունն է Մէնդրոդան[2], որով եթէ Բարշամինան և Միհրը նոյնացած չհամարենք, պէտք է յամենայն դէպս ընդունենք, որ Թորդանում ևս Միհրի պաշտամունք է եղել։ Աշտիշատի և Երիզայի «ոսկեմայր» Անահիտների մէջ ևս կարող է ծագած լինել առաջնութեան կամ գերիշխանութեան վէճ, ինչպէս որ այդ իրօք տեղի է ունեցել Երիզայի Հայոց քուրմերի և Պոնտոսի ու Կապադովկիոյ «Ոսկէ Գոմանայի» Անահտի քուրմերի մէջ ըստ Պրոկոպիոսի[3]։ Այս հաւանական է և այն պատճառով, որ մինչդեռ Երիզայի Արտեմիս—Անահտի և Աշտիշատի Ս.Ֆրոդիտէ-Աստղիկի, Թիլի Աթենաս-Նանէի,

---

Դարեջան անունը մեր Դերջանն է։ Նորա ապզանունն է, ինչպէս Մ. Խոնելուց եւս երեւում է, Դարեջանեանի, որից հեռաւեցրել են հօր անունը, ինչպէս եւ մեր Մամիկոնեանց պէս ճանական-Լազական ծագումն ունեցող նախարարութիւնը իւր ապզանունը, Օրբէլի կամ Օրբէլեանի, ստացել է Օրբէթ բերդից։ Վրաց վէպն ուզում է ասել, որ իւր Ամերան-Միհրը Դերջանի Միհրն է։ Դ-բեջանի առաջին ցանկի — եթէ իւր նախնականը չէ, կարող էր Դ-ջանաղիրի ապզեցութեամբ եւս փոխուել, որտեղի այժմ մնացած երկու Բագայատիճ գիւղերը, եթէ հնումը Միհրի տաճարներ չունենային էլ, կարող էին շփոթուել Դերջանի համանուն Բագայատիճի հետ։ Վրաց վէպի Կեկլուց կեսարը, այսինքն Թագաւորը, հաւանօրէն մեր Եկեղեաց գաւառն է։ Մենք մի այլ տեղում գիտել ենք ենք, որ Ջոջանց վէպի Գօրգիկը վրացի Գէորգն է, Համգօլը՝ Ռուզուկանի գեսպանը (Արարատ Ամս. 1906, ապրիլ, էջ 357), այժմ պէտք է աւելացնենք, որ հենց նոյն փոփոխակի Սրգօն [«Սրգոյի (սուրբ Սարգսի) ջորդերուցն է» (№ 1, Ը, էջ 21] ոչ թէ Ս. Սարգիսն է, ինչպէս կարծում է Սրուանձտեանը, այլ Միսարգրծելի—Երկայնաբազուկ Սարգիսը, որ միայն կարող էր իբրեւ Վրաց ազնուական ճorsեr ունենալ, մանաւանդ որ «Միսարգրծելի ինը եղբայրներ» վրաց ժողովրդական Ամիրան վէպում եւս յիշւումեն, որոնցից Սարգիսը, Զաքարիան եւ Իվանէն Թամարայ Թագուհու զօրավարներն էին (А. С. Хахановъ, Очерки по Ист. Грузин. слосесности I, էջ 25, Москва 1895)։ Բայց մենք վրաց այս եւ մեր Ջոջանց վէպին կը դառնանք ուրիշ անգամ առանձնապէս։

1. Ագաթան. ՃՓ, § 790. ՃԹ. § 784։

2. Н. Марръ, Крещеніе Армянъ, Грузинъ, Абхазовъ и Алановъ, Арабская версія, էջ 119 Оттискъ изъ «Записокъ восточн. отдѣл. Имп. Русск. Археолог. Общ. томъ XVI. С.-Петербургъ 1905:

3. Hoffmann, Auszüge, 4, էջ 135: Ա. Մ. Գարագաշեան Գնահ. Պատմ. Հայոց. Բ. Թ. § 15, էջ 158—161. Թիֆլիս, 1893։

ինչպէս և Թորգանի Բարշամինայ-Միհրի, Բագայարիճի Հելիոտոն-Միհրի և Դիոս-Արամազդի արձանները և բուրմերն օտար՝ յունաց երկրից էին. ինչպէս ասում է Խորենացին. սակայն այսպիսի յիշատակութիւն չկայ Աշտիշատի Անահտի և Վասպուրականի Միհր-Մհէրի մասին։ Այսպիսով կարելի է գէթ մասամբ ևս բացատրել Երզնկայի Աստղիկի թշնամութիւնը, և այն շփոթութիւնները, որ կան մեր վէպում, որ արտայայտւում է և Զմշկիկ սուլթանի և իւր աղջկայ դէպքում. եթէ միայն այստեղ չէ ազդել Յունաց և Հայոց կրօնական վէճերն, որ ոչ միայն Զմշկիկի ժամանակ այլ նորանից առաջ և յետոյ էլ եղել են։ Մհէրի տուիծաձև մակդիրն անդամ, եթէ միայն այդ, ինչպէս հաւանական է, սկզբում վերաբերուել է և Պատիկ Մհէրին, այժմ աւելի հասկանալի է դառնում. տուիծը ելամական Անահտին յատուկ էր. ինչպէս որ պատահական չէ անշուշտ, որ մեր «Անանուն աթոռը» և Առիւծ լեռները[1] իրարից հեռու չպիտի լինին, իսկ Առիւծ գաւառը սահմանակից է Անահտին նուիրական Եկեղեաց[2]—Անահտական[3] գաւառին։

§ 8. Գրական արժէքաւոր նորութիւններ ևս ունի մեր այս № 14 փոփոխակը, որ միւսները չեն յիշում, և եթէ յիշում են, այն էլ կրճատուած, այսպէս Ը, § 67, որի հաղիւ թէ կէսն ունին № 7, Ը, էջ 23 և № 10, Բ, էջ 424 և № 11, Է, էջ 18։ Մի կողմ թողնելով այլ մանրամասն համեմատութիւնները, վեր առնենք ամեն մի գրականութեան պատիւ բերող, կտրուկ ժողովրդական արտայայտութեան մի նմուշ § 84, 85։ Առաջին պրակը § 84 Դաւթի հրաժեշտի երգն է կռիւ գնալիս, որ շատ փոփոխակներ հաղիւ յիշատակում են, երբեմն բոլորովին տարբեր մէկ-երկու խօսքով, ինչպէս № 7, Թ, էջ 30. իսկ § 85 թշնամու բազմութեան քանակը ցոյց տուող պատկերաւոր համեմատութիւններ, որ ունի մասամբ դարձեալ № 7, ԺԱ, էջ 33, բայց այս աւելի լրիւ է և տարբեր չափով։

Ահա այդ երկու տունը.

§ 84. «Էլաւ թռաւ վեր ձիուն, Աստծու անուն տուեց, քշեց խասաւ Ծովասարու մօտ. էն քեարերուց, ախպրներուց, սարերուց խալալութեն ուզեց։ Մնաք բարով, ասաց ու սկսեց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն. Ծովասարու պաղ պաղ ախպրներ, մնացէք բարով, բարի մնացէք.

---

1. Բուզանդ Ե, ԻԵ, 224. Վենետիկ 1889։

2. H. Hübschmann, Armen. Ortsnamen, էջ 284—285, 402:

3. Գ. Վ. Ինճիճեան. Աստրարդ. Հին Հայաստանի, էջ 15. Վենետիկ 1822։

Ես կէրթամ կռիւ, կը ծարփնամ, տիւք կարօտ մնացէք.
Ծովասարու պաղ պաղ քեամիքն էլ, մնացէք բարով, բարով մնացէք
Ես կէրթամ կռիւ, կշոգանամ, աիւք խով մնացէք»։

«Երկինքը ծով ծիրանին[1]» երգն է կարծես հնչում այս տողերում։ Սակայն շարունակենք։

§ 85. «Ասաց ու քշեց դնաց խեծլի դիմաց. տեսաւ որ երկնուց աստղին խիսապ կէր, ինոնց վրանին հիսապ չկէր։ Էնտեղ իջաւ նստաւ, մէզեց վեր ուր հալին։ Դարթլանմիշ եղաւ, ասեց.

«Օրհնեաճլ բարերար Աստուած, ինամք շատ էր մեծ թագաւորուն.
Ես էլնեմ գեարնան գէլ, ինոնք էլնեն գեարնան գեառ, չեմ կանայ արնոտե.
Ինոնք էլնեն բամբակ, ես էլնեմ կրակ, չեմ կանայ մշախատրե.
Ինոնք էլնեն փուշն փալախ, չոր ցախ, ես էլնեմ բոց ու կրակ, չեմ կանայ վառե.
Ինոնք էլնեն կրակ, ես էլնեմ գեարնան գետ, չեմ կանայ ընցուցե»։

Հայ ժողովրդի ստեղծագործ ոգին է արտադրում այս հրաշալի բանաստեղծական հատուածները, որ հոմերական կարող են համարուել։

Քաջանց անունը միայն այս փոփոխակումն է դտնուում, որ ինչպէս յաճախ կրկնեցինք Արշակունեաց տունն է, որ շատ այլ կողմնակի ապացոյցներով ևս հաստատուում է։ Անշուշտ այս մի ժողովրդական կոչումն է, ինչպէս ցարդ մեր ժողովրդի մէջ շատ, այսպէս ասենք, պաշտօնական ազգանուններն որ և է մականու-

---

1. Այսպէս է յիշում «Երկնէր երկին» Վահագնի ծննդեան երգը մի ժողովրդական «Պառաւի աղօթք» երգում (Գարեգին սարկ. Փշրանքներ ժողովրդական Բանահիւսութիւնից, էջ 77—78։ Թիֆլիս 1892)։ Կարելի է ենթադրել, որ ոչ թէ երգն է, այլ հեթանոս Հայոց աստուածներն են, որոնց օգնութեան է դիմում պառաւը. ինչպէս որ մի տող վերեւ յիշում է «Հաւատով Տէր կենդանին» եւ ներքեւ «Կուս Մարիամ» ելն։ Բայց քանի որ վերջը «պահապան» է կանչում եւ «Քսան ու չորս տուն Ներսէսին», այսինքն Ներսէս Շնորհալու քսան ու չորս տուն «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը օրուայ քսան ու չորս ժամերի համար, ուստի կարելի է կարծել, որ երկինք ու ծովը ոչ միայն իբրեւ աստուածներ օգնութեան են կանչուում, այլ «Երկն-էր-երկին» երգը, ինչպէս եւ ժողովրդական «Լուսացաւ, լուսն ի բարին»-ը, իբրեւ աղօթք է յիշում։

նով են կոչում, որ ցոյց են տալիս այդ ցեղի բացասական, դրական կողմը, ծագումը, պարապմունքը և այլն[1]։

Այս հիմամբ Սասմանց տունը, կամ Սասմայ ծռերը, որ և մեծ մասամբ գլխաւոր երկու դիւցազների Դաւթի և Մհէրի[2] անունով է կոչւում, պէտք է համարել նորագոյն ձև. նախ շատ բնական է այդ ձևը, ինչպէս որ կայ Իլիական քաղաքի կամ միջնարերդի անունով և Ոդիսական՝ դիւցազնի։ Մեզ թուում է, որ այդ վէպը Սասունի հռչակ ստանալուց յետոյ է Սասմանց տուն, Սասմայ ծռեր և այլ նման անուններ ստացել. իսկ նախնական ժողովրդական կոչումը եղել է Զոջանց տուն։ Եւ երբ որ մենք համոզուեցանք, որ Քաջանց տան վէպի հրատարակուած երեք փոփոխակները Արշակունեաց վէպն են, որոնց մէջ Քաջանց տուն, թագաւոր, և այլն մեր Արշակունիքն ու Դ. դարու թագաւորներն են, մանաւանդ որ Պապն էլ Քաջանց թագաւոր է կոչւում. ուստի մենք Արշակունեաց վէպը Քաջանց տան վէպ կոչելով՝ վստահութեամբ Մամիկոնեանց այս վէպը կոչեցինք ժողովրդական անունով Զոջանց տուն, որ պահել է միմիայն մի փոփոխակ։ №9-ի պատմուածքի ընթացքում շորերից իմացւում է, թէ «Դաւիթ Զոջանց տնից է». «Դաւթի թոլ առնենք, Սասում չմնայ անտէր, տէր կենայ Զոջանց տան» (№ 9, էջ 373, 393)։ «Դաւիթ ... կը գայ ջոջ Սասմայ տուն» (էջ 378), և «Սասման ջոջ տուն» գործ է ածուած եօթն անգամ երկու էջում (395—397)։ Թերևս և «Ըռըմիկ Զոջանին» և «Կիւրդիկ Զոջանին» (էջ 381—382 և 395) պէտք է հասկանալ Զոջանց տունը, որոնց ըռըմիկը՝ նիզակը և գիւրզը՝ վարզը հռչակաւոր պիտի լինէին անշուշտ, ոչ ապաքէն ստացողները դիւցազն Մամիկոնեաններն էին։

Ահա թէ ինչու պահելով՝ տարածուած Սասմայ ծռեր անունը գերադասեցի նախ և առաջ կոչել Զոջանց տուն։

§ 9. Մի քանի խօսք ևս կարևոր եմ համարում յայտնել, մեր երեք

---

1. Գ. Տէր-Ադէրսանդրեան, Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, մասն Ա. էջ 226—236. Թիֆլիզ 1886։ Տիգրան Նաւասարդեան. Հայ-ժողովրդական հէքիաթներ. Ժ. գիրք, էջ 76—85, Թիֆլիս 1903։

2. № 1 «Մհէրի դուռ» ճիշտ պարսկերէն Der-i-Mihr-ն է, որ նշանակում է դուռն Միհրի։ Դեր-ի-Միհր կոչւում են մեծ զոհարանները (Spiegel, Eranische Alkerthumskunde, III, 9, 6. էջ 568)։ Եւ որովհետև Մհէրի դուռը, ինչպէս եւ Ակրիտասը, ուր փակուել է Մհէր-Միհրը, Վանայ մօտ է (Գ. Սրուանձտեան, Մանանայ Գ. էջ 58). ուստի մի նոր ապացոյց ևս աւելանում է մեր այն գիտակցութեան վրայ, որ Վասպուրականը հնում միհրականութեան կենտրոն է եղել։ Տես Զոջանց տան Պատմականը [Արարատ 1908։ էջ 123—124 (49—50)]։

փոփոխակների խմբագրութեան, տպագրութեան և այլ հանգամանքների առթիւ։

Ընթերցողն արդէն գիտէ, որ այս երեք փոփոխակներից և ոչ մինը ես ինքս չեմ գրի առել, այլ ստացել ուրիշներից։ Որքան հարազատ են գրի առնուած, այդ ես չեմ կարող ասել։

№ 14-ը, որի գրի առնողն անյայտ է, գրուած է մեծադիր թերթի վրայ 22 երես անընդհատ, ամեն երեսը 38 տողանի, վերևից երկրորդ տողը երկու շատ մօտ զուգահեռական կարմիր գծով. ձեռագիրը մեզ շատ նման է տաճկահայի կրութեան, որքան ծանօթ ենք և անձնական նամակագրութիւնից, մանաւանդ մի քանի ծանօթութեանց լեզուն։ Կովկասում վաղուց այդպիսի թուղթ էլ չկայ։

№ 15-ը յայանի բանահաւաք Ս. Հայկունունն է, իւր իսկ ձեռագիրը 353 էջ փոքրադիր. գլխաւոր հատուածների մանաւանդ վերնագիր ունեցողների և տողերի բաժանմունքը հանգուցեալ բանահաքինն է։

№ 16-ը դարձեալ մեծագիր թուղթ էր 38 երես, Մայր Աթոռի գրաշար Յ. Աւշեանինը. ես կրճատեցի 24 էջից սկսած առանձին վստահութիւն չունենալով յատկապէս ատոդի վրայ, ի նկատի ունենալով նորա հասակն ու կոչումը. մանաւանդ որ ոչ միայն առանձին նորութիւն չունէր համեմատելով ցարդ հրատարակուածների հետ. այլ և շատ նման № 17-ին, որ աւելի լաւ է և տպագրում է։

Բոլոր անատուները ես հարկաւոր համարեցի գործածութեան և ցուցմանց դիւրութեան համար. իսկ № 14-ի բոլոր բաժանմունքներն ես ես եմ արել։ Ծանօթութիւնները № 14-ի հենց առաջին երեսում անծանօթ բանահաւաքինն է, նոյնպէս յետոյ մի քանի ուրիշները, որ նա փակագծերի մէջ էր նշանակել, ես ստորև ծանօթութեանց մէջ դրի, ոճից շատ անգամ այդ կրնկատուի. իսկ ամենամեծ մասը, ինչպէս և № 15-ի բոլոր բառերի բացատրութիւնները իմս են։ Այդ բոլորը ես կատարել եմ Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի տաճկահայ ծառաների և սանների, յատկապէս Շարանեան Սպիրիդոն և Գասպարեան Ղազարի օգնութեամբ։ Չանալով որքան հնարաւոր է հաւատարիմ մնալ բնագրերին, ես 4—5 անգամ ուշի ուշով մենակ և ուրիշների օգնութեամբ սրբագրել եմ։ № 14-ի տ և դ, չ և ջ, ե և ի շատ անգամ անհնարին էր որոշել. այստեղ բացի այդ դէպքերից, եթէ յայանի վրիպակներ չեն բանահաւաքներինը կամ ատողներինը պիտի համարել ինչպէս և № 15-ում. օրինակ հենց № 14 ա. երեսում «ողորմի»ի մէջ մեծ մասը «խազար». բայց երկու անգամ «հազար»։ Որոշ տեղերում, յատկապէս № 15-ի Մոկաց բարբառի

փոփոխակում, նոյն իսկ ինձ օգնութեան հասնողները տարակուսում էին ե պիտի լինի թէ ոչ։ № 16-ի տպագրութեան հսկել է ինքը բանահաւաք Յ. Աւշեանը. և մենք տնատելուց յետոյ՝ մէկ—երկու ծանօթութիւններ ենք միայն աւելացրել։ Յատուկ անուանացանկը կազմել է Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի Դ. դասարանի աշակերտ Սարգիս Ոսկերչեանը։

Բոլորին էլ մեր շնորհակալիքը։

Ստեփան Լեռնայեանց

22 յուլիսի 1910. Վաղարշապատ։

ԹԼԷՕԼ ԳԻՒԻԹԻ ԽԷՔԵԱԹ.

1. Օրհնեա՛լ բարեբար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորաց։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ Աստղիկ բազաւորուն։

Տարկեն 1 օղորմի մը խաղաղ օղորմի՝ Սանասարին։

Տարկեն օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ ծուռ Պարսաւարին։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ ձոչիկ Մհէրին։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ Զէնով Ցովանին։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ Թաւլան Վէբոյին։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ տղայ Դաւիթին։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ այգեցիկ Մհէրին։

Տառնամ օղորմի մը կուտամ հաղաղ օղորմի՝ կապոտ Կողայ բազաւորուն։

Տառնամ օղորմի մը կուտամ հաղաղ օղորմի՝ Սառան խաթունին 2։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ Սիւռաք խաթունին 3։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ Կիւլիզար խաթունին 4։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի՝ Սինամ խաթունին 5։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի ձիւռ Կիւլակին 6։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի խանցիւր խաթունին 7։

Տառնամ օղորմի մը կուտամ խաղաղ օղորմի բառուն ճօղ ծամին 8։

---

1 Կրկին։ դարձեալ։ 2 Սանասարի մայր։ 3 Սանասարի կին։ 4 Զէնով Ցովանի կին։ 5 Դաւթի մայր։ 6 Թաւլան Վէբոյ կին։ 7 Դաւթի կին։ 8 Դաւթի զոքանչ։ Կապուտ Կողայ Թագաւորի կին։

Տառնամ օրօրմի մը կուտամ խապար օրօրմի ճըսչն ու պատկին մեծն ու մաքուրին [1]։

Ա.

2. Ժամանակի մէկ Սաննայ քեռաղքի մէջ մէկ փիր [2] ըղթխար [3] թագաւոր մը կէլնի, Ատպիկ թագաւոր։ Ատպիկ թագաւորուն մէկ աղջիկ մը կէլնի շատ տեսակով [4]։ Քեռաչանց թագաւորու լոճ՝ էրաղի մէջ կտեսնայ Սաննայ թագաւորու աղջիկն՝ վեր ինոր ակրու տէր կէլնի։ Բարեկամութնով Ատպիկ թագաւորից կուզի ուր խամար, չի տար։ Կելնի ասքիսր կաւնի էրթայ վէր Սաննայ քեռաղքին, եզիր [5] կանի կըլիրի ինոր աղջիկն։ Աղջիկն մէկ չէշիտ [6] կրար [7] կիտայ, որ տանին պտակ անին։ Կէրթայ կմանի մէջ եօթոտանին. եօթ տուռ կշինի [8] ուտգ կանի։

3. Մինչև տարի մը էրկու կմնայ մէջ էն ուրքին, եայ որ շատ կնեղանայ ուր խալայեղին [9] կասի պէօղչէն [10] առ էրթանք ծուլու պռուկ ուրախութեն անինք։ Ծուլու մօտ որ կխատնեն՝ շատ կծարվնայ. Խալայեղին կասի Ատծու սիրուն ջիւր մը կնաի որ խմեմ։ Խալայեին շատ կֆռայ ջիւր չի կնտնի։ Կէրթայ ձիու մը տտայ տեղ կգնանի, որ էրկու կուց ջիւր կայ ինե [11], կիսմի. մէկ թատամ մէկ կիտատ կուց կէլնի ջուրն։ Էլաւ էն տեղէն տարձաւ՝ մտաւ կէնայ [12] ուր եօթոտանին [13] մէջ։

4. Ինն ամիս ինն օր ինն ոնաթ որ լմնցաւ, Ատուաց էրկու տղայ իտուր Սառան խաթունին։ Ծնած ժամանակ խրեշտակ կուգեայ ինոնց անուն կանի, մէկին Սանատոր՝ մէկին Պաղտատոր։

5. Քեանի մը տարէն ետրա տղէյներ որ կըճըրչանան, կելնին կէրթան Քեռչանց քեռաղաքը խետ ճշերաց [14] կխաղան։ Քեռչանց ճշեր կթափեն խոնց վէրէն կծեծեն՝ կասեն։ «տիւք փիճ էք։» [15] Երբ որ ինոնց խօսք կլսեն լալով կէրթան մօտ ուրենց մէր կասեն. «Նայ [16] մեր խօր սալրին տուր [17], եայ կէրթանք մե կթա-

---

1 Այս խէրեար սասղներ, որ առաջ ոպրմի չտան վերոյգրեալ մարդերուն. մեզ ի. ասայ վարպետն 2 Գլխաւոր, ծեր։ 3 Ծեր, պառաւ։ 4 Գեղեցիկ։ 5 Գերի։ 6 Տեսակ։ 7 Հաւանութիւն։ 8 Կը գոցի, կը փակի։ 9 Ծառայ։ 10 Կապոց։ 11 Մէջ. ի ներքս. ի ներս, նեռ. ինե։ 12 Դարձեալ։ 13 Եօթնագունայ ներս(?)։ 14 Այլ բարբառներուն ճիժ. ճժեր։ Այս բարբառում էլ ինչպէս տեղեկացանք միեւնոյնն է. բայց Թոքինք ինչպէս որ կար։ 15 Պռունկորդի. ապօրինի գաւակ։ Հաւանօրէն վրացերէն բիճօ բառից=տղայ։ 16 Կամ. 17 Լաւ տալ, բացատրել։

ղինք ծով»։ — Մէր կասէ, որտէ, ձեր խէր Քեռչանց թագաւորն է։ — Զէ՝ կասեն մօր. թէ որ մե խէր էլնէր խալխ մե վնաս չին տեր։ Տարի մը էս խօսքով լաճեր կըրռնպտի[1] նեռու։ Տարին որ կըմնայ լաճերն էլմէլ կէրթան Քեռչանց երկիր կխատան։ Էն տեղայ ազէք նորէն կթափեն վերևյտեր կծեծեն թէ, ուրք վնաս էր, ուրք ինչի կուգեաք մէջ մեպի։ Կենայ լալէլէն կտառնան զիրենք կթալեն մօր գլուխ։ Շատ որ կուլան՝ մօր ամիսը կուգայ կասէ. «Ա՛ռանք, ուրտարէք չուտ տուտուն ձե կտանեմ ձեր խօր տալու կուտամ»։

6. Առուտուն էլաւ խալայեխուն ասայ. «Ա՛ռ պէօզչան խեռ ազէյներայց էրթանք ծովու պուուկ, որ քիչ մը պտեռնիս քացուլ»։ Երբ գնացին, ազէյներ ուրենցմէ պատապան էն տեխ խաղալու։ Սանասար՝ ուէտու որ մէկ կապտա քիւռոն քեռը մը կէր ծովու մօտ, էն քեռը շուռ խուռը, տիկէն ձիու մը կեռամ 2 տուրս էլաւ։ Վէրէն շատ ուրախցաւ, մօտ կանչեց թէ, արի՛ խօրօտ բան մը գնայ։ Մէր ասայ. «Տատրի դեռամ տեռնամ ի՛նչ է»։ Սանասար էլ չտատրաւ որ մէրն խատնէր. կեռամն իպարկ մէջ ծովուն։ Ծով՝ Առուծու խնամքով քացուաւ. Քիւռկու ճալալին էլաւ ուրը, թամքն ատատֆի վէրէն պտարատ։ Կապէն[3] ատթպին, քեռամը ֆէհրսին[4], խօտէն գրին[5], խաչն պտատրագին, որ ունի վեր ուր աջ թեւին որ տըռպ[6] չառնի. թուրն կեծակին, թիւթրիկ[7] կոռզեր, ծանոր ըռմեր[8] պիթիւն[9] ծովուց պտատրատա ուրը էլաւ։ Սանասար խատաւ կեռամն տրեց ձիու ըէրան, ասայ. «Մա՛րէ, արե իմ խօրն ուալս տուր չէթէ՝ քե ծով կթալեմ»։

7.—Մէրն ասայ. որտի՛, ուր խէր չունես։—Տղէն ասայ ես խօ քիսալի, թիվի տիկէն չեմ էլե. հալպաթայ ես մարտուց էլեր եմ։ —Ասայ, որտի, ես մէկ ժամանակ խեռ իմ խալայեխին էկայ էս տեղ ուխտ անելու, շատ մը ծարվցայ. խալայեխին ասի մէկ ջիւրմը կնտի ձիկ[10]. խալայեխն էն տարպար[11] շատ ֆռաց ձիու մը ասայ տեղ ջուր կնտաւ. ես էլ էն ջիւր խմայ, մէկ կուս թամամ[12] մէկ կկոատ։ Առաւաց՝ ձե էն ջրկց խտուր ձիկ, տիւ էն թամամ կցկցն ես. ծուռ Պաղտասար էն կիատ կցկցն է։ Թէ որ կկատրցուցես իմ խօր անէն որ կայս իկեր էմ

---

1 Կը բռնաղատի. երեի բռնապետ բառից։ 2 Սանձ։ 3 Վերարկու։ 4 Քաջ մարդու։ 5 Գլխու զրահ։ 6 Հարուած։ 7 Լախտ. հովիւների ծեռնափայտ, որի հատ ծայրը բեւեռներով է ծածկուած եւ զէնքի տեղ է ծառայում շատ անգամ։ 8 Տէգեր։ 9 Բոլոր։ 10 Ինձ. ընձիկ։ 11 Այս ու այն կողմ։ 12 Ամբողջ, լրիւ։

մինչև էսօր ըսկուն կոյս եմ. և ձեզիկ ծնելու ժամանակն ինսանմօտ ձիկ չիկե. մենակ խրեշտակն էկաւ ձե անուն տրաւ:

8. — Տղէն ասաց. մենք մեր էյութեն խմացանք. ակ տրե տիւ քըոյ էյութեն խմցուր մեզի. հանպատ[1] տիւ խէր ունեաս: — Մէր ասաց. որտի, ես Սանայ Ատղիկ թագաւորու աղջիկն եմ: — Ասաց արէ, տիւ քըոյ խօր տուն կիտես տորի, որ էրթանք էն տեղը: — Գիտեմ ասաց Սասուն իս: — Որտին ասաց. ակ տրե մէյտեղ խէծնենք էրթանք Սասուն: Սանասար խէծաւ մէրն տուեցիտև. Պաղտասարն իսկեց ձիու յառջև գնացին Սասնու քեռզաք: Որ քաղքին մօտացան, ակնճկէն տարան Սասնու թագաւորուն թէ, քըոյ աղջիկն էկաւ էրկու շահզատայ էլ խետ:

9. Ատղիկ թագաւոր չաւմ էն օր ըսկաւմ լացերէր ուր ախչկան խամար, որ աչքեր վնասվեր էր. երբ որ լաւ, շատ ուրախացաւ. էլաւ գնաց ախջկան տէմ: Երբ տէսաւ որ ախչկան խետ մարտ[2] չկէր՝ մենակ էրկու լաճերն ին, շատ տուտմաւ: Սասնասարն ասաց ուր ճըոչ պապօին. «Տիւ ի՞նչի ես տուտմեր:» — Թագաւորն պատասխան ավեց թէ, տիւք Գաչանց թագաւորու լաճերն էք, շահզատայ էք. պէտք էր որ խետ ձե էրկու խարիր ձիպաւոր էլնէր, կայ չկայ որ տիւք խուռվեր իկեր էք: — Ասաց մենք չենք խուռվե. մենք որ կանք, խրեղէնից ծներ ենք: Քըոյ աղջիկ մինչև մկայ էլ կոյսի: Ինոր խամար մեր մէր իրիսանց իսկիցին. մե էլ կասեն թէ տիւք վիճէք: Էս խօսքի խամար էլանք էկանք ծովու քեռնար մեր մօր շատ ապաչեցինք, որ մեր խօր տալիք տէր: Մեր մէրն էլ էս ջիւապ[3] իտուր մե: Մենք մկայ իկերենք քըոյ տուռ, թէ մե կսիրես մենք քըոյ զաւակներն ենք: Ասիւց ոչա էլ մի վախնայ, Գաչանց էրկրից էլ մարտ չի կանայ պայ քըոյ աղջիկը յէսիր անե տանե: Էս խօսքի վէրէն թագաւոր շատ ուրախացաւ. մէկ օտայ[4] իտուր Սասնասարին, մէկ Պաղտասարին. մէկ էլ իտուր ուր ախչկան: Պաղտասարի տանխաթ՝ 5 էն էր որ չաւմ իրիկուն կէրթէր ճան կկտպէր:

10. Գեռչանց թագաւորու ախջիկն՝ Սաւառթ խաթուն որ քառասուն ճօղ ծամ ունէր, մէջ էրազին զինք տեսաւ Սասնասար և շատ սիրաւ տէր էլաւ վեր ինոր: Աղջիկն խմացաւ էս բան, էլաւ ուր սիւռաթն[6] գրեց մէջ թղթին իտաւ էրկու մշակու ձեռք, որ տանեն թալեն Սասնասարի էրտիսն վեր. «Զէլնեմ չիմանամ, ասաց, որ թալէք Պաղտասարի էրտիսն վեր»: Մշակներ որ տարան չգիտցան վուրու էրտիսն էլնելն, տարան թալեցին ծուռ Պաղտասարի էրտիսն վեր: Պաղտասար տուռաւտուն

1 Դ հարիկ. գաղտ. երեւի 2 Ա. յր. էրիկ: 3 Ջիւապ — պատասխան: 4 Սենեակ. գոմի մէջ կամ կից ծառաների՝ յանախ եւ հիւրերի համար: 5 Ա. ինտա. պարապմունք: 6 Պատկեր.

որ քնաց վեր էլաւ, տէտաւ էտայ թղթի վրայի սիւռաթն համայ՝ խելքն գնաց, արուն էլ քթից փռթաւ էկաւ։

11. Սանատարն էլաւ տիւրս տէտաւ, որ ուր ախպօր աստղն նվապէր էր, անճախ[1] կտոր մը խոզի մնացեր էր մէջ. վազեց գնաց Պաղտասարի յէօտէն. սիւռաթն որ էն տեղ տէտաւ ծաւլեց իտի ուր ծաց. ախպէրն խանեց վեր, քիթ բէրան լվաց։ Պաղտասարն էլ չխարցուց էն պատկերք, վազեց գնաց ճան խաղալ։ Սանատար գնաց մօտ մէր։ «Ասաց, մարէ, եմ պատրաստութեն տես, ես պիտի էրթամ Քեաչանց երկիր. թուղթ իկե եմ իտև»։—Մէրն ասաց, որտի. մի էրթայ, էն երկրէն անճախ վուրթանք էկանք։—Տղէն ասաց չէ՛, պիտի էրթամ, թէ որ իմ գլէօխն էլ դնացեր ի։ Մէր պատրաստութեն տէտաւ պռծաւ. Սանատարն էլ թռաւ ձին, խէծաւ։ Համայ քշեց տեխ Քաչանց երկիրը։

12. Խառաւ չորս ճամխայ խառնուրտի մը մէջ, տէտաւ որ փիր ըղթիտր մարդ մը նստե էնտեղ. «Ասաց, բարեւ քե պապլխ»[2]։—Ատծու բարին քե Սանատար, ասաց խալիւորն. տէ ձիուց իչի վէր, քե խօսք մը ունիմ ասելու։—Պապա ասաց տիւ վոր ես, որ ձիկ կճանչնաս։ Թէ ես Սանատարնեմ։—Ասաց՝ ես եմ խրեշտակն Ատծուն, որ նստեր եմ ըստեղ ճամպախներ կբաժնեմ։ Տրոր պիտի էրթաս Սանատար։—Ասաց կէրթամ Քեաչանց երկիրը. ձիկ մէկ բարի ճամպախ մը նշանց տուր։—Էն էլ ասաց, թէ էտայ ճամբախն էրթաս, կէլնիս թագաւոր. թէ որ մէկալ ճամպախն էրթաս, կէլնիս թիւճար[3]. ամայ՝ թէ որ էրթաս Քեաչանց երկիրը՝ էն տեղ վնաս կը քաշես։—Սանատարն ասաց էն տե՛խ[4] պիտի էրթամ, թէ որ գիտնամ իմ վիզ իրեք տեղով կտրեն։ Թէ որ ուրիշ խրատ մը ունես ձիկ ասա։ Էն էլ ասաց. «Որտի, որ կէրթաս. ինչոր քե ռաստ կուգեայ[5] թէ քար՝ թէ թիւվ, թէ յայվան[6], թէ ճանավար[7], ըմէնուն էլ բարեւ տաս, առանց բարևի չընցնես. թէ որ առանց բարեւի ընցար, էն երկիր սէհրի[8] ի քե շատ վնաս կուտայ»։

13.—Սանատարն ասաց. մնացիր բարի, էլաւ խէծաւ համայ քշեց տեխ Քաչանց երկիր։ Գնաց չուտ քեռդաք. հասաւ թագաւորու խաս պաղչէն. տէտաւ որ Սիւռաթ խաթուն խետ քեռուն խալայեխի վեր ախպրին նստեր էր, էլաւ Սանատարի դիմաց, տէտաւ ըսկուն խօրօտէր, որ էրադի մէջ տեսածէն եօթնապատիկ աւելի էր։—Ասաց, Սանատար, խապար ափոսա քլոյ ճախէլութնին, որ էլար էկար իմ իտև։—Ի՛նչ տիմացով ափոսա կասես։—Սիւռաթ խաթիւն ասաց, էն ապով, որ կվախ-

1 Հապիւ։ 2 Պապ։ 3 Վաճառական։ 4 Դեհ, կողմ։
5 Հանդիպել։ 6 Անասուն։ 7 Գաղան։ 8 Հմայող։

նամ գալնեն քե ապանեն. էսայ երկիր սէհրի երկիր մը ի։—Էն էլ ճուղապ տվեց, ասաց՝ «Էրկէն խօսք պէտք չի, թէ որ կուգաս, թուի ձիւռ վէրէն քե տանեմ. թէ չես իգայ, վերջի խօսք տուր ես տառնամ էրթամ»։—Ինչպէս չի գեամ, ասաց Սիւռաթ խաթուն, ձիկ ճան մը կայ քըոյ ուզուրին ի։ Ես քե կանչեցի ելելի որ խեստ քե գեամ։ Ասաց թէ չէ համայ թուռաւ ձիւռ քեամակ Սանասար քշեց գնացին։

14. Վերջ ճամբուն ինչոր ըռատա էկաւ բարև խաւր Սանասար թէ քեար, թէ թիւվի, թէ ճանաւար, մինչև եկեց[1] էն երկիր։ Էն տեղ մէկ մուռատաւ ճանաւար մը ըռատա էկաւ, ինոր բարև չի տուր։ Էն ճեանաւարն էլ էլաւ խեստ էրկնուց բանձր ձէնով կանչեց. «Հա՛ տարա՛ւ, Սանասար քեառատն ճէօպ ծամ ապջիկն տարաւ»։ Էս ձէն քեարն լսեց՝ տվաւ թվին, թիւվին ծառին, ծառն հայվանին չուռմ ձէն խառաւ մէջ քեապքին։ Քեապաք քեապքով՝ մէկ մէկին խառար տվին, խեծել խէծաւ բաղմացաւ, ինգեան Սանասարի խաւէն։ Ծովու աւազին խեստապ[2] կէր, երկնուց աստղին խեստապ կէր, գէանի քիւյսին խեստապ կէր, խեծլին՝ խեստապ չկէր։ Սանասարն էր՝ ապջիկն տարաւ խալ մէկ բանձր սարի մը գլէօխ տուցաւ տեխ խեծել, քաշեց թուրն կեծակին ասաց.

«Ցիշամ քե խէրն կենտանին,
Մարութայ բանձր Առաւածածին,
Խաչն պատարագին վեր աջն թեւին։»

Եօթն օր գիշեր ցէրէկ անօթի ծարաւ ըրաեց էտ խեծել։

15. Աւաւր մէկ Պաղատասար ճան խաղալու մէջ աչքն իսկեց[3] վեր Սանասարի աստղին, տեսաւ որ ախալոր աստղն նվազեր ի։ Համայ ճաներն լիթալ վազէվազ գնաց տունը՝ մօտ ուր մէր, ասաց. «Տիւ եմ ախալէրն սրտի՞ր ես օղորկե»։—Ասաց ես տեղ չեմ օղորկե։—Ի՞նչա[4] չես օղորկե, չէ՞, կէօ. իմ ախալոր աստղ նվազի. մնացե վիշուր մը հոգին։—Ասաց աղի՞ր ասեմ. քըոյ ախալէր գնաց Քեաչանց երկիրը։—Քըոյ տուն աւելի, ասաց Պաղատասար, ինչի ձիկ խասար չտվիր, որ ես էլ մէկ տեղ էրթի[5]։ Տառնաւ ասաց, մարէ. ի՞նչ ուլաս[6] ի թոզե ըստեղ։ Մէկ թեթեւ ըռըմ. տառաւ ուր ըռըմ, պլըկվաւ տեխ[7] Քեաչանց երկիրը. աչք թարթելու չափ խասաւ ախալոր հաւարին[8]։

16. Զատանց տեսաւ մէկ սև ձիւռոր մը, որ ալքնի մէջ թաթըխվիր ի, ինկե մէջ խեծելին կկտրի։ Կանչում մը կանչեց խաւր վեր սև ձիւռորին ասաց. «Պատրաստ կաց, կայ չկայ ախ ես

---

1 Հասաւ, 2 Հէսապ=հաշիւ ու համար։ 3 Քցեր, ծգեր։ 4 Ինչպէս։ 5 Երթայի։ 6 Սիլահ, զէնք, զրահ։ 7 Սլացաւ-դէպի։ 8 Սղնութեան կոչին։

իմ ախպէրն ապանէ, խեռ խատաց քրոց խոպին Աստուն թաա-
ելիմ կանեմ»։ Տարաւ իպե մէկ կիւռպ մը իզարկ մէջ ախպօր
արտին. ախպէր ինկեաւ վեր ձիու ատպուն[2]. ամաց կէնաց շատ
թռաւ մէջ թամքին։ Տարձաւ կիւռպ մը էլ իզարկ, թամքից իսկեց
ախբա. ախպէրն նորէն շիտկվաւ մէջ թամքէն, ամաց ձեռաց
էլաւ։ Սանասարն ուրեց եղանակով մը ասել

«Օրնեա՛լ քարերաց Աստուած,
Ինամը շատ ի մեծ թագաւորուն։
Տռպիկին[3] նման էր մեր ծաւռ Պաղտասարին.
Թափիկին նման էր մեր ծաւռ Պաղտասարին»։

17. Էս խօսքի վէրէն Պաղտասար ճանչցաւ որ ուր ախպէրն
էր, ասաց. «Տի՛ւ արնասվեր ես, քե չճանչցայ. տիւ ինչի զիկ
չճանչցար խապար չտվիր որ ես քե տրուպ չիտայի։—Դարձաւ
Պաղտասարն ասաց. ախպէր, էն տեղէն նէճիր[4] ըմբեր ես չէ
տառատակ ես եկիւ։—Ձուզապ տվաւ, թէ Քաչանց թագաւորի տղ-
ջիկն ըմբեր եմ, կէս էնաց բանձր տարի գլօխն ի։ Ուրեց ուր ախ-
պէր տարաւ մոտ ախջիկն. զատանց աչքով արաց տղջկան, որ
գիտայ ուր ախպօր ձեռք[5]. էն էլ ալիկանճայ[6] էլաւ էկաւ Պաղ-
տասարի ձեռ քէ։

18. Պաղտասար վէրէն շատ ուրախցաւ։ Էն տեղն ասաց. «Խար-
ատայ, իմ ախպօր խալմներ արունից լվայ։ Էն մնացած տարեարն
մնաց եմ վրայ»։ Ասաց թէ չէ համայ տռեց ուր ըռըմ տրեց
վեր թիւին գնաց ինդեաւ մէջ խեծելին, կարեց եոթն օր. մե-
նակ էն լիթուլ, որ տնէն չէր լիկ, մէկ խապարեր մը չվութուց։
Տառցաւ գնաց մոտ ուր ախպէր ինանց խէծցուց, ինքն յառա-
ջադէմ գնաց մոր խապար տարաւ թէ, Քեաչանց թագաւորի
ախջիկն ըմբերենք. նաղարէն զուռնէն հազրը էլնի, որ խարանիս
անենք. մէրն էր. քառասուն ձեռք նաղարայ զուռնայ ըեբել
տվաւ, քեազքցիր զըմէն ժողվեց. քառասուն օր քառասուն գիշեր
խարանիս արին, ախջիկն պատկեցին վեր Սանասարին։

Բ.

19. Ժամանակից ասրայ Աստուած իրեք տղայ իտաւ Սանասա-
բին. առջնեկ Մէրը, միջնեկ Զէնով Ցովան, պատկին էլ Թառլան
Վէգօն։ Մէրն երբ չափն առեց, կարգվեցաւ Սինամ անուր

---

1 Յանձնել։ 2 Գաւակ։ 3 Հարուած. 4 Որս. որ-
սորդութիւն։ 5 Գալ ձեռքը=գտնել. հանդիպել ձեռքը։ 6 խա-
կոյն եւ եթ.

ախջկան մը հետ։ Մէկէլ ախոպէրներ իրարու խռիւէն հատան[1], Զէնով Յովան պատկիւռ խեռ Կիւլիզար խաթունին, Թառլան Վէգօն էլ խեռ ձիւռ Կիւլակին։

20. Ժամանակ անցիր էր Մարայ թագաւորուն ազայ ծնած չէր. օրօխկեց Առանայ քաղաք կարիճ Մհէրն կանչեց ուր մանչիս. ասաց.—Մհէր, գիտե՞ս քե ինչ ապով[2] եմ կանչե։—Չէ ասաց, թագաւոր ապրած կէնայ, չեմ գիտե։—Թագաւորն ասաց իմ եաշն[3] ընցեր ի, չուտ էսօր Առաւաց ձիկ զաւակ չավե, ես ճհէլ կնիկ մը ունիմ, տիւ էս գիշեր պիտի էրթաս իմ կէօղվէնք[4], որ ձիկ տղէ մը էլնի. իմ թագաւորութեն պահի իմ տիւշմանքաթիկաց դէմ կայնի։—Էտայ չէլաց քան ի, ասաց Մհէր, տիւ անօրայ տաճիկ ես, ես քրիստանեայ. ինչպէս կանամ մանե քըոյ կէօղվէնք։

21.—Թագաւորն ասաց. Մհէր, ես քե սիրեր եմ, խաթրով էլե պիտի էրթաս, զօռով էլե պիտի էրթաս։ Մհէրի չաբէն կարաւ. գնաց ինոր կնկեան մօտ. առաւաւն երբ որ էլաւ, իգին ուզեց թագաւորուց, գնաց ուր քեռդաք. ինն տվիս, ինն օր, ինն սհաթ որ թմբմաւ. թագաւորու կնկեան տղէ մը էլաւ, անուն իտիր Մէլիք։

Գ.

22. Մհէրին էլ չուտ էն օր պատուզ չկէր, վեց տարիէն որայ Մհէրին էլ տղէ մը էլաւ՝ անուն իտի Տաւիթ։ Տաւիթի քառասունք տէլ չէր լցվե, Մհէրն մեռաւ։ Վինամ՝ Տաւթի մէր, կօնտախ[5] ութօղ մէջ տախտին ասաց. «Իտև Մհէրին, արեւալոս ձիկ խարամ էլնի», եօթոտով նեբս[6] մատ ուզ պահեց։

23. Էլան Տաւիթ, որ շատակեր էր ուրենք էլ ծիծ չունէին, ինոր խամար տվին էրկու մշակի քեռամակ, որ տանեն Մարայ Մէլիքի մօր շախելու։—Մելիքի մէր ասաց. խաղար բարով էք իկե էտ էլ իմ զաւակն ի կշախեմ։ Երբ ծիծն իտիր քէրան տաճկի ծիծ էլնելու խամար Տաւիթ չծծեց. մէրն էլաւ տաւրի կաթ լցուց մէջ կուաշին, Տաւիթին կիպցուց. չուտ Տաւիթն էլաւ իրեք տարեկան, կաթից կարեց։

24. Ին ժամ Մէլիքն էլէր էր կարիճ ճհէլ։ Քառասուն կիսր տռճիճ արեր եր ուր հէօլ, օր իրեք գիր կրզարնէր կտանէր տարի գլօխ, ձիաւորներ կէրթին կրիրին։ Տաւիթ խարցուց ուր մօր «Իմ տիպէր Մէլիք ալոր կէրթայ հմեն օր»։—Ասաց կէրթայ գէալ խաղալ։—Տաւիթն ասաց. ես էլ պիտի էրթամ ոէհր ունեմ։

---

1 Մեծացան. չափահաս դարձան։ 2 Պատճառաւ։ 3 Հասակ. 4 Անկողին։ 5 Խաճարուր, բալուլ. 6 Եօթը դռնով նեբս (?!).

25. Մելիք էկաւ տուն տեսաւ որ Տաւիթ կուլէր, լալու պատճառն մը խարցուց։ —Ասաց. որտի, կասի պիտի էրթամ ախպօրս խաղն ուէր անեմ[2]։ —Մէլիքն ասաց, մարէ, թող չիգեայ, էն մեր գլխաւն պատուխաս պիտի էլնի։ Տաւիթն՝ շուտ իրեք օր միշտ լալուն խամար մէրն ասաց. «Որտի, թող մշակներ շկան լիրեն ուէր անի, զարար չուանի[3]։

26. Երբ Մէլիք հէօլ կզարնէր, գէտին ուէլի աղուրի 4 պէս կճըղվէր։ Տաւիթ գնաց մտաւ էն աղուրի մէջ։ Մելիք չորս մարտ օղօրկեց, որ Տաւիթ վերուցեն, էնչափ ջանք արին չկարցան. ինչ որ մարտ մը չի կանայ ծառն ուր քէօքից տիւրս քեաշել։ Ասաց. «Թող տվէք, ես իմ հէօլ պիտի զարնեմ, թէ որ տիպաւ ինար՝ ինչխ կէլնի թող էլնի»։ Մէլիք որ հէօլն իկարկ. Տաւիթ ձեռ թալեց հէօլն բռնեց տրաւ ուր ծնկան տակ պախեց։ Զիաւորներ շատ փտուեցին տաշտի մէջ չգնատան։ Տաւիթն էն ժամանակ հէօլ խանեց տիւրս թալեց մէյատան։ Մէլիքն որ տէսաւ, էն ժամ որթոխաւ[5] գնաց տուն։

27. Մէրն էկաւ ասաց Մէլիքին. «Որտի, ինչի ես բարկացե»։ —Ասաց. չէ ես քե տի էն շանարտին մի օղօրկի մատ ձիկ. իմ հէօլ բռնեց պահեց, քէֆս կատրեց։ Զուտ էն տղան չգինէք[6] ես ինար արաւն չխմեմ, իմ սիրտ չի խավնայ։ —Մէրն ասաց, որտի, էն տղայ ի, յիմար ի, ուր արածին խելք չի խանի։ —Թէ որ բարկանի, ասաց Մէլիքն, աման մը չամիչ՝ աման մը էլ կրակ տիր առջեւ. թէ որ ձեռ տարաւ տեխ կրակ, ես կգիտնամ որ յիմար ի. թէ որ տեխ չամիչ տարաւ, խէլացի ի։ Զամիչ ինան[7] կրակ տրին Տաւթի առջեւ։ Տաւիթ ձեռ պիտի պարզէր տեխ չամիչ, խրեշտակներ ձեռը բռնեցին խոթեցին մէջ կրակին։ Կրակ կպաւ մատը, ձեռն խրիցաւ, տարաւ տրաւ բերան, լէզուն էլ խրիցաւ. ինար խամար Թլոլ Տաւիթ կասաւի։

28. —Մէրն ասաց, տէսա՞ր, տղայ, ինչխ ձեռը տեխ կրակ տարաւ։ —Մէլիքն ասաց. չէ, մարէ, ես տէսայ որ ձեռ տարաւ տեխ չամիչ՝ ամայ խրեշտակներ բռնեցին տարան տեխ կրակ։ Զուտ ինար գլխս չկտրէք, մէկ գէօմշու կուտաշով[8] ինար արաւն չխմեմ. և ինար շապիք չուտ չթափթխէք մէջ արբնին, չքաշէք իմ իրեն՝ իմ սիրտ չի խավնայ։ —Մէրն ասաց. թող ինար խոր մշակներ առնեն գինք, տանեն տաշտ գինեն, որ ինար ձէն չինի իմ տկանճ ու ես պատռեմ։

29. Մշակներ առին տարան տաշտ, տրին վիր կարմնճին, որ

---

1 Կապար։ 2 Հանդիսատես լինել. գրօսնել։ 3 Վնաս։ 4 Սայլի անիւների Թոզած ակօսաձեւ հետքը։ 5 Բարկացաւ։ 6 Զմորթէր։ 7 Էլ։ 8 Եղջիւր։

պիտի գինէին։—Տաւիթն ասաց. ի՛նչ կանէք։—Ինքնք էլ ասին քե պիտի գինենք, քոյ արուն տանենք Մէլիքին խմէ, որ սիրտ խավնայ։—Տաւիթն ասաց. ես անտէր խեղճ ազայ եմ, ձիկ մէք գինեմ մեղ ուրիշ ճանաւարմ գնտէր գինէք, տարէք թող մէլիք խմի, սիրտ խավնայ։ Էս խօսքին խաւնեցան, իրիշկեցին[1] տէտան որ ճանաւարմ չկէր էն տեղրանք։ Տաւիթն տէտաւ որ էն տեղ լապզարակ մը կայ կփտխանի, էլաւ փութաւ խաւէն. ռանեց վիզ կտրեց, կուտաշ լցուց արուանով, շապիքն էլ մէջ թաթխեց, տվեց տարան Մարա Մէլիքին։ Էն էլ խմեց, օխ մը քաշեց ըրբխաթաւ[2]։

Դ.

30. Տաւիթ մշակներէն տալխ առեց ուր քեռու տան ճամպախ, գնաց էն տեղ։ Ամայ շատակեր ազա մը էլնելու խամար չեն կանայ կշտացուցե։—Քեռին ասաց, Տաւիթ. արե քե անեմ գեղին գեառնարած. համ՝ հալա կառնես, համ՝ գեղի մէջ խաց կուտես կկշտանաս։ Տաւիթ խաւնեցաւ էս խօսքին, առեց գառնէր տարաւ սար, խամպրեց տէտաւ որ քիչ են, ասաց. «Ես պիտի էլնեմ էսայ սարքիչ մը էլ գեառ ժողվեմ»։ Էլաւ սար տան տանբխինգ հատ լապզարակ ժողվեց իրէ մէջ գառներաց։

31. Էվարին[3] տեղաւորեց գեղի գոմ. գնաց մօտ քեռին, ասաց. «Քեռի մը խատ չար ուլ կայ մէջ գառներաց, ձիկ շատ չարչրեցին։ Էն ուլեր որ առաւտուն չխանես գեառներաց մէջէն, ես չեմ էրթայ խետ գեառներաց»։—Քեռին ասաց. առաւտուն կէրթանք վեր գոմի առան, տիւ գեառներ խան տիւրս, ուլեր կպահանք ըստեղ։ Առտուն որ գնացին վեր գոմի առան՝ Տաւիթն ասաց. «Քեռի, տիւ մահ ներս գեառներ խան, ես ուլեր կբռնեմ, տիւ ինձ չես կանայ բռնե»։—Քեռին ասաց. չէ, որտի, տիւ պատիկ ես. տի՛ւ մահ ներս քշե գեան, ես կբռնեմ։ Տաւիթ որ գեառներ տիւրս արեց՝ լապզարկներ փախան։—Տաւիթն ասաց, քեռի. տիւ ինչի՞ իմ ուլեր թողեցիր գնացին։—Ասաց՝ ինքնք ճանաւարմ ին, որտի, ուլ չեն։

Ե.

32.—Տաւիթն ասաց՝ տիւ որ իմ ուլեր թող տվիր, էլ ես քլոյ մօտ չեմ կայնե։ Իմ խօրօխալէրներաց երկիր ձիկ նշանց տուր, ես կէրթամ ինձնց մօտ։ Ու ճամբան քեռուց իմացաւ գնաց տեղ Սասուն, խատաւ քաղաք խօրօխարօր առան առջև

1 Նայեցին։ 2 Հանդստացաւ։ 3 Երեկոյեան։

կայնաս։ Խօրօխպէր տիւրս էլաւ գինք ու տէսաւ, խարցուց թէ, տի՛ւ վո՛վ ես։—Էն էլ պատասխան տվեց թէ, ես քրոյ տխապէր Մհէրի լաճն եմ. կատա տրի՝ քրոյ տուա՝ Մորայ քեռպէքէն վասայ էկայ։—Զէնով Յովան ասաց, տիւ բարով ես եկե, որտի, ես քե գլխաւս վէրէն պիտի շախեմ, քանի որ տիւ իմ տխապօր տղէն ես։

33. Քանի մը ժամանակ պախեցին, տէսան որ Տաւիթ շատ կուտէր, ուրենք էլ տխքեատ էին չեն կանայ շախէ։—Զէնով Յովան ասաց Տաւիթին, որտի, որե քե տնենք գեղին նախրորդ, հեամ հախ կառնես, հեամ տուն էրկու խաց առնելով կու շատկուտես։ Տաւիթն էլ ընտունեց, էլաւ նախրատ. նախիր տարաւ տաշտ ու տոր կարուծէր։ Օր մը Տաւիթ նախիր խամբրեց տէսաւ որ 150 հատ էր, ասաց. էս տուաբ քիչի, էրթամ քիչմէլ գնանեմ որ իմ հախն ու հացն շատ էլնի։ Իրիկուն էկաւ տուն խօրօխպէր ասաց. «Զիկ մէկ ջուխտ պօղպատէ ոլ չինի, որ ես իմ գործն ադէկ կատավարեմ»։ Խօրօխպէրն գնաց տարբնին ջուխտ մը ոլ չինել տվաւ, բերեց Տաւիթին։

34. Տաւիթ ուր ոլերու վէրէն շատ ուրախցաւ, համան խագաւ նախիր տվեց տեղ ոտրն. գնաց ինչ կանտեաւ տաջ, խոզ, տալան[2] ուրիշ ճանաւարներ կէր ժողվեց ըերեց մէջ նախրին։ Խօրօխպէր որ կէտաւուր խաց տարաւ Տաւիթին, տէսաւ որ Տաւիթն խալալ խարամ տաւարներ խառնե յիրար. մէկ մէկից կփախնեն, Տաւիթն էլ ինկե ինոնց խաւէն կժողվի կբերի վեր յիրարու. էն կանտար[3] վազերէր որ պօղպատէ ոլեր ծակուեր կտռտվեր էր։

35. Խեռ խեռուն[4] Զէնով Յովան տառծաւ քարաք՝ թամբեխ[5] տրաց որ ուրենց տռներ շինեն[6]. քիւնչի Տաւիթ ըսկում[7] ճանաւար ժողվե մէջ նախրին, թէ որ մանեն մէջ քեռխքին, ձե պիթիւն պիտի ուտեն. տռներ չենեցէք չում ճանաւարներ փախնեն էրթան տար։ Տաւիթն էր՝ իրիկուն խարար խարամ պիթիւն մէկ տեղից նախիրն բերեց քեռաղաք։ Գնաց իտր ինոր շատ կանչեց, մարտ տիւրս չէլաւ. էլ թող խաւ նախիր. մինչի ճանաւարներ փախան գնացին տար. քեռախքցիք տիւրս էլան ամէն մարտ ուր տաւար տեղաւորելու։

36.—Տաւիթ ինոնց ասաց. Ատուած ձեր տուն աւիլի, տիւք թող տվիք հմէն կլաւ[8] տաւարքեր փախան տար, մնացին կապուանքատեր[9]. էլ ես ձե նախրատուրթեն չեմ ունե։ Խօրօխպէրն էկաւ քարկացաւ վեր Տաւիթին, ասաց. «Տիւ որ ըսկնայ[10] կանես, էլ ես քե չեմ կանայ շախե. տրոր կէրթաս գնայ»։

---

1 Յուսով գնալ. ապաւինել։ 2 Ոչխար։ 3 Այնչափ։
4 Անմիջապէս։ 5 Պատուէր։ 6 Գոյեն. փակեն։ 7 Այնրան։
8 Դեր։ 9 Նիհարներ։ 10 Այսպէս։

37. Տաւիթն էլ չխամբերեց առաւ ուր նեռվանեղն գնաց մէջ զառուս մը կոսեկի առաջին, ճնճղուկ կզարնէր, ուր ապրուստն ինորով կանէր։ Պառաւն էկաւ տէտաւ, որ Տաւիթ ուր կոսեկի առան տալի սաղապ[1] արիր ի, անիծեց Տաւիթին։—Տաւիթն ասաց. ձիկ մի անիծե, պառաւ, միայ[2] նեռվանեղ կտառձուցեմ վէր քեզ, քեզ կսպանեմ։—Պառաւն էլ ասաց. որտի, կէս գնայ էնայ խաւլիւորի կոսկի առտ։

38. Տաւիթն էլ լիթոդ գնաց արնայ[3]։ Խալիւոր ուր առան առաջ խինած կանէր, աչքն ինկաւ Տաւիթին, որ մտեր ի ուր կոսեկի առտը։ Կանչեց Տաւիթին ասաց «Որտի արե քեզ օղորկեմ գնայ Ծովասարը, Մարութայ բանձր Աստուածածին. որ քրոյ խէր ինոր բիւլոր պօղպտէ պատան[4] ի քաշե, վէրիւ[5] եղներ ինոր մէջ հէսար արեր ի. գնայ օր մէկ խատ ինանցիս զարկ կե. ճընճղուկ քե չի կշատացե»։

39. Տաւիթ խատաւ մօտ խալիւոր, ատնակ քեաշեց ասաց. «Ես քրոյ խինած կկարեմ, ես ձիկ նշանց պիտի տաս Ծովասարու Մարութայ բանձր Աստուածածնայ ճամպախ»։—Էս օր չէլնե, որտի, էս օր ես գրուծ կանեմ[6]. վաղ կիրակի ի, լան չունեմ, քե կտանեմ էնտեղ։ Մէկ ալ օր առեց Տաւիթ գնաց Ծովասարու Մարութայ բանձր Աստուածածին նշանց խատուր, ասաց. «Կէս էն քրոյ խօր վանքն ի. գնայ ինչխ գիտես ըսկուն արա»։

40. Տաւիթ կնաց էն տեղ տէտաւ որ պօղպտէ պատան քեաշուած ի վանքի բիւլոր, լանկէ մը[7] զարկաւ պատան շրջեց. էրկու խատ վէրիւ ոչխար զարկեց թալեց ուր թեւն. մէկալներ թող տվաւ գնացին ատաւ։ Էն էրկու վէրիք բիրեց ուր խօրօխ պօր ինկտեկաց ասաց. «Խանք իրիէք ուտենք. վաղն էլ կբիրեմ իմ խօր Ծովասարու վանքից»։

41. Տաւիթ մէկէլ կիրակին առեց ուր խօրօխպէր Զէնով Յովան և Թառլան վէքօն գնաց Ծովասար նէճիր[8] անելու. չում իրիկուն ֆռացին, անճախ էրկու խատ վէրիւ ոչխար զարկին, էլ իրիկուն չկարցան տուն գեալ, մնացին էն տեղ։ Զէնով Յովան Թառլան Վէքօն էն տեղ քնան։

42. Տաւիթ նստաւ ուր խատմար կրակ արեց, նեռվանեղի շրշով քեապաղ իրեց չում կէս գիշերին։ Մէկմէլ տեսաւ որ, Մարութի վանքի մարմար քեար բացուաւ, էրկնուց լրոս էկաւ վեր էն վանքին, Տաւիթն էլ ինոնց ձէն չտվեց, էլաւ գնաց վանքը. էն լրոս տէտաւ, խամբիւրեց վառաւորվաւ։

---

1 Հաւասարինցել։ 2 Հիմայ. այժմ։ 3 Այն կողմ։
4 Պարիսպ։ 5 Վայրի։ 6 Կտաւ գործել։ 7 քացի։ 8 Որս,

43. Էն տեղ՝ էն լրուսու ձեւով խոյանքտեկաց կամաք քաշեց[1], սեղանաքս[2] քեաշեց։ վիման տեղն էլ քեաշեց, ասաց. էստա սկնայ պիտի շինուի, քիւնչի վանքը խանարխվեր էր։ Տուցաւ էկաւ մատ խորհրդարանը. ձէն լոգեց գլոխ, էսայ տաղն ասաց։

44. «Օրհնեա՛լ բարերար Աստուած. խնամք շատ էր մեծ թագաւորուն։ Խէրախոտ խորհրդարանը, տիւ էլ վեր էլի քրոյ անուշ քընուց, մարմար քեարն էլ բացուեր ի, լրոն կամաք կապեր ի մէջ Տավատարին. քեզնէ կուզեմ 50 հատ ուսթայ[3], կուզեմ 50 հատ էլ քեար կտրող, 50 հատ էլ քեար տվող, 50 հատ կաւ ալող, 50 հատ էլ կաւ տվող, 50 հատ էլ ջիւր կրող, 40 վարդապետ, 40 սարկաւագ։ Էրկու շաբթի ձեռ թալենք վանքն Մարութին շինելու. ուրբաթ օրն էլ պռծնենք. լրոն շաբաթ օր՝ սուրբ անմախ պատարագն մէջ մատուցենք»։

45. Էս խօսքի վէրէն խորհրդարանը վեր թռան, ասին Դաւիթին. «Ձո՛ տղայ, էլնենք էրթանք էտ լրոս տեսնանք։ Իրեքն մէյտեղ էլան գնացին տէսան որ, հալայ լրոն կամաք կապեր էր վեր վանքին. Տաւիթն էլ էն լրուսու ձեւով եռ[4] քեաշեր էր խոյանքտեր շինելու։

46.—Ձէնով Յովան ասաց. ես՝ էս լաճու խոլխուրտ պիտի կատարեմ։ Դառնաւ Տաւիթին ասաց. ծո՛. տղայ, էլի 6 հատ վէրու եզ զարկ առնենք էրթանք քեաղաք, պատիւ տանք քեաղքացոց, էն ժամանակ ուսթէքն էլ վարդապետանեքն էլ սարկաւագնեքն էլ պիթիւն կժողուվեն, տիւն էլ քրոյ սրտի մուրատին կկատարես, վանք կշինուի։ Տաւիթ 6 հատ վէրու եզ զարկեց. մէյմէկ էրկու խատական շլկեցին գնացին քեաղաքը պատիւ տվին։

47. Ղորտ որ, Դաւիթ ինչս որ խնարեր էր ըսկուն կատարվաւ, ուսթէք, քեախանէք, սարկաւագներ հրմէն էլ հագըր եղան. էրկշբաթ ձեռք զարկին վանք շինելու, ուրբաթ օր լմընցան, մէկէլ օրն էլ անմախ պատարագ մատուցին. վանք միաբանով լցուցին։

Զ.

48. Ժամանակէ մը որայ Մարայ թագաւոր լմացաւ որ Սանու թագաւորութեն հատատավեր ի, վանքն Մարութին շինավեր ի, 40 վարդապետ, 40 սարկաւագ մէջ լեցուցեր ին։ Թագաւոր ասաց. էլնեմ խեծել առնեմ էրթամ վանքն Մարութին թալնեմ բերեմ, որ ինոնց թագաւորութեն չբազմանայ։

---

1 Գծեց։ 2 Սեղանի տեղ։ 3 Խրօխպէրներ արհնցեր կեսիւրիկ ականձ կանէին։ 4 Գիծ. սատանի եռ—սատանայի գիծ։

49 Էն կողմը մէկ քիւրթու էլ[1] մը կէր, ասաց թագաւորուն. «Թագաւոր ապրած կէնայ. տիւ խեծել մի անե, մենք 6000 խոգի ենք. կէրթանք էնտեղ զօզան[2], վրան կպարնենք, էն վանք կթալնենք կբերենք»:

50. Քրթեր գնացին տէտան որ վանքի տուռ չեն բանայ. մէջեցին[3] վեր ուրենց թէ, էրթանք շաբիք մը թաթխենք մէջ արքնին, զարնենք մզրըղի ծէր, անկենք վանքի տռան տառաջ, ասենք. մենք գնացինք Սատանու գեաւուրն ապանեցինք, էլ ձեր ումուտան մեռաւ. կուզէք տուռ բացէք, կուզէք մի՛ բանաք, ջում սև կուպր սիւտկի:

51. Էտա բան որ լսեցին վարդապետներ, ուրենք ուրենց տին, որ մեր Սատանու քեազաք աւրեր են. մեր թագաւորն ապաներ են, էլ ընչի՞ մենք մնանր վեր աշխարքին: Էլան տուռ բացին մէկ սարկաւագ օրօզկեցին գնաց գետից ջուր բերելու:

52 Քրթեր մտան վանք թալնեցին, վարդապետներ, սարկաւագներ զրմէն բըրտեցին. մենակ էն սարկաւագ ազատվաւ, որ գնաց ջուր բերելու: Սարկաւագն որ տարձաւ տէտաւ վարդապետներ, սարկաւագներ ապաներ ին, վանք թալներ ին, մէկ խին վարագիւռ մնացեր էր, թաթխեց մէջ արքնին տարաւ Սատանու քեազաք, տրեց Տաւթի առջեւ ու եղելութեն պատմեց Տաւթին:

53. Տաւթն բարկացաւ վեր սարկաւագին թէ, ինչի՞ տուռ բացիք: Էն էլ պատմեց թէ ինչ խաբելութենով տուռ բանալ տաւին: Տաւթն տռեց քանիմ՛ մարդ գնաց վանք սէրբրփեց. նարէն վարդապետ, սարկաւագ արեց մէջ վանքին շենցուց. ապսպրեց որ առանց ուր հրամանին վանքի տուռ մէկին մը վէրէն չբանան:

54 Տաւթն էլաւ ուր նեռվանեզ թալեց թեր, գնաց տար նէճիր անելու: Առջևէն մէկ վէրու զազալ[4] փախաւ. Տաւթն ընկաւ խտեւէն, տէտ ու տէն տարաւ լեռ չում գնացին խատան մէջ էն քրթիւ էլին որ Մարութի վանք թալներ ին: Ասաց ինանց. «Եա իմ զազալն տիւրա պիտի խանէք, եա ձեր էլն պիթուն պիտի թրէ ընցուցեմ»: Ինանք զարմացան էտաց պլուլիկ[5] ազի խօսքերու վէրէն, ասին. «Զօ՛, տղա, տիւ ի՞նչխ պիտի մե սրէ ընցուցեա: Կեօ քրոյ զազալն էլ էս տէղն ի չենք խտայ»:

55 Տաւթն էր քաշէց թուր ու ասաց.

«Ցիշամ քե խէր կենտանին,
Մարութայ տուրը Աստուածածին,
Խաչն պատարագին վեր ոջն թեւին»:

---

1 Ցեղ, տոհմ: 2 Ամարանոց: 3 Խորհեցին 4 Զազ: 5 Փոքր:

Լ.

56. Համայն նկեաւ մէջ էտ էլին զըմէն էլ քաշեց ու�։ Մենակ մէկ թօվալ կճէ մը[1] որ գնացեր էր վեր գեռին, ազատու�գնաց մօտ Մարայ Մէլիքն ճչալով խապար տվեց թէ, քըոյ էլն զըմէն թվէ ընցուց Սասընայ գեաւուրն։

57. Մարայ թագաւոր մէճլիս ելաց, խէլացի մարտեր ժողվեց, ընոնցմէ խորհուրդ խարցուց, որ ուր ճամպախ մը նշանց տան Սասնայ գեաւուրի կեանքը երկրէն վերցնելու, որ ուր թագաւորութեն չկրծանի։

58. Էն ժողովքի մէջ Կոզ Պատհին անունով մէկ կտրիճ փահլեվան մը կէր, ասաց թագաւորին թէ.« Քե լայեխ[2] չեմ տեսնայ, որ տիւ խեծել անես էրթաս վեր գեաւուրի մը։ Զիկ 40 հատ ֆէհրըզ փահլէվան տա՛ր, էրթամ Սասնայ քեաղաք թալան անեմ ըերեմ քե խամար։

59. 40 հատ էրկէն կընկատեր ըերեմ, որ քըոյ ըղտեր բառնան.

40 կօլօտ կնիկ ըերեմ, որ էրկանք ադան.

40 ազատ լաճ ըերեմ, հէօլ խաղան.

40 ազատ ախջիկ ըերեմ քե արմազան[3].

40 հատ աջաւ, 40 հատ էրինջ ըերեմ.

40 չափ սիւտակ առծաթ, 40 չափ տեղին ոսկի ըերեմ քե խառջ»։

60. Թագաւոր ինոր կամք կատարեց։ Կոզ Պախտին տուեց 40 փահլեվան, քշեց վեր Սասնոյ քեաղքին. ուր ատած կնկտեր, մարտեր, տաւարներ հըմէն բառնեց ջոկ ջոկ տներու մէջ տրեց, տառներ փակեց։ Զատին տուեց գնաց տեխ ըերգ։

61. Տաւիթ որ ուր նէճիրաւթնի գնացեր էր. էկաւ քաղաք տէսաւ որ կտրեկի տուտի տէր պառաւ նստե Տաւիթին կանիծի թէ, քըոյ պատճառաւ Մարայ Մէլիք իմ ախջիկն էլ խետ մէկալոնց բառնեց տարաւ էսիր։—Տաւիթն ասաց. տիւ արե խետ ձիկ էն տուռ, որ ախջկներ ներս լցեր են, ձիկ նշանց տուր, քըոյ ախջիկ կազատեմ։ Պառաւ զըմէն դառներ Տաւիթին նշանց իտուր։ Տաւիթ տառներ կոտռտեց, էսիրներ ազատեց, քշեց գնաց բեռատ, տէսաւ որ Կոզ Պահտինի 40 փահլեվաններ թրեր չլասած[4] կէան մէկ կողմը, կէան մէկ էլ նստեր են։

---

1 Թուրքի, քուրդի աղջիկ, կին։ 2 Վայել։ 3 Սիրուն. չքնաղ, որ ընդհանրապէս կինարմատի. բայց եւ աղամարդի անուն է։ 4 Մերկացրած։

62 Տաւիթն ինոնց քարեւ խաւոր, հարցուց. «Անապայ իմ խոր-
ոխպեաներ ի՞նչ կանեն քեզի մէջ»։—Ճուզապ տվին թէ, ինչի՞
կևարցուցես։—Ասաց էրթամ ինոնց օգնեմ։—Փահլեվաններ ասին՝
ինոնք ի՛նչ ասին որ ասւ ի՛նչ պիտի անես։ Էս խօսքի վէրէն
Տաւիթ քարկացաւ բռնեց էն քառասունի վիզն էլ իրենց փոքրից
ասւրս քաշեց, ինչխ որ մարտ մը խաւոս վիզ ասւրս քեաշի.
գնաց մօտ խորոխպէրքեր ասաց. «Ծօ՛, ինչ կանէք, շատ ասէք,
Մարայ Մէլիքի խեծել մեր քեազաքն աւիրեց»։

63. Խորոխպէրներ, որ չափ ուրենց ձեռ բռնած, 40 չափ սիւ-
տակ առծաթ չափեր ին, ինոնց ձեռքէն առեց ասաց. «Տվէք որ
ոսկին էլ ես չափեմ»։ Չափն առեց կոռծեց գէտին, քեանի մը
խատ ոսկի լցեց վեր ոռքին. փէտն առեց որ չափ որբէ։

64 Կոզ Պախտին որ ինոր ծաղը անելն տէսաւ, քարկացաւ
կիւռդն առեց որ Տաւիթին զարնէր։ Տաւիթն ասաց. «Ինչի՛
կզարնես, խեծել քեազաքն աւիրեր ի, ինոր խամաթ ես էլ շա-
շըրթմիշ արեր եմ»։ Ասելուն պէս չափն վէրուց իզարկ մէջ Կոզ
Պախտինի ղլխուն, բռնեց լէղուն բէրնէն քեաշեց տուրս կըտ-
րեց. բէրնիցն էլ 2 ատամ քեակեց, լէղուն խաի վեր Կոզ Պախ-
տինի ճակտին. էն ատմներով բիբռեց[1] վէրէն. յետայ Կոզ
Պախտին խանառջեւ[2] խէծուց վեր ձիուն, ձեռքեր կապեց
իտեւանց. ոտքեր կապեց ձիու փորի տակը, ձին քշեց տեխ
Մարայ քեազաք, ասաց. «Էսայ խորօտ նմուշով էրթաս կայնես
քրոյ թագաւորու առջև»։

65. Զին որ Մարայ ճամպախ կիտէր, շիտակ գնաց չում խատան
Մարայ գետի բէրան. էն տեղ կնկտիք նստած լվաց կանէին,
տառձան

Տեխ Կոզ Պախտին շակշայ բէրան,
Մուրուս բռնեմ խնչեմ բէրան.
«Տիւ կասիր տի էրթամ Սասուն բերեմ թալան»։
—Ծօ անամօթ կնկտիք ընչի ըսկուն կասէք.
Ես գիտցայ տաշտ էր մէյտան,
Ես չգիտցայ քեար էր կապան։
Ինոնց ալաքներն էր խուխտան,
Կպարնին մարտ կիսանին պատուխան։
Հալայ ես էկայ քեազաքն բէրան,
Գեարնան դեռ կուդայ
Ձեր իրկնեբաց պլտրներ
Կբիրի ձե եղ չարթան։

---

1 Բեւեռեց. գամեց.մ խեց։ 2 Թերսին,. հակառակ։

Ը.

66. Կոչ Պախանն քշեց ուր ձին դնաց Մարայ Մէլիքի չատրի առջև կայնաւ։ Մէլիք որ տէսաւ, ասաց ուր մշակներաց. «Ասա-ծու սիրուն էտաց տարէք գաս, ես լտոր նմուշ չտեսնամ»։ Եսոյ բերաւ թաշտ մը, տրեց ուր առջև. առ ծլի մը գարկեց ուր ճակատ, արուն թափաւ, թաշտ լցուց. բերեց մէկ կէօլէօն[1] թուղթ, էն արունով գրեց, օրօխկեց մէկն արևելեան թագաւոր-ուն, մէկն արևմտեան. մէկն հիւսիսին, մէկն հարաւին, որ եօթ վիաշայ իրենց խեծելով դեան հիմատատ[2]։ Մարայ մէլիք տէսաւ, որ չորս կողմէն ուր հիմատաններ կկատանեն, ձէնով էս խաղն ասաց.

67. «Էկան որ էկան լոտրիկ[3] ճհէլներ, էկան կէօ խարիր խա-զար խամար.

Էկան որ էկան թատ պեղ ճհէլներ, կէօ էկան խարիր խա-զար խամար.

Էկան որ էկան մուրուս կնատակներ, էկան կէօ խարիր խա-զար խամար.

Էկան որ էկան ծաղ[4] մուրուատուներ, էկան կէօ խարիր խազար խամար.

Էկան որ էկան կրկզուկներ[5], էկան կէօ խարիր խազար խամար.

Էկան որ էկան զուռնայ վիշողներ, էկան կէօ խարիր խա-զար խամար.

Էկան որ էկան նազարայ զարկողներ, էկան կէօ խարիր խազար խամար.

Էկան որ էկան վոզ վիշողներ էկան, կէօ խարիր խազար խամար.

Էկան որ էկան տուտուկ վիշողներ. էկան կէօ խարիր խա-զար խամար.

Էկան որ էկան շաւեռ[6] քեաշողներ, էկան կէօ խարիր խազար խամար.

Էկան որ էկան սուֆ զարկողներ, էկան կէօ խարիր խա-զար խամար.

Էկան որ էկան եօն վիաշութեն, չորս կողմ աշխարէն.

---

1 Խոյեցերէն կոլոն=կոյտ։ 2 Օգնութիւն։ 3 Լերկ, անմարտ։ 4 Ծաղկեալ։ 5 Ալիւր, գառամեալ։ 6 Քեամանի, ջութակ։

ՀԱՅՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍԱՍԱՆԻԿՅԱՆԻ
Երևան
Публичная библиотека

Էկան որ էկան իմ սէֆիլ[1] հիմատատ։ Ժարէ, մէլիք, որ ժարէ[2]»։

68. Ընկում անթիւ անխամար խեծել էկան, որ Խոշապայ գետ խատած ժամանակ՝ առջի էկողներ ջրի կէտն իմեցին, մինչին էկողներ մնացած ջուրն թամամ խմեցին. իսկի էկողներ գետի քէօռեր[3] լիզեցին. մնացած խեծելն էլ ծարաւ մնացին։ Էկան խատան Պշէրկայ տաշտ[4], վրան պարկին։ Էրկնուց ատապերաց խիտատ կէր, չատրներաց չկէր։ Ջիւատ կոդորկեն մէլիքին. «Մեր տիւշման վոնվ ի, որ խետ լնոր կռիւ տի անենք»։

69. Էն գիշեր Մորայ մէլիքի մէր իրեք էրազ տէտաւ։ Քրուն որ խառնաւ, էլաւ էկաւ մէլիքի բառձի վերեվ նստաւ, ասաց. «Որտի, ես կէս գիչերին էրազ մը տէտայ։ Մորայ ատազն մութն խաւար էր, Սոնայ ատազն լոյն պայծառ էր։ Մէկ տիր էլ էրազ տէտայ. Սոնայ ձին կիւգէր կզարնէր Մորայ ձիու մէջք կկոտրէր։ Մէկ տիր էլ տէտայ, որ Սոնայ խոյ կուգէր կզարներ, Մորայ խոյի վրդ կկոտրէր, կտանէր յանտիւնտ, կկորցուցէր։ Արե մ՚էրթայ վեր էն գեաւուրին, իմ խօրքին ականջ ալա»։

70.—Մէրիկ, ասաց մէլիք, Սոնու վէրէն չէրթամ կէլնի՞. էսայ եօթն վուշէք ուրենց խեծելով իկերեն. ես ի՞նչ ջիւզաղ տամ ուրենց։—Մէր ասաց. էտ կօլայնէ[5], որտի։ Տիւ պե լնանց խլղաթի ճամխի, ուրենց ասքրով[6] էրթան ուրենց տեղը։ Երբ քե կխարցուցեն, թէ մե կանչելու պատճառն ինչ էր. տիւ ասա, ես չէի գիտեր, ձիկ ըսկնէմ ասքեար կէր. մկայ ձե կանչեցի իմացայ. ըսուց ասրայ երբ կռալ[7] մը խետ ձիկ թշնամութեն անի, գայ վէրէս, ես էս կարողութենով լնանց կանամ յաղթե։ Տէ, էրթաք բարով. ձեր տեղ գնացէք։

71. Սորա ասքեար որ քիչ մը զատացաւ վուշէքատեկայ մէջէն մէկն ասաց մէկալոնց. «Տիւք իմացա՞ք մեր ես օգորկելու պատճառն ինչ էր»։—Չէ, ասին։ Պատմեց լնանց թէ, Սատուն մէկ գեաւուր մը կայ մէկ պլուլիկ գեաւուր մը ի։ Ինոր վէրէն կռիւ տի էրթայինք՝ մէլիք չիշխացաւ. լնոր խամար մե ետ կը ճամխի։

72. Էս խօսք որ մէլիքի ականճ խատաւ, զլնք չկոտրելու խամար ասքեար ետ կանչեց, ասաց. «Իմ կռիւ կռիւ է։ Ձեր տեղ նատեցէք, որ կռվի էրթանք։ Եատ ջիւատ խրկեց Սատնայ գեաւորին թէ, կու գեա՞ կռիւի, չէ թէ, ես կուգեամ քրայ քեաղաք ջրով ջրհեղեղով կընցուցեմ»։

---

1 Խեղճ։ 2 Տկար։ 3 Յեխեր։ 4 Գանում է Գատուանայ կողմերում։ 5 Հեշտ, դիւրին է։ 6 Ձօրքով։ 7 Ֆիրդերն ասում են Թագաւորին. արդեօք նոյն Կարոլոս անունի՞ց, ինչպէս որ է ալաւ լեզուներում։

Թ.

73. Զէնով Յովան էս բան որ լսեց, գնաց մօտ Տաւիթն, պատմեց ու ասաց. «Մեր ձեռքէն չի գայ, որ ինոր խեռ կռվենք. ինչխ որ փիսցուցիր, ըսկուն էլ թամիզցուր»: Տաւիթն ասաց. «Ես ոչ ձի ունիմ, ոչ սիլախ. ձիկ սիլախ ու ձի տուէք, որ կռվի էրթամ»: Զէնով Յովան ասաց. «Գնա փակխի[1] ձիերուց ձի մը՝ յօտի թրեսուց էլ թուր մը ջօկի, որն որ կուզես»: Տաւիթ մտաւ փակախ, որ ձիու քեամկի վէրէն որ ձեռ տրեց, ձիու պառտն առեց գէտին: Էն տեխ մէկ կռատ[2] քիւռտակ մը կէր. ձեռք վէրէն տրելուն պէս չիֆթէմ[3] զարկեց պատին. կրակ մէնէն թռաւ: Էն ձին ընտրեց, թրեսաց մէջէն էլ ծանկռատ թուր մը:

74. Երբ որ տիւրս խանեց, կոլկի առտի տէր խալիւորը, որ տէսաւ, ասաց. «Տաւիթ, որտի, էտ ինչ պիտի անես»:—Ասաց կէրթամ վեր Մարայ մէլիքին կռիւ:—Ասաց, որտի, խտանցմով ի՞նչ կանաս անի մէլիքի անթիւ խեծելին: Քրոյ խօր կայ քիւռկու Ջալալին, թամքն սատաֆին, քամար ֆէհրսին[4], թուրն կեծածակին, խօտէն զրին[5], խաչն պատարագին, որ տնես վեր աջ թեւիտ, տրռպն[6] քե չառնի:

75.—Տաւիթն ասաց. խօրօխպէրս չի տայ: Ես ի՞նչխ ինոր մօտէն տի առնեմ»—Խալիւորն ասաց. գնա քեաղաք եօթ տիկ եօթ տարուան գինի առ, բեր խմցուր քրոյ խօրօխպէրներաց. երբ կ'ուրախշնան. ասա ինոնց, որ տան, որ չտվին խաթրով, ասա կառնեմ իմ զօռով: Տաւիթ խալիւորի խրատ կատարեց, պատիւ[7] տվեց ինոնց:

76. Երբ ուրախշցան, գէօվքով[8] ասաց ինոնց. «Ուրհնամ բարերարը Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն. խօրօխպէր, ասաց Տաւիթ, իմ խօր կայ քիւռկու Ջալալին, թուրն կեծակին, խաչն պատարագին, կուտաս քրոյ խաթրով, չէ կառնեմ զօռով»:

77. Յովան ագխաւ[9], ասաց. «Տաւիթ, քրոյ բէրան կտրէր, տիւ էտայ չասիր ձիկ»: Եսայ տատ-ձաւ ասաց.

«Տաւիթ, չունեմ եմ մէջաց որտին, որ քեմ[10] կէնայ պէհն[11] մէլիքին:

Զունեմ եմ քիւրոջ որտին. որ քեմ կէնայ պէհն մէլիքին:

---

1 Գոմ, ախոռ: 2 Անպէտք, բոստ: 3 Աքացի, քացի: 4 Կտրճի: 5 Գլխոյ զրահ: 6 Հարուածք: 7 Կոչունք: 8 Գովասանքով: 9 Ուշքի գալ. զգաստանալ. քնից զարթնել: 10 Դէմ: 11 Նէֆէսի տակ(°):

Զաւնեմ եմ ախպօր ասին, որ քեմ կէնայ պէհն մէլիքին»։

78. Տաւլիթ վէրցուց ասաց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած,
Խնամք շատ էր մեծ թագաւորուն։
Խօրխապէր խամ[1] մի անե.
Ես եմ քըոյ մէջաց ասին, որ քեմ կէնամ պէհն մէ-
լիքին.
Ես եմ քըոյ քիւրոջ ասին, որ քեմ կէնամ պէհն մէ-
լիքին.
Ես եմ քըոյ ախպօր ասին, որ քեմ կէնամ պէհն մէ-
լիքին»։

79. Խօրխապէրն առաւտուն էլաւ, ձին թախըմով Տաւլիթի ըն-
լոր ուզածներով տվեց, ասաց. «Ա՛ռ կընայ ես քե չտեսնամ.
էնչխ գիտես ըսկուն ապա»։ Տաւլիթ առեց ձին, գնաց գետի
ըէրան. Զէնով Յովան էլ գեախտիկ էրկու մարդ խտեւէն ճամ-
խեց, ասաց. «Գնացէք տեսէք, թէ որ Տաւլիթ ձիուն կօլան[2]
քաշելու ժամանակ՝ ձիու չորս ոտ գէտնէն կկտրցուցի խայ[3],
կանայ էն ձին զաւթէ»։ Ղարդ որ, Տաւլիթ երբ ձին գետի մէջ
լվաց, թամքն տրեց վեր ձիուն, կօլան կքեց, ըսկսուն քեաշեց,
որ ձիու չորս ոտ չորս թիզ գէտնեն կտրաւ[4], խատաւ չում
ուր ձնկվեր։

80. Մարդեր գնացին, իրենց տեսած պատմեցին Զէնով Յովա-
նին։ Մէհէր որ մեռեր էր՝ Զէնով Յովան չում էն օր ուզ կա-
պեր էր էս քան որ լսեց, նաղարէք զարնել տվեց, ասին ուրա-
խութեն, ասին տօնախմբութեն, շատ ուրախացան։

81. Մարդ մը վազեց գնաց վեր Տաւլիթի մօր Սինամ Խաթունի
էրտսին, ակընջկլայ[5] տվեց, ասաց. «Սինամ խաթուն, տիւ ինչի՞
մտեր ես եօթատանի մէջ. էլի՛ տես որ Տաւլիթ ուր խօր չատին
խատեր ի. ուր խօր քիւռակ խէծե, թուրը կապե, տի էրթայ
վեր Մարայ մէլիքին կռիւ»։ Տաւլիթի մէր որ լսեց, թողեց ուր
ուզն, էլաւ տիւրս Տաւլիթն տեսնալու։ Իմացուցին Տաւլիթին
ուր մօր գալն. Տաւլիթն ձիուց վար թռաւ վազեց ուր մօր

---

1 Հոգ։ 2 Փոքրաշ։ 3 Թէ որ։ 4 Վերացաւ, բարձրացաւ։ 5 Մուժ-
տայ(!)։ Երեւի Թուրքերէն մուշտըլըզ բառը։ Խոյեցիք ասում են անկաճ-
կալէ, որ ինչպէս եւ ակընճկըլայ-ն։ կազմուած է հաւանօրէն ականջ
եւ կալնալ բառերից։ Սովորաբար մի աւետիք, մանաւանդ արու զա-
ւակի ծննդեան լուրը հաղորդելիս բռնում են դիմացինի ականջը։ մին-
չեւ որ սա մի նուէր է խոստանում։

գիրկն ինկեաւ. մէրն էլ ուր բէրնով օրհնեց Տաւիթ ու Մարայ ապաքեարն անիծեց։

82. Տաւիթ ուր պատրաստութեն որ տէսաւ. քանի մը խալիւոր մարդ ժողվեցին, Տաւիթին ինկեր տվին, ճամխեցին։ Տաւիթն էն խալիւորներուն վէրէն խզճաց, ասաց. «Տիւք գնացէք Ծովասարու Մարուխի քանձը Ատուածածին, ձիկ խամար աղօթք արէք։ Ես կէրթամ կռվելու»։

83. Տաւիթ գնաց խատաւ մէկ բարակ առու մը, ձին չուզեց ընցնել էն առվից. քիւնչի Մհէրն երբ էնտեղ խատնէր, խանք[1] կառնէր։ Տաւիթ տէսաւ, որ ձին չանցնե, լիջաւ քնաւ։ Ձին էլ կայնաւ արևու դէմ, խօվ արեց վէրէն։ Մարուխի վանքի պատարագ որ պռձան, խրեշտակն էկաւ իմացուց ձիուն, ձին էլ Տաւթին։ Տաւիթն որ էլաւ նստաւ, մէկ խատ փռընքատաց, ուր մէջ քեամար ֆէհլսին, որ քառասուն կիտը բամբակ տրեր էր մէջ, կապէր էր, անջախ կէլնէր ուր մէջկով, փռնքտալուն պէս քեամար կտռտվաւ. ինքն, քիւնչի տնայ[2] պատիկ էր, էնչ գեախ ճլոճացաւ, լցուաւ, էլաւ չանց[3] ուր խէր։

84. Էլաւ թռաւ վեր ձիուն, Ատծու անուն տվեց, քշեց խատաւ Ծովասարու մօտ, էն քեարերուց, ախպրներուց, սարերուց խալալութեն ուզեց։ Մնաք բարով, ասաց ու սկսեց.

«Օրհնեա՛լ բարերար Ատուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն

Ծովասարու պաղ պաղ ախպրներ, մնացեք բարով, բարի մնացեք։

Ես կէրթամ կռիւ, կծարմնամ, տիւք կարօտ մնացէք։

Ծովասարու պաղ պաղ քեամիքն էլ մնացեք բարով, բարի մնացեք։

Ես կէրթամ կռիւ, կշոգանամ, տիւք խով մնացէք։»

85. Ասաց ու քշեց գնաց խեծլի տիմաց. տէսաւ որ երկնուց ատաղին խիտապ կէր, ինանց վրանին հիտապ չկէր։ Էնտեղ իջաւ նստաւ, մէզեց վեր ուր հալին։ Տարթլանմիշ[4] եղաւ, ասեց.

«Օրհնեա՛լ բարերար Ատուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն։

Ես էլնեմ գեարնան գէլ, ինանք էլնեն գեարնան գեառ, չեմ կանայ արնոտե։

Ինանք էլնեն բամբակ, էս էլնեմ կրակ, չեմ կանայ մշուխատրե։

Ինանք էլնեն փուշն փալախ[5], չոր ցախ, ես էլնեմ բոցու կրակ, չեմ կանայ վառե։

---

1 Հանգիստ։ 2 Տակաւին, դեռ եւս։ 3 Փանց։ 4 Ցաւելի դարտտոել։ 5 Սպիտակ խոտ։

Ինոնք էլնեն կրակ, ես էլնեմ գեարնան պես, չեմ կանայ ընցուցե։»

86. Էս խօսքի վէրէն Աստծու խնամքով ձին սկսեց խօսել ու ասաց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած,
Խնամք շատ էր մեծ թագաւորուն։
Տաւիթ խամ մի աներ։
Ըսկում որ տիւ տի ապանես քրոյ խօր կեծակի թրովն, ես տի ապանեմ իմ ոտաց սմերով։
Ըսկում որ տիւ ապանես քրոյ կոռզերով, ես որ ապանեմ իմ պոչի մազերով։
Ըսկում որ տիւ ապանես քրոյ սմերով, ես տի ապանեմ իմ քթի շնչով»։

87. Տաւիթի սիրտ ձիու խօսքերով պնտեցաւ կանչեց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած, ասաց, խնամք շատ էր մեծ թագաւորուն»։ Կանչեց խեծլին. «Որ ինչ արթիւն էք, ձիանք թամքեցէք, որ ինչ քիւն՝ արթիւն մնացէք, ձեր ճարը տեսէք, չատէք Տաւիթ գող էր։ գուղութնով էկաւ վեր մեզ»։

88. Զին տարձաւ Տաւիթին, ասաց. «Կայիմ կաց վեր իմ քեամ-կին. քե պիտի խանեմ խեա արէգակն քրոյ քեամակն իրիցի։ —Տաւիթն ասաց, տի օլրվեմ վտրխտ տակ։—Զին ասաց, ախ ինչնեմ չաւմ գետին, քե զարկեմ տանեմ յանտիւթկ, կորոցուցեմ։ —Տավիթն տի էլնեմ վեր քրոյ քեամկին, ասաց Տաւիթ, քշեց մէջ խեծլին. եօթն օր ձին կռիւ արաց, ինքն շըշկռած մնաց վեր ձիուն։

89. Զէնով Յովան իրիշկեց երկինք, տեսաւ որ Տաւթի ատաղն նվաղեր ի. վազեց վտակա ուր սեւ լայեզ[1] ձիուն ասաց. «Տաւ-թի ատաղ նվազեր ի»։—Զին ասաց, որ քե իմ քեամկի վէրէն քրոնես, աչինչ թօրթամի քե տի խատուցեմ Տաւթին։ Զէնով Յովան թռաւ ձիու քեամակ. ձեռ թալեց մէկ բարակի ծառ, քէօք-մանց քաշեց տիւրտ. արաց ուր ճպոթ 2, խատաւ մէջ Մարայ մէլիքի խեծլին. տէտաւ որ Տաւիթ շըշկռեր ի։ Տաւիթին ասաց. «Կայնի, ես քե կռիւ անել ասվեցուցեմ»։ Ուր ձեռաց ճպոթ մէկ մը աջ վարատեց, 300 հոգի մէկանց ինկան, մէկ մը ձախ վա-ռատեց, 600 հոգին թմբմաւ։

90. Տաւիթն ասաց. «Խօրօխպէր, տէ տիւ տէն քեաշուի, ես տի կռվեմ»։ Տաւիթն էր քեաշեց թուրն կեծակին, ասաց.

«Յիշամ քև խէրն կենտանին,

---

1 Արժանի. վայելուչ։ 2 Վարոց։

Մարութայ պանձը Աստուածածին.
Խաչն պատարագին, վեր աջ թեւին:
Ինկաւ մէջ Մարայ մէլիքի խեծլին, ասկաւմ մարդ կայնց,
որ արուն ըսկուն լերթաւ[1] թանձրացաւ, սաղ մարտեր կիսքը-
վէին մէջ, չեն կանայ գեալ տիւրս:

91. Անքլի մէջէն մէկ մարդ մը տիւրս էլաւ, մէկ գեղեզ[2] գար-
կեց մէկ տկանջ, մէկ էլ միւս տկանջ, կանչեց. «Տաւիթ փոշ,
փոշ»: — Տաւիթն ասեց. ձիկ գէշ խաղաթը կառես, ինչ ասել է
փոշ: — Մարդն ասաց. քե գէշ խաղաթ չեմ ասե. ասել կուզեմ,
թէ քըմ ձին դատրցաւ, որ ինոր քեամին ձիկ չթալի, գեամ
քե մէկ խաղաթ տի ասեմ: Երբ մօտացաւ, ասաց «Տաւիթ էս
մարդեր խէրիք ջարտես. քըմ տիւշման կէս պառկեր ի կապատ
վրանի տակ, քեատուն կիտր առճիճ տրե վեր ուր պատին. էն
գեախ որ նաֆաս կիտանի, առճիճ կրանձրանայ ջուտ վրանի
առիք. էն գեախ որ նաֆատն կքեաշի, առճիճն կիջնայ վեր ուր
պատին»: — Տաւիթն ասաց, ես չեմ գիտէ, որ վրանի տակն ի:
Մարդն ինկաւ առջև, տարաւ նշանց խաղ:

92. Տաւիթ կայնաւ վեր վրանն ասան, տէսաւ որ մէլիքն
պառկեր ի. եօթն աղջիկ էլ ինոր չորս բիւրլր նստած ոտքեր
կմաշեն[3] — Տաւիթն ասաց. վեր խանէք էլաց ձեր աղէն: — Ինանք
էլ ասին. հալաց եօտն որ վազաղ կաց, որ էն տրթնայ: Տաւիթն
էլ չխամբեցեց, քաշեց մզրախ. զարկաւ մէլիքի կրաւնկ ծահեց,
կիտր մը ապ լցաւ մէջ եարին: Մէլիքի ուռ որ մռմռաց, կծկեց
ասաց. «Աղջիկներ, էս տեղ լիւ կաց. իմ քիւն խառնցաւցին:
— Տաւիթ մէլիքին ասաց. էլե վեր, լիւ չի, լվի ախպէրն ի:

93. Մէլիքն էլաւ վեր տեսաւ, որ ալքնատ մարդ մը կայնե ուր
տիմաց, գիտաց որ Տաւիթ ոպանողն ի, ելե որ խլզաթ[4] աս-
նի: Մէլիք ասաց.

«Օրհնեա՛լ է քաբերտր Աստուած. խնամք շատ էր մեծ
թագաւորուն:

Թէ որ տիւ արևելքէն ես, տամ քե փաշութեն:

Թէ որ արևմտէն ես, տամ քե խաղինայ:

Թէ որ հիւսիսայէն ես կամ հարաւայէն, տամ քե տէօլ-
վաթ[5]:

94. Տաւիթն վէրաց ասաց: «Օրհնեա՛լ է քաբերտր Աստուած,
խնամք շատ էր մեծ թագաւորուն. ես քըմ ասածներէն, մէկն
ալ չեմ, և ոչ քըմ երկներէն. ես Աստուծ Տաւթի մշակներէն
եմ. տիւ քե անմախ կկարծես, ես քե մախ կիկեր եմ»:

---

1 Լեարդի պէս պնդուել: 2 Փուշի տեսակ: 3 Խոյեցիր ասում են մատեր—Շփել: 4 Պարզեւ. նուէր: 5 Հարստութիւն:

95. Մէլիք ձեռք թաղեց Տաւթի եախէն, որ ձիուց վար բերէր. Տաւիթ մզրախ զարկեց, ձեռ ծակեց։ Մէլիքն ասաց։ «Ծո Տաւիթ, էն գեաղ որ իմ ձեռք ծակեցիր, իմ ողջանց[1] կ'նայ»։ Երկուսն էլ կպան խեռ մէկ մէկու կռիւ, չում իրիկուն քեալպաթին[2] կը զարնէին, մէկ մէկէլից խոյու մը մին կվռացուցին. մէկ զմէկ չյաղթեցին։

96. Մէկ էլ օր երբ էլան կռվելու, Տաւիթն ասաց մէլիքին. «Տէօրիս[3] պիտի կռվենք կիւռզով. երեք կիւռզ տի՛ ձիկ զարկ. թէ որ ես ինկեայ, իմ վիզ կտրի, իմ ալուն քե խալալ էլնի. թէ որ չինկեայ, երեք կիւռզ ես քե զարնեմ. թէ ինկեար, քըոյ վիզ տի կըտրեմ, քըոյ ալուն ձիկ խալալ էլնի»։ Տաւիթ կայնաւ։ Մէլիք երեք կիւռզ իզարկ, իրեքն էլ պէօշ գնաց։ Տաւիթն ասաց. «Մէ՛լիք, տէօրիս տէօրն[4] իմն ի. տէ տիւ կայնի, ես զարնեմ»։

97. Մէլիք կայնաւ. մէրն նապարէք զարնել իտուր, որ Տաւիթ շըշկուուի, չկանայ զարնել։ Տաւիթ մօրն ասաց. «Էտայ նապարի ձէներ կտրել տուր. ես մէկ կիւռզ Աստծու խաթրին կըաշխեմ, մէկ կիւռզ էլ քըոյ մէրութնի խաթրին կըաշխեմ. քիւնչի տիւ էրկուս էլ մէր ես. մէկ կիւռզ մենակ կզարկեմ քըոյ լաճուն. ինկեաւ իտայ վիզ կկտրեմ, թէ չինկաւ, ուրիշ չէշիտ կուիւ պիտի անենք»։ Տաւիթն ասաց ու կիւռզ զարկաւ, իսկեց մէլիքն. վիզ տի կտրէր, մէրն ինկաւ վեր Տաւիթի ոտաց, ասաց. «Աստծու սիրուն էլնի, քըոյ ախպէրն ի, վիզ մի կտրե. թահլայ[5] եօթ տիր թող քըոյ թրի տակէն ընցնի, էլնի քե եէսիր՝ քե խառճ խարաճ տայ»։ Տաւիթ բաշխեց ուր մօր խաթրին, թրի տակէն եօթ տիր ընցուցին, խէլամաղ[6] առին, տարան տէն։

98. Երբ որ մէլիքի խելք վերէն էկաւ մօր խնամքով, ասաց. «Տաւիթն ո՞ւր է»։ — Անին ուրեն, հալ հէքաթ՝ էտպէս էղաւ։ — Մէլիքն ասաց. Ե՞րբ կելնի որ ես ինոր էսիր էլնեմ։ Իմացաւ, որ Տաւիթ գետի բերան գնացեր ի. էլաւ խեռ ուր մարդերաց 40 լուծ գէօմէշ լծեց, մէկ ճոպանախան[7] ղընճիլ մը քաշեցին տարան, խարխուլիթնով Տաւթի չորս կողմ փաթթեցին, կապեցին բերին վրանի տուռ. թրեր որեցին, որ Տաւթի վիզ զարնէին։

99. Զէնով Յովան տէտաւ էրկնուց երես, որ Տաւթի ասաղ նվազեր էր. թառաւ ուր սեւ լայեզ ձիւռ քեամակ բանձր ձէնով մէկ խաա կանչեց։ Տաւիթ՝ որ ձէն լսեց միտն ինկաւ, ուր տէր յիշեց, ասաց.

---

1 Կարոզութիւն՝ ոյժ։ 2 Աքցան։ 3 Այժմ, հիմայ։ 4 Հերթը։ 5 Միայն թէ։ 6 Խելացնոր. ուշագնաց։ 7 Ճոպանի հաստութեամբ։

«Ցիշամ քե խէրն կենանին,
Մարս թայ բանձը Աստուածին.
Խաչն պատարագին վեր ուջ թեւին։
Գաշեց թուրն կեծակին, զարկաւ կտրեց ճօպանախան գընձին[1], կտրնեռն թռան գնացին էն տեղ էլած աչքներ տափ տաղաղ արին։

100. Տաւիթն ասաց. «Մէլիք. տէօրիս թլով պիտի կռվենք. մէկ զմէկու իրեք թուր պիտի զարնենք»։ Մէլիքն խաւնեցաւ ինոր խօսքին ու տաշ[2] ինքն զարկեց Տաւիթին. իրեք տռպն էլ պօշ գնաց։ Յետոյ Տաւիթ ասաց «Մաքէ, իրեք տռպից մէկն Աստծու խաթրին կուտամ, մէկն քըոյ խաթրին, մէկ խատ կզարնեմ քըոյ լանուն»։ Ասաց ու զարկաւ, մէլիքն մէջքէն էրկու կտոր արաց, տարաւ խորեց։

101. Էկաւ ինոր փաշէք, ասքարներ, ինչ որ մնացեր էր, կանչեց ուր մնա։ Մէլիքի Խօսրով ապէն էլ ըեբեց, ինքն ուր ձեռքով թուրն կապեց, արաց թագաւոր. փաշէք ասքներ խլզաթեց, ուրենց տեղեր ճամխեց. ինքն էլ ուր երկիր գնաց։ Էս փաշէք ու ասքներ, որ ցրվեցան չորս կողմ աշխարին, Տաւթի արած կարճութեն և Խօսրովին թագաւոր անելն ամէն տեղ պատմեցին։

Ժ.

102. Զէն գնաց ինկեաւ Կապոտ Կողայ թագաւորի ականձ։ Թագաւորն էլաւ 40 ջուխտ աշրդ ճուխտ ճուխտ ճամխեց երկրէ երկիր, որ կարիճ Տաւիթ անուր մարտեր ժողվեն քեբեն տեսնայ, թէ որ մէկն ի էն կարիճ Տաւիթ, որ ուր ախջիկ՝ Խանտիւթ խանըմ տայ ինոր կնիկ. 39 ջուխտ աշղներ մէյմէկ Տաւիթ կընան քեբին. մնաց մէկ ջուխտ, որ գնացեր են Սասնայ քեռաղաք Խանտիւթ խանըմի գովատանք անելու։

103. Էրկու աշղներ գնացին Սասուն Զէնով Յովանի տուն, ասին. «Մեզիկ Կապոտ Կողայ թագաւոր ճամխեր ի որ ինոր ախջիկ Խանտիւթ խանմի գովատանք անենք կարիճ Տաւիթին և խաւընցուցենք, որ ուր կնիկ առնե»։—Ասաց. Տաւիթն կէօ ես եմ. ինչ որ կասէք իմ առջև ասէք։ Ինոնք էլ ուրենց չընկիւռներ[3] առին նստան, ասին.

«Օրհնեալ բարեբար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն,

---

1 Նղթայ։ 2 Առաջ. նախ։ 3 Սազեր։

Ազչկան ծամեր քե կասեմ, Տաւիթ։ 40 ճօղ ծամ էր։
Ճակտիկ քե կասեմ, Տաւիթ, Հալապայ գաղն էր։
Աչքեր քե կասեմ, Տաւիթ։ գինու կիթզայ էր։
Ծծվեր քե կասեմ, Տաւիթ, լամբկի քիւլայ էր,
Սրտիկ քե կասեմ։ Տաւիթ, քիւռկու ճալալու մէյդան էր»։

104։Զէնով Յովան մէկեց, թէ էս աշղներ մեր Տաւիթ խելքէ պիտի խանեն, առեց ինանց չընկիւռներ, գարկեց վեր ինանց գլխուն՝ կոտռտեց, տունէն տիրա խանեց, որ էրթան ուրեց երկիր։ Աշղներ քաղքից էլան տիրա՝ նատան Տաւիթն անիծեցին։ Տաւիթ նէճիր անելուց էկաւ, տէսաւ, որ գինք կանիծեն, ասաց։ «Ո՛ մարտեր, ձիկ ինչի՞ կանիծէք»։ Ինանք էլ ասին։ «Մենք քե չենք անիծե, Տաւիթ կանիծենք»։—Ինչի կանիծէք, ասաց Տաւիթ։ Ինանք էլ պատասխան տվին թէ։ «Մենք Կապան Կոզայ Թագաւորի կողմէն ճամվեցանք, որ ինոր ազչիկ Խանաւթ խանումի գէօվանք անենք Տաւթին։ Մէկ ճեոյճապլօխ հայ մը մեր չնկիւռներ առեց, գարկաւ մեր գլխուն, ճամխեց»։ Տաւիթ խանեց քանի մը ոսկի տվեց ինանց, որ թագայ չընկիւռ առնեն, գան Խանդաւթ խանում գէօվան»։ Տաւիթն կէօ եռեմ, ասաց ինանց։ Աշղներ իրենց թագայ չնկիւռներ առին, նատան Տաւիթի առջև, էն վերի գովասանքն արին։

105։—Տաւիթն խաբցուց։ ասաք քեանի՞ օր ձեր երկրէն չամ էս տեղն էկաք։—Ամին քառասուն օր։ 40 օր էլ անճախ էրթան կհասնենք։—Տաւիթն ասաց։ ամէ 39 օր ճամքախ գնացէք, ես էն օր (39-րդ օր) ճամպախ կէլնեմ ձե կխասնեմ։ Տաւիթ ուր խօսք տվածին պէս 39 օրից առաջ ճամպախ էլաւ, տէսաւ որ 40 կիւթան կլանի գաշտի մը մէջ։ գիւթնուտներ Տաւիթին կանչեցին, որ գեայ խաց ուտի։ Տաւիթ խաւցուց, թէ շատ խաց ունիք։—Խաց, ասին, 40 գիւթնի մէկ շաբթուան խաց ունինք։ Տաւիթ պիթիւն խացեր՝ որ 40 ջրվալ[1] էր, ուր առջև տառակել տվեց։ էտ 40 ջվալ խաց՝ զրմէն էլ կերաւ մէկ բրդուճ չթողեց։

106։Աշակներ մէկմէկու ասին։ «Մե էլ խաց չմնաց, ինչխ պիտի գիւթան անինք»։ Տաւիթն էս խօսք լսաւ, ասաց ինանց։ «Բէրեր ձեր 40 գիւթնի զնճլներ, կապէք իմ ձիու գանկիւներ[2]։ Ես ձեր շաբթուան անելիք գիւթան անեմ էրթամ»։ Ինանք էլ քերին 20 գիւթան մէկ գանկիւն՝ 20 էլ՝ էն մէկէլ գանկիւն կապեցին։ Տաւիթ 40 տիր գնաց էկաւ, տաշտ մը տեղ սեցուց։

107։Աշակներ տառձան ասին Տաւիթին։ «Էտայ քրոյ ձիու խաւնարն էր, քրոյ չէ՞»։ Էս խօսքի վէրէն Տաւիթ ձիուց իջաւ վար, 40 գիւթնի զնճլներ կէս մէկ ձեռ բռնեց, կէսն մէկէլ ձեռ, 40

---

1 Պարկ, մաղէ։ 2 Ասպանդակ։

բաթ[1] էլ ինք տարաւ իրե, ասա ասաց. «Այնէք. որ իմ թրի խու-նարն էլ ձե նշանց տամ»: Բիրեց 40 գութնի սարուածք կէօլէօ-նեց մէկ տեղ. մէկ թուր իթալ[2], 40-ն էլ բրգեց: Մշակներ ասին. «Մեյան տէր քրոց տուն քեակի. ալու մեր ուաթալն (թախրմ) ընչի ըանաց ալիր»:—Տաւիթ ճուղապ տվեց թէ, հապայ իմ ձիու և իմ խունար տէսաք, պէ՛տք էր որ իմ թրի հունարն էլ տես-նէք: Ասէք ձե մէկ մէկ կուց ասկի, տարէք շաբթուս ձեր գու-թընքատանք շինել տվէք»: Ինք խէծաւ ու քշեց:

108. Խանդիւթ խանըմ, որ սատմաշ ինալ գեալն կաչքէր, ուր խա-լայեի ճամխեց վէնճալէն[3], որ տչքի, թէ մարդ կերևայ ճամխու մէջ: Խալայեի տառձաւ խանըմին ասաց. «Կէօ մէկ ձիաւոր մը մէջ էրկինք մէջ գեալինք կուգեայ՝ անճախ կերէվայ. խօսք տր-հայ քէրանն էր, Տաւիթ խասաւ վեր տարգխի[4] տաւան: Մշակներ էկան, որ ձիու գլէօխ բառնեն, Տաւիթ թող չտվեց. համայ ար-ձայս[5] մլեց վրակախ: Էն տեղ 40 ից մէկ պակաս ձի կեր, էն 39 ձիեր քիւռկու ճալալին տվեց ուր տեօշի առջև, ճղթեց կպու ց պատ. ինանց զրմէնի տարման կերաւ: Խալայեղներ խասպար տա-ան Խանդիւթին, տին «Զին ուր խունար խռճեց[6], մնաց Տա-ւիթին»:

109. Աթռա մը թալեցին Տաւթի տակ, նատաւ մէջ էն 39 Տա-ւիթներուն, որ ուրմէն առաջ աշղներ իկեր բերեր էին: Էն 39 Տաւիթներ՝ որ սեղան տրած խաց կուտէին, իրենց թրեր չրլ-ատեր[7], տրեր ին սեղնի տակ, նոր եկող Տաւիթն բրգելու, որ խա-նըմն ուրենցմէ մէկին մնար: Խալայեխներ էկան սեղան ուղեցին, որ նոր եկող Տաւթին կեր բերեն, ինոնք էլ տին. «Թող դայ, խեա մե ուտի»: Մաքերնին էն էր, որ Տաւիթն ուպանէին, քիւնչի ինոնք գիտէին, որ քաջ Տաւիթն էն էր:

110. Խանըմի խօսքով խալայեխներ էկան կարիճ Տաւիթին տին, որ սեղան ինոնցմէ առնի տայ: Տաւիթն ձեռն իտու սեղան, թալեց էն տեխ բարկանալով: Էն գեախ տեսաւ՝ որ չրլատ[8] թրեր սեղնի տակ են, տաւեց զրմէն մէկ տեղ ծալեց ծալմլկեց, օրօխկեց, որ կապեն ուր ձիու թամբի վէրէն:

111. Երբ որ Տաւթին խաց բերին, պոզիկ մը[9] էլ գինի բերին խեա: Տաւիթն ասաց. «Էս գինին ձիկ չի կշտացուցի. իսալ կարան ուր է»:—Ասին. կէօխան[10]. Տաւիթ առեց կարաս. անկեց բէրնին, մէյ տրայ շուռ տվաւ պոզապն վեր, գինովցաւ, գնաց պառկաւ վրակախ:

---

1 Երջան: 2 Թալեց. քցեց: 3 Լուսամուտ, պատուհան: 4 Մեծ զաւակ: 5 Արձակ: 6 Ցրցուց, ցոյց տուաւ: 7 Մերկացրել: 8 Մերկ: 9 Հոգէ ջրի եւ մանաւանդ գինու փոքր աման, որ մէջտեղից ունի բարակ փող, որով խմում են: 10 Անհաւատիկ. անհաւանիկ:

112. Խանութի խանըմ խապար ճամխեց Տաւիթնեբաց, որ էրթան խաս պախչէն լվացվեն սէրփուեն[1], առաւաւն շատ կեան ուր քէօշկի[2] առջևից մէկ մէկ ընցնեն. էն գեախ՝ ես որի սրտի վէրէն որ խնձոր գտնեմ, իմ խաւնածն էն ի։ Էն 29 Տաւիթներ գարդրուան էկան. քէօշկի առչև կայնան. խանըմ տէսաւ, որ մէկ պատկաս ի, ճիւտպ ճամխեց, որ մնացած Տաւիթ էլ գեայ։ Էկաւ ինանց խետ կայնաւ։ Խանըմ էլաւ վէնճարէն իրեք տիր խնձոր թալեց, իրեք տրուն էլ Սատանայ Տաւթի առտի վէրէն տիպաւ։ Էս բան որ տէսան միւս Տաւիթներ, թող տվին մէյ մէկ ուր երկիր վազան։

ԺԱ.

113. Կապտա Կոզայ թագաւոր կանչեց Տաւիթին ասաց. «Ես քե կանչեր եմ, որ իմ աղջիկ տամ քե, ամայ՝ իմ աղջկան ախշմանները կայ, որ ոնրու տէր եղեր են վէրէն, որ քե ճամխեմ, կանան էրթայ ինանք սպանի»։ — Խրատանք, ասաց։ — Թագաւոր տպասրեց, Տաւիթ, թէ էս օր կնայ նատի վեր բաղնոի ճամխին, իմ ախշիկ ուր խալայեխներով 20 իտև, 20 առջև ինկած, ինքն մէջ տեղէն քէլելով կէրթայ պաղնիս. երբ բաղնոից տիւրս կէլնի, ինոր քէօղք վերցու խաւնի, քե խալալ էլնի։

114. Տաւիթ տէսաւ, որ խանըմ գնաց բաղնիս էկաւ, քսան խալայեխ առջվէն քսան խաւէն, ինքն մէջ տեղ քեան հմէն բանձր, կուգեայ։ Տաւիթ ինոր քէօղք վէրուց տեսաւ, խաւնաւ, մէկ պագը մէկ իրեսէն, մեկ պագը էլ մէկէլ իրեսէն որ առեց, խանըմ բան չասաց. երբ որ մէկ պագը էլ ճակտից առեց, խանըմ կէօմի[3] մը իզարկ Տաւթին, քթէն փռթաւ արուն էկաւ։ Գիւնչի թագաւոր էրկու պագի մենակ իզին ավեր էր, էս բանի վէրէն Տաւիթ կայր[4] արաց, գնաց վտակեախ վայեն[5] փորեց, մտաւ մէջ։ Ինքն իրեն ասաց. «Աղջիկ մը որ իմ քթէն արուն խանի, էլ իմ ապրել խարամ ի»։

115. Թագաւոր լսեց Տաւթի ինատ անել, ուր աղջկան ասաց. «Ինչ՛ որ ոնրա կատրեցիր, ըսկուն էլ պիտի էրթաս ինոր ոնրան առնես»։ Աղջիկն առաւ փունջ մը վարտ, գնաց մտ Տաւիթ շատ դէօրէօվրեց[6]. վարտն էլ տվաւ քթին։ Տաւիթ կէօվ

---

1 Մաքրուին։ 2 Պատշգամբ։ 3 Բռունց, բռունցքի հարուած։
4 Երդում։ 5 Զորցուցած կու։ 6 Գորովել, փայփայել։

մը զարկեց վեր աղջկան թևին, թև թիւրցաւ կախվաւ մոտէն։ Աղջիկը լալով տարաւ մօտ իւր՝ եղելութեն պատմեց։

116. Թագաւոր առեց ուր կնիկը ու աղջիկն, գնացին Տաւթին տեսաւ։ Տունէն տիւրս լսան, որ տաւիթ կը խնտրէ Աստծուց ուր խոգին առնելու, մտան մօտ։ Թագաւորս ասաց, իմ աղջկան սիրուտ էր իր, Պարան Պռօշ, պարան Բէէք Ֆռընտայ[1] տէր էլլի օղորկէր ին կոր իւ կուզին։ Տաւիթ թռաւ ձիու քեամակ, որ էրթէր ինանք ոպանէր։ Թագաւորս ասաց. «Պէտք է որ առաջ ձե տանենք եկեղեցին վեր իրարու պոտկենք, ետա էրթաս»։ — Տաւիթ՝ չէ, ասաց, ես չում ինանք չսպանեմ քըոյ աղջիկ ձիկ խարամ էլնի։ Թագաւորն ասաց. «Ինանք տէլ չեն իկե, ինանց խեծել մենակ իկե տաշտ։ Տիւ տեաշ[2] խեծլի խետ պիտի կռվես, չում ինանք գեան։ Խեծել ջարդելէն ետա պիտի էրթաս Քարէկալ անւոր տաղն, էնտեղ պօղպատէ տուր մը կայ, քըոյ թուր վեր ինոր պիտի փորձես. թէ որ կտրես, գիտցիր որ պիտի յաղթես տևերուն»։

117. Պարան Պռօշ, Պարան Բէէք Ֆռնտայ տէւեր կուգեան էն տեղ, քե կասեն էրթանք տաշտի մէջ կռվենք, տիւ չէ ասես, էս տեղ պիտի կռվենք»։ Կռվելու կերպն Թագաւորից ուսնելէն ետրայ՝ Տաւիթ տարաւ Խանտիւթ խանըմին ասաց. «Եօթն օր իմ ճամլուխ կաչքես, թէ որ չեկայ, կուգեաս իմ լեշ կփտռտես, էն լեշերայ մէջ կնանես, կխորես. իմ նշանն էլ էս ի, որ թևիս տակը մոէ խաչ մը պիտի ինանես»։

118. Տաւիթ քշեց Պարան Պռօշի խեծլի վերէն. ասաց.

«Օհնեալ բարերար Աստված,
Անամք շատ էր մեծ թագաւորուն։
Որ ինչ քիւնէք, արթուն մնացէք,
Որ ինչ արթուն էք, ձիանք թամքեցէք.
Ջատէք, Տաւիթ գող էր, գողութնով էկաւ։

Խեծել ուր պատրաստութեն որ տէտաւ, Տաւիթ քեաշեց թուրն կեծակին, ասաց.

«Յիշեմ քե տերն կենդանին.
Մարութայ բանձր Աստուածածին,
Խաչն պատարագին, վեր աջն թևին»։

119. Ինկաւ մէջ խեծլին իրեք օր ըրդեց. ըսկսում արնէ գետ էլաւ, որ տաղ մաը տերն էլ կկլորէր կխեխատէր։ Իրեք մարտ մենակ ազատեց, ձեռը ոտ կապեց որից տարի մը գըլէօխ, որ Խանդիւթ խանըմին մշակ տանի։ Էն տեղէն գնաց Քարէկալ անւոր տաղն, տէտաւ պօղատէ տուն, որ խազարաւորներ իկեր ին, չին կարցե կտրել. քաշեց թուրն կեծակին, յիշեց ուր Տէրն կենդանին,

---

1 Թեւատր, Ռուցիկ։ 2 Նախ. առաջ։

Մարութայ քանձր Աստուածածին, խաչն պատապարին վեր աջ թևին. զարկեց պօղպատ, սուն ըսկուն կարեց, որ կատր կատրի վէրէն մնաց: Ինքն կարծեց որ չկարեց: Ինար խամար յուսահատեցաւ, զինք անիծեց ու կատացաւ: Նարէն յիշեց Տէրն Կենդանին, Մոմատարի կողմի քամին էկաւ, կարած սուն որ շրջեց. տառձաւ զինքն օխնեց, բժշկուաւ:

120. Պրն Պռօշ, պրն Բվէք Ֆռքնտայ ատէրէ էն տեխէն էկան տեսան, որ Տաւիթ նատե Քարէկալ:—Ասին, Տաւիթ, Պատպատ Կողա թապատուրտ մարդ տիւ ես:—Խա, ատաց:—Ասին տէ էրթանք տաշտ կուվենք:—Տաւիթն ատաց. մենք պիտի կուվենք. տաշտ չեմ էրթայ:—Ինանք էլ հաւնեցան ու ատին, ի՛նչես պիտի կուվենք: —Տաւիթն ատաց կիւռպով. Տեաշ տիւ ձիկ զար իրեք կիւռպ, թէ որ ապանեցիր, իմ արին քե խալալ էլնի. թէ չէ, իրեք կիւռպ էլ ես քե զարնեմ:

121. Բարան Պռօշ գնաց չում Հալապ՝ երիշ քեաշեց էկաւ մէկ կիւռպ զարկաւ Տաւթին, թօղ տուման էլաւ: Տէն ատաց. «Տաւիթ, խոզ ես, խոզ տառձիր»: Տառձաւ տէսաւ, որ ատղ կէօ կացներ ի Տաւիթ. Նորէն ատաց, «Տաւիթ, կայիմ կաց տէօրիս շատ պիտի զատանամ զատանամ»: Գնաց չում Պազատա, Պասրայ երիշ քաշեց[1] էկաւ, կիւռպ մը էլ զարկեց Տաւթի վրին, վիզ քէթրվաւ[2], Տաւիթ ուր վիզ ուր ձեռնով շիտկեց, կացնաւ: Տարձաւ ատաց Տաւթին. «Ըսարիս[3] պիտի էլնեմ խետ էրկնուց զարնեմ չում անտիւնտկ իջնես. պատրատա կաց»: Տէն էլաւ խէտ էրկնուց, Տաւիթն էլ ուր մզրխին ատաւ քսեց. տնկեց ուր ճակատի տէմ կացնաւ: Տէւ էրկնուց իջաւ, որ պիտի զարնէր, ինկաւ վեր Տաւթի մզրղի ծէրին, որտից ծակուաւ, քեամկից էլաւ տիւրս. լէշն իջաւ վեր Տաւթի ձեռաց ինչպէս սար մը:

122. Տաւթի ձեռք իրեք օր մնաց լէշին տակը, չկարցաւ ուր տիւրս խանել, քիւնչի մռացաւ ուր տէրն յիշել: Էն ահաթին Զէնով Յոլան տէսաւ, որ Տաւթի ատաղ նվաղեր էր, թռաւ սև լայեղ ձիու քեամակ, որ աչք խվոց խատաւ Տաւթի մօտ, բոցց ճամխու վերէն Տաւթի կապած իրեք մարտեր որ տէսաւ, ատաք պռտեց ինանց վէրէն, արօրից. ասրայ խատաւ մօտ Տաւիթ: Ասաց. «Տաւիթ, էտ ինչ հալն ես ինկեր»:—Ասաց. էս իրեք օր ի, որ ձեռքս մնացե լէշին տակ, չեմ կանայ խանե տիւրս:—Ասաց զայի 4 քըոց տէր մռացեր ես: Ասելուն պէս՝ Տաւիթն ատաց.

«Ցիշամ քե Տէրն Կենդանին,
Մարութայ քանձր Աստուածածին,

---

1 Թափառել, Խափ առնել. 2 Ծռուել: 3 Այս անգամ. 4 Զահար, դուցէ:

Խաչն պատատրագին վեր աջ թևին»։
Լէշն կլսրեց գնաց ինկաւ մէջ ձորին։

123. Էն օր եօթն օր թըմեր էր։ Տաւլթ ինան (և) ուր խօրօխպէր տէսան, որ մէկ ձիաւոր մը մէջ էրկինք մէջ կէտին ի, էկաւ մտաւ մէջ խեծլի ճանտինեերուն՝ Տաւթի լէշ կվտաւալ։ Ձիաւորի աչքն ինկաւ Քարէկալի էրկան մարդն, ձին քչեց տեխ էնտեխ. որ խաղաւ, իրար ճանչցան։ Տաւլթ Խանդիւթ խանըմին աչքով տրեց, էկաւ խօրօխպօր ձեռք պագեց։ Ձէնով Յովան Տաւթից էմացաւ, որ ուր նշանլուն էր, էլաւ տեխ Սանտուն գնաց։ Տաւլթ ինան ուր նշանլուն էլ տեխ Կապատ Կողգ գնացին։

124. Խանդիւթ ուր խպատուութէնէն ձին չանծ Տաւլթ առաջ քշեց։ Ինոր խատրը Տաւլթ ինատ արաց, տառձաւ տեխ Սանտուն. աղջիկն որ իմացաւ, ձիւց ինջաւ ուր արվիշըմէ թաթեր խանեց։ Բէօբլիկ ոտքով տվեց մէջ խերկին, վազեց, պօռաց Տաւթին. «Բրայ Առածու սիրուն էլնի, մէկ մը էլ իրիշկի տեխ իտեւանց»։ Տաւլթ տարձաւ տէսաւ, որ աղջկան ոտքեր խերկի կուէթներէն[2] ըսկում ճղճղվեր ի, որ արուն էլե խերկ ծածկէ։ Տաւլթի սիրտ ինջաւ, Խանդիւթ խանըմը իթող իտևանց, ինքն ինկաւ առաջ, չում խատան Կապատ Կողը։

125. Թագաւոր էլաւ ինոնց սիմաց, տարաւ ուր ատէն ինջեցուց, կանչեց վարդապետներ, քեահանէք. եօթն օր եօթ գիշեր խարանիս տրին, Տաւլթ պսակեցին վեր Խանդիւթ խանըմին։

ԺԲ.

126. Էն ամիս, ին օր, ին սըհաթ որ ժամանակ ընցաւ, Տաւլթին տղե մը էլաւ՝ անուն տրեց Մհէր։ Քառասունք տէլ չէր լըմընցէ, Տաւլթ մտաւ էօտէն, տէսաւ որ Մհէր քներ ի, ամայ նաֆտաս խանած ժամանակին իրեսի վերվի[3] շոր չէլնի ինջնի։ Շուֆայի գնաց[4], թէ աղէն ուր մէջքի պտուղ չի։ Խանդիւթ խանըմին ասաց. «Իմ տղէկութնի ժամանակ՝ երբ որ ես նաֆտաս կառնի կուռի, իմ իրեսի շոր չում էօտի կամար կելնէր կինջնէր։ Էտայ տղէն իմ մօտից չի, որ ըսկնայ թրոլ ի»։ Խանդիւթ խանըմ ասաց. «Հալայ կաց չում քառասունքէն էլնի, տրա արի տէյր արա»։ Քառ-

1 Սեռաբսէ գուլպաներ։ 2 Հոդակոշտ։ 3 Վերայի
4 Շուֆայի գնալ, շուֆայ տանել=կասկածել, հասկանալ։

ուունք որ թքմքմաւ, Տաւիթ մտաւ էօտէն ակաւ, որ ապի իրեն շարի խեռ ուրուրոյլ ծածկոցն էլ չաւմ կաւնար կէրնի կինջնի նաֆաս առած ամած ժամանակ։ Խանդիւթ խանըմ նեռս որ մտաւ, Տաւիթն ասաց. «Ընցած օր ես քրոյ մեղքն առի, բայց մկաց կտեռնամ, որ ապէն մեր զարմէն ի, մեր ընորքն ունի»։

127. Տղէն էլաւ ուր ասրէկան, Կապուռ Կոզայ թագաւորի էրկու լաճերաց խետ կէրթար նէճիր կանէր, կբերէր տուն։ Հրամէնք կու տէին՝ Տաւիթին չին խտե։ Տաւիթ ուր կընկեռան կասի. «Ես Մհէրի չափուն որ խատայ, օր մէկ վէրու եզ նէճիր կանէի. մկաց Մհէր կերթայ ճնճղուկ մը էլ չի կանայ բերե, չէլնի որ մեր զեարմէն չի»։

128. Մհէրն էլ վեր առան ականճ կանէր. Ներս մտաւ տրտուտ իրեռով, գնաց քնաւ։ Առաւն որ վեր էլաւ, թագաւորին ապէյներ էկան Մհէրին կանչեցին, որ էրթան նէճիր։ Մհէր չգնաց խեռերնին, թէ էս օր կէրթանք գետի ափ ուրախութեն կանենք։ Մհէր խետ էն էրկու ապին որ գնացին գետի ափ, էն տեղ մէկ ճըռչ քարտի ծառ կէր. Մհէր ձեռքն իթալ էտ ծառ կօռեց չաւմ գէտին. թագաւորի տղէքներաց ասաց. «Էկէք նատէք վէրէն, տրանկիւ զալ խաղանք»։ Տղէքներ խաբվան նատան վէրէն, էրկուտիր խաղցուց թէ չէ, վեր իրեքին թող տվեց ծառը. ապէյներ ըսկաւն թափով զարկեց քեռին, որ լղվան[1] մեռան։ Ձիւյտալ գնաց թագաւորուն։ Տաւիթն էլ երբ որ լսաւ, առաւ կիւռզ կնաց, որ Մհէրն ապանէր։ Թագաւոր ուր կնիկ ինկան պառաւանց[2], ասին. «Թէ մեռեր են, մեր ապէյներ մեռեր են. տիւ Մհէրն ինչի կապանես. Մհէրն իմ էրկու ապի տեղ կընդունեմ ես»։ Տաւիթ որ կիւռզով կպարնէր Մհէրին, Խանդիւթ խանըմ ինկեաւ պառաւանց, որ չթողնի, Մհէրն ասաց. «Օրհնեալ քարերար Աստուած» ու տուռձաւ ասաց ուր մօր։ «Իմ խօր տուպեր կնմանի Ծովասարու քամիին, որ կառնի իմ մազերուն, տիւ հոգ մաներ»։ Տաւիթ շատ գարնելէն ասրա Մհէր բարկացաւ, խատաւ ուր խօր կիւռզն առեց, զարկեց մէջ խօր սրտին, Տաւիթն եկաւ մեռելի պէս մնաց չաւմ առաւաւն։

129. Երբ նորէն խելք գլէօխն էկաւ, անիծեց ուր սրտին, ասաց. «Մհէր տիւ որ ինկեար իմ խաև[3], Աստուց կիանգրեմ պատուղ չինաց քրոյ խաև[4]։ Ինչ պատուղ որ ինի քրոյ խաև, աշխատ պիտի աւիրի։ Խեռ ոկուն ասաց Տաւիթ, խրեշտակ էրկնուց իջաւ,

---

1 Տրորուել։ 2 Պառաւան—Միջնորդ։ 3 Ըստ գրի առնողի—ինծմէ ծնար։ Բայց այստեղ նշանակում է եւ հալածել, որով յետագայ նոյն ոճի հետ բառախաղ է պատնում։ 4 Որդի չունենաս։

ինար մարդիթնի[1] էրտակ քաշեց խանեց քեամվից։

130. Տաւիթ Խանութեթ խանըմին ասաց. «Աբի էրթանք մեր երկիր, էլ ես Մհէրի երես պիտի չտեսնամ. թէ չես իզեայ, ես կէս կէրթամ»։ Խեծան գնացին, Մհէր մնայ ժոտ քեռին։

131. Տաւիթ տել չէր խատե ուր երկիր, Ալաթ քեռաղաք խատան։ Էն տեղայ սրլթան Զրմուս անուր աղջիկ մը էլաւ Տաւիթի դէմ, ասայ. «Ես ալու էս տեղ կելու մը պիտի անենք, իրարու ձրտպենք. ապա թող կուտամ էրթաս»։ Տաւիթն ասայ.—Կաց հալայ կնիկս տանեմ քաղաք, ասառնամ գեամ կռվենք։—Աղջիկն ասայ. «Ես խաւատարմութեն չեմ անի. թէ կգառնաս թէ զորդ կասես, ձեռ զարկ վեր քրոյ ծոյի խաչին, էրդիւմ ապրա, որ հաւատամ»։ Տաւիթ կազգնայ[2] ձեռք զարկեց վեր ձախ ծոցին, էրտվաւ—էն դիտէր թէ խաչը աջ ծոցն ի, մուրտակ ատանդրը՝ ձախ ծոցն ի։—

132. Երբ գնայ տաւն, ուզեց տանդր խանել մուրտաւ տանդրեր, տէտաւ որ խաչ ձախ ծոցին մէջն ի ոնւցեր էր, խաչն էլ էրէր սև կուտ. տառձաւ կնկեան ասայ. «Իմ խաչ սնցե. ես ալ էրթամէն օռօտպու[4] վէրէն կռվի, ամայ ձի, ճակ[5] չեմ տանի խեատ. կերթամ, համայ ոտ պիտի դնեմ վեր ինար ասայ ճզեմ, թալեմ, գամ»։

133. Տաւիթ ճամբուն ինկեաւ։ Խլաթայ սրլթան Զրմուս աղջիկ ուր մզրախ ալույոտեց, մտաւ կարմնճի տակ. էն տեղէն, որ Տաւիթ պիտի ընցներ։ Տաւիթն ընցնելու ժամանակ կարմնճի տակէն մզրախ մլեց Տաւիթի կռնէն[6]. ծակեց թինամէջկից ալուրա էլաւ։ Տաւիթն ինկաւ մեռաւ։

134. Զէնով Յովան տեսաւ, որ Տաւիթն անդընցաւ[7], էլաւ գնաց վնտռելու։ Էկաւ Ալաթու երկիր, տեսաւ որ Տաւիթ մեռեր ի, Տաւիթի լէշ վերցուց տարաւ ուր երկիր քեօշկի առջև, որ պիտի լվանալ տար։ Խանդիւթ խանըմ որ տեսաւ, ասաց. «Ըստաց տրայ արև լրտս ձիկ խարամ էլնի»։ Զինք քեօշկից թալեց լեր Տաւիթի լէշին, էն էլ ինար խետ մեռաւ։ Էրկուս մէյտեղ առան Յովասարու Մարութի վանք թաղեցին։

135. Որ դառձան տուն՝ ճույտպ օրօխկեցին Մհէրին, թէ քրոյ խէրն էլ մէրն էլ շատ խիւանատ են։ շուտով էլնես գեաս։ Մհէր որ էկաւ, ուր խէրն մէրն խարցուց, ժոյմը[8] խաբեցին, վերջն ասին, որ Ալաթու սրլթանը քրոյ խէրն ոպանեց, քրոյ մէրն էլ

---

1 Այրուձեան։ 2 Գիտամամբ։ 3 Թանիրի կողէն կրակի վրայ ընկած էրած հաց։ 4 Անառակ։ 5 Զէնք։ 6 Գալչայ ապդրի վերի մասն։ 7 Անապանեցաւ, ուշացաւ։ 8 Մի ժամանակ։ առ ժամանակ։

զինք քէօշկէն վար թալեց. էրկուան էլ մեռան։ Կէօ Մարութի վանք թաղեր ենք։

136. Զէնով Յովան Մհէրին ասաց «Քե կանչեր եմ, որ քրոյ խօր թէօլ[1] առնենք Ախլաթու երկրէն։ Նա ու Թառլան Վիքօն կէլ-նենք սուր վարդապետ, Մարութի վանքի մէջ կառանենք Ախլաթ, կմանանք եկեղեցին, ժողովուրդ որ գեա մէջ խամբիւրի, մենք ժամու դուռ կկոցենք. Ներս էլած ժողովուրդը մեր բաժին՝ քաղքի մէջ մնացած քրոյ բաժին՝ կճարտենք»։ Էս խորհրդով էլան գնացին Ախլաթ. ժամխաբ ժողովուրդ կանչեց, որ գեան Սատնայ մէջ խամբուրեն։ Քեաղքի մարդէր հմէն լցվան եկեղեցին. Մհէր կայնաւ վեր գառն։

137. Պառաւ մը էլ էկաւ շիրեի ձեռք։ Մհէր խարցուց. «Զօ՛, պառաւ, ուր կերթաս»։—Ասաց, լոաց որ Սատնու Տաւթի լաճ՝ Մհէր իկէ էս տեղ, պիտի կնանեմ, շիրեի մը գարնեմ վեր ուր քեամկին, որ սիրաս խավնայ. քիւնչի Տաւիթ իմ լաճ սպանեց Մարայ Մէլիքի տոքրի մէջ։ Մհէր էս բան որ լսեց, ժամու դուռ գոցեց, պառաւ իսկ ոտաց տակ ճղեց, գնաց ինկաւ մէջ քեախ-քին. մարդեր զըմէն էլ թրէ ընցուց։ Յովան և Թառլան Վիքէն էլ եկեղեցու միջի մարդիք սպանեցին, էլան տիւրս. տէսան որ Մհէր մարդ, անտասուն, զըմէն ըրդեր ի։ Կրակ տվին քեաղաք վառեցին, դարձան գնացին Սասուն։

138. Մհէր իկին ուզեց ուր խօրխապոր մատէն, որ էրթայ Կա-պան Կողայ թաղաւորի մոտ։ Խօրխապոր կըյտեր[2], տէսան որ Մհէր կտրիճ մը ի, թող չտվին որ էրթեր։ Ուրենց էրիկներաց ա-սին. «Մհէր մէր ոյի արունիցի, թող մնայ մենք կշտխանք, կը-ճըռճացուցենք»։ Մհէր ճըռճացաւ էլաւ կտրիճ մը. խօրխապոր կըյ-տեր աչք իսկիցին[3] Մհէրին։

139. Օր մը Ջուր տաքցուցին լոգկնալու, կրշտվան[4] մտան Ներս, Մհէրին ասին. «Էտայ տաքցած Ջուրն քե Ներս, որ լվացվենք»։ Մ էրն ինանք չըլուտ տեանալուն պէս՝ ալնախն[5] առեց վեր ուր իրիսին, Ջուր տարաւ Ներս։ Կըյտեր ձեռք թալեցին Մհէրի վոզպատ[6], որ ուրենց կամք կատարի։ Մհէրն տիւրս վախաւ, չուտ իրիկուն էլ տուն չէկաւ։

140. Զէնով Յովան, Թառլան Վիքէն որ տուն էկան, տէսան որ ուրենց կըյտեր ծամերն ուրենց վիտեր են, իրիսներն ուրենց ճանկռթեր արբնոտեր են, նատեր են կուլան։ Երբ որ պատճա-ռքն խարցուցին, ասին. «Էն չըճրպրած[7] Մհէրն ձեռ իթալ մե,

---

1 Վրէժ։ 2 Կանայք։ 3 Բցեցին, սիրահարեցան։ 4 Մերկացան։
5 Թաշկինակ։ 6 Օձիր։ 7 Զգօրացած, չմեծացած։

մե էսայ հալ խատուց։ Պէտք է որ էն տղէն ապանէք»։ Ու բէնց իրիկներ ասին. «Էն տղայ ի, ըսկուն բաներ խելք չի խատնի. իրիկուն դուռ կփակենք վէրէն, թող էրթայ ուր քեռու մօտ»։

141. Մհէր գիշեր էկաւ վեր դռան, շատ զարկեց, չբացին. ասաց. «Խօրօխպէր, տիւք ձեր կրյաեբուն խաբվեր էք. իմ վէրէն պատ խատան[1] կանեն»։ Երբ շատ աղաչեց, դուռ չբացին, թող տվեց գնաց Ծովասար, վեր ուր խօր գերեզմընին նատաւ, ասաց.

142. «Օրհնեալ բարեբար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն։ Որդի, ասաց, բարով ես իկէ խազար բարով. ամայ իմ ճար իմ ձեռքեն գնացեր ի։ Կէօ քըոյ խաց թխուկ ի, քըոյ կերն իփուկ ի Հալապայ քեաղաք, էնտեղ գնա, որ չախվեա»։

144. Էնտեղից էլաւ վեր մօր գերեզմնին, մէրն էլ ճուղապ իտաւ։

145. Առաւտուն գնաց Սասուն, ուր խօր ձին ու ճակերն առաւ, խէծաւ քշեց տեխ Հալապու քաղաքը, բայց ճամբախ չէր գիտէ, թէ դըսր վեր կերթէր։ Գնաց չուտ խատաւ Ափանայ տարն. էնտեղէն ընցաւ խատաւ Վանայ տաշտ. անօթութնէ սիրտ ետ կուգեար։ Ատծուց խնդրեց, որ կամ կռիւ մը տայ ուր, կամ ուր ամանաթ[2] առնի։

146. Աստուած եօթ ձիաւոր խրեշտակ ճամխեց խետ Մհէրին կռվելու. կէս օրվնէ չուտ իրիկուն կռվան. Մհէր թուրն կեծակին կթալեր, խրեշտակներուն չէր բռնի, ամայ խրեշտակներ Մհէրին շատ չարչարեցին. Մհէր աչք դեխ էրկինք վերուց, Աստուծմէ խնդրեց, որ ուր ողորմութնի դուռ բանայ վեր Մհէրին։

147. Աչք դառնուց վեր երկրին, տէսաւ որ Ակռվու քեաբի տակ խատեր ի. էն տեղ քեար տռան պէս բացուաւ, Մհէրն մէջ մրտաւ, դուռ խփվաւ, մնաց էն տեղ։

148. Կէօ հալա էն տեղն ի. ուր ձիու շեռ էն քեարից չուտ մկա էլ տիւրս կուկեայ։

149. Երկնուց իրեք խնձոր իջաւ, մէկ ասողաց, մէկ լսողաց, մէկ ականջ արողաց, ամէն։

150. Պատմեց Հայուձորայ անկեսանցի Կազարեան Թառօն

---

1 Զրպարտութիւն։ 2 Ամանդը, այսինք հոգին

ՅԱՒԵԼԱԻՓ

Ժ.Բ հատուած, § 129. *էջ* 32, *վերջին տող «Դաւիթ» անունից յետոյ փակագծի մէջ աւելացնել* [ինոնց սոյի բերան կրակ էր, ինչ անիծէր, ըսկուն կէլնէր]

ՉՈՉԱՆՑ ՏՈՒՆ[1]

ՄԵԾ ԴԱՒԻԹ[2]

1. Մարդայ Մելքք վոր մեռաւ, կնիկ թուղթ յեղարկեց Դաւթըն. «Ա՛րի, ըծի ա՛ռ. էն ինչ Սատանն քիւ ձեռն ի. Մարդն էլ թը մնայ քիւ ձեռ»։

2. Դաւրթ յիւր բարեկամքիր, տէրտէր կանչից. իրիր, յիւր ժողով իրից[3], էսաց.—Մարդայ Մելքքի կնիկ ճամբխիր ի իմ յիտիւ, իս տ՝էրթամ։

3. Ըսըն.—Դաւի՛թ, վոր կերթա՛ս, մենք չընք սաղ մ՝երթայ, քիւ ֆէնն ի. կերթաս, գնա՛, մենք չը՛նք ուզի. թուղ զՄարդ, յիւրիշ թաքեաւուրի տեղ էլ հալա կուզինք զաւթիս։ Էգա Մարդ որ կուտայ քի առանց կռիւ, առանց բան, գիւ վրէ՛[4] չըս էրթայ, շատիր կռուով կառնին, էգա հայդ տեղ ի, շիւտ գնա՛։

4. Կնիկ էսաց.—Դիւ կերթա՛ս, Դաւի՛թ։

Էսաց.—Խա՛, կերթամ։

Էսաց.—Էն թուրք ի, գիւ խայ, վրէ՞ կերթաս։

Էսաց.—Ընծի կանչիր ի, տ՝երթամ։

Էսաց.—Վուր գիւ կերթա՛ս, քեառասուն տարդ գիւ իմ վերայ խարամ ու պատ ըլնըս. գիւ իմ կեօղվընք քեառասուն տարդ տը չգեատ. իս խայ իմ, էն տաճիկ ի, գիւ ղէն կուզիս, ըծի կը թուղնիս։

Էսաց.—Մեռնը էն մարթ, վոր գօտիկ տա՛յ, կիւտիկն[5] շառնը։

5. Անգիւց Դաւիթ կըլնը, կերթայ Մարդ. վուր կերթայ Մարդ, կառնը Մելքքի կնկեան, էրկու, իրեք տարդ կը մնայ կնկեան կուշտ։

---

1. Վէպս գրի առնող Սարգիս Հայկունին չունէր ընդհանուր վերնագիր. իսկ այս իմ ընտրածը. որ չունի ցարդ հրատարակուած ոչ մի փոփոխակ, կը բացատրեմ յառաջաբանում։ Ստեփան Կանայեանց։

2. Ասած է Մոկաց Հաղբին գիւղացի Թումաս Պետրոսեան։ Սա լսած է 35 տարի առաջ Յօհան Եղկանեանցէն, որ նոյն ժամանակ զառամեալ ծերունի էր։ Պատմող Թումաս 60-70ամեայ է. իր ասածը ստոյգ կը համարէ. իսկ ուրիշ ճիւղերն նոր յերիւրուած աւելորդաբանութիւն։ Ս. Հայկունի։

3. Նախասկէս գրուած՝ էրաց. 4. Ինչո՞ւ։ 5. Գլխին դնելու բարակ, փայտէ շրջանակ։

Դաւթից մէկ տղայ կըլնը Մելքի կնկեան։
Էդա տղը անուն Մելքք կը դնի։

6. Ու Մելքք կըլնը, Դաւիթ էսե շատ տուշումի՛շ[1] կըլնը յիւր վերայ.—Ինչխ, էսաց. իս եկամ, Մելքի կնիկ առամ. վաղուան վուր կը ջիւջանայ անիւ տղէն, վուր մեծացաւ, Սասունն էլ կը զաւթի[2]. Մարին էլ կը զաւթի իմ մեռնելով յետ։

7. Դաւիթ կըլնը յանդիւց կգայ Սասուն.
Վուր կգայ Սասուն շատ եալվար[3] կըլնը կնկեան,
Զարա չրլնը կնկեայ խիտ, չը թուղի յիւր կուշտ։
Վուր չարա չրլնը խիտ, կը ճամբխի տէրտէր կը բիրի,
Կը ճամբխի, իշխան մարդիր կը ժողուի, բիրի, կըսը.
—Իս գնացը, Մարիայ Մելքի կնիկ առը. մէկ տղայ մատէն ըլաւ, մկայ վուշմնիր իմ. էան տղէն ըծի մատէն ի, կարըճ ի. սօրա Մարին էլ կը զաւթը, Սասունն էլ կը զաւթը. էլ իմ ապդ խեղճ կը մնայ. մկայ իս իկիր իմ, իմ կնիկն պաս էրեր ի, չը թուղի էրթամ մատ, ըծի տղայ ըլնը։

8. Էդա տէրտէր մէկ քեանի խատ իշխան մարդիր կառնը կերթայ կնկեան մատ. կնկեան խատկացրցին.—Դիւ քեանի տարը պաս էրիր իս։ Կըսը.—Քեառասուն տարը։

Էն տէրտէր, էն իշխանքտիր բիրին քեառասուն տարին քեառասուն ամիս կայնըցրցին։

Քեան գէն ճիւշ մարթիր ըսին.—Քեառասուն ամիս շատ ի. բիրէք, քեառասուն օր կայնացրցէ՛ք։

Տէրտէրն էլ կըսը.—Զե՛, քեառասուն սահաթ ըլնը։

9. Տէրտէր էսաց.—Դաւիթ, քի մէկ տղայ տըլնը, ամա դիւ էլ, քիւ կնիկն էլ տը մեռնըք, տղէն տը մնայ յեթիմ[4]։

Դաւիթ էսաց.—Բան չկայ, մենք կը մեռնընք տղէն ճամբխէք Մելքի կնկեան մատ, ան կը պախի։

10. Ինը ամիս, ինը օր, ինը սահաթ ինչ թմաւ, Դաւթին մէ տղայ էլաւ, որ տղէն իլաւ, խէր ու մէր մեռան։

Տէրտէր կնքեց, անուն Դաւիթ դրից.

Էսաց.—Խօր անուն գետրն տը չմնայ։

---

1 Թուրքերէն=մտածել։ 2 Թուրքերէն=տիրել. նուաճել։
3 Թուրքերէն=ազաչել. խնդրել։ 4 Թիւրք.=որբ. անոք, անօգնական։

Բ.

ՊԱՏԻԿ ԴԱՒԻԹ.

11. Դաւիթ անտե չկրցան պախին, ճամբէն դնաց Մելքի կնկեան մօտ։

Մելքի կնիկ շատ ուրախցաւ էդա տղը վերայ։

Դաւիթն ծիծ տուեց. ինչ էրաց, Դաւիթ էնու ծիծ չի ծծից։

Դաւիթը գլուխ կը բիրը սա ծծը վերայ, մէկէլ տեխ կը փախցնի, կը բիրը մէկէլ ծծը վերայ, մէկէլ տեխ կը փախցնի, անիւ ծծը չի ծծը, չի ծծը։

12. Էդա կնիկ շատ կը լայ, կը մնայ շիտ. չգրատի ինչ էնի խիտ Դաւիթն։ Կը կանչը Մէլքի, կեատը.—Ինչ էնքնը էսա տղը խիտ. որ ոլնայ մնայ, կը մեռնը։

—Դիւ տաճկի իս, կըսի Մէլքի, անիւ խատաբ քիւ ծրծ չի ծրծը. անիւ բիրտն որն ի, կըսը։

Կըսը.—Բաթմանայ բիւղէն ի։

Էսայ.—Բաթմանայ Բիւղէն մէկ էլ պարձուր յեա, թը յելնի, երթայ խօր տուն, մակեատ[1] էնու խօր չկեա՛ մեղը, կարագ, չկեա՛ անուշ անուշ բանիր, թը ճամբէն գեայ, տղէն պախի, շախի։

Բաթմանայ Բիւղէն ի, կելնը կերթայ Սասուն։

Դաւիթը խրօխապէր մեղր, կարագ, ընդրա ուտելիք ինչ ի, յըմեն կտայ Բաթմանայ Բիւղին. Բաթմանայ Բիւղէն կը բիրը դնի կնկեան յատէչ։

14. Մէլքը վուր տեատ, էսայ.—Տըտար բա՞ն, ոկնայ տղէկ բան ո՛ր տեխ կայ, Նա տու, թուղ ուտի ճուչանայ։

Դորի՛ս[2] եղոլ զԴաւիթն պախեց մէր։

Թէ յիւրիշ տղէք տարով ճուչանին, էն օրէ կը ճուչանէր։

15. Մէկ օր Մէլքէ կառնը ընկիրնիր կերթայ գաշտը մէջ կը խաղան. Դաւիթն էլ կըսը ուր մօր.—Իմ ախպէր կերթայ, ըծի էլ տանը խիտ, ինչ կելնը. տանը խիտ, իս էլ կերթամ, թամաշա կէնիմ։

16. Մէրը կըսը.—Մէլքէ, ի՛նչ կելնը, քիւ ախպօրն էլ տար խիտ, որ էոքամ լավա[3] կէնի։

---

1 Թուրքերէն—Միթէ։ 2 Այնուհետեւ։ 3 Ապաչանք, խնդիրք։

—Մէրի՛կ, կըսը էն ապպ չուրտկուղ ին [1]. չը՛մ կարնայ տանը խիտ։

Մէր կըսը.—Էնի ճիժ ի, գաֆալ [2] ի. Էնի ինչ գոլ, պէ-ֆահմ [3] ի. տար քիւ խիտ։

17. Մէլըք մը խաթին չըլնը գիւս, կառնը, կը տանի, յիւր մը, չի իշխի տարը ուր մտա, զատը կը գնը, ուրինք կեր-թան, զատը կը խազան։

Մէլըք որ ախպէր չտարաւ ուր կուշտ, էգա Դաւիթ կը ուկի [4], թա՝ գնայ կգեայ ուր տուն։

18. Մէր կըսը.—Դիւ վրէ՞ էկար, Դաւի՛թ.

Դաւիթ կըսի.—Ը.ծը չտանը յիւր կուշտ, գէ հեռու պատը կը գնի։

19. Մէլըք յեմարը կգեայ տուն. մէրն խիտ կը կուրը, կըսը.—Դաւիթ տանէր քիւ կշտը խիտ, նստըցրեր։

—Մարէ՛, կեատի, չըմ ըշխընայ տանի. կգեայ, կըյնայ միր ձեռ օտայ մէջ. հեղ կը գպնի, մեր անուն էլ մեր չարչարանքն էլ կը կուրտուվի. մեղայ տակ կընկնինք [5]։

20. Էն առաւտուն մօրը խաթիրը խամար էտայ.—Կը տա-նիմ։

—Մէլըք, կատը մէրը, որ կը տանիս, զատը մի՛ գի, տար քիւ կըշտը խիտ գի։

21. Մէլըք տարաւ էն տեխ, որ կը խազէն.—Դէ, Դաւիթ կատը, կայնի, էգա տեխ, թամաշա էրա. Դաւիթ կըսը, կը տիսնա էգա հեղ, շատ գիշ ըսան ի, որ մարդու առնի, մար-դու կապանի. չըլլըմ գեատ, մանրա մէջ, է տեխ զատ կանգնի [6]։

—Ախպէ՛ր, ապէկ, քիւ խուտը տէնիմ, կատը Դաւիթ։

22. Ատունք ընկինիրուվ կէնին խազալ. ապա տուն-տուվրըկ ին. հա խազցած ին, կը խազան, մէկ մէկին վնատ չատայ։ Դոր կգեայ Մէլըքին, Մէլըք զիւր հեղն կառնը, կը գանի։ Դաւիթ կըշկայ, կերթայ հեղը գիմաց կը կանգնը։

23. Մէլըք յիւր ընկիներուն կատը.—Դաւիթ խանէք գիւս, հեղն չգպնը, ապանը։

Ընկերները կգեան, կը բռնին Դաւթին. ինչ կանին չկը-նան խանին գիւս։

24. Մէլըք կըսը.—Դե՛ն գեատէր, որ իս իմ հեղ տը գա-

---

1 Հատուակոտ, յատուտ։ 2 Թուրքերէն—խարթիկ երեխայ։ 3 Թուրք—տնաս. անհասկացող։ 4 Խոտվել։ 5 Երեկոյեան։ 6 Նախապէս գրուած—կայնանք։ 7 Նախապէս՝ «կայնի»

նիմ, իս իմ մօր ասիմ. «Իս Դաւիթ չըմ ասանը, իս պտիմ Դաւ-
թայ խասիյաթ[1]. դադալ կացէք, թօ հեօլ զանի, ապանի, յինի
էղեր ի, Դաւիթ իմ գլեօխ ալը ցալցըցի. որ սկուն ի, համա
ադէկ էնի, մկայ զանիմ, ուեռցուցիմ, իս մատէն ապաստիմ. որ
էն ճուչցաւ, շատ բան տէնե իմ գլեօխ»:

25 Ընկերընիր զուրինը կտան գեն. Մէլըք զիւր հեօլ կը
գալկը. Դաւիթ ձեռ կտայ, հեօլ կը ըռնի, կը թալի. որ կը
թալի, եօթ մարդ անիւնց մատէն կապանը, կըլը կգեայ տուն:

26. Էգ տեղ անուանց քէֆ շատ կը կուտուր. ընկերընիր կա-
ռան — Մէլըք, մինք էկանք քէֆ էնելու, գիւ գտնիր քիւ ախ-
պէր Դաւիթ, որ ծուռ էր, վրէ՞ քիրիր, որ եօթ մարդ ապաննէր:
Մենք էն ապանուկ ի՞նչ առնընք տանընք քաղքը մէջ. քաղաք
մի տ՛ատրն. «Տնէն գնացըք քէֆ անելու, չէ մարդ ապանելու.
վա՛յ Մէլըք, վա՛յ Մէլըք, էգա գիւ ինչ խանիր մեր գլեօխ»:

27. Մէլրք էսաց.—Դաւիթ իմ գլեօխ խանից, չէ որ ըծի
գլեօխ Դաւիթ իմ նամուսին գպա. գիւ գեացէք. իս էրթամ
տուն, իս գԴաւիթ կապանիմ:

—Կըլնըն, ջանդակնիր կտանին, լեալեօվ կգեան տուն:

28. Մէլըք կգեայ ուր տուն, կը տանայ Դաւիթ քնիր ի.
թուրն քեշից, որ Դաւթին ալը գանէր. մէր կայնաւ յատաջ,
էսաց.

—Մէլրը, էգ ի՞նչ տեսնիս: Էսաց.—Տրապանիմ:

Էսաց.—Վրէ տապանիս:

29. Մէլըք մօր վրայ բարկացաւ.—Էգա՛, էսաց, ինչ ասաւ,
գիւ էրիր, իմ գըլեօխ խանիր. քի ասիմ. «Դաւիթ չըմ տանը.
իս տարը, էգա բանիր խանից իմ գլեօխ. իս ամսթաւ. էգա
քաղքը մէջ չըմ կնայ գլեօխ խանի գիւս. զԴաւիթ տապանիմ:
Էսաց.—Մէլրը, իմ ծծը կաթ քիւ վերայ խարամ ըլնը, որ գիւ
Դաւթին գանիս. Դաւիթ ապայ ի, տղէն շատ բան կը ըռնի.
ախր խելք չկայ. որ խելք չկայ, անխելք բան կը ըռնը. իս չըմ
թուրկի, օր գիւ Դաւթին ապանիս:

30. Որ կասը, Մէլիքն էլ մօր ըռբկուն[2] սկուն կը բարկա-
նայ կըլնը գիւս. կը ճամբնը քաղքը մէջ, մէկ քեանի խելքով
մարթ կը ելրի, կըսի.—Դիւք իմ գիւան, իմ մօրն ինիք. ալը-
նանք գիւ ինչ կըսրք:

31. Անիւնքն էլ խիլքեօվ ին. Էսաց.—Մէլրք, էս օր քիւ
մէրն ի. հալբաթ քիւ մոր խիլք քեան քիւն ադէկ ի, քիւ
մէրն ի. գիւ անիւ տղէն ի, քիւ մէր ինչ կըսը, գիւ անիւ

---

1 Թուրք.=բնաւորութիւն: 2 Հակառակ. ջիկրու:

խուռք տէնիս. էն ինչ ադէն որ խօր մօր չը լըսը, կասըն թէ «ծուռիս». էլ էն ադրն ոիյանաթ[1] չըլնը.

Մէլըք էն տե մատծից, էսաց.—Զի խուռք տ'էնիմ։

32. Ըլաւ էկաւ տուն, էսաց.—Մէրս, էս տուրմ քի խաթր։

Մէրն էլ շատ ուրախցաւ, էսաց.—Մէլըք, որ դիս իմ խուռք կէնիս, իս շատ կուրախանամ, ապա որ չանիս, ղբնզի տղայ չըմ ճանչնայ։

33. Մէրը Դաւիթն քեռան Մէլըք շատ կուզի, համա լաճաւն պաւարաթ չէնը. կըսի.—Իմ լաճ սարթի[2]. իս վախենամ Դաւթին ապանի։ Կըլնը կերթայ խօր տուն, կըսը.—Ախպէրնիր. դիւ գիտէք ընչի խատար իմ իկիր (Մէլըքի մօր եօթ ախպէր ունէր)։ Մէլըք Դաւթը մօտէն ըռըկիր ի. իս կուզիմ դիւ ամեն օր Դաւիթ տանիք տար. ձի խիտ ավ էնը։

34. Մէկէլ օր քեռիքն կդեան, պ'Դաւիթ կը վիրցըն կը տանըն տար։

Էրկու շաբաթ կերթան նէջիր կէնին, յեվարին կդեան տուն։

Մէկ օր մէրն կասը Դաւթըն.—Դաւիթ, դիւ էլ նէջիր կ'էնես։

Էսաց.—Ես, մարէ, վերու օխչարքիր իս կոպանիմ. իս կառնըմ բիրիմ չիւր[3] քաղքը կուշտ. կաամ, քեռիքն կը տանըն։

Կըսը.—Դաւիթ, դիւ վատ ժի տայ, բի մի խատար։

Դաւիթ կըսի.—Ադէկ, վատը իս կը բիրիմ։

35. Խըլուտուն քեռիքն էկան, ասըն.—Դաւիթ, կայնը, էրթանք։

Գնացըն տար. Դաւիթն էր, կան էկաւ, մէկ ջուջ, ահագին վէրու օխչար ոպանից։ Քեռիք տեսան, շաշ[4] մնացըն. տուրն Դաւթին քեռամակ, շլկեց էկաւ. ուրինքն էլ կընցնին յաւէջ, հա կդեան, էկան չիւր քաղքը քեռամակ։

36. Քեռիք ըսին.—Դաւիթ, դի գեարն, դիւ գնա, մինք կառնընք կերթանք։

Դաւիթ կըսի.—Խարիր ձի գէս ընը, չըմ խատամ էդա վերու օխչար։

Քեռին էսաց.—Դաւիթ, վրէ չը խատայ։

Էսաց.—Ակնէմ[5] օր իս կը բիրէր, իս կաէր, դիւ կը տանէք, էդա մէկն չըմ խատայ, ըծի խատար կը տանիմ։

---

1 Թուրք.=խատաճուխին. հաւատ։ 2 Թուրք.=չոր, դիւրարդիւ, բարկացող։ 3 Մինչեւ։ 4 Շաշ մնալ (Թուրք.)=ապշել. ապուշ կարել։ 5 Այսքան։

37. Էս մէկ քեռին կըսի.—Կառքն «Դաւթը մէկ էրակ ծուռ ի», մինք չընք աւատաց մկայ ըալլու[1] էրաց. Դաւթայ խուռք մէկ ի, որ էսաց խա՛-խա. որ էսաց չէ՛-չէ. կանէք, որ Դաւթայ մօտէն զօռով չառնէնք, Դաւիթ չտայ:

38. Եօթ ախպէր խուռքիր կէնքն մէկ. էրկուս զԴաւիթ կը բռնէ, խինքն վէրու օխչար տ՛առնքն:

Դաւիթ ըրշկաց զօռով կը տանին, էսաց —Էգա ինչ տ՛առնէք։

—Ի՞նչ տ՛անի՞նք. գիւ չըս իտայ, զօռով տը խլինք, տանինք:

39. Էկան զվէրու օխչարը ջանդակ[2] վիրցին, Դաւիթն էլ ըրռնին։ Դաւիթն էլ ձեռ զարկից, զքեռքն վիրուց, էգենց պանից գետքն, գնաց խուղը մէջ:

40. Զեօթն էլ մէկ մէկ վիրուց, պանից գետքն։

Էլ չըրշկաց կուշտ ու բուլուր:

Վիրուց վէրու օխչար, գրեց թիւու վերայ, եկաւ տուն:

Մէրն էսաց.—Դաւիթ, քիւ քեռիքն էլ տարքն.

—Չէ, էսաց, էգա ի.իս քիրը:

Էսաց —Քիւ քեռիք խիտ քի չկռուան, ձէն չտուրքն։

—Ապա մարէ՛, էսաց, միտք ունէն ծընէ վիախցուցէն, իսն էլ ըռըկամ, իմ քեռիքն մէկ մէկ եան[3] թալիմ, վէրու օխչար առամ, էկամ։

41. Մէրն ըլաւ գինաց Մէլըքի մօտ էսաց.—Մէլը՛ք, գիւ Դաւիթքն չըր խաւնը, արը՛, տիս. Դաւիթ ինչ վէրու օխչար ի ըիրիր։ Մէլըք էլաւ էկաւ, տըսաւ մէ ջուջ վէրու օխչար:

Էսաց.—Դաւիթ, գիւ էկար, ապա քեռիք ո՞ւր գինացքն։

42. —Մէլը՛ք, էսաց Դաւիթ, էկանք քեռպքը քեռամակ, իմ քեռիք իմ մօտէն կը խլին վէրու օխչար, ես իմ քեռիք շիրտիմ դեն, վէրու օխչար առամ, էկամ. իմ քեռիք մնացքն էն տե ծրծղալով, ես էկամ:

43. Մէլըքի ուտքն առաւ.—Արէ՛, էսաց, քիւ ախպէրքիր ապանիր ի:

Մէր չաւատաց, համա Մէլըք յելաւ, վապից գինաց:

Գինաց տուաւ, քեռիք ինչպէս պարկի խուղը մէջ, չիւ մէջք գինացիր ի խուղը մէջ, մնացիր ի բերանքտիր բաց, էնու ատամքիր սըտակ կտան:

44. Մէլըք որ խասաւ, տուաւ քեռիք չուրցած ի, յելաւ յընգիւց, գարձաւ էկաւ տուն, էսաց.

—Արէ՛, Ատուած քիւ տուն աւիրայ, քիւ ախպէրքիր ապանիր ի: Խապար տուրց, գինացքն քեռիք ըիրքն. խուրքն։

---

1 Թուրք.=յայտնի։ 2 Թուրք.=դէշ, լեշ, դիակ։ 3 Թուրք. կողմ։

45. Մէլքը էկաւ ասուն, ասաւ Դաւիթ քնիր ի. թող քեռաշքը, որ զԴաւիթ ա՛սպանէր։

Պա մէր շա՛տ կուզէր Դաւթին, չքր թուզներ։

46. Էդ տե Մէլքք ու մէր շատ կռիւ էրին Դաւթ վերայ։ Մէր էսաց.—Դաւիթ ճիժ[1] ի. խելք չխատնի. ապա որ էնաւ խելք խատնէր, զիմ ախպէրքիր կսպաննէ՞ր. իմ ախպէրքիր սպանից, քի՛ ինչ։

Էսաց.—Դաւիթ շատ թարս ի. սպանիմ, իմ եախն[2] պրծնի ձեռնէն։

—Մէլքքը, էսաց մէր, Դաւիթ որ ճօճացաւ խելքով կլինը։

Մէլքք էսաց.—Տըզէն ճարպիմ[3]. հիմայ անիւ ճօճութեն պզտըկութեն բայլաւ կէնը։

47. Դինաց մէյ լանկեարի[4] օսկի լցեց, մէյ լանկեարի կրակ լցեց. առից իբի, որ Դաւթ գէմը։

ԶԴաւիթ քնուց վի խանից։

Դաւիթ ելաւ, նստաւ. ըրշկաց, ասաւ մէկ լանկեարի կրակ, մէկ լեանկեարի օսկի անիւ յառաջ գրած ի. մէրն էլ կշաը խիտ նստած ի։ Մէլքք էլ մէկ քեանը մարդով նստածքն։

48. Դաւիթ ըրշկից, ձեռ պարզըց, օսկին աջ վիրցէր, խրիշտակնիր ձեռաց գանքն, մտուցն ի կրակը մէջ, կրակ մատից կպաւ, ձեռն շուշուտ կրակով մտուց բերան, կրակ խիտ գինաց, լիզիւն իրից։ Որ իրից, մէր էսաց։

—Մէլքք, տեսա՞ր, որ քի կասըմ «ճի՛ժ» ի, գիւ կրսիր «չէ»։ տղը լիզիւն էլ իրից։

49. Դաւթը ասն Մէլքքի որտը մէջն ի. Մէլքք շատ կը վախէնայ մօտէն.—Որ էն պզտիկ չսպանեմ, ջուջանայ ըծի զօռ ա՛նի. մէկ օր էգա օյին յիմ գլեսխ աք խանի։

Ըլաւ Մէլքք միտք էրաց, որ Դաւթը մէկ ճամբաիմ պընտրնի. մօտէն գեօղտուկ տանը ապանի։

50. Էգա Պաթմանայ Բիւզէն կը տիանայ. կրսի.—Ինչպէս անինք զԴաւիթ ապանինք։

Մէկ գիվ էլ Պաթմանայ Բիւզը ընկերն էր. էնաւ Ֆրէնկը գիվ կասրն, Ֆրէնկիստանայ էկիր ի.

—Մինք կանանք սպանինք, հապա քիւ մէր չի թուզնը։

51. Մէլքք էկաւ մօր մօտ.—Դաւիթ որ մնա էգա տան մէջ, զԴաւիթ կսպանիմ. պէտք ի ընձի մօտէն գատանայ[5], գիւր կը տանը, տ՛ար Դաւիթ էս տե տի չմնայ։

---

1 Երեխայ։ 2 Թուրք.=օձիք։ 3 Թուրք.=փորձել։ 4 Թուրք.—ափսէ. կլոր, բաց եւ տափակ։ 5 Բաժանուել, հեռանալ։

52. Մէր Դաւիթն շատ կը սիրի, լայնց, Մէլրքի ազատչանք ընկեաւ, էսաց.—Դաւիթ թը մնայ իմ կշաը խիտ.

—Իս էսաց, յերդիւմ իմ կերի. Դաւիթ մնաց էտա տեղ, տըսպանիմ։

53. Մէրն էլ էսաց.—Դաւիթ էտա տեղ չըմ թուղի. կը հեօրոդկեմ կերթայ խօր քաղաք.

Կը կանչի Պաթմանայ Բիւզէն, էդա Ֆրէնկէատանայ դիվ. կաւնի կը ելելի, կը խնդրի որ.—Դաւիթ տանէք Սասուն, դառնէք կէր։

54. Դիվ ելի [1], Մէլրքին էսաց.—Դիւ ասիր «տըսպանընք». քիւ մէր կըսի. «Դաւիթ տար Սասուն, դարձի, էրի»։

Մէլրք էսաց.—Էդա շատ աղէկ ըլաւ, դիվ, որ սկուն [2] ի. գիւ, Պաթմանայ Բիւզէն զԴաւիթը կը տանէք Պաթմանայ կարմընջի վերայ, հեր դին [3] կը բռնէք. էնաւ վիզ կը կտռէք, կը թալրք ջրը մէջը. մէկ բուրթիւլ Դաւթայ արընից ըծը խամաը կը ելելէք, որ իս խմիմ, իմ սրտա խովանայ։

Մէլրք էկաւ տուն, էնանք էլ թեդարրք [4] կը տեսնըն։

Գ.

55. Դաւիթ, Պաթմանայ Բիւզէն, Ֆրանկատանայ դիվ կը դնէն ճամբխաւ, կերթան։

Կգեան վար Պաթմանայ կարմնջին։

Էդա դիվ, Պաթմանայ Բիւզէն Դաւթը ումաւով [5] էդա տեղ կանգնան։

56. Դաւիթ ըրշկից, ասաւ էրկուսը վար կարմնջին։

Դաւիթ էկաւ, խատաւ մօտ, էսաց.—վրէ՞ է տե կայնիր էք։ Էդա դիվ էսաց.—Մէլրք մի տսից «Դաւիթ աղէկ կարմուանջ ընցրցէք, որ չի վախենայ, չընկնը ջիւր»։

57. Դաւիթ որ գինաց, մէկ դա կանգնաւ, մէկ դա [6] կանգնաւ։

—Է՛, Դաւիթ, սրի՛ ընցի. մինք քե բռնինք, չվախենաս։

Դաւիթ կգեայ որ սընցնի, զԴաւիթ կը բռնին։

Ինչ կանին, չըն կանայ դնըն գետրն։

58. Դաւիթն էլ ձեռմ կը թալի Ֆրանկայ դիվի վոզպատ [7],

---

1 Եկաւ։ 2 Այդպէս։ 3 Հեր դին=ամեն կողմը։ 4 Թրքր.=Պատրաստութիւն։ 5 Յոյս. ապաւէն։ 6 Մէկ այստեղ—մէկ այնտեղ։ 7 Օձիք։

մէկն էլ կը թալի Պաթմանայ Գիւղի փուղպատ. վերայ, դրից կարմնջի վերայ։

Որ սկսաւ էրայ. էս էրկու փահլեվան (չէ որ ձեռ թալից փուղպատ, սկուն զախմ ի, քիչ մնայ մեռնին, էնքան զօռ տուին)—Դաւիթ, ասին, քիւ քաղդն ինը, գիւ գմի թուղ, որ մինք ըլլինք, ա՛զրու[1] խապար տանք։

Դաւիթ ձեռ էգանց մօտէն կը վերցի։

59. Էնանք էլ կըլլաս կը նստին։

Սահաթմ էնանց խիլք չգեայ էնանց գլեօխ, էնքան որ զօռտառաւ էնանց։

Դաւիթ էսայ.—Դէ՛, ասէք, է՛։

Նուր քիչ նաֆաս[2] էկաւ էնանց, ըէյն[3] առին։

60. —Մինք քիւ խօր խին ծառէն ի՞ք. մինք գքի տարինք Մէլիքի մօր մօտ. էսքամ ժամանակ մինք Մէլիքին ծառայութուն կէնինք, մկայ որ գիւ սկնայ զախմ իս, մինք չի՞նք գամ։ Էգա Մէլիք մի էսայ թի. «Տարէք կարմնջը վերայ, վրդ կտուէք. էնու էրուէն մէ քութիւլ լինք էրէք, ըիրէք, իս խմիմ որ իմ սիրտ խոմնայ։ Ապա գիւ, որ էգենց կարիճ իս, էգենց զախմ իս, մինք չի՞նք խնգանայ, մինք էլ Մէլիքի ծառայութուն չինք էնի. քիւ խօր խաթիրը խամար քի էնինք։

Դաւիթ էսայ.—Որ սկսուն ի, կայնի, էրթանք։

Անիւնք կայնան. իրարու խիտ էկան ի Սասուն։

61. Որ էկան Սասուն, Դաւիթը խօրհրդէրն ի Ցեօվան, Վերտօ. շատ խնդացին, փառք տուին Աստուծուն, որ մի տղէն սկնայ կարիճ, սկնայ խօրատ ի։

Զիւր յէս օր կուրարեր էր. յէս օր փառք տանք Աստուծուն, որ մի կուրատ գնատանք։

62. Շատ էգա Դաւիթը վերայ ուրախացան։

Մէկ շաբաթ Դաւիթ քաղքը մէջ ճժիրու խիտ հա կը խաղայ։ Մէկ օր սկնայ ըառտը ծառմ էն տե կէր. Դաւիթ ձեռ թալից էգա ծառը, էգա ճժիրն էլ թամաշա կանին։ Զէգա ծառ զօռից, կօռից, ծէրը խասուց գեսին. գծառը ծէր գայիմ[4] ըռնից, էսայ.

—Տղէնիր սկնայ խաղ կէնին։

63. Էգա տղէնիր էկան թափան Դաւթայ ձեռաց վերայ, ծառը ծէր տրիր[5] գեսին։

Էգա տղէնիր, որ մէ մէկ ճուղ կը ըռնին, կըլլին ծառը վերայ, կըլլեն, ընաե կը խնգանան։

---

1 Թրքր.—Ուղիղ. ճիշտ։ 2 Թրք.—Նունչ, հանգիստ։ 3 Թրք. Ուղեղ, խելք։ 4 Թրք.—Պինդ։ 5 Թիրել. կեռել։

Դաւիթ էսաց։—Տղէնիր, էջէք տակ։
Դաւիթը ձէն չըն լսի։
64. Դաւիթ մէկ էլ կազաչի։—Էջէք տակ ադիւց։
Կտարն։—Ըստե մի քէֆ կանընք, վրէ՞ կիջնէնք տակ։
Զի՞ն գիտի Դաւիթը ձեռ կը ցաւը, որ չըն էջնի տակ։
Դաւիթ կըռըկի, գծառ բաց կը թուղնը։
Էդա տղէնիր ամէն մէկ կերթայ մէկ եանէն կընկը գետըն։
Որ կըյնըն գետըն, ամենն էլ կը մեռնըն։
65. Զէն կերթայ քաղքը մէջ, խապար կտան։—Շատ խաւէք, ձի տղէք յըմեն մեռան։
Յըմեն մարդ ուր անէն ըյաւ, վազից, էսաց։—Շատ խատնիմ իմ տղը Հաւարին [1], էդա ինչ ըսանի որ էկաւ։
Կերթան, համա չըն հաւատայ։
66. Էկան խատան տղէնիրաց, տըսան մարդիր յըմեն թափած ի էդա տեղ։
Յառաջ շատ որ գինացիր ի, էդա տղէկներու ջանակնիր յըմեն ժողուած ի. ամին խէր ուր տղը վերայ նատիր ի, լաց կըլնը։
67. Կանչըն մէկ տղայ բիրըն խարցում էրըն։
—Տղա, գիւ խտղատեղն իր։ Էսաց։—խա։
—Մի տղէկնիր ո՞ր ապանից։ Էսաց։—Դաւիթ ապանից։
—Վրէ՞, մի դուշման էր Դաւիթ։
Էսաց։—Զէ. էդա ծառ կը տիանէք։
—Ամա, կը տըանանք, տոըն։
—Էդա ծառ կռըց, իրի գետըն, յեմենն ըյան վերայ. ուրինց խամա կը խապէն. մինքն էլ տաս-քան տղայ գետն կը խապէնք, Դաւիթ էսաց. «Էջէք տակ», չէջան տակ. ականջ չէրըն, Դաւիթ գծառ բաց ի թուղ. տղէնիր բանձրցան դրպան գետըն. գնացընք մէջ, ձեռ որ տուընք, մեռիռ էն, մինք էլ էկանք քեռզաք, ձի խապար տուընք։
68. Մէկ մէկ ուր տղէն վիրուց, լալեով իրի տուն։
Վի՞ր ախպէր կէր, վի՞ր քիւր կէր, վիր խէր կէր, էկան, էդա տղէներու վերայ լացըն, շատ լացըն։
Խտիւիւն ճամբխին տէրտէր բիրըն, պատարագ էրըն, տարըն խուրըն։
69. Յըմեն ժողնուան, յիրիւր տոըն.
—Մինք տէրթանք, Դաւթըն տոպանինք։ Դաւիթ վրէ՞ մի տղէնիր ոպանից։

---

1 Թուրք.—Օգնութիւն։

Ելան էկին, կանչեն ձէնով Յեսվան, ըսին։

—Դաւիթ գի՛ւր ի, կանչը գնայ։

Էսաց.—Վրէ՞ կանչիմ Դաւիթ։

Ըսին.—Մակեաբ Դաւիթ մի ապէնիրու գիւշմանն էր, էսքամ ոգայ ապանիր։

70. Յեսվան էն տե կը վախենայ, կերթայ Դաւիթը մօտ.—Աստուած քեզ տա՛ն աւրի, Դաւի՛թ, Աստուած քեզ տան աւրի, Դաւի՛թ, գիւ էդ ապէնիր վրէ՞ ապանիր։

Էսաց.—Ջայնամ, ըծը չլան, խօյ չըմ գարկիր ի։

Էսաց.—Քեազքը մարդիր էկած, գիւռ ըռնած ի. էլի՛, ճուա՛գ տու։

71. Դաւիթ կըլնը, կգեայ գիւռ, կը տիանայ էսքամ մարդ լցուած ի գռան վերայ։ Շատիր կան Դաւիթ չի տեսած. էնունք էլ էկած են զԴաւիթ տիանան, թամաշա էնին. շատիր կան որ Դաւիթը գարկիլու յապեօվ էկած ի։

72. Ու Դաւիթ կըլնը գիւռ, էսքան մարդ՝ որ Դաւիթ կը տիանան, յախու կը գեօղան, յերարիւ գեօղաւոկ կը զրուցին.—Դաւիթը ձեռ մի՛ք տէք, որ ադախի[1] մի էլ կապանի։

Կը գառնան, յըմեն մէկ յիւր տուն կերթայ։

73. Էն մէկէլ օր կը կանչին Յեսվանը, կըսին.

—Յեսվան գիւ գրատի՞ս, վրէ միք գըլի կանչիր ինք. մինք յերեկ էկինք, տիանք Դաւիթ, վախեցանք. Դաւիթը մէկ սանիպաթը[2] գիր, էդա՛ որ սանիպաթը չգնի՛ս, քեազքը մէջ շատ աւիրութին տէլնի։

74. Յեսվան կըսը.—Ես ինչ էնիմ. որ գիւ կուգիք, էնինք գեառնարած։ Էնունք էլ կըսին.

—Էնինք գեառնարած, չմնայ քեազքը։

Յեսվան կգեայ տուն, կըսը.—Դաւի՛թ, ըս տարը մի խաց պակաս ի, կը գեա՛ս, ըլնը գեառնարած մէ քեանի ոսմար խաց կառնինք, որ ձմեռ անուրթը չի մնանք։

Դաւիթ կըսը.—Ուր իմ հախ էսա գլխէն տան, ըծը չի խաւին, գեառնիր կը տանիմ։

75. Յեսվան ի, կըլնը կերթայ քեազքը մարդիրու մօտ, կըսը։

Էդա մարդիր կըսին.—Յեսվան, միր էսա գլխէն էնու հախ թամամ կտանք, թո չմնայ քեազքընիր։

Կըսը.—Խըլիւսիւն ձի գեառնիր ըներէք գարկեանի[3] գիւռ. զԴաւիթ կը ճամբխիմ, թը յըմեն ժողվրուն տանը չիւր յեվարը, յըմեն մարդ կը գէք, ձի գեառնիր ջուկէք, կը տանիք։

---

1 Զարթնել։ 2 Թրբ.=արհեստ։ 3 Թուրբ.=Խարախ. գարպաս. մեծ գուռ։

76. Էկաւ տուն, Դաւիթ էսաց.—Խրեօխպէր, ձի խամա մէկ պոզալբաէ սոլ բի, մէկ պոզալբաէ կօռ[1] բի։

Յեսվան գինաց, առբց բիրից։

Խալիւսիւն յըմեն մարդ ուրբնց գեառնիր տառն, բիրբն դարկեաիի գիւռ, Դաւիթ զգեառնիր ժողվրաից տր տանը սար։ Մարդիր որ տիսան զԴաւիթ, ըսբն.

—Յեսվան, վալա[2], Դաւիթ տոպանի զգեառնիր։

Յեսվան էսաց.—Դաւի՛թ, մինք գրկից ինք. գեառնիր չտպանիս, սըլամաթ[3] տա՛ր, սըլամաթ բի յէվարբն։

—Խրեօխպէ՛ր, կըսբ Դաւիթ, մակեար իս ծա՛ռ իմ, զգեառնիր իս շա՛տ խօրատ կը պախիմ։

Դ.

77. Դաւիթ գեառնիր կառնը կը տանը կը տանը, բանձր սար մը կայ, էն տե. էդա սարն էլ շա՛տ ճանավար կայ, մարդ չիկըշխընայ էդա սարը մալ տանը. որ էնքամ ճանավար[4] կայ։

Դաւբթ զԴեառնիր կը տանը, խատնը էն սարը։

Գեառնիր կէրէծան։

Դաւիթն էլ ինչ կէնը. կան կգեայ վուր առջ ըռատ կգեայ, տփիլեով-տփիլեով կը բիրի գեառնիրիւ մէջ. գէլ ըռատ կգեայ, կը բիրի, մտուցի գեառնիրիւ մէջ. աղուի՛ս կը տիսնայ, բիրի մտուցի գառնիրիւ մէջ. լպըստրակ կը տիսնայ, կը բիրի, մտուցի գեառնիրիւ մէջ։

Շատ կը ժողվրաի ճանավարբաիր, կը բիրի, կըլնը մէջ կան կգեայ։ Էնու յախուն չբն կշխընայ մէկ մէկը կպնը։

78. Կէս օրին Յեսվան խաց կը տանը, կերթայ սարը, կը մտխատնայ, կը տիսնայ գեառնիր ինչքամ շատ ին, կերթայ, կը մտանայ, կը տիսնայ առջիր, գէլիր գեառնիրիւ մէջն ին, կը վախենայ, կանչը.—Դաւի՛թ, Դաւի՛թ, էրի՛, քիւ խաց տա՛ր։

79. Դաւիթ կգեայ, կառնը խաց ու կըսբ.

—Խրեօխպէր, էդա պալ[5] ուլիր ըծը շատ կը չարչարբն. գիւ կը կամինա՛ս, իս էնա ուլբն գարկիմ։

Յեսվան էսաց.—Քե խրատան տըվը, գարկ։

Դաւիթ զխաց առց, գինաց։

80. Էդա լպստրակ գեառնիրիւց ընկեաւ գիւս, փախաւ։

---

1 Դաւապան, գլուխը կոր։ 2 Թրք.=Վալլահ=Աստուած վկայ, Աստուծով։ 3 Թրք=Ոչ առոջ։ 4 Թրք=Դապան։ 5 Թրք.=Զարտնբնի։

Դաւիթ կօռ սկնայ անթեօրկից[1], դպաւ լպոտրակուն խաղալ վիսրչա[2] էլաց։

81. Յեօվան ի, կդեայ քեռղաք. էդա մարդիրեն կը թամբխի[3]. «Դռնիր չինէք, Դաւիթ շատ ճանավարբիր լցիր ի գեառնիրու մէջ, գեառնեբաց խիտ կը բիրի քեռղաք. դու չէրթէք գեառնիրու յառէջ. Դաւիթ ալռբկի, գեայ տուն. որ կդեայ տուն, խարամ կերթայ, խալալ կը մնայ. որայով ձի գեառնիր տարէք»։

82. Յեվարբն Դաւիթ էդա գեառնիր կը բիրի դարկեախի դիւռ, էն տեղ կը բեօռա.—Էկէք, ձի գեառնիր տարէք. վիր քուան էր, քեռատուն էրիր իմ. վիր յիսուն էր, խարիր էրիր իմ. վիր խարիր էր, էրիր իմ էրկու խարիր. ձի գեառնիր էրքամ շատացրցիր իմ վրէ դիւք չբք իդեայ, ձի գեառնիր տանը։

83. Մարդ չի կշխընայ գեայ դիւռ։

Յեօվան կըլնը տանը, կանչը.—Դաւի՛թ, Դաւի՛թ, դիւ թեօ՛ղ, էրի, թեօ՛ղ էրի։

Դաւիթ կըռբկի, կդեայ տուն։

Որ կդեայ տուն, խարամ կերթայ, խալալ կը մնայ։

Ցըմեն մարդ կերթայ, ղիւր գեառնիր կը տանը։

84. Յեօվան կը տիսնայ Դաւիթը սօլիր ցվրվիր ի, մտուցիր ի կօռ, բիրիկ կդեայ։

Յեօվան կըլնը կերթայ քեռղքը մարդիր կը ժողուի.

—Իս չըմ կերի օրէն մէ մէկ սօլ տայ Դաւիթըն, էն էլ պողպըտէ սօլ. էդա սանիյաթ բամ չի, յիւրըշ սանիյաթ դնինք։

85. Մարդիւ մէկ կրսը.—Մէկ նիտ անեղ շընի, տա՛ւ Դաւիթըն, թըղ էրթայ դաշտիր, ճնճիւղ սպանի. ճնճիւղ չար կըլնը, շա՛տ կը թռնը, Դաւիթ խիտ շա՛տ կը չարչարուը չիւր յեվարբն, կդեայ տուն, կը քընի դինճ։

Յեօվան էկաւ. մէկ նիտանեղ շընից, տուից Դաւիթըն.

—Դաւի՛թ, էսաց, ըս տարը մի կավրմէն[4], մի միտը պակաս ի, էդա նիտ անեղ քի խամա բիրիմ, որ դիւ էրթաս դաշտիր, ճնճիւղ սպանիս, բիրիս, յըրարիւ խիտ կուտինք։

86. Դաւիթ կըլնը, նիտ անիղ կառնը, կերթայ դաշտ։

Ճնճղտիրուն կը զանի, ճնճղտիր կը վրախնին, կը մտնըն մէկ կուրկը արտը մէջ։

Կուրկին ի, շա՛տ ուռի, բանձրացիր ի, մա՛րդ չկէրի մէջ մանի։

---

1 Ցցել, նետել։ 2 Թրք.=Բաժին, կտոր։ 3 Թրք=Պատուիրել սպասրել։ 4 Թրք.=Եփած միս, ծմեռուան համար պաշար. Սուրմալուայ խոյեցիք ասում են դայլայ։

Դաւիթ արտաւ ճնճղտիր յըմեն լցուան մանչ կուրկը արտը, գինքն էլ գինաց, մտաւ կուրկը արտը մէջ։

87. Պառաւ ըլաւ գինաց տուաւ, ուր Դաւիթ ընկի կուրկը արտը մէջ. էսաց.—Դաւի՛թ, կըրեօ՛ղ քի տանը. վրէ՞ գիւ ընկիրս իմ կուրկը արտը մէջ.

Էսաց.—Պառա՛ւ, ճնճիւղ կապանիմ.

Էսաց.—Ա՞խ կրեօ՛ղ քի տանը. կրեօղ քի տանը։

Էսաց.—Պառա՛ւ, վրէ՞ կրեօղ տանը, իս ինչ իմ էրի։

88. Էսաց.—Էդա տատանըխինգ տարը կայ, էդա Սիվ տարը քիւլիւր պատան[1] ի քեաշիր, էնքամ ճանավարը, վիրու ուխշարնիր, ուր վիրուց գինք կը թալի էն պատանը մէջ, էլ չի կէրի գիւս ըլնը։ Դաւի՛թ, կգեաս, ճնճիւղ կապանիս, ճնճղիւ մէջ ի՞նչքան միս կայ, գինա Սիվ տարը մէկ-տաս խատ վիրու ուխշար քի, էրա կուվրմա, հա՛ կի, հա՛ կի. իսկի չի խլսի[2]։

—Պառա՛ւ, կրտը Դաւիթ, Սիվ տարը ո՛ր տեղն ի։

—Գինա՛, Յեօվանրն էտա, կը տանը քի, նշանց կտայ։

89. Դաւիթ կգեայ տուն, կըտը.—Խրեօխպէ՛ր, լիւսիւն խիտ քի տէրթանք Սիվ տարը, վիրու ուխշար տը բիրինք, ճնճիւղ ինչ ի, մէկ փրթիւճ ի. էդա ճնճիւղքեօվ մինք ինչ տը կշտանանք. իմ խէր էդա տարը էնքամ վիրու ուխշար պանտ ի էրիր, դրիր ի ըռնատուն[3]. էրթանք, բիրընք, մի խատմա էնինք կավրմա։

90. Յեօվան էն տե տուշունմիշ կըլնը, կերթայ քեաղքը մարդիրիւն մօտ, կըտը.—Իս չըմ գաի, Դաւթըն ո՞րն ի շանց տուը, յէս օր Դաւիթ յիմ վերայ զուռիր ի, կըտը. «Տէրթանք տարը, իմ խէր վէրու ուխշար պանտ ի էրիր. տէրթանք, բիրընք»։

91 Էդա քեաղքը յըմեն մարդ կըտը.—Յեօվա՛ն, ուր գիւ էրթա՛ս, մինք էլ տը գեանք, էն տե թամաշա էնինք. էն տե մկայ ջիւջ-ջիւջ առջիր կան, գէլիր կան մէջ, շատ վէրու ուշխար էլ կայ մէջ, տանանք, Դաւիթ ինչդ կապանի էդա վիրու ուխշարքիր։

92. Ինլիւսիւն յըմեն ժողվան, գինացրն Սիվ տարտատան տարը մէջ շատուր ճանավար կայ. լցուած ի պատանը մէջ։

Դաւիթ ըրշկաց-ըրշկաց, էսաց.—Մօտ մի՛ք գեայ. իս չըմ թուղնը գիւք գանիք, էդա իմ խօր քառաուրքիրն ին, իմ խէր ըռնիր ի, իս գիւռ բանամ, յըմեն խանիմ գիւս, նո՛ւր գինացէք, ո՛ր կտրըճ ի, յիւրըշ տեղ ապանէ։

93. Դաւիթ զպատը մէկ տեղ կը քեանդի, ճանավարքիր յըմեն գիւս կը խանը, կըտը.—Դէ, գինացէք, ո՛ր կտրըճ ի յիւր խատմա ապանի։

---

1 Պարիսպ։ 2 Վերջանալ, պրծնել։ 3 Բանտ։

94. Զինքն էլ հալա[1] քնկի տալը մէջ, կան կդեայ տալը մէջ, քեալը տակ, ծառը տակ, հա՛ կան կդեայ։

Կլաբ.—Զլլնը մէկ ճանապարը քնուկ ըլնը, մեղք ի։

Է՛ն էլ կը խանի գլեաս, կերթայ։

Ե.

95. Դաւիթ կը մնայ չիւր յէվարը։ յէվարը էդա քեազքը մարդիր յըմեն դարձան, էկին տուն։

Ցեօվան էսաց.—Դաւի՛թ, կայնը՛. մի՛նք էլ էրթանք տուն։

Դաւիթ էսաց.—Խրեօխպէ՛ր, իմ խէր էս տե շատ ի կան իկի. էսա գշիր կը մնամ էսա տեղ։

96. Էսաց.—Դաւի՛թ, մարդ գշիր գլեա չի մնայ. գշիր կերթայ յիւր տո՛ւն. տեսա՛ր, էդա քեազքը մարդիր յըմեն գինաց. մինքն էլ տերթանք մի տուն.

97. Էսաց.—Խրօխպէ՛ր, ախր իմ խօր տեղրանքն ի, իս էսա գշիր էս տեղ կը մնամ. որ գիւ կուզըս, գիւ գինա տուն.

—Դաւի՛թ, էսաց, որ գիւ կը մնաս, իսն էլ կը մնամ։

98. Մնաց. յիրկիւն Դաւիթ շատ քնաւ, Ցեօվան մնաց նատուկ. չի կշխի քընի։

Ցեօվան զԴաւթը չուխը փէշ ժողվատից գեօզատուկ, բիրից, գրից յիւր գլխի տակ, գըլեօխ կայիմ[2] գրից Դաւթը փէշը վերայ—որ գշիր Դաւիթ ըծը չթուղնի քընը մէջ, ըլնը էրթայ։ Ցեօվան քընաւ։

99. Դաւիթ կէս գշիրը ադախաւ, ըլաւ նատաւ։

Դաւիթ ըրշկից. գանուա[3] մէկ կրակ իրիւաց։

Ըլաւ տը կանգնէր. ըրշկից որ չուխու փէշ, խրեօխպէր գլեօխ դրիր ի վերայ, քընիր ի։

Զինքն էլ գանակ խանից, գրից յիւր չուխու փէշը վերայ, կտուրից. չուխու փէշ մնաց Ցեօվանը գըլխիւ տակ։

100. Դաւիթ ըրշկից էն կրակ, գինաց։

Գինաց, խատաւ էն կրակը մօտ ըրշկից կրակ չէր.

Մարմար քեար էն տեղն էր. քեար պատուիր, լիւս կամար վերայ կանգնիր։

Դաւիթ գիւր նիտ անիղ թալից, էդա մարմար քեարի չիւրա բիւլիւր ճղըղ[4] քեշից, նշանից, դարձաւ էրի[5] խօրօխպօր մօտ։

---

1 Թրք.=Դեռ եւս, տակաւին։ 2 Թրք.=Պինդ։ 3 Հեռուից։
4 Թրք.=Գիծ։ 5 Նկաւ։

Խրեօխպէր հալա քնուկ է։

101. Դաւիթ էն տե խաղ էսաց.

—Խէրախիւտ խրեօխպէր, վիր ելի, վիր ելի,
Խէրախիւտ խրեօխպէր, խէր չունիմ.
Էրա խէրութին, էրա խէրութին.
Խէրախիւտ խրեօխպէր, վիր ելի, վիր ելի,
Մարմար քեար պատուէր է,
Լիւս կամար վերայ կանգնիր է։
Խէրախիւտ խրեօխպէր, վիր ելի, վիր ելի,
Խերախիւտ խրեօխպէր, խէր չունիմ.
Էրա խէրութին, էրա խէրութին.
Մարմար քեար պատուէր է.
Լիւս կամար վերայ կանգնիր է.
Ըծը խամա էնքան ուստա ճարի,
Ըծը խամա էնքան ոսրակ [1] ճարի.
Ուրբաթ օր խրմիուրընք,
Շաբաթ օր պատինք,
Յէվարին լրմացրցինք.
Կիրակը պատարագ մէջ մատուցինք։

102. Խրեօխպէր ըլաւ, նստաւ.

Խրեօխպէր գիտէր վուր Դաւիթը խուսք մէկ էր, էրկու չէր էնիր։ Ապա Յեսվան կը լսիր էնու խուսքիր։

—Դաւիթ, էսաց, էրի՛, էրթանք տուն, ոսրակ ճարինք.

Դաւիթ կըսը.—Իս տէրթամ մարմար քեարը մօտ, իս տուն չի՛մ է գեայ, գիւ շի՛ւտ գինա, ուստէք, ոսրակնիր ճամբախ գեայ, գիւ էլ էրի խիտքիր։

103. Յեսվան կըլնը յընդիւց կգեայ տուն։

Վուր կգեայ տուն, ուստէր կը ժողվրատի, ոսրակնիր կը ժողվրատի, կըլնը կերթայ։

104. Ըպա Դաւիթ՝ ինչ է էրիր.—Գընացիր խասիր է էն տե. յիւր նիտ անեղեօվ ժամտան խրմիուրիր է, խման քեարիրն էլ յըմեն գրիր է, պատ մէկ մէջք բարձրացրցիր է։

105. Խրեօխպէր կառնը ոսրակնիր, ուստէք կերթայ։

Ուստէք կը տիոնան, կը զարմանան էն տեղ։

Սկուն ջիւջ քեարիր բիրիր, դրիր է խման մէջ, վուր յըմեն ոսրակնիր մէկ տեղ ժողվրատին, չըն կէրի էն քեարիր բիրըն։

106. Ուստէք կը կանգնըն պատը վերայ, Դաւիթ էն ջիւջ քեարիր ձեռ կտայ, վիրցի բիրի՝ կը գնի ուր տեղ։

Ոնչ ոսրակնիր կէրին էն քեարիր բիրըն, ոնչ ուստէք կէրին վիրցին տեղ գնին։

---

1 Խոյնցերէն եւս=Գրավարձ բանուոր։

Սարակնիրն էլ էնա պատիկ քեսարիր կը բիրին, ուստէք կատն ջիւջ քեսարիրիւ բիւլիւր։

Դալ[1] կը չնին, կատն ուսային. գիլն կը գանին բիւլիւր։

Զիւր մաթ կտայ էդա եղեկեցին կը գալխին կը լմացրցրն։

107. Յեվարրն Դաւի՛թ կրսը.—Խէրախիւտ խրեօխպէր. խէր չունիմ, էրա խէրութին. էդա ուստէցներու հախ[2] տու, էդա սարակնիրու հախ տո՛ւ, առանցի հախ մի՛ թուղնի։

Որ չկայ էլ, յիւրրչ տեղից փո՛ւխ առ. իմ վերայ գրրի։

108. Խէրախի՛ւտ խրեօխպէր, էրա խէրութին, քեառուն տէրտէր, քեառուն սարկաւագ ըծը խատա ճամբխի գեայ, վուր իս խըլիսիւն պատարագ տէնիմ։

Ժամու մէջ ի՞նչ պէտք ի, տէրտէրնիր գալին, խիտ բիրիս։

Յեօվան, էդա սարակնիր էկան տուն։

109. Դաւիթ զինք էն գրշիր մնաց ժամու մէջ։

Խըլիսիւն վուր լիւցաւ, էնու խրեօխպէր քեառուն տէրտէր, քեառուն սարկաւագ առրց տարաւ խատցուց, հալա արիւ չրր գալիր ի.

Մէկ շաբաթ Դաւիթ էնտե մնաց, պատարագ էրից. յիւր ժամու վերայ շատ խնդացաւ։

110. Զէն ընկեաւ քեաղքը մէջ, քեաղքը մարդիր շատ խնդացան, թէ Դաւիթ վանք շընիր ի։ Ժամու անուն կուծից[3], գրից Բանձր Մարութայ Աստարածին։

Ըլաւ Դաւիթ էկաւ տուն, տէրտէրքիր, սարկաւագնիր թուղից ժամու մէջ։

111. Էնդիւց մատնիչ մարդ ըլաւ, խատար տարաւ Մըսրայ Մէլրքն թէ.—«Դաւիթ ջուջացիր ի, ուր խոր ժամ տուիր ի շնի, մկայ էղի քեաղքը թագաւուր»։

Մէլրքն ի, հեն տե ուր մոր կրսը.—Մարէ՛, ախտար օր իս յէն օր կստանէ Դաւիթն, գիւ չը թուղիր, մկայ Դաւիթ սկուն մա՛րդ էղի. դէ՛, գինա մի՛ թարկ։

112. Մըսրքը մէր կրսը.—Մէ՛լրք, գիւ չը՞ ուզը քի սկոն կրտրրճ ախպէր ըլնը։

Կրսը.—Մարէ, իս տաճրկ, էնի խայ, գի՛ւր ըծը ախպէր ըլաւ։

113. Մէլրքն կրլնը ուր կտրրճ մարդիր կը ժողուի։

Մէկն էն մարդիրաց գլխաւորն էդա Կուզ Բատին ի, կրսը.—Մէլրք, գիւ ըծը իրաւունք տաս, իս կեր թամ Սասուն, կը բիրիմ թալան.

Քեառուն կարճ կնրկ կը բիրիմ, էրկանք ապան.

Քեառուն յերկէն կրնրկ կը բիրիմ, գէվա[4] քառնան,

---

1 Վաղարշապատում՝ տիլ=Տիղմ. ցեխ։ 2 Թրք.=Վարձ։ 3 Ծի՞ց։
4 Թրք =Ուղտ։

Քեռուսուն ապապ աղջիկ կը բիրիմ արմատան,

ԶԴաւիթն էլ կոպանիմ, գլեօխ կը բիրիմ։

114. Մէլիք էսայ.—Կա՛ւղ Բաթին, իրաւունք տուիմ քիւ ձեռ, մարդ ճամբիսի, եօթ տարուան խարճ բի քի համա։

Բաթին ի, կըսը.—Իս կեբիթամ խա՛րճն[1] էլ կը բիրիմ, հալա թալա՛ն էլ կը բիրիմ։

115. Բաթին ի, կըլնը խինգ խարիր կարբճ մարդիր կը ջիւկը, կառնը վուր տէրթայ վար Նատունայ։

Կեբիթայ Նատնայ կը մօտանայ, դաշտը մէջ չատրիր կը զարկի, ուխտը մարդ կը ջիւկի կը ճամբիսի յառէջ զխարճ բիրի։ Ուխտը մարդ կառնըն ուխտ դէվա կեբիթան, վուր ուխտը տարուան խարճը ուխտը դէվա քիւ ուսկը բիրը։

116. Էգա մարդիր կեբիթան մատ Յեօվան, թէ.—Մըսրայ Մէլիք ճամբիսի, ուխտ տարուայ խարճ կուզը։

Յեօվան Դաւթիս կը վախենայ, կըսը —Դաւի՛թ, յէս օր իմ ոբրտ ճնճղիւ մը կուզը, գինա՛, քեանի ճնճիւղ ապանի, բի՛, իս ուտիմ։ Դաւիթ կը խաւիսի, ճամբիսի, վուր Դաւիթ չիմանայ. խարճ գեօղատուկ տայ։

117. Դաւիթ էլի կեբիթայ պառուիւ կուրկը մէջ։

Պառաւն ի, կըլնը կեբիթայ կուրկը ապտ, կը տիսնայ Դաւիթ էլի կուրկը ապտը մէջն ի, կըսը.

—Ա՜խ կրեօղ քի տանը Դաւիթ. ա՜խ կրեօղ քի տանը Դաւիթ. դիւ վրէ՞ իմ կուրիկ ոկնա կաւրիս։

Կըսը.—Պառա՛ւ, վրէ՞ ըծը կրեօղ կը դնիս.

Կըսը.—Դաւիթ, էկին քիւ խուր խիզինէն[2] կը չափրն, ուխտ տարուան խա՛րճ կը տանին, քեառուն խատ կարճ կնրկ կը տանին, քեառուն խատ էրկէն կնրկ կը տանին, քեառուն խատ ոզատ աղջիկ կը տանին, դիւ . . . ։

118. Դաւիթ էն տե, եա՜վաշ, զայիմ կը բռնը պառուիւ ձեռ։

— Պառա՛ւ, կըսը, էրի՛, էրթանը, ըծը շանը տա՛ւ։

Պառաւ զԴաւիթ կը բիրի, շանը կտայ էն յեօղէն, վուր յերկէն կնկաիր դրուկ ին, տանը կարճ կնկաիր, աղջկաիր, շանը կտայ։ Դաւիթ, ապա, պառաւի ձեռ զայիմ բռնիր ի, չը թուզնը։ Դաւիթ իրիք յեօղի դիւռն էլ կը կուտուի, դռնիր կը բանայ, կնկաիր, աղջկաիր կը խանի գիւռ.—Իմ մէրիր, իմ քիւրիր, մէմէկ ձի տուն գեացէք, ըձը մէկ ջան կայ, ձի ուզուրը[3] ի, մի վախենէք։

---

1 Թրք.=Հարկ, ծախք։ 2 Թրք.=Գանձ. գանձատուն։ 3. Թրք.=Պատճառաւ. համար։

119. Դաւիթ պառկիս ձեռ կը քեշի.—Պառա՛ւ, կրսը, էրի՛, իմ խօր խիզինի տեղ շանք տու, վուր տեղն ի, չափն կը տանին։

Պառաւ բիրի ակօն զմտը կը կայնացրցի.—Դաւի՛թ, կրսը, իմ ձեռ թո՛ւղ, ամօթ ի, վուր չը թուղնը, չըմ ըսը։

Դաւիթ պառաւիս ձեռ թուղից, պառաւ էսաց.—Դէ՛, ահա՛, կեռ էնա ի։

120. Դաւիթ կգեայ. տիանայ ի՛նչ, Յեսվան ջիվալը բիրան ի բռնի, Վերգս եվ չափ առը, մտէ խիզինէն. վուսկըք չափը, կտայ։ Ապա՛ Յեսվան տիսաւ, որ Դաւիթ էկաւ, խեղճ Վերաս չտրսաւ։ Մէկէվ տիսան Դաւիթը աչք յընկաւ վուսկըք. կը բեռ-ռայ Վերաս վերայ։ Վերաս ակուն կը վախենայ, կը քեռաքի ուր թունպան, ակնայ կըշկայ Դաւիթ գլխը վերայ կայնուկ, կրսը.—Դաւի՛թ, մէկ գիր էվ քիւ խէր իմ վերայ բեռռացիր էր. իս ցուիր էր իմ թունպան, գիւ էվ ակնայ բեռռացիր, իս ցուիր իմ իմ թունպան։

—Դէ, յեվի գի՛ւս, էսաց Դաւիթ։

Էրկու խրեռխպէրն էվ կը վախենան, կըլրն գիւս կանգնրն։

121. Դաւիթ կգեայ, կը մտնի խիզենէն, էն վուսկիք ինչ չրն չափած, լցիրիս ճիվալը մէջ։ Դաւիթ հա կը լցը չափը ուռ-ռու վերայ, հա փէտ կտայ, թեմզցրցի, լցի տակ։

Էն Բատրնայ մարդիր կրսրն.—Էդա մարդ ծո՛ւռ ի, խա-նէք գիւս, մի բիռնիր բռնէք, մինք տէրթանք։

122. Ապա Դաւիթ չը թուղնը, խրեռխպէր էնու խապար տայ. համա չափ գրլխի՛ մէջ կը զարկի. վուր կը զարկի, վից խատ մարդ էն տե կապանի, մէկն տատաքիր քեշի, զարկի ճա-կատ։

—Դէ՛, գինա՛, քիւ թագեաւաւրուն ճուզապ տա՛ր, կրսը. մէկէվ չգեայ Սասունայ կնրկ, ազջրկ տանը, չգեայ խարճ ուզը։

123. Էդա մարդ կրլնը, կերթայ Բատինի մօտ։

Էն էվ գաշտը մէջ չատրքիր գարկիր, ծանտր նատիր ի։

Վուսկն շատացիր ի Դաւթը մօտ, Դաւիթ վուր տուաւ ուր խօր խիզինի վուսկիք, շա՛տ խնդացաւ, շա՛տ ուրախացաւ. կու-տի, քէֆին կան կգեայ։

124. Զիւր յէն օր Դաւիթ ակի գինի չըր խմիր, չըր գամ գինին ինչպէս ի. չէ՛ վուսկն շատացաւ, գինին էվ սուվաւ, կը խմի. վուր գինի կը խմի, ուր քէֆն կէնի։

125. Էդա Կուզատին ըշկից։ Էդա մարդ իլիր ի մէկ աշավաթ, գինաց յաւէջ, ըշկից տատաքիր յըմեն քեշիր ի. ականջնիր կտաւիր ի, գիր ճակտը վերայ, էրաւն ջրաւ պէս կը

թափիը. քեբան ուռի, քիթբուլիը[1] ի, աչքիը էրբնից չը բացուը։

126. Ցընամի Կուզբատին վախացաւ. ինքի, նատիւց էդա մարդ խարցնից.—Էդա ո՛ր քի խիա էրաց, շատ շատուրբ՛ն որ դիւ գտիր քեռպաք յըմեն էկին ձի վերայ, վըէ՞ խապար չէրբը ըծը, իս դէր։

127. —Զէ՛, էռաց, քեռդքը մարդ մի ձէն չը տուիր ի. խաղինի տէր էկաւ մի յապեռվ[2]. կնկտիր, աղջկտիր բռնից. բան բռնից, խաղրից, գինացընք խիզինէն, վուր մի բիռնիր տը քըռնէնք բիրինք. խայիր հարա մի պատրաւ կը պախէն, մնացիր էր մէկ բիռ ուսկը վուր թամէր։ Մէկ ծուռ տղէմ էկաւ ընտի, հա կըսըն «Դաւիթ», հա կըսըն «Դաւիթ». մինք չընք տիսիր ի. մէկ ծուռ տղէմ էր, որ ըեռուաց, էտա խայիր յըմեն մատէն վախեցան, յըմեն խանից դիւս, ըզինքն մտաւ խիզինը մէջ, մի բեռէն վուսկըքը կը լցէր չափիր ուռու վերայ, թամիզ շուռ կտէր տակ։ Իմ ընկէր էռաց.—«Դս, խա՛յ, էդա ծուռ խանէք գիւս». վուր սկուն էռաց, էդա ծուռ խայը համա չափ զարկից գլխը մէջ, զէն ապանից. նուր վէտավ վիցն էլ ապանից, ըծը էլ բըռնից, սկնայ էրից։

128. Էռաց.—Էնա խայիր սկի բան չասըն։

—Զէ՛, էռաց, սկի բան չասըն։

Կուզ Բատին շա՛տ վախեցաւ էն տե, միտք կէնի.—Իս Մէլբք խաբեր իմ թէ. «Էրթամ Սասուն, բիրիմ թալան։ Կընըկ, աղջըկ չելաւ, իմ մարդիրն էլ կուտուրան, խա՛րճն էլ չկէրցան բիրիր ին. վուր սկուն ի, տէրթամ, Սասնայ վանք ասրը մէջն ի, թալնիմ, բիրիմ. Դաւիթ չիր կիմնայ, գեօղտուկ կը դառնամ յետ։

129. Բատին կառնի յիր մարդիր, գեօղտուկ կերթայ Սասնայ ասր, ժամու դիւս կը բռնի, զինք կանգնը դռան. էդա խինգ խարիր ջան կը մտուցէ նիրս. վուր կը մտնըն ժամու մէջ, կը զարկին քեռռուն տէրտէր կըսպանին, քեռռնից մէկ պակաս ասրկաւագ կսպանին։

130. Էլ խապար չըն, թէ մէկ պախկուիր[3] ի խարրքնիրաց մէջ։ Դըսին թէ էն ի, պրծըցընք։

Էդա Բատին ի, կըսի.—Նի՛ւս էրէք, էդ ժամատն բանիր առնինք, էրթանք. աղէկ էր, մի մարդիրիւ փուխ խանընք, վուր ապանիրէն։

Ժամիւց կըլնն դիւս, կերթան։

131. Էդա մէկ ասրկաւագ հարա պախկուած ի.

---

1. Ծռուել։ 2. Պատճառաւ համար։ 3. Պահուել. Քարնուել։

Գեօղաւակ կրիշկի, կըսիանի մարդ չկայ, յըմեն դեացած ի, կըլնը մէկ ժամու շապիկ ալընը մէջ կթաթխի, կը վազի դախ[1] Սասուն. կըգեայ, կըխանի Սասունայ մէջ, կգեայ Դաւթը մօտ։

Վուր կգեայ Դաւթը մօտ, կը տիտնայ Դաւիթ ակօն ի խմիր, ակի խիլք չկայ գըլեօխ։

132. Տիրացուն կգեայ, գիմաց կը կանգնի, կըսի.

—Դաւի՛թ, էկան քառասուն տէրտէր ապանին, քեռասը-նից մէկ պակաս ասրկաւագ ապանին, վանք թալնին, աւըն գնացըն։

Դաւիթ էսաց.—Խրեօխպէր, ասրկաւագ ինկիր ի. մակեար[2] խո՛ւնկն ի պակաս, ձէթն ի պակաս, մո՛ւմն ի պակաս. տո՛ւ թըղ էրթայ։

133. Ասրկաւագ կը մնայ շուտը, չկէրի խատկացցի Դաւ-թըն։ ձաը կը կտրուի վերայ։

Զէնա ժամու շապիկ էրընաթաթախ կը զարկի յառէջ։

Վուր Դաւիթ գշապիկն կը տիտնայ էրուն, էնու քէֆ կը թուզնի։—Ասրկաւագ, կըսի, էդ ի՞նչ քան ըլիր ի։

Ասրկաւագ կըսի.—Քեռասուն տէրտէր ապանին, քեռա-սընից մէկ պակաս ասրկաւագ ապանին. ժամուն թալնին, թուզին գնացըն։

—Ասրկաւա՛գ, շիւտ ի գնացած։

—Ինունք ժամ թալնին դեն գինացըն, ինն էլ գէտն իմ իկի։

134. Դաւիթ կանգնաւ, գնաց մէկ բառտի ծառ քեշից, գրից յիւր թիվի վերայ, շիւտ—վազելեօվ գնաց։

Կուզ Բաաին գալիր ինչ քան էր Դաւիթ. էն յառէջ կեր-թէր, վուր Դաւիթ չը խատանէր էնու։

Դաւիթն ի, վազելեօվ գնաց, խատաւ էնու զօշումին[3]։

135. Դաւիթ մէկ գիր գիրան ալու թլից, մէկ գիր ձախու թլից, էնու զօշուն յըմեն ջարգից. նանց ապանից, մնացողը լցից գիտի մէջ. էն էլ գիտ խեղդից։

Ըրշկից, մարդ չմնաց էլ. աջ թիւին ըրշկից տրտաւ Կուզ Բաաին ձիով իր, գիտ ընցիր էր էն թայը[4]։

Էսաց.—Ձիու տէր, իս կէրիմ, գեամ, քի ապանիմ. հա-մա քի չը՛մ ապանի, գիս գնա՛, խատար տար քիս թապաւա-ըրն. մէ՛կ էլ ակնայ քեաք չուտի, ակնայ լան էնի. աւիր քանից ի՞նչ կը դառնայ։

---

1. Թրք.=Մինչեւ։ 2 Թրք.=Միթէ։ 3 Թրք.=Զօրք։ 4 Թրք.=Կողմ, հաւասար մաս. հասակ։

136։ Է՛, Բատին կիշխընայ գառնայ պատասխան տայ, կը զարկի ձիուն ու կը վազեցնի։ Կերթայ, կը խառնի Մսըը։

Վուր կը խառնը Մսը՛ը, կրիշկայ յաղբրի վերայ, ինկտիր ժողովիրին էն տեղ։ ամօթու կըլնը ձիու գլեօխ կը կօռի, յիւրիշ ճամբեօվ էրթայ։ Կնկտիր կը տիսնան։

137. Կնկտիրու մարդիրն էլ գնացած խիա։ Շատիրու աչք ճամխին ի։

Կը բեօռան։—Է՛, Կուզ Բատին քեռաքեռերան,
Դիւ գինացիր Սասուն թալան,
Էգ յի՞ւստ կգեաս լերան–լերան։
Ցի՞ւր ին կարճ ինկտիր էրկանք ապան։
Ցերկէն ինկտիր դէվա բառնան։
Ազապ ապջկտիր արմազան։
Մարայ Մէլրքին խափիր, կերթամ թալան։
Դիւ եկար, մի մարդիր յիւր ին։

138. Բատին էսաց։ Իս գտէր Սասուն գաշտ էր մէյտան,
Իս չգտէր քար էր, կապան։
Մարդ կէր ինե գեապանական,
Նիտ կէր ձեռ գերանական,
Կը զարկէր, յետ կը բանէր քեանց պատուխան։
Գեարնան հեղեզ վուր կըլնի,
Ձի մարդիրու ճիւճ ու պլօր կը բիրի,
Դիւ արէք ձի եզ ու չուրթան։

139. Կնկտիր լեալեօվ կգան տուն։
Կուզ Բատին էլ կէրթայ յիւր տուն։
Ճուաբ կուտան Մէլրքին։—Կուզ Բատին ինկիր ի։
Մէլրք կըսի։—Կանչէք, իգեայ էսա տեղ։
Կուզ Բատին ամօթու չգեայ։
Մէլրք չիւրս խատ մարդ կը ճամբխի յիտիվ։
—Գեացէք, կըսի, պօռեով, տիրելեով բիրէք։

140։ Էգա մարդիր գեացրն։—Բատին, ըսին, Մէլրք ամբ[2] ի էրիր, տը գեաս։ վուր դիւ չգեաս։ քի տիրելեով կը տանինք։
Կըլնը կընկնը ինուն ի տեւէն, կէրթայ։
Բատին վուր էնքան մարդիր տուց ապանի, էնուն բարիկամքտիր ժողովաց ի Մէլրքի մօտ, գանգատ տէնին Մէլրքին։

141։ Կուզ Բատին կը տանին էնու դիւանխանէն, Մէլրք կըսի։
—Կո՛ւզ Բատին, դի՛ւ էս տեղ շատ կտրըճ էր, ասիր։

---

1 Ոռ։ 2 Թրք.=Հրաման։

«Տեսթամ Սասունն, ըիրիմ թալան, քեռառուն էրկէն կնիկ գէ-
մա բառնան, կարճ կնիկ՝ էրկանք աղան, աղջկաքը՝ արմաղան»։
Ապա դիւ գնացը, էգաքան կարճ մարդ տարը, յիւր ի քիւ
մարդիր։

142. Կըսի.—Մէլիք, Դաւիթ սկօն կարճ ի, լատաղաը էն-
պէս էլ էրթայ, Դաւիթ սկսուն տը կուտուրի, յըմեն էլ տապանի։

—Սա՛ տա մի ըսի, կըսի Մէլիք, դիւ փախիր իս, պաղկուիր
իս, իկիր իս. իս գտիմ վուր դիւ Դաւիթն չա՛ս տսիր ի։

—Վրէ՞ չըմ տսիր, կըսի Կուզ Բատին, իս յառէջ կգէր-
յիտիւանց տիտայ մէկ ջիւջ-ատագին ծառմ քօքախան իր էրիր-
էգա բառտի ծառ գրիր էր յիւր թիվի վերայ, ծէրը բառնիր էր-
քեօքեօվ գարկից, մէկ գիր տջու գարկից, մէկ գիր ձախու գար-
կից. յըմեն էլ տպանից, լցից գիտը մէջ. շատ կարճ տղայ
ըլիր ի Դաւիթ, սկնայ կարճ չկայ։

143. Էգա տպանուկ մարդիրու տիրուանք կըսին.

—Ապա Մէլիք, մինք ինչ ըսինք քիւ խելքին, քիւ գաւին
ի՞նչ էր Սասունայ խիտ. դիւ Կուզ Բատնայ խուսք էրիր. մի
կտրին մարդ իր յըմ՛ն տարու, տպանիլ տուլից։

144. Մէլիք կըլնը, կգեայ տուն, կըսի.—Ա՛խ մարէ, ա՛խ
մարէ, իս էն օր Դաւիթ տտպանէր, դիւ չը թուզիր. մկայ էլ
Դաւիթ սկնայ բանիր կէնի։

—Հա՛, կըսի մէրը, դիւ իմ խատաը չէրիր, Կուզ Բատնայ
խատաը էրիր։

Էտաց.—Իս քիւ խատաը ինչ էնէր։

145. Էտաց.—Վուր դիւ իմ խատաը էնէ՞ր, քիւ պատը
ախպէրն էր Դաւիթ, տարին էրկու դիր տէրթէր տեանէր, հալա
Դաւիթն էլ տը կանչէր բերէր Մորը՝ քեռ տուն. էն գեանխ կու-
ռախանէր, կըսէր, ըծը ախպէր կայ. է՛լ մարդ չէր կէրի քիւ վե-
րայ խուսը։

Կըսի.—Մարէ՛, իս տաճիկ Դաւիթ խայ, վրէ՞ կըլնը ըծը
ախպէր։

146. —Մէլի՛ք, է՛, քիւ խելք չի կտուի. շատիր քիւրտ
խայ կըլլին ախպէր. մէ՞ մէկի տուն կերթան, շատ վատ կը կըտ-
ռին. էն Դաւիթն էլ մի պախատ շախատ տղէն էր, վուր
դիւ Դաւթը խիտ տղէկ ըլնէր, Դաւիթ քիւ խուսք տտ-
նէր։ Աղէ՞կ, Դաւթը մատ չգնացի՞ր, Դաւիթն էլ չի կանչի՞ր
քեռ տուն. էլ քիւ գաւին ի՞նչ էր Դաւթը խիտ. վուր դիւ
ճամբխիր եօթ տարուայ խաթճ ուզի՞ր, էգա քեռառուն էրկէն,
քեռառուն կա՛ր կընկըտիր ինչ էր. քեռառուն տղջկըտի՛ր ինչ
էր։ Քիւ տրուած վուր դիւ էրիր, հալա Դաւիթ ինչ ի էրիր,
Դաւթը տրած հալա քի՛չ ի։

147. Գեանդաա շատացաւ մօր մօտ, էլ տղը մօտ չէրթան։

Մէկ կընը դիւս, էրկուս կէրթան ներս։ էրկուս կընը, չիւրս կը մտնըն, թէ. — Քիւ տղէն ակնայ էրկը ի մի գլեօխ։

148. Կը ճամբեսին Կուզ Բատին կը բերին, ձէրը կըսի.

— Վրէ՞ գնացիր, ակնայ աւիր բան էրկը։

Էսաց. — Մէլըք ըծը ամը էրաց.

Մէլըք էսաց. — Իս քի ասիմ. գնա՛, Սատուն թալնի՝ քի. իս քի չատրմ գնա քեառուն տէրատէր, քեառուն սարկաւագ սպանի վուր. դի՛ վրէ՞ գնացիր, սպանիր։ Դաւիթ էլ ըռբկաւ, մի մարդիր յըմեն սպանից։

149. — Մէլի՛ք, էսաց մէր, քի գեօրծ է՛լ խիտ Դաւիթըն չկայ. պատալ պատալի[1] իլաւ. է՛լ գեօրծ չունիս Դաւիթը խիտ. իս մէկ թիւղթ կը ճամբեսիմ Դաւիթըն. Դաւիթ, զքի կը պա-ըշցուցիմ, գիւ խիտ գեօրծ չունիս։

Է՛. Մէլըք կը կանգնի՞։ — Մարէ՛, կըսի, քեանի՛ քիւ խապար էրիմ, իս զարար ասիսամ. եան[2] իս զԴաւի՛թ կսպանիմ, եան Դաւիթ ըծը կսպանի։

— Մէլըք, կըսի, իմ խաւոք էրա՛, գիւ չը՛ս կէրի Դաւիթ սպանի։

150. Վուր կըսի. «Դիւ չը՛ս կէրի զԴաւիթ սպանի», Մէ-լըք կը հատատաւի՛. կընը, Կուզ Բատընայ ձեռնէն կը բռնի. ելի՛, էրթանք, կըսի։

Կերթայ քեաղքը մէջ. քեաղքը խիլքեաւուր մարդիր վուզ կը ժողուի, կը տանը դաշտը մէջ, չատր կը զարկի։

151. Յառէջ էդա խիլքեով մարդիրիւց խարցմուն կէնի։

Շատիր կան, աւիրութին չը՛ն ուզի։

Շատիր կան, կըսին. — Մէլը՛ք, Դաւիթ քի զարար տուիր ի սկի. Դաւիթ միամիտ յիւր տուն նատիր էր, գի՛ւ աւիրութին էրիր իս. է՛լի գիւ չը գադրիս։

152. Մէլըք է՛լ էն մարդիրիւն խիտ խապար չը տուից, առաւ գնաց ջուկ մարդիրու խիտ զրուցից։

Էսաց. — Դիւ ինչ կըսի՞ք, միք տէրթանք խիտ Դաւիթը կռիւ։

Կըսին. — Մէլը՛ք, յէս օր Դաւիթ տանըշիւրս տարիկան ի, Դաւիթ չգտի կռիւ, հալա[3] վուր գիւ. յէս օր կռիւ չէնի՛, զԴաւիթ չսպանի՞ս. վուր Դաւիթ յըլաւ յեռառուն տարիկան, զքի՛ էլ կսպանը, զքիւ քեաղաքն էլ կը զաւթի. համա աղէկ էն ի, քիւ ասկեարը[4] ժողուի՛ս, էրթաս Դաւիթը վերայ, վուր մի

---

1 Թրք.=Փոխարէն, խոտորնակին խոտորնակ։ 2 Թրք.=Կամ. Եան—եան=Կամ—կամ։ 3 Մինչեւ։ 4 Թրք.=Զօրք։

ականջ դնիս, էգա յըմեն բանէն ազէկ ի, ըս սաբը չէրթաս, էլ Դաւթը վերայ չըս կէրի։

153. Մէլըբ գարձաւ խելքեով մարդիրու վերայ։

—Գնացէք, ձի հեծ ալ արէք, տէրթանք Դաւթը վերայ կռիւ։

Ըսին. —Մէլըք, յէս օր գիւ մի թեապեաւուրն իս, յառէջ քի կըսինք մ'էրթայ Դաւթը վերայ կռիւ. ապա վուր գիւ կէրթաս, ի՞նչ ըսինք քի էլ։ Մէլըք, ահա՛ (բեղը բռնելով), քիւ էրթալ սը փոչմընիս, գէ՛, գնա՛. է՛, վուր յըմեն էկան, մինք էլ տէրթանք, ի՞նչ էնինք։

154. Մէլըք կըլնը ուր ասկեար կը ժողուի, վուր էլ հատ ու հասապ չկայ, վուր էլ հատ ու հաշիւ չկայ։

Կըլնը ուր հեծ ալ կէնի, խիտ ասկեարքն սը գեայ։

Մէր կըսի.—Մէլըք, գիւ մ'էրթար, մէկ մարդմ բռնը քիւ տեղ. ասկեար թը առնի, էրթայ Սասունայ վերայ կռիւ. գիւ վրէ՞ կէրթաս.

Կըսի.—Մարէ, իս չէրթամ, խալզի ազայ էրթայ, ըծը խամար կռիւ տէնի. էսքան ասկեար ժողուիր իմ, ինչպէս առանց տէր թուղնիմ, իս կերթամ խիտ։

—Վուր գիւ տէրթա՛ս, կըսի մէր, իսն էլ սը գեամ, մինակ չըմ թուղնը։

—Իս տէրթամ, գիւ կնիկ իս, մի՛ գեա։

—Գեա՛մ, կըսի, իս չըմ գադրը։

155. Մէրն էլ կը ժողուի քեառաուն ազջիկ, քեառաուն կնիկ, էրկու ձեռք շաւար քեշոզ կը բիրի, էրկու ձեռք նազարա զուռնայ կը բիրի. էգ ազջկաներն էլ խաղալիւ յապեով կը բիրի։

156. Մէլըք զոշում առաւ, զինքն էլ ընկեաւ յառէջ, կերթայ Սասումայ վերայ։

Գնաց Սասումայ մօտ, չատրրիր էն տե զարկից, ասկեար, էն տե դրից։

Մէկ թիւղթ գրից Մէլըքն Յէովանի վերայ։

157. —Յեովա՛ն, կռիւ կէնիս, էրի իմ կռիւ, եօխտա[1] կտամ քիւ քեաղքը վերայ, ինչքամ որձ կա՛յ, կսպանիմ, քեաղաքն էլ կրակ կը թուղնիմ կը վառիմ։

158. Դաւիթն էլ ուր կսկծուն, որ ժամանուն վառած ի. տէրտէրքիր, սարկաւագաներ սպանած ի, համա, էգած ի գէժ. ջըգաներ, ինչ կէնի, կերթայ չիւր Յեվալին ճանճիւղ կապանի, ճանճղքիրաց խիտ էյլա կըլնը[2], էնու բան է՛գ ի, յիւրիշ գեօրծ չէ՛նի։ Վուր թիւղթ կգեայ Յեովանին, էգա պատաւ կը լսի,

---

1 Թրք.=Ապա թէ ոչ։ 2 Թրք.=Զբաղուել։

էգա պառաւն էլ չէ՛ վուբ կուբկու խամաբ ի Դաւթը ւտիւ կան կգեայ. էգ պառաւ Դաւթը խօր ոնբուզն էր, վուբ Դաւ-ւիթ յեթիմ է, ոբբաբ վերայ կը ցաւ է, կուզի Դաւթըն բա՛ն ոովբցբցի, Դաւիթ մա՛բգ գառնայ, մարդ ըլնը։

159. Պառաւն է, կը խաբցբցի Դաւթըն, կեան կգեայ. կգեայ, կը տանայ Դաւիթ էլի յիւբ կուբկու արտը մէջն է.— Դաւի՛թ, կբսի յելի՛, գնա՛, ա՛խ Դաւի՛թ, ա՛խ Դաւիթ, կբեօղ քի տանը՝ Դաւի՛թ, կբեօղ քի տանը Դաւիթ, էլի դիւ ինկիր իս իմ կուբկու մէջ, ճնճի՛ւղ կապանիս։ Մոբբայ Մէլբք ինչքան էբ-կինք աստղ կայ, էնու կեօրա[1] չատբ է զարկիր դաշտը մէջ, թիւղթ ճամբխիր է Յեօվանին. «Էկէք, կռի՛ էնինք, չբք իպեայ, իս կտամ քեռղքը վերայ, ինքան մա՛բգ կայ, նանց ոբձը կբս-պանիմ, էգբ կտանիմ, կբակ կը թեօղնիմ, քեռղաքն էլ կը վառիմ»։

160. Պառաւն ոբ ոկուն կբսի, Դաւիթ կը հառատուի, բի-բիկ կեբթայ, մէկ ծառ քեօքախան կէնի, կը դնի վուբ թիւին վուբ էբթայ կռիւ։

Քեռղաքն էլ ի՛նչզ կը դեօղան, ինչզ կը վախենան։

Պառաւ կը բեօռա Դաւթըն, ետևէն կը վազնի.

—Կանգնը, Դաւի՛թ, մ՝ երթայ, կանգնը Դաւիթ, կբեօղ քի տանը, Դաւիթ, կբեօղ քի տանի, Դաւիթ. էգով տէրթաս Մբ-ոբբայ Մէլբքի կռիւ։

Էսաց.—Պառա՛ւ. ապա ինչով տէրթա՛մ։

161. Էսաց.—Դաւի՛թ, մակեաբ չկա՛յ քիւ խօր Քիւրկիկ Զալալին[2]

---

1 Թրք.=Զափ. հաւասար։

2 Քիւրկի Զալալին խրեղէն ծի էր. Դաւթը խէր գինաց ծով յափ. կը ֆրար (մանգալ). տբսաւ մէկ ծի ծովուց ելաւ դիւս. գինաց նախրը մէջ զարախի (մատակ ծի) վերայ. խէր էն դեխէն վագից ծին ոբ բբռ-նէր. չկերաց զաւթէր (զապել). ծին ի զինք չէտուր ձեռ։

Դառցաւ զէն զարախն էտուր յիաչեւ, տարաւ տուն. ոբ կը տանի տուն զարբխի տիրուչ կը կանչի կբսի.—Քիւ զարբխի գին ինչ ի։ Կբսի.— Դաւիթ (մեծ Դաւիթ). զարբխի գին յիաուն ուսկի ի. կտաս, տուր. չբս իտայ, իմ զարախ կը տանիմ։

Դաւիթ կը խանի, խարիր ուսկը կտայ, կբսի.—Զիու տէր, գինա ըծը չանբծիս, էն ծիուց իս խէր տիանամ։

Կբսի.—Դաւիթ, խազար խէր տբանաս բեօ ծիուց, իս կը վախենէր, գիւ ըծը փարայ չտէր, որ էսբան փարայ տուբբ. քի կօխնիմ. իմ ճժիրն էլ քի կօխնին։ Կառնը փարէն կերթայ։

Մակեաբ չկայ քիւ խօր թուր կէծակին.
Մակեաբ չկայ քիւ խօր կիւտիկն[1] ի գլխին.
Մակեաբ չկայ քիւ խօր կեսուտիկ[2] Ալթմանին.
Մակեաբ չկայ քիւ խօր քեամարն ի մէջքին.
Մակեաբ չկայ քիւ խօր շլվարն ի ոտին.
Մակեաբ չկայ քիւ խօր ճզմէն[3] ի ոտին.
Մակեաբ չկայ քիւ խօր խաչ պատարտատին, վերայ աջ թիւին։

162. Էսաց. Պառաւ, էդա ոնտեղն ի։
—Գնա՛, Յեսվանի վերայ զեօռի, նա կը խանի դիւռ։
Էկաւ, Յեսվանին ադաչից, էսաց.
—Խէրախիւտ խրեսխապէր, խէր չունիմ, էրա խէրութին.
Խէրախիւտ[4] խրեսխապէր, մէր չունիմ, էրա խէրութին,
Խէրախիւտ խրեսխապէր, խէր չունիմ,
Տա՛ւ ըծը Քիւրկիկ Ջալալին.
Խէրախիւտ խրեսխապէր, խէր չունիմ,
Տա՛ւ ըծը թուր կէծակին.
Խէրախիւտ խրեսխապէր, խէր չունիմ,
Տա՛ւ ըծը կիւտիկն ի գլխին.
Խէրախիւտ խրեսխապէր, խէր չունիմ.
Տա՛ւ ըծը կեսուտիկ Ալթմանին.

Դաւիթ տարաւ էդա դարախն պահեց. չիր էդա ձին էդա քիւռակն բիրից. ոնէն չիանեց դիւռ։ Էդա քիւռկուն շատ կը սիրէր։ Էդա քիւռկու ատուն դրից Քիւռկիկ ճալալի։

Ճալալ էլ ինչ ի.—ճալաթ. հանի (այսինքն) ճալաթ. յրմենուն տաս ոտաց տակ. զանիս. սպանիս։

Յրմեն բան էդա Քիւռկիկ ճալալուն շանք տուից. ինչպէս որ վարժապետ վարժատուն տղէկնիրու դաս տայ, դիր սովրցրցի։

Որ մեծ Դաւիթ մեռաւ. էլ մարդ չըն կշիքնալ մօտանալ էնու. Յեսվան խորճիկը մէջ գեարը կը լցէր, տանէր հեռուն կը դնէր. որ ձին կլեօխ կոխէր մէջ. կապ կը թէր պլեօխ։

Յեսվան ինչ օր տուն չըլնէր. ձին կը մնէր անութը։ Մարդ չըր կշիքնէր տանը. որ Յեսվան ճանչցիր էր ձէ՞ն չըր իտայ։

Յեսվան չըր կշինէր թիմրի. կը մնէր անթիմար։

Էնքան ժամանակ որ առանց թիմար մնացիր էր. կեղտը մէջ մնացիրէր. անութը մնացիր էր։ Ձին շատ էր բարակցիր։

1 Գլխարկ. կտաւէ։ 2 Կարճ անթեւ. մազեպատ հագուստ։ 3 Երկարվիզ կօշիկ։ 4 Թրբ.=Բարի ինքն ըստինքեան. բարեկամ։

Խէրախնա խրեօխպէր, խէր չունիմ.
Տու ըծը քեամարն ի մէջքին.
Խէրախնա խրեօխպէր, խէր չունիմ.
Տու ըծը շլվարն ի ոտին.
Խէրախնա խրեօխպէր, խէր չունիմ.
Տու ըծը ճզմէն ի ոտին.
Խէրախնա խրեօխպէր, խէր չունիմ.
Տու ըծը խաչ պատրաստին,
Վերայ իմ աջ թիվին.
Խէրախնա խրեօխպէր, խէր չունիմ.
Յեթիմ իմ, էրա խէրութին
Ըծը տու էգա բանիր[1]։

163. Խրեօխպէր էսաց.—Վայ, Դաւիթ, քիւ սովրեցուղ բիրան կուտուէր, էգա բանիր չը սուվրըցրցէր։

Ըլաւ գնաց, սանտըխի բիրան բացից Յեօվան։

Էնու խէր՝ Զիւջ Դաւիթ վուր ծալիր, գրիր էր մէջ, ակուն մնացիր էր. գրկից, բիրից գրից Դաւթը յառէջ։

164. Դաւիթ ըլաւ վուր կիւտիկ տը գնի գըլեօխ. ակուն ջիւջ ի, կը գեայ, կը նաթը վուր թիվքիրիւն. գլեօխ, աչքիր, յըմեն կը ըռնի, մանը մէջ։

Կը բիրին մէկ կարար[2] բանքակ, կը գնին կիւտկը մէջ, նուր գլեօխ մէջ կը կանգնը, նուր էնու գլխեով կըլնը։

Աոր գեօրտըք վուր կը խաքիւն, եօթ փաթ բիւլեօրը կը փաթըթը, նիւր կուճկըտիր կգեայ, մէկ մէկու կը ըռնը, կը կուճկըն։

Եօթ փաթ էնու քեմէրը կը փաթըթի մէջ, նիւր էնու կուճակ կը կուճկին։

Շլվարն ի, կը խագնի, եօթ տեղով կը փաթըթի։

Ճզմէն ի, քեշի յոտ, եօթ լիտր բամբակ կը գնը մէջ, անճաղ յոտ մէջ կը կանգնը։

Խաչ պատրաստին կը կապի աջ թիվին. շատ ջիւջ ի, խեօվ կէնը էնու ջանտըկի վերայ։

165. Թուր կէծակին տը կապի, Յեօվան կըսի.—Դաւիթ, ըծը գուվաթ[3] չըկայ, էրի, վիրցի, կապի քիւ վերայ։

Վուր էնու խէր ցից գարկիր ի պատ, թուր կախիր ի, Յեօվանի ձեռ չխատնը, չկէրի բիրի տակ։

Դաւիթ կգեայ, մէկ թարանճա[4] բիրի, գնը, կըլնը թարանճէն. զթուր կը բիրի տակ, եօթը կապեով կը կապի յիւր

---

1 Էգա բանիր վուր կուպի, խնութ մնացած ի, սուր բան չի կարիւ։ 2 Թրք.=Հակ։ 3 Թրք.=Ոյժ։ 4 Թրք.=Սանդուղք։

ջանը վերայ, նիւ ը իրիք թիզ յերկէն Դաւթը բաժը[1] վերայ։

166. Յեսվան կըսի.—Դաւիթ, էրի էրթանք։ ձիանքատիրիւ փայախ։ Փիւրկիկ ճալալին ժաբի[2] չըկէրի քի ատանը. մէկէլ ձիանք կլաւ ին[3]. գնա, տես, որին կը խաւնիս, քի խամար տար։

Դաւիթ կը մտնը փայախ, ձիու ճերկէն կը բռնը, ձեռ որու քեամկին կը գնի, ձիան փուր կառնը գեարին։

167. Դնաց, խատաւ էն գլեսխ. էս գիր ձեռ գարկից Փիւռկիկ ճալալու քեամկը վերայ. փուր գարկից, ձին ի թատիւկմ[4] գարկից, պատը առաւ քեարիրուն։

Դաւիթ ձիռ թլից, գլեսխ պագնից, գեսռով քեշից, իրի գիւռ։

Է՛, ձին էլ յիմատաուն էր ճանչցաւ. — Էսա ըծը խեծնուզ ի, էլ ձէն չէտուր։

168. Դաւիթ էսաց.—Խրեսխպէր, գնա՛, մէկ գիտը[5] ասպուն բի՛, մէկ ջիւջ պզինձ ջիւր ատքցու։

—Խրեսխպէր, էսաց Դաւիթ, էրի ջիւր լից, իս ձին տը լուամ։

Յեսվան կըսի.—Իս չըմ կշխի ջիւր լցիմ. ձին ըծը կը գարկի։

Դաւիթ մէկ ձիռնով ձին կը բռնը, մեկ ձիռնով ջիւր կը լցի. ձին կը լվայ, ձին կանգնիր ի, ձէ՛ն չը տայ։

169. Դաւիթ տիսաւ ձին յըրիւր չառնը. ձիու գլեսխ թուզից, մէկ ձիռ ասպուն բռնից, մէկ ձիռնով թաս կը գարկի ջրը մէջ. ջիւր կը լցի վար ձիուն։

Էդ գիտը ասպուն վար ձիուն յըմենն էլ կը խլացրցի[6]. վրթիւճ չմնաց, գձին թամիզ կը լուայ։

170. Կըսի.—Դնա՛, մէկ ասմար գեարի ի։

Խրեսխպէր կերթայ, կը բիրի։

Դաւիթ կը դնը ձիու յառէջ։ Ձին կուտի։

Դաւիթ կըսի.—Ձիու զին բի՛, ձիու կեամ բի։

Խրեսխպէր կերթայ, կը բիրի։

171. Մէկ էլ կիմանայ, Մարրայ Մէլրքի թիւզթ մէկ էլ էկաւ Յեսվանի վերայ.—«Յեսվան, էսաց, կգեա՛ս իմ վերայ կռիւ, էրի, չըգե՛ս, էլ չըմ կանգնի, ասկեար քեշիմ քիւ քեաղքը վերայ»։

Դաւիթ վուր կը լսի, կըսի.—Շա լաղն[7] ի, վաղը էսա վախտ էնու կօնախն[8] իմ. գնա՛, բարիւ էրա, վաղը էսա գեախ[9] Դաւիթ տը գեայ։

Ձին հալա գեարը ուտի։

---

1 Հատակ։ 2 Նիհար։ 3 Թրք.=Դեր. յատ։ 4 Թրք.=Ոքացի, քացի։ 5 Լիտր։ 6 Վերջացնել, ուսարտակ։ 7 Թրք.=Շատ տեղն է. յարմար։ 8 Թրք=Հիր։ 9 Ժամանակ։

172. Յեսվան էլ գնացիր ի, ձիու զին կը բիրի, էնու լա-
ղաւ[1] կը բիրի, Դաւթը խաց, պանիր կը բիրի։

Դաւիթն էլ կը ծալը խաց, կը դնի խորճիկ, լաղաւ կտաց
ձիու բերան. զին կը դնի վար ձիու քեամիքն, զոլաններ[2]
կը կբի[3]։

173. Յեսվան կիրշկի. էնու խէր վուր զոլան կը կքէր,
ձին մէկ վուտ կը վիրուցէր գեանէն. Դաւիթ վուր կքից, չուրս
վուտն էլ գիանաց կառից, ուտ որ զրից ըռըկէպ[4] ձին խի-
ծաւ, խորճիկ գրից վար թարկ[5]։

174. Խրեսխպէր վուր ասիաւ, էնտեղ լացից, առաւ խաղ
ասիլ։

—Խապար ասիաս, գնաց Սասնայ անէն թուր կէծակին.
» » » » » կիւտիկ գլխին.
» » » » » գեօրտիկ Ամանին.
» » » » » քեամարն մէջքին
» » » » » շլվարն վուտին.
» » » » » ճզմէն »
» » » » » խաչ պատ. վարագ թիւին
» » » » » Քիւռկիկ ճալալին,
» » » » » Թառլան Դաւիթ։

175. Դաւիթ էսաց.—Խրեսխպէր, էգա մէ՛կ խապարն էլ
չտուիր, իս թուր յառէջ քիւ վզին տը գարնէր, որ դիւ իմ
անունն էլ տուիր, տուրմ քի խաթր։

Էսաց.—Դաւի՛թ, քիւ գըլխիւն կորպան[6], ախր քի յա-
պեով կըլամ։ Դաւիթ, դիւ կերթաս, ճամբախ կաթնով յաղ-
ըիւր կայ, կաթը պէտ քաղցր ի, կաթնով աղբուր կըրըն. քեռ
ձըն էն տե կը կանգնը. էն տե ձիուն չը զուռես, էն տե ինջի
տակ, քիւ ձեռ էրէսը լուայ, քի խաց կի, ձիու կեամ[7] բիր-
նէն խան, ձէն էլ թուղ ուր խամա թը էրէծի. վուր խաց կե-
ուար, պրծաը, ընկի, էն տե քընի, վուր կը քընիս, կըլնը ալի,
նուր քիւ ձըն խէծի, գնա։

176. Ձիուն ըռնից.—Խրեսխպէ՛ր, մնայի բարեով, էսաց։

Էսաց.—Դաւի՛թ, Աստուած քեռ բան յաջողի.

—Դաւիթ, էսաց, վուր կերթաս, էրկրթէ սուն կայ ճամբ-
խաս մէջ. քիւ թուր էն էրկրթէ ուիւն գար, վուր էրկրթէ սուն
կառից, մ՚երթար, քիւ բան յաջուղ չի։ Կերթաս կուս մէջ,
յըմեն գեախ, գեօվաս. «Խաչ պատրաստի վար իմ աջ թիվին».
վուր չը գեօվաս, քիւ ձին էլ քիզնէ կըռըկի։ Քիւ օղորմած

---

1 Ալա՞ւ=Կեր։ 2 Փորքաշ. փորկապ։ 3 Գաշել, պնդացնել։
4 Ասպանդակ։ 5 Թրք.=Դաւակ։ 6 Մատաղ։ 7 Թրք=Յանձ։

խէր քիւ ձիուն յըմեն ճոր ու ճամբախ շանք ի տուի, ձին գոի յըմեն։

177. Դաւիթն է, ձին կը քշի կերթայ։

Կերթայ, կը խառնի կաթնաղբուր։

Էն տե ձին կանգնի։ Դաւիթ մէկ ըռըքէպ կը զարկի.

Վուր ըռըքէպ կը զարկի, ձիուն շատ ցաւ կուայ, կըսի.

178.—Դաւի՛թ, քի կատամ էրէգական դէմ, քի կը վառի՛մ։

Դաւիթ կըսի.—Ես կը խաղամ քիւ փուրի տակ։

Կըսի.—Ի՞ս կը խաղամ քիւ քեամակ.

Կըսի.—Քիւ խրեօխպէր քի ինչ շարկյաթ [1] էրաց։

Վուր ակուն էսաց, ընկնաւ Դաւիթը միտք.

Դաւիթ ձիու էրկու ականջի մէջ պագնից։

179. Զիուց էջաւ տակ, յիւր ձեռ, իրիսը լուաց։

Զիու կեամ բիրնէն խանից։

Ըզինքը նստաւ, էն տե խաց կերաւ.

Զին էլ էն տեղ էրեծաց.

Խաց կերաւ, պրծաւ, էնտե պառկաւ, քնաւ։

180. Քնաւ, ագախաւ, տուաւ քիչ ի մնացի քեամաը կտռուի, քիչ ի մնացի էնու բշկոժքիր [2] յըմեն կտռին.

Էնու շլվար վուր եօթ տեղով կապիր ի, քիչ ի մնացիր վուր կապիր կտռուին։

Ճղմէն էլ ակուն ի կքիր, էն գիտի վուտ բրին [3] ի.

Բշկոժքիր յըմեն կը պռծուցի։

Ճղմէն պեռով քեշի վուտից գիւս.

Քեամաը մէջքէն կը յարձկի.

Գեօրտիկ թիվքիրուց կը խանի.

Խաչն թիվքիրուց կը յարձըկի։

Գիւտիկ գըլխուց կը թալի,

Էգա բանբակ յըմեն կիւտկից կը խանի, լցի գեռը.

Կիւտիկ անճաղ պեռով մտուցի գըլեօխ։

Գեօրտիկ Աթմանին կը խաղը.

Բշկոժքիր անճաղ կը գեայ, կը բըշկոժի։

Քամաը մէկ փաթ կը բիրի.

Անճաղ յիրար կը խառուցի։

Շլվարն կը խագնի, հալա ուր նեղ ի։

Ճղմէն, բանբակ յըմեն կը խանի, գարաբկի.

Անճաղ կը մանի վուտ։

Թուր կեծակին կը կապի.

---

1 Կոտակ, պատուէր։ 2 Կոճակ։ 3 Թրք.=Վէրք։

Մէկ էնու բաժնովն ի։ Հալա կարճ ի։
Խաչ պատրաստին կը դնը վար աջ թիվին.
Ինչպէս մէկ խուվ դնիս վուր պուտկի բերնին։
Էլ չը՛ քեթրի, էլ յիրուր չառնը.
Էդաւ մէկ էնու թիվով, էլ խով չէնի։
Դաւիթ ըլաւ, փառք տուիր Աստծուն։
181. Զին ըկաւ, կանգնաւ Դաւիթը մօտ։
Դաւիթ կեամ գրից բիրան, ըլաւ խիծաւ։
Խնդացաւ, քշից դնաց։
Ճամբին տիսաւ մէկ էրկրթէ սուն.
Կեօ ճամբէն մէջն ի։
Դաւիթը մտէն ելիր էր. որ էրկրթէ սուն տիսաւ, խրեօխ-պոր խուսք միան ընկեաւ։
Դաւիթ զթուր քեշից. ինչքամ զօռ կէր, զթուրն գանից.
Վուր գանից, զերկրթէ սուն կտուից, մէջէն ընցաւ։
182. Էրկրթէ սուն, չէ վուր սուր մէջէն ընցաւ, չը հաժրաւ, վուր կտուր ընկնէր տակ.
Վրրն կտուր, ցածրը կտուրն վերայ կանգնաւ։
Դաւիթ չիմացաւ, թէ թուր կտրիր, ընցիր էր.
Գոն թէ թուր չը կտռիր։ Դաւիթ լացից, էսաց.
183. —Զեռնի՛կ, դիւ կուտո՛ւր կէնէր.
Վուր քի էնքան զօռ չը կէր, որ էրկրթէ սուն կտռէր։
Էն վախտն էլ արդար մարդ ինչ գրուցեր, կը կատարուէր էնու խուսք։ Դաւիթը ձեռ թուլցաւ։
Մէկ էլ Դաւիթ տիսաւ քամիմ էլաւ.
Էդա քեամին վրթոթրրիկի պէս էկաւ, գարկեց էրկրթէ սուն։
Սուն շուռ առաւ. Դաւիթ գնաց կրշկի։
Էրկրթէ սուն կը տիսնայ գարկած տեղ թուր կտռի, ընցիր ի։
Նիւր յիմացաւ, դառցաւ Աստուած կանչից, ուր ձեռ օխնից։
—«Զեռնի՛կ, դիւ կանանչ կէնէր»։

Զ.

184. Դաւիթ զձին քշից, տողրաւ գնաց կռուր տեղ։
Մէկ դլեօխ գնաց էկաւ տակեարը մէջ, դառցաւ, ինչպէս մէկ քեօմ[1] բեօլօճ մէկ մէկ տեղ ընը, մարդ վուտ

---

1 Թրք.=Խումբ։

զանի վերայ, խաստուցի, էնպէս էդա ասկեարը սկօն յըմեն կը խճղը։

Դաւիթ տիսաւ էդա ահագին ասկեար, էնքան չատը. էդա ջանդակնիր սկուն կօլօնաւան, շշկռաւ։

185. Զին յիմացաւ Դաւիթ շշկռաւ, չգտի թէ ուր թալի —Դաւի՛թ, էսաց, ինչքան քեօ թուր կտռի, էնքան իմ վուտաց յիռջև կը մեռնին.

Ինչքան քեօ թուր կը կառի, էնքան իմ պուչի մաղիր կապանին.

Ինչքան քեօ թուր կտրի, էնքան ես իմ բիրնով կապանիմ. չըլնը վախենաս, կռիւ էրա։

186. Դաւիթ սկօն կռիւ կէնի. խաչ չէցգի։

Էրկու գլեօխ էլ կեբթայ, կգեայ.

Էլի ձին կիմանայ Դաւիթ շշկռաւ։

Զին Դաւիթը մօտէն ըռըկաւ, գնաց ասկեարի օրթալաղ[1] տեղ կանգնաւ։

187. Զին կանգնաւ, է՛լ մարդ չապանը.

Վուր ձին կանգնաւ. էնքան ասկեար թափան Դաւիթը վերայ, համա կը զանին։

Փէտով կը զանին, քարով կը զանին, թրով կը զանին։

Էնու շուրիր թուր չը կառի։

Զընճըլ կը թլին ձիու վրէն, թիվքիր կայիմ կը կապին։

Դաւիթ էն տե շատ խեղճ կըլնը։ Զին է՛լ ըռկի ձէն չը տայ։

188. Ցեօվան գըշիր կըլնը գիւս, կը տիսնայ Դաւիթը աստղը մժուաղիր[2] ի, կեբթայ տուն կըսի.—Կնի՛կ, ըլի՛, ճրագ էրա. Դաւիթը աստղը մժուաղիր ի. Դաւիթ շատ նեղ տեղն ի։

Կնիկ կըսի.—Տնաւե՛ր, Դաւի՛թն էլ նեղ տեղն կընկնը. էն ինչ գիւ ասիր, ես հաւատացի՛մ։

189. Պա՛, խրեօխպէր ի, սըրտ վերայ կը ցաւի, մէկէլ կը վազի գիւս. կը տիսնայ տահա[3], քեանի կեբթայ Դաւիթը աստղը կը մժուաղի։

190. Մ կէլ կգեայ տուն, կըսի.—Կնի՛կ, կնի՛կ, ելի՛, ճրագ էրա։

Կնկեան վերայ զօռ կէնի. կնիկ կըլնի, ճրագ կէնի։

Խիտ Ցեօվանի կռիւ կէնը.—Դիւ չը՛ս թուղնը, քընիմ։

—Ախբ ուտար աղչըկ ես, քիւ սըրտ չը ցաւը. ախր իմ էրաւն ի, իմ սըրտ կը ցաւը։

191. Ցեօվան կըլնը, կեբթայ ձիանքտիրու մէջ.

---

1 Թրք.=Միջավայր, մէջտեղ։ 2 Խաւարել, վանեցիր աստմ են ժժղկտել։ 3 Թրք.=Էլ աւելի։

Զեռ մէկ ձիու քեամկը վերայ կայ, կըսի.

—Դիւ ըծը յիվի կը խաղցնիս Դաւթը.

Կըսի.—Վաղը, էսա գեալ.

Կըսի.—Խա՛, վաղը էսա գեալս իս Դաւթը ինչի՞ն խաղնիմ. նաշին խաղնիմ, թէ ջանգակին խաղնիմ:

Կերթայ մըկէյ ձիու մօտ, կըսի.—Ըծը յիվի կը խաղցնիս Դաւթը: Կըսի.—Վաղը, կէս օրին:

—Կէս օրին իս Դաւթը նաշին խաղնիմ, թէ լէշին խաղնիմ:

Կերթայ մըկէյ ձիուն կը խաղցու.

—Դիւ յի՛վի ալ խաղցուցիս ըծը Դաւթը:

Էսաց.—Աբիւ առնիլուն:

Էսաց —Աբիւ առնիլուն իս Դաւթը ինչին խաղնիմ:

—Գնաց մըկէյ ձիուն մօտ, էսաց.

—Դիւ ըծը յիվի խաղցըցիս Դաւթը.

—Աչք խփիս, բանաս, քի կը մօտըցըցիմ Դաւթը:

192. Յեսվան ձիու գլեսի պադնից, ձին խանից, թառ քեամակ, քշից:

Ձին էսաց.—Յեսվան, քիւ աչքիր խփի՛ր: Խփից:

Մըկէյ էսաց.—Յեսվան, քիւ աչքիր բաց: Բացից:

Հալա մութ գշիր էր:

193, Վալապալգ[1] ընկիր ասկեարը մէջ, ձէնքանիր յըմեն տեղ կերթայ: Ինուանց ձէնքանիրուց Յեսվան վախեցաւ, էլ չը կշխիցաւ քշիր գձին, էրթէր ասկեարը մէջ:

Ձիու վերևէն Յեսվան բեսուաց.

—Դաւի՛թ, Դաւիթ, էսաց, էսա խաչ պատրաստին, վերայ իմ աջ թիվին. վի՞ շըշկըսիր իս:

194. Յեսվանի ձէն էլ շատ ի. շատ ձէն կայ վերայ, վուր շատ պատը տեղէն բեսուաց, Դաւիթ լսաւ:

Դաւիթ վախեցաւ. չէ՛ վուր խաչը անուն տուից:

Նուրէն Դաւթը միտք ընկեաւ, էսաց.—Էսա Յեսվանի ձէն ի. պա իս մուցիր իմ:

Կանչից.—Եա Մարաւթայ բանձր Առապարածին, խաչ պատրաստին, վայ իմ աջ թիվին:

Դաւիթ գթիվքիր ակուն թափ տալիս պաշտան գէնճլքիր կտռտուան:

Ցընտե, վուր գնճիլքիր կտռտուան, ձին էլ խնդացաւ:

195. Մէկ մարդ էլ, եօթ տղայ կէր էնաւ. Մէլրք ըկեօթ տղէն էլ գեսուվէն ըիրիր էր կռիս:

Ընտե, էդա եօթ տղի խէր, յիւր տղէք շատ կուզէր,

---

[1] Թրք.—Խառնաշփոթութիւն, ապիրակ:

Էսաց.— Էն էլ խիստ տը գեամ, որտե ձի ոպանին, ըծը էլ խիստ թը ոպանին էն տեղ։

Զէ՛ վուր Դաւիթ ընկեաւ ասկեարը մէջ, ասկեար կը կաւ-տուրի, գատնաւ կիրշկայ էգա մարդ.—Ա՜յ վա՛խ—ա՜յ վախ, իմ ոդէքն էլ տոպանի, ասէց։

196. Էգա մարդ խելքմ էրաց ոդէք յասղեալ։

Ասկեարը մէջէն վազեց, էկաւ։

Զէ՛ վուր ասկեար շատ ի. ճանբախ չըն իտաց, կը բեռաւ։ Կըսի.—ճանբախ տուէք, իս տէրթամ Դաւիթը մօտ։

ճանբախ տուրն, էկաւ, Դաւիթը մօտացաւ։

Բեռաց.—Փո՛շտ—փո՛շտ։

197. Դաւիթ վուր լուաւ, ձին քշից, մօտացաւ էգա մարդուն, էսաց.—Խալիւր, իս հալա ջահիլ ոդաց իմ, իս ինչ փշտուրթին իմ էրը, գիւ ըծը կը կանչիս փո՛ւշտ-փուշտ։

Խալվիւրն ի, կըսի.—Դաւի՛թ, կօրբան իմ քիւ գլխին. քի չըմ ըսի փուշտ. ասկեարին կըսիմ փո՛շտ-փո՛շտ, վուր ըծը ճանբախ տան, գեամ քի մօտանամ, խապար տամ։

198. —Խալվիւր, էսաց Դաւիթ, ինչ խապար տը տաս։

Էսաց.—Դաւիթ, կօրբան իմ քիւ գլխիւն, քեզ գիւշման կեզ՝, էնա գաշտը մէջ չատ ի գարկիր, նատիր. էնա գէյհա[1] էնա ջիւջ չատ էնուրն ի, էգա ասկեար կը տիանա՝, յըմեն էլ գեռեռվէն ըիրիր ի շատի՛ր կան, մօրէն մէ՛կ ին, շատի՛ր կան, տաս խատ, էն էլ գեռեռով ըիրիր ի. ապա վուր գիւ էրթա՝, քիւ գիւշման ոպանի՛ս, էգա ասկեար յըմեն քի տիւզա[2] տէնին, տը խնդանան. յըմեն մէկ ուր տուն տէրթայ։

199. Դաւիթ էգա խալվիւրուն կը լսի։

—Խալվիւր կըսի.—Գիւ ադէկ շարաթ ըծը էրըր, քիւ խապար տէնիմ։

Դաւիթ կը քշի զձին, տաղրու[3] կերթայ չատրքիր։

Կերթայ. Մէլրքի չատրրը յառէջ կը կանգնը։

200. Կրիշկայ չատրրը տակ լիւ[4], դօշակ կօղնած ի. Մէլրքէ էլ պառկիր ի։

Կնկտիր էլ նստած մօտ նա ինչ որրտ կը մաժի, նա ինչ գլեօխ կը մաժի, նա ինչ վուտրիր կը մաժի. մէրն էլ կեօ[5] նատի գլխիւ յառէջ։

201. Դաւիթն ի, կը տիանայ զմէրն, կըսի.—Մէրի՛կ, ըսին քի։

---

1 Թրք.=Անհաւանիկ. 2 Թրք. Տուա=Աղօթք, մաղթանք։
3 Թրք.=ճիշտ, ուղիղ։ 4 Խոյեցիր՝ լիեի=Լերմակ. եօրգան։
5 Անհա։

Կըսի.—Ասաքծու բարին, Դաւիթ, իմ քեռայրը ապէն, ձիւս էջի տակ։

Զէ՛ որ մէր կը տիանայ, ձին, զինք յըմեն էրուն ին, էնտեղ շատ կը վախենայ։

Դաւիթ կըսի.—Մարէ՛, չըմ էջնայ տակ։

202. Դաւի՛թ, կըսի մէր, էջի տակ. մկայ գիւ անօթի՛ իս, ծարաւ իս, մէ քիչ խաց կի, ինչ կըլնը։

—Մարէ՛, կըսի, քընէ շնորհակալ իմ. իս խաց էլ իմ կիւրիր, ջիւր էլ իմ խմիր. Մէլըքին խան վի, թը խապարմ տայ. ըս օր իս իկիր իմ, Մէլըքի խօքին տ՝առնըմ, առանց գրեօղի էնու մախ իմ ըիրիր։

203.—Դաւի՛թ, էսաց, քիւ ջիւջ ախպէրն ի։

—Էլի՛ իմ ջիւջ ախպէրն ի, իս գտիմ իմ ջիւջ ախպէրն ի, համա խան վե։

Էսաց —Ինիւկ ի, մեղք ի, թը քընի հալա։

Էսաց.—Օ՞ֆ, իմ գլեօխ ցաւցըցի՛ր, խան վե։

204. Մէրը կըլնը. էդա գիւթնը խուվ կը գնը կրակ, տաքացըցի, կը գնի Մէլըքի վուտաց վերայ։

Մէլիքն ի, կակախի.—Էդա ինչ լիւ էր, ըծը կծիցա։

Էդա Մէլըք քնիւկ չէր, էդա մէրն ի, ֆանտ կէնի, խուվ կրակացըցի, վուր Դաւիթ տիանայ, վախինայ, ըսի.—Էդ ի՛նչ զոռպայ մարդ ի Մէլըք, որ կըսի. «Ըծը լիւ կծիցա»։

Ապա ինչ մէր էսաց Դաւիթին, Դաւիթ ինչ էսաց մոր. Մէլըք քնիւկ չի. յըշար[1] ի. յըմեն լսիր ի, դիտի։

205. Մէլըք մէկ ձեռ դրիցա էսա աչքը վերայ, մէկ ձեռ դրիցա մըկէլ աչքը վերայ, աչքիր որբիցա. սկօն ըրշկիցա, տիսաւ կտրըճ մարդմ ի ձին խիծիր, էրընի մէջ շաղաղուիր ի, կեօ ուր չատրրը գիւռ կանգնիր ի. էսաց.—Էդա ո՞ն ի։

—Կանգնի՛, էսաց Դաւիթ, առանց մախ իս քի մախ իմ ըիրիր, առանց գրեօղ քիւ խուքին տառնըմ։

206. Էսաց.—Դաւիթ, գիւ չը՞ս թուղնըս, իս ձին խիծնիմ։

Էսաց.—Մէլիք, ըլի՛, ձին խիծի, իս քիւ պէս բէբաղդ չըմ. յուացուի՛ էլ. թէ անութի՛ իս, խաց էլ կի, թէ ծարաւ իս, ջիւր էլ խմի. քեօ շուրիրն էլ հալա խաքի, քիւ թատարրք[2] տի՛ս, նիւր էրը իմ խիտ կուիս։

207. Մէրն էսաց.—Մէլի՛ք, Դաւթըն մեպայ էրի. քեօ ախպէրն ի։ Մէլըք ըռըկաւ, էսաց.—Զէ՛, յէս օր ի. եան իս գԴաւիթ կսպանիմ, եան Դաւիթ ըծը։

208. Մէլըք ոնչ ջիւր խմաւ, ոնչ խաց կեբաւ, ըլաւ համա ուր ձին քեշիցա, խիծաւ, թուրն ըռնիցա ձեռ։

---

1 Արթուն, զգաստ։ 2 Թրք.—Պատրաստութիւն։

—Դաւիթ, էսաց, ի՞նչդ կուզինք։

—Իմ ջիւջ ախպէրն իս, էսաց Դաւիթ, գիւ գաիս։

Էսաց։—Դեօրով գանինք մէմէկու։

Էսաց։—Վուր ուզունի։ գիւ իմ ջիւջ ախպէրն իս, յըմեն մէկ իրիք գըրպ ալ գարկի։ յառէջ գիւ գարկ, վուր գիւ քան գը ջիւջ իս։

209։ Դաւիթ կը կանգնը գաշտը մէջ։

Մէլըք Դաւթը մօտէն կը գատացըցը գձին, թուր կը քեշի, կը ըռնը ձեռ, էն տեխէն հեռատամ կը քշի ձին, Դաւթըն տը գարկի։

Դաւիթ կըսի։—Եա՛ Մարութայ բանձր Աստուածին։ խաչ պատրաստին, վար իմ աջ թիվին։

Մէլըք վուր էգա տեղէն կգեայ, աչքիր կարմիր ի։

Չէ՛ վուր Դաւիթ էնու դիշման ի, քեանի էնու զօր կայ, զթուրն էլ գարկի։

Խաչ պատրաստին, ծառայ կըլնեմ էնու քեարամաթին[1], ըզինք կտայ գիմաց թրին։

Թուր չը գալը խաչին, ակի՛ զօր չի տայ Դաւթըն։

210։ —Մէլի՛ք, էսաց Դաւիթ, էգա մէ՛կ գարպ[2]։

Էսաց։—Եա՛, մէ՛կ։

Էսաց։—Մէլի՛ք, մէ՛կ էլ գար։

Մէլըքն ի, հառատա՛ւ, էսաց։—Իմ ձիու մանկգիլ[3] քիչ էր, գա ձիու մանկգիլ շատացըցիմ։

Ձիու մանկգիլ գատացըց Դաւթը մօտէն, գատը գնաց, ըռըկէգ գարկից ձիուն, ձին քշից վար Դաւթըն, խաչ էլի գինք թլից թրը գէմ, էլի Դաւթըն ըսան չիլաւ։

211։ Էսաց։—Մէլը՛ք, էգա էրկա՛ւ։

Էսաց։—Խա՛, Դաւի՛թ, էգա էրկաւ։

Էսաց,—Մէլը՛ք, շի՛ւտ էրա, մէկ գարպն էլ գարկ։

Մէլըք մանկգիլ շա՛տ գատացըցաւց. ըռըքէգ գարկից, շիւտ էկաւ։ մէկ էլ թուր գարկից, խաչ էլի գինք էսաւ թրը գէ-մաց։ ակի Դաւթըն ըսան չըլաւ։

212։ —Մէլը՛ք, գիւ գրծա՛ր, էսաց Դաւիթ, իմ գեօրն[4] ի։

Էսաց։—Խա, ախպէր, քեզ՛ գեօրն ի։

Մէլըք էսաց։—Դաւի՛թ, գիւ իգին կտա՛ս, իս էրթամ չաստըրը տակ պառկիմ, գիւ գեաս, ըծը գարկիս։

Էսաց։—Խա՛, գնա՛, պառկի։

---

1 Թրք.=Զօրութիւն։ 2 Հարուած։ 3 Թրք.=Ասպարէզ։ 4 Հերթ։

213. Մէլըք կգեայ ուր չատրըը տակ, մօր կըսի.— Իս ինքք դարպ Դաւիթն զարկի, Դաւիթը սկի ըան չէրաց, Դաւիթ կգեայ էս ան ալ զարկի.

—Մէլըք, կըսի մէր, մալ էգա խուրը մէջ։

214. Մէլըք կը մանը խուրը տակ.

Քեառատուն գեօմշու կաշը կը գնը վերայ.

Քառասուն ջաղչը քեար կը գնը վերայ.

Խանքիր կը քեշի քեարիրու վերայ։

215. Մէրն կըսի.—Իմ ազէն, Դաւի՛թ, յառէջ քի կըսիմ մի զարկի. վուր կը զարկիս, էրի՛, զար։

Դաւիթ գիտի ինչ էրիր ի։

Կգեայ, տիանայ ջաղչի քեար, չէ որ խուրու քիրնի դրած ակօն բանձրացիր ի, լիսև քեշած քեարիրու վերէն, գտի վուր էնքան Մէլըքի ջանատակ չի։

Ապա մէր էն տե կանգնուկ ի։

Դաւիթն էլ չըսի Մէլըք խանէ՛ք գիւս, տիանամ։

216. Դաւիթ զթուր կէծակին կը քեշի, համա թո՛ւր կը վիրցի, կը բիրի վուր ալ զարկի, էլ չզարկի կըսի.

—Մարէ՛, էգա մէկ դարպ տուիմ քե խաթր, վուր գիւրծը պահիր ի։

Մէկ էլ թուր կը վիրցի վուր զարկի, կըսի.

—Առատուա՛ծ, էդ էլ տուիմ քե խաթր, վուր իմ կուիս քեօ ձեռնոմն ի։

217.—Մարէ՛, էսաց Դաւիթ, ըծը մնացիր ի մէկ դըարպ։

Մէրն էգա կնկտիրուն, էգա շաւար քեշոզքիրուն կըսի.— Շիւտ շաւար քեշէք։ Փուղը տիրուջ.—Շիւտ փուղ վիշէք։ Նաղարա զարկոզքիրուն.—Շի՛ւտ, նաղարա զարկէք։ Ազջկըտիրուն.—Շի՛ւտ, ձի քեաֆկտիր[1] բռնէք ձի ձեռ, խաղցէք։

—Կընկտի՛ր, գիւ էյ ձի քեաֆկտիր բռնէք ձի ձեռ, խորոտ խաղցէք, բալի Դաւիթ ըրշկայ, ձի տիանայ, չգտի Մէլըքի տեղ։ Դաւիթը դարպ էնու չառնը։

218. Ապա Դաւիթ գտի.—էգա ըծը յապեօվ կէնը՝ն, կըսի, ըծը շշկռացնին։

Դաւիթն ի, գեօր թուր կը զարկի.

Վուր կը զարկի, ջաղչը քեար կը կառի.

Քեառատուն գեօմշիւ կաշը՝ն կը կտրը.

Կը ատանը Սիվ ջիւր կը կայնացըցի։

219. Դաւիթ կըսի.—Մարէ՛, բացէք յիա, իս տիանամ զՄէլըք։

---

2. Քեաֆկիր=Պղնձէ, շերեփ ծակոտիններով։

—Դիւ գնա՛, մինք կը բանանք, կըսին։

Զին կը քշի, կգեայ քեաբը վերայ կը կանգնը։

Ձեռ կաայ, լխև կը թլի դեն, կը տիանայ ահագին քեաբիր, յըմեն էլ թրի յեռջև կառուած ի, քեաբի կառուրքիր ձեռ կը թլի, թալի դեն, տիանայ գեօմշու կաշիք, յըմեն փառչա փառչա էրած ի։

220. Մէլըքի ջանդըկի մէկ եան ժիս կուսրվի՛ր ի, մէկ ձեռ մէկ եան ժիս մնացիր ի, չկայ, ցվրուիր, յանթիւնդ—Սիվ ջիւր դնացիր ի։

Դաւիթ յիւր աչքիրով տիսաւ, հաւատայ։

Էտաց.—Մարէ՛, իս կերթամ, մնացէք բարեօվ, իմ ախպէր Մէլըք դիւք խանէք գիւս։

221. Դաւիթ ձիու գլեօխ կէնի, չատրվից կըլնը գիւս, կերթայ տակեարը մէջ, կըսի.—Զի յըմենուն իզին տուիմ. մէկ մէկ ձի տնիր գեացէք. իմ ջանին տուգա էրէք, իմ խօր-մօրն էլ օգորմի տուէք։ Զի խարճն էլ բախշիմ ձի։

Էգա տակեար Դաւիթն շատ տուզա կէնին, կօխնին, համա չըն աւտրնայ, թէ Մէլըք ապանուկ ի։

—Խա՛, Դաւիթ, կեօրպան քեօ գըլխիւն, գորիս գիւ գինա՛, Աստուած քեօ խիտ, Աստուած քեօ ըան յաջուզի, Աստուած քի ապղջանութեն տայ, Աստուած քեօ էն խօր մօրըն արքայութեն տայ։

Դաւիթ էն տեզ շատ կը խնդանայ, փառք կտայ Աստըծուն ու ձին կը քշի գէմ Աստուն։

222. Էգա տակեարի գլխաւորքիր տակեարն իզին չըն իտայ. վուր մէկ մէկ ուր տուն գեայ, կը բեօռան.—Է՞յ, մի՛ք էրթայ. էրթանք, Մէլըք ախնանք, մնա՝ ստ՛ութ ի, թէ ապրթ ի։ Մէկ մէկու կըսի.—Էնուանց խօսքն ի, էրթանք, տիսնանք։

Կգեան, էգա փաշէք, Մէլըքի չատրվի տակ կըխշկին, մէկ խատ ապղիկ շրիտ[1] կապած մէջքին, կախած ի էգա խուրու մէջ, գիլըփի ջանտակ, մէկ պզտիկ կտուր ի մնացիր ի, կըսին.

—Ապղիկ, շրիտ կապի։ Ապղիկ շրիտ կապի ձեռայ, խիտ կլայ, խիտ կըսի.—Քեշէք։ Քեշին, խանին գիւս։

223. Կը խանին, տիսնան մէկ կտուր ի մնացիր ի. էն կտուրն էլ ինչպէս վառուկ ի, ինչպէս կրակը մէջ փէտ դնիս, վառուր, սիվանայ, ակօն սիվացիր ի։

Վիրուն էն կէս ջանդակ կը բիրին տուն։

Էգա փաշէք էլ կը բեօռան տակեարն, մէկ մէկ ձի տուն

---

1 Թրք.=Պարան։

գեացէք։ Մէլըք ապանուխը ի, ձի տուն գնացէք, Մէլըք ապանուխը ի, ապանուխ՛ը ի, գնացէք ձի տուն։

Գնացին յըմեն մէկ յիւր տուն։

Լ.

224. Չէ վուր Ցեօվան զէն ասկեաը յըմեն տիսիր ի, յըմեն չատրքիր տիսիր ի, գնացիր ի յիւր քեաղաք ժողովրդուրսիր ի. էսքան չատր կայ, էսքան ասկեաը կայ։ Ժողովուրդ ասիր ի. «ամ վա՞խ, ամ վա՞խ, ա՛խ վա՞խ» տապանին Դաւթըն. գեան յըմեն մի կնիկ ազջիկ տը տանին, ա՛խ-վա՞խ, ա՛խ-վա՞խ Տէր Աստուա՛ծ, գի՛ւ ճար էրա։

225. Էդա քեաղքը մարդն էլ էն բարձր ասրը գլեօխ կապակօլ[1] ի դրած, ինչ յապեով—ըրշկին ճանթախ թէ Դաւի՛թ կգեայ, եան ասկեաը կգեայ, վուր շիւտ գեայ, քեաղքը մարդիրուն խապար տայ յիւրինց հեօղ[2] էնին։ Էդա մարդկիր դիւրալին[3] կայ, դիւրպինեով կրշկին դաշտը ճանբախ։

226. Տիսան կեօ մէկ ձիաւուր էկաւ.

Կապակօլն կըլնը վե, քեաղքըվէ կը վազնը.

—Մէ՛կ ձիաւուր էկաւ, էսաց, հաւատայ որ Դաւիթ ըլնը։

Ցեվարին ըսին.—Դաւիթ էկաւ։

Ցեօվան ըլաւ, տէրթայ Դաւթը յառէջ։

227. Էն գեղական, մարդ, կնիկ, խալվիւր, պառաւ, ճիժ ըլիժ յըմեն գեացըն Դաւթը յառէջ։

Դաւիթ ըրշկից, տիսնայ ջիւչ ասկեաը ի կգեայ.

—Ջանը՛մ, կըսի, էդա ասկեաը ինչ ի, ըծը քեանի՛մ դիւշման կայ, կգեան վար ըծը։

Դաւիթ ձին կը քշի, կըսի.—Ձի՛, գնա՛, Աստուած ինչ էրեր։

228. —Ձձին քշի, մոտանայ, կրիշկի Ցեօվան կեօ յըմենու յառէջն ի. կրիշկայ տղայ, ազջիկ, գեղական յըմեն էկած ի, կը բեօռա.—Խբեօխպէր, գի՛ւ էլ իկիր իս իմ խիտ կռիւ։

Խբեօխպէր կը բեօռայ։—Դաւի՛թ, մինք իկիր ինք, քիւ վերայ կը խնդանանք. վուր մինք փառք կտանք Աստըծուն ապամաթ էկաբ։

229. Դաւիթ, կըսի.—Էդա կնկտիր յընչի՛ էկած ի։

---

1 Թրք.=Կարաուլ=Պահապան։ 2 Պատրաստութիւն։ 3 Թրք.=Դիտակ։

—Դաւիթ, կըսի, ինչ գիւ գնացիր, չիւր մկայ էդա շիւաղքիր կրլրն Աստուած կը կանչին, կը վախենէն Մաքրայ Մէլրք քի ապանի. տաճկընիր գէն, քարքը մարդիր յըմեն ապանէն, կնէտիր տանէն, որ քիւ գալ լսան, յըմեն խնդացան ու ուրախացան. ջիւշ, պատիկ քիւ յապեօվ էկան:

—Դէ՛, դառցէք, գնացէք. ըծը տուդան էրէք, Մէլրք ապանիր իմ, գէ՛ դառցէք, դէ, դառցէք:

Էդա խեղճ մարդիր էկան, արխային տնիր նստան. էլ ակի չըն վախենայ:

Դաւիթն էլ էկաւ ուր տուն, նստաւ:

230. Էդ պառաւ ըլաւ, էկաւ Դաւիթը մօտ. էսաց.—Դաւիթ, բարեօվ էկիր, Դաւիթ, բարեօվ էկիր:

—Աստըծու բարին քի, պառա՛ւ:

—Տիսա՞ր, վուր իս քիւ յըմեն ճանրախ շանք տուիմ. ապա որ ի՛ս քի չըսէ՞ր, գիւ ըիրիկ, ծառմ առիր էր կէրթէր Մէլրքի վերայ կռիւ, տիսա՞ր, կռիւ քեանիմ դեօռի. քիւ խոր խաթիր խամար քի յեմեն բան շանք տուր:

—Պառա՛ւ, էսաց, ըծը քինէ մինաթ ի. կդեանա ըլնրս ըծը մէր, ըծը մէր չունիմ:

231. —Դաւի՛թ, իս էլի քի մէր իմ, իս կերթամ իմ տուն, ինչ բան լսիմ. էլի՛ կդեամ, քի կըսիմ. ակի մի վախենայ, Դաւիթ, ծլիս, ծաղկիս, չիւր մկայ պատիկ էր, ջիւշացար. ծուռ էր, խելքըվացար, էլ ըս տե մի նստի, կը դնիս վար Յեօվանին կըսիս «Իմ խոր յեօդէն պատրաստի, վուր իս կերթամ իմ խոր յեօդէն նստիմ, հըմա խորատ պատրաստի։ Քեօ խոր ատնդրխքեր էն տեղն ի. քիւ ձեռնով քիւ խոր շուրիր կը խանիս, ծալիս, դնիս ոնտիւկ, թուրն քի՛ւ ձեռնով էլ կտխիս, մէկ մարդ էլ կը բռնի քիւ յառէջ, քի ականջ էնը. մէկ մշակ էլ կը բռնիս, քեօ ձին խորատ պախի։ Դաւիթ, մնացի բարի. իս կերթամ։

232. Դաւիթ Յեօվանին կըսի.

—Յեօվա՛ն, իմ խոր յեօդէն պատրաստի։ Հըմա խորա՛տ պատրաստի, լխև, դօշակ շա՛տ թալ, բարձիր շա՛տ թալ, իս տէրթամ, իմ խոր յեօդէն տը նստիմ։

—Խա՛, կըսի, մկայ կը պատրաստիմ: Էդա Սասունայ ճրագ չիւր մկայ ընցուկ էր, մկայ Սասուն ճրագ վառաւ, ապա չը պատրաստիմ, քիւ էրատն որ գիւ էրիր, իս շա՛տ կը խընդանամ, որ գիւ ակօն կարրճ իս. իս գալիմ որ ախշար յըմեն իմն ի, իս կը խնդանամ որ դիւ տախս, ծիծղանք։

233. Դնաց, յեօղէն պատրաստից, թէ Դաւիթ մէկ բան է ասել, Յեսվան գնաց էլկաւ բան լսել։

Յեօղէն խօրատ պատրաստից։

Էկաւ Դաւիթ, էսաց.—Յեսվա՜ն, կանգնը, էրթանք։ Դաւիթ, Յեսվան գնացըն յեօղէն։

234. Դաւիթ էսաց.—Խրեօխպէր, մեղք ի, գիւ ըծը խաց ըխրիս, ջիւր բիրիս. մէկ խաա մարդ բռնիս իմ յառէջ, ըծը խաց ջիւր բիրի. գիւ իմ խօր տեղն իս, խաց, ջիւր բիրիս, չըմ ուտի, չըմ խմի. մէկ մարդ էլ կը բռնիս, ըծը շախի, մէկ մարդ էլ կը բռնիս, իմ ձին շախի, պախի։

Յեսվան գնաց բռնից, ելի, էսաց —Թէ Դաւիթ ձի ինչ կըսի, էնաւ խօսք ասնիս։

235. Մէկ մարդ էլ բռնից.—Թէ Դաւիթը ձին ուր շախիս։

Դաւիթ էսաց —Խրեօխպէր, հախ ինչ իս ասուր էդա մարդիրուն։

Էսաց.—Ամիս խինդ մէճիթի.

Էսաց.—Իս ամիս կտամ տաս մէճիթի վուսկի։

Յեսվան թուղից գնաց տուն։

236. Դաւիթ էսաց.—Մշակ, գնա, իմ ձին ջրի, սափուր ա՛ռ, գնա յաղբիւր, անուշ ջիւր բի, պղնձ էն տեղն ի, գի յառջև իմ ձին թը խմի։

Մշակ առից սափուր, գնաց յաղբուր, ելք ջիւր էրաց, էկաւ, գնաց վայախ, լցից պղինձ, վերուց տանը գնը յիռջիւ ձիուն ուր խմի, ձին մէկ ուր գլեօխ թախթըվից։ Որ թախթըվից, էդա մշակ խելքամաղ ելաւ, ընկեաւ գետըն, մեռաւ։

Դաւիթ կանգնաւ, «մշակ չէրի, մկաց բանմ ելիր ի»։

237. Գնաց տիսաւ մշակ յե՛րկէն պառ՝կիր ի.

—Տօ՛ մշա՛կ, գօ՛ մշա՛կ, կը կանչի։ Մշակ ակի ձէն չի տայ։

Մէկ քիչ պաղ ջիւր լցից յերսի վերայ։

Մշակ աչքիր բացից, Դաւիթ ձեռ տուից, կայնացըցուց։

Էսաց.—Մշակ, ի՞նչ ելաւ քի։

Էսաց.—Դաւի՛թ, իս կերթամ իմ տուն։

238. —Վրէ՛ կերթա՛ս, մշակ

—Ախր քեօ ձին մէկ օր ըծը կապանի, գլեօխ թախթըվից, էնաւ զարպից իս վախեցայ, քիչ էր իս մեռնէր, էլմ գիւ խաաբ։

Էսաց.—Է՛, յիմար ձին, էդա մարդ իս բռնիր իմ քի ջիւր տայ, քի գեարը տայ, քիւ քեամակ աղէկ թիմրի, գիւ ընչի՛ չըս թուրկի, իս բալքիւ յիւրիշ տեղ կերթամ. գիւ կը մնաս անօթի, ծարաւ. քի գեարը, ջիւր տուող չըլնը. հա՜, ճանչի էդա, զքի պախացող ի, խօրատ ճանչցի։

239. Դաւիթ կըսի.—Մշակ՝ պղընձ վիրու, տար տի յիւ-ջիւ։

Էտաց.—Ես կը վախենամ։ Էտաց.—Մի վախենայ, տար գի։

Մշակ պղընձ վիրուց, ձին յիտ քեշուտ, պղընձ գրից յիւջիւ, ձին էկաւ խմից զջիւր։ Ձին էլ ըան չէնը։

240. Մշակ գնաց գեարը իրի, գրից մտուր, ձին յիտ յիտ քեշուտ, տպտ էրի, կերաւ։

—Մշակ, էտաց.—Ձին վուր գեարըն կուտի, խօրատ կը քիւրիս։

—Դաւի՛թ, էտաց մշակ, գիւ կերթաս, ես կը վախենամ։

—Չէ՛, էտաց, էլ իմ ձիւս քի ըան չըտի։

241. Դեարն կերաւ, պրծաւ, մշակ ձիւս քեամակ տը քիւրէր, հա կը վախէնէր։ Ձի պիւր քեամակ հա կը մօտացը-ցէր, որ մշակ քեամակ քիւրի։

Մշակն ի, յաշիկ յոշիկ ձեռ կը գնի վար քեամկին, հա կը քիւրի, քիրիւց կը գնը, ձին էլ ըան չէնը, քիւրի կը պրծնի։

Վուր քիւրիւց պռծաւ, ձին ձէն չտուրից, աւիլ իրի, աւ-լից, զօռպա խալիչէմ էլ քեշից վար քեամկին, ըլաւ ծծզաց-խնդացաւ, էկաւ Դաւիթը յեօդէն։

Էտաց.—Դաւի՛թ, քիւ ձին էլ ձը չը զարկից։

Էտաց.—Է՛լ մի վախենայ իմ ձիւց, գիւ էրթաս, իմ ձիւս միւրու տակն էլ քընիս քիւ վերայ վուտ չդնի, քի կը պախի հալա։

242. Մնաց յեվարին, էն գեղի իշխանքտիր յըմեն ժողո-նուան, էկան Դաւիթը մօտ, Դաւիթը յեօդէն։

Դաւիթ էտաց.—Վրէ՞, յըմեն օր չըք իգեայ, յէս օր իկիք։

—Զիւր յէս օր մի ճրագն ընցուկ էր, յէս օր Սատունայ ճրագը վառուտ, միք յըմեն օր տը գեանք, հա քիւ մօտ տը զրուցինք։ Մէկ-էրկու շաբաթ հա կերթէն կը զրուցէն, կգէն յիւրինց տնիր էդա քեաղքը իշխանքտիր։

Ը.

Անկեան բաղդ չկայ.

243. Ցեօվանի կնիկ կըլնը, շաքեարլամայ խաց[1] կը թխի գեօղտուկ. խաւ կը մուրթի, կիսիկ. մեղր, կարագ, եօթը տա-րուայ գինին կը պատրաստի, կըլնի ուր խօրատ—խօրատ շուրիր աղէկ մը կը խագնի. աչրիր կը դեղի, պակիր[2] կը խանի. խօրատ —խօրատ կունդուրեք[3] կը խագնի։ Ցեօվան քնուկ ի։

---

1 Շաքարեղէն։ 2 Դանկուր։ 3 Կարճ ոտնամանի։

244. Ցեօվանի կնիկ կառնը էդա բանիը, մուտ կը վառի, կգեայ Դաւթը յեօդէն։

Դաւիթն էլ դիւռ շնիր, քնիր ի.

Կնիկ կըսի.—Դաւի՛թ, էլը, դիւռ բա՛ց։

Կըսի.—Դու վո՛ւլ իս, իս դիւռ բանամ։

Կըսի.—Քիւ խրեօխպօր Ցեօվանի կնիկն իմ։

245. Դաւիթն ի, կըլնը դիւռ կը բանայ։

Կնիկն ի, կգեայ յեօդէն, կը նստի.

—Դաւի՛թ, կըսի, իս քի շիւտիւց չը տըսիը. քի կարօտով էը, չըմ կարցիը անիւշ անիւշ բան շինիը, հազը էդա ի, քիւ խամաը ըիրի։

Հենտե կը բանայ, դնը յեռջիւ Դաւթըն, կուժմ գինի, մէկ կթղայ, էն էլ կը դնի յեռջև Դաւթըն։

246. Դաւիթ միտք կէնէը թէ–ըծը մէը չկայ, էս իմ մօր տեղն ի, շատ միւնաթ կը բռնը.—Ար դիւ իմ մօր տեղն էը, յէս օր ըծը ճանչցաը, էկաը իմ մօտ։

Էսաց.—Դաւի՛թ, խօրպան իմ քի. Սատնայ մէջ քիւ պէս՝ ոնչ իզիը ի, ոնչ կըլնը էլ քիւ պէս տղայ։

447. Ապա Դաւիթ չըը գնացիը կռիւ, յեթիմ տղայ էը, պախացող[1], ականջ արող չկէը, մկայ որ գնաց կռիւ, էկաւ լցուաւ։ Դաւիթ սկօն ի եղիը. մարգ կրիշկի, Դաւթըց կամչը-նայ։ Վուր էնու խօրոտ աչքիը, կարմիը իրիսքիը, խօրոտ քիթ բերան։

248. Դաւիթն ի, գիւը խաց կուտի, նռան գինին կը խմի։

Է՛, եօթ տարուան գինին, Դաւիթն էլ շա՛տ կը խմի։

Կը խնդանայ, կըսի.—Իմ, յէս օր իմ խրեօխպօր կնրկ ը-ծը իքրամ[2] ի էրիը։ Ա՞զէկ մը խմի։

Դաւիթ կը սարխօշնայ[3], գլեօխ կը դնը վար բարձին քնի. էլ չկէրի վուր գրուցի։

249. Ցեօվանի կնիկ զԴաւթը իրիսքիը կը պագնը, ճակատ կը պագնը. կրիշկի, Դաւիթ քնիր ի, ըսկի՛ խապար չի ուր մօտէն։

Կըլնը, կերթայ տուն, հալա Ցեօվան քնուկ։

Էդա Ցեօվանի կնիկ սուվրաւ։

Մէկ շաբաթ սկնայ գնաց, էկաւ.

Էն մէկ օր միտք էրաց, էսաց.

—Իս էդա եօթ տարուան գինին վրէ՞ կը տանիմ.

Դաւիթ կը խմի, կը պառկի քնը.

---

1 Զգաստ, ուշիմ, ժուժկալ։ 2 Թրք.=Հրաւէր, պատիւ. կոչունք. 3. Թրք.=Հարբել։

Իս էնաւ մօաէն ինչ կը խասկանամ։
250. Էն մէկ օր կըլնը, մէկ տարուան գինին կը տանի.
Գինին էլ քիչ կը տանի։
Կերթայ յեօդէն կը նատի.
Էլի անիւշ-անիւշ լանիր կը տանի, գնը Դաւիթը յաւէջ.
Գինին էլ կը գնի յեւջիւ. Դաւիթն.
Դաւիթ զիւր խաց կուտի, զիւր գինին կը խմի.
Դաւիթը գլեօխ չը ըռնի գինին. Դաւիթ չը քնի։
251. Կնիկ կը նստի Դաւիթը գիւք.
Զեռ կը թլի, Դաւիթը վիզ ըիրի գրկի։
Կէնի վուր Դաւիթը իրիս ըիրի պագնի։
Զէ վուր նստաւ Դաւիթը գեօք, Դաւիթ ընտե ըռըկաւ,
չը թուղից զիրիս պագներ էր։
252 Էսաց.—Դիւ իմ մօր տեղն իս։
Էլի, նստը էնա տեղ, իս գիւ զրուցինը։
Էսաց.—Դաւիթ. վրէ՞, իս քիւ մօր տեղն իմ,
Իս ուտար աղջիկ իմ.
Ֆարազա իկի, քիւ խրեօխպէր աւիր իմ. Դաւիթ, քի՞ ինչ։
—Ո՛ր գիւ ուտար աղջիկ իս, վրէ՞ իկիր իս ադա։
—Իս քիւ խրեօխպէր Ցեօվանի կնիկն իմ։
—Է՛, իմ մէր, խրեօխպօր կնիկ մէկ ի. էն էլ իմ մէրն ի.
ինչ ֆարզ[1] կայ էն տե։
—Դաւիթ, գիւ չըս գտի. իս ուտար աղջիկ իմ.
Էսքամ ժամանակ քիւ խրեօխպէր ձեռքի յաւէջն էր.
Մկայ քիւ խրեօխպէր չըմ ուղի, զքի կուզիմ։
253. Դաւիթ կը մնայ մտածիլեով.
—Իս մկայ ըլըմ զանիմ, ոպանիմ, իմ խրեօխպէր գեան-
գատ տ՛անի՝ թէ.—Զիմ կնիկ ապանից Դաւիթ։
Թէ չոպանիմ, էգա կնիկ ձընէ չը դագարի։
Իմ խրեօխպօր կնիկ, կըսի Դաւիթ, ըլի, գնա, իս քնիմ.
Զիւր վաղ, վաղ իս քի բան կըսիմ։
Խափից, դրից ճամբխաւ։
254. Ռաւուտուն շիւտ Դաւիթ կըլնը կերթայ վար
յաղբրին. կը լուացուը, կը նստի էն տե, հա տուշունմիշ[2] կըլնը։
Տեսաւ էն պառաւ, դէ հա, էն տե իրիւաց։
Կանչից.—Է՛, պառա՛ւ, էրի՛ էս տե, էրի՛ էս տե։
Զեռնով էրաւ, պառաւ ըլաւ, էկաւ էն տեղ։
255. Ըլաւ, Ցեօվանի կնիկ ինչ էրիր էր, յըմեն պառաւն
էսաց։

---

1 Թրք.=Տարբերութիւն։ 2. Թրք.=Մտածել. խորհել։

Էսաց. — Պառա՛ւ, դիւ իմ մօր տեղն իս, յընդիւց քի կըսիմ։
Էսաց.—Դաւի՛թ, իս Յեսվանի կնկեան մեղք չըմ դնի.
Էն ժամանակ դիւ պտիկ էր.
Մկայ եղիր իս քսան տարեկան, քսանըխինգ տարեկան.
Հալա ապապ մնացիր իս։
Որ զքի տիսնայ, խիլք կերթայ գլխիւց,
Կուզի դեայ, քիւ ծուց պառկի։
256. Է՛, պառաւ, պա ինչ էնիմ, կըսի Դաւիթ։
—Դաւիթ, դիւ էլ կնիկ մ՛ ըի, փսակուի.
Վուր քի կնիկ ըլաւ, էլ մէ կնիկ չկէրի քի իսակառ[1] ընկի.
Մկայ վուր քի կիրշկայ, խիլք կերթայ։
Մարդ չը կէրի ջահէլ տղին ըսի. «Դիւ էսքան խօրատ իս»։
Սօրա կերթայ եաբ կը բառնի։
257. Դաւիթ, իս յառէջ քի տ՛ասէր, «Գնա՛, կնիկ ըի։
Դաւի՛թ, սկնայ բան կայ ախշաբ, հա՛,
Խօրատ, քի յապեօվ, կնիկմ ըի»։
—Պառա՛ւ, էսաց, ըծը յապեօվ կնիկ դիւ գնտի. իս չըմ կէրի։
—Դաւիթ. էսաց, քի կեօրայի[2] կտրըճ կնիկ Խանտիւթ խաթիւն ի.
—Մարէ՛, ո՞ր տեղն ի Խանտիւթ խաթիւն, իս չըմ գիտի։
—Կեօ՛, Խոյա քեաղաք, Իրանայ խուզը մէջ։
Էնա քեանց զքի կտրիճ ի. քեանց քի խօրատ ի։
258. —Մարէ՛, Խոյ ո՞ր թարաֆն ի։
Էսաց.—Դաւի՛թ, խա խարցու Խլաթ, գինա՛.
Ո՛ր կերթաս Խլաթ, խարցու Արճիշ, գինա՛.
Ո՛ր կերթաս Արճէշ, խարցու Բերկրի, գինա՛.
Ո՛ր կերթաս Բերկրի, խարցու Աբաղէն, գինա՛.
Համա խարցուցելով, խարցուցելով գինա Խոյ։
259. Դաւիթ որ իկի յազբըրի վերայ լուացուիր ի, խաց չը կիրիր ի։
Կըլնը, կերթայ յիւր յեօգէն։
Անտիւկ կը բանայ, շուրիր կը խագնի,
Թուրն կը կապի յիւր վերայ.
Կգեայ ձին գիւս կը քեշի.
Կեամ ձիու բերան կը գնի.
Ջին ձիու քեամկին կը գարկի.
Ոնչ խրեօխպօր խապար կէնի.

---

1 Հակառակ։ 2 Թրք.=Հաւասար։ չափ։

Ոնչ էլ խաց կուտի.
Անութի ճանբախ կընկնի։
260. Կգեայ կը խիծնի ձին.
Կը խարցուցի Խլաթ, դիւ դոր իս, կերթայ.
Կերթայ Խլաթ, կը խարցուցի Արճէշ.
Ցընդիւց կը խարցուցի.—Բերկրի որ տեղն ի.
Կըսին.—Էդա ճանբախ բռնը՛, գինա։
261. Դաւիթն ի, կըլնը, գեայ Գեործութայ դաշտ.
Կը տիսնի էն տե—դաշտը մէջ գեստան կէնին.
Դաւիթ շա՛տ կը քեաղցածանայ.
Ձար կը կտրուի վերայ, էլ չը դիմանայ.
Մէկ գիւթընիմ մօտ կերթայ.
—Բարյաջողիւմ ձի, գիւթնուիւր, կըսի.
—Ատրծու բարին, դիւ խազար բարեօվ։
262. Կըսի.—Գիւթնճի՛, իս քեաղցած իմ.
Կըսի.—Իս գիւթան չըմ կէրի թուղնը.
Դէ՛, էնա տեղ, արտը կուշտն ի խացիր.
Էն տեղն էլ կանանչ շատ կայ.
Զին թուղ էն տե թը էրեծայ.
Դիւ էլ կուշտ խաց կի գինա քեօ բանին։
263 Դաւիթ կերթայ արտը կուշտ, ձիուց կէջնի.
Կեամ ձիու բերնէն կը խանի, ձին էն տե կը թուղնի.
Ըզինքն էլ խաց կը քեշի յառէջ, զկաց յըմեն կուտի։
264. Գիւթնուրքիրն էլ կէս օրին գիւթան կը թուղնըն.
Գինացըն վուր խաց ուտին.
Գինացըն տիսան վուր ձիաւուր յըմեն խացիր կիրիր ի.
Ցէն տե գիւթնճին կը մնայ շիւար.
Կըսի ընկերուջ.—Իս եօթ աւուր խաց բիրիր էր.
Էդա մարդ յըմեն կիրիր ի. փրթիւճ չը թուղիր ի.
Գնա՛, կըսի մշկուն, խաց բի։
265. Դաւիթ էն տե կը լսի.
—Գիւթնճի, կըսի, քիւ արտ քեանի՞ գիւթնի տեղ ի։
Կըսի.—Քեառասուն գիւթնի տեղ ի։
Կըսի.—Դիւ գնացէք, ձի խաց կերէք.
Դիւ գնացէ՛ք, իս ձի արտ կը վարիմ։
Դիւթան թուղէք էս տեղ։
Գիւթնուուր կառնը զիւր մարդիր, կերթայ տուն, խաց ուտի։
266. Դաւիթ զգիւթան կը կապի ձիուն.
Կըլնը կը խիծնայ վար ձիուն.
Կը տանէ գիւթան, կը բիրի.

Կը քշի զգիւթան էդա արտը մէջ.
Է՛, ամառուն չուը գետը ի, չէթին ի[1], զեօռ[1] ի.
Քիչ ի մնացիր արա պռծընի.
Կրիշկի ձին շա՛ա ի քրաքնիր ի.
Կէջնի տակ, յիւր քեաֆիկ[2] կառնի.
Ձիու քրաինք աղէկ մը կը սրբի, կը թուղնի.
Ձին կերթայ կանաչը մէջ կէրեծայ։
267. Դաւիթ ձեռ կը թլի,
Գիւթնի գեօրծավարն[3] կը բռնի.
Կը քեշի, տանի էն գլեօխ, կը բիրի էն գլեօխ.
Ձիւր մանճկալ կգեայ, զարտ կը պռծրցի։
Մանճկալ կգեայ, կը տիանայ, մնայ շիւար։
268. Դաւիթ կըսի.—Մանճկալ, քիւ արտ պռծա՞։
Կըսի—Խա՛, կանանչիս, պռծար։
Կըսի.—Դէ՛, մնացիր բարեավ, իս տ՛էրթամ։
Կըսի.—Կտրի՛ճ ազա՛, էրի՛, էրթանք տուն, խաց կի, նուր գնա՛, մկայ էլի քեազցացիր իս։
269. —Զէ, կըսի, տուն չըմ իգեայ։
Կըսի.—Վուր տուն չը՛ս իգեայ, կանգնը.
Ճամբխիմ, խաց բիրիմ, ճամբախ չանութանաս։
—Մանճկալ, կըսի Դաւիթ.
Վուր ակօն ի. իս իմ ձին տանիմ Բանտը Մահու մէջ կը լուսամ.
Ձիւր իս իմ ձին լուսամ, կգեամ։
270. Դաւիթ զձին կը տանի գետու մէջ թամիզմ կը լուայ,
Կայնը զին կը գնի վար քեամկին.
Ձիու զօլանքտիր աղէկ մը կը քեշի կապի.
Կեամ կը գնի բիրան, կը խիծնի կգայ,
Կառնի զխաց, կընկնի ճանբախ, կերթայ։
Գինաց, գինաց, խարցըցիլեօվ խաուաւ Խոյ քեաղաք։
271. Վուր խաուաւ Խոյ, խարցըցից.
—Խանտիւթ խաթիւնը տուն ո՛րն ի։
Մէկ մարդ յընցաւ յիռջև, տարաւ, շանց տուից.
Դաւիթ էսաց.—Դիւռ բացէք։ Գիւռ չբացին։
272. Դաւիթ զարկից, գիւռ ջարգից, մտաւ նիրաւ։
Դիւռ վուր բացից, ըրշկից քեառատուն ձի կապուկ ի.
Ցըմենի յեռջիւ գեարը լցած ի. կեօ կուտին.
Դաւիթ զիւր ձին էլ տարաւ էն ձիանքտիրու մէջ.

---

1. Թրք.=Դժուար։ 2 Վերնազգեստ կարճ եւ անթեւ։
3 Գունանի մաս։

Տեղմ չէը վուը ձին կապէը։
Դաւիթն էլ զիւը ձին թուղից էդա ձիանքտիրու մէջ։
273. Զին, թէ կանաս, գեաբըն խլի, կի՛, էսաց։
Թէ չըկանաս, հա կաց անուԹը։
Զին վուը մտաւ էդա ձիանքտիրու մէջ։
Էդու յախու յըմեն փախան, ժողուան մէկ տեղ։
Դաւիթ իրշկից վուը ձիանք յըմեն փախան։
Զին էլ գնաց էնոնց ձիանքնիրու մաբրին։
Զէնու գեաբիքը խլից մօտէն, թահնա[1] կերաւ։
274. Դաւիթն դրից զինքն, թաբանճէն վե ըլաւ վիրին կաթ[2]։
Մէկ յեօթախը դիւռ բացից։
Մտաւ յեօթախ, տիսաւ քեառուն մարդ յէն տե նստաւկ ի։
Քեառուն թուրն էլ պատից կախած ի։
Ըզինքն էլ նստաւ էն տե։
Էսաց։—դիւ վրէ՞ նստիր էք ադա։
Էսաց մէկ մարդ։—Իկիրինք ադա,
Ցըմենն էլ Խանտիւթ խաթիւնը յապեօվ իկինք։
Խանտիւթ խաթիւն մէկը էլ խուսք չը տաւիր ի։
275. Շիւտի՞ց ի, վուը դիւ իկիրիք ադա։
Էսաց։—Իս մէկ ամիս իկիր իմ, շատիր կան տարուվ նըստած ի ադա։
—Պա Խանտիւթ խաթիւն ձի չըսի, «Վրէ՞ իկիրիք զդա»։
Զէ՛, կըսի, մէկը խիտ իսկի խապար չտայ։
—Է՛, վուը ուկնեմ[3] ժամանակ դիւ էս տե նստիր էք, ձի խապար չի՛ տուիր ի, ապա դիւ նստիր էք զդա, ի՞նչ։
—Ապա ինչ էնինք։
Էսաց.—Կըլնը Խանտիւթ խաթիւն ձի չուզը։
Էնու յապեօվ ձի չտայ զրիւց։
Ցըմեն մէկ ձի տուն գեացէք, կանգնիր էք զդա, ի՞նչ։
Վրէ՞ էրթանք մի տուն։
Կանգնիրինք ըրշկինք տիտանք, Խանտիւթ խաթիւն զորն կառնի։
Խանտիւթ խաթիւն ուկի մի վերայ չը խարցնի։
276. Դաւիթ էն տե յիւր յապեօվ միտք կէնի։
—Է՛, Կըսի, դիւ գինացէ՛ք մօտ, ասէ՛ք։ «Եան մէկ առ, եան դաստուր տու[4], թը էրթան, նստած էս տե ի՞նչ կէնըն»։
—Իա՛, դիւ դիւռ կը բանաս, ո՞ր կշխի դիւռ բանայ։

---

1 Թրք.=Մենակ։ 2 Թրք.=Ցարկ։ 3 Ա յսքան։ 4 Ա.զատելը իրաւունք տալ։

Որ մարդ որ դիւռ կը բանայ էն գեաղ Խանտիւթ խաթիւն կը զարկի, էն մարդ կապանի։

277. Էն գեաղ Դաւիթ կը կանգնը, կըսի.

—Իս դիւռ որ բանամ, տ՛երթամ ներս. թը Խանտիւթ խաթիւն ըծը ապանի։

Դաւիթ դիւռ զեօռովէն կը բանայ, կերթայ նիրս։

278. Խանտիւթ խաթիւն կրիշկի, տիսաւ մէկ մարդ էրի։

Շատ կտրիճ մարդ ի, խաթ խօրատ ի։

Էսաց.—Է՛յ մարդ, քիւ անուն ինչ ի.

Էսաց.—Իմ անուն Դաւիթ ի։

Էսաց.—Դաւիթ, յետե նատի։ Տեղ շանց տուի։

279. Դաւիթ զեօռով գինաց, ձեռ թլից Խանտիւթ խաթիւնի գլեօխ, գրկից, էնաւ իրիս մէկ զայիմ պապնից։

Սկօն պագնից, էնաւ բիրնը տեղ կապտացաւ։

Խանտիւթ խաթիւն ըռըկաւ։

Մէկ շամաւ մի էնաւ իրիսին գարկից։

Դաւիթն էլ ըռըկաւ, ըլաւ, էկաւ յեօդէն։

Էն մարդիրսաւն մօտ նստաւ։

280. Զէ՛, վաւր Դաւիթ գինաց խանտիւթ խաթիւնի մօտ.

Էդա քեռաւսաւն մարդ մէ մէկու ասին.

—Դաւիթ Խանտիւթ խաթիւն մի ձեռնէն տ՛առնի. է՛, ըպա ինչ էնինք։

Յըմեն մէկ ձի թուր քեշէք, գրէք ձի թաղաը տակ, նատէք վերայ։

Վուր մութ կաայ, էդա մարդ կը քընի.

Ըլինք, զանինք ապանինք։

281. Դաւիթ, չէ՞ որ կը նստի յեօդէն,

Կրիշկի կալուն[1] պատից կախուկ ի, ակի՞ թուր չկայ։

Սկնայ կրիշկի, կըսի—Էդա թրիր վրէ՞ պախին։

Ո՞ր մէկ տեղ կրիշկի, թրիր չտիանայ։

282. Ձեռ կտայ թաղաը՝ն, կրիշկի թաղաը տակ.

Մէկ թուր էն տե կը տիանայ. թուր կը վերցի։

Թաղա կը վրցի, կրիշկի թրիր յըմեն էլ կը տիանայ, թրիր յըմեն կը ժողուի.

Յըմեն իրարիւ վերայ կը դնի, կուտի.

Կը դնի կտուրքիր խորճին, կըսի.

—Տանիմ, ըծը խամար էնիմ նալ, բիվեռ, իմ ձեան պակաս ի։

Զխորճաւ բերան կը կուպղը[2], կը դնի էն տե։

283. Էդա քեռաւսաւն մարդ մէկ մէկը իրիս կրիշկի։

---

1 Թրք=Պատեան։ 2 Կողպել։

Մէկ չը կշխնայ ձէն խանի։
Խանտիւթ խաթիւն կգեայ, Դաւթը ձեռնէն կը բռնը։
Ցենդիւց կը քեշի վուր տանը յիւր օդէն։
Դաւիթ ըռբկիր ի, չէրթայ։
Էդա մարդիր էնտե կրիշկին։
Քեանիմ[1] Խանտիւթ խաթուն ձեռ կը թլի Դաւթըն, քեշի։
Զ Դաւիթ չը կէրի գիտնուց կայնացրցի։
284. Կըսի։ — Դաւի՛թ, վրէ՞ չը՝ ի գեայ։
Կըսի։ — Զըմ ի գեայ։
Ես տը կանգնիմ, իմ ձին խիծնիմ, էրթամ իմ տուն։
Խանտիւթ խաթիւն Դաւթըն կաղաչի, էրթանք տուն։
285. Տնաւի՛ր, ի՞նչքան շիւտ կըռբկիս, էրթանք իմ յեօդէն։
Էրկու խապար կայ, իս քի կտամ, էլի կերթաս, գնա,
Խօ զեօռով քի չըմ ըռնի։
286. Դաւիթ կըսի։ — Զըմ ի գեայ։
Կըռբկի, կը զարկի Խանտիւթ խաթիւնին, դմշկըլի դեն։
Կը գեայ յիւր ձին կը խիծնի, կընկնի ճանբախ։
Դաւիթ վար ձիուն հա կգեայ, հա ականջ կէնի։
Կրիշկի մէկ ձէն կգեայ հա կը ըեօռա։
— Դաւի՛թ, Դաւի՛թ, կանգնը՛, կագնը, չիւր ի՞ս գեամ։
287. Դաւիթ ձիու վիրիւէն ակնայ դառնայ, կրիշկի,
Կը տիսնայ Խանտիւթ խաթիւն բիբիկ, յիտևէն կը վազնը։
Է՛, էսքամ ժամանակ խանտիւթ խաթուն բիբիկ վուտ գի-
տըն չդրիր. մկայ բիբիկ, դաշտը մէջ կը վազնի, ստ յըմեն ըլիր է
էրուն. վուտ որ տեղ դնի, վուտաց տեղ լիք էրուն կըլնը։
Վուր Դաւիթ կը տիսնի, կը դառնայ վերայ։
288. Վուր Դաւիթ կը դառնայ վերայ, Խանտիւթ խաթիւն
կըսի.
— Դաւիթ, տնաշէն, քեանը՛մ ակն շիւտ կըռբկիս։
Դաւիթ կըսի։ — Ես Սասունայ քեօ յապեօվ էկի։
Էսքան ճանբախ ի՞ս էկի, խատայ քիւ մօտ։
Մէկ գիր[2] քիւ իրիս պագնի, ըպտ էն սիլէն գիւ ըծը զարկեցիր, հալպաթ կըռբկիմ։
289. Կըսի։ — Դաւի՞թ, գիւ ըմ՞ն չը՝ տիսիր, հալա գիւ ջհէլ ի՞ս։
Ես քի լսմա չըմ էնի, որ գիւ հալա չը՝ տիսիր։
Գիւ էն քեառասուն մարդ տըսաթ. որ իկիրէն տուն, նատիր էն։
— Հա՛, էսաց Դաւիթ, տըսայ։

---

1 Ինչպան։ 2 Անպամ։

290. Էսաց.—Շատիր կան մէկ տարը իմ տուն նստած ի.
Մէկն էլ էն մարդիրուց ըծը չը տըսիրի:
Դիւ գեալիւ բաշտան էկիր, սկի՛ բարիւ էլ չը տուիր.
Իս քի ըսի «նստի». դիւ ըծը անպատիւ էրիր,
Իմ խիտ խապար չառիր, չը տուիր,
Սկնայ զեօռով դիւ էկիր, իմ իրիս պագնիր.
Մարդ սկնայ բան չէնի,
Ախր դիւ տըսար, իս քի ձէն չը տուի,
Ո՛ր դիւ նստէր, խապար տէնք,
Ի՛ն էլ քիւ խուռք կը լսէր,
Դիւ էլ ըծը կը ճարպէր,
Մի խուռք մէկ կը ընէր,
Վուր իմ խուռք քի դիւր գէր,
Քեօ խուռք ըծը դիւր գէր,
Ցխօ, մէկ մէկը կառնենք:
Էն գեալ եան Խոյ կը նստէնք, եան կէրթէնք Սասուն:
Էսաց.—Բան չկայ, էլը խիծի ձին, տանիմ զքի Սասուն:
291. Էսաց.—Դաւի՛թ, ապա իս քի խուռքմ տամ, էլի տըռըկիս:
Էսաց.—Չէ՛, չըմ ըռըկի:
Էսաց.—Դիւ սկնայ ըծը բիբիկ, վուր ըծը առնիս, տանիս Սասուն. է՛, խալքիր ինչ տ՛ըսին.
Խալխ տըսին.—Դաւիթ գինաց, գաշտը մէջ յեթիմ մի գնտաւ, առըց էկաւ բիբիկ.
292. Էսաց.—Ապա ինչխ էնինք.
Էսաց.—Ախր ի՛ն էլ տան տէր իմ,
Դարձի էրթանք մի տուն, էրկու օր կը մնանք,
Ան էլ իմ հեօղ կէնիմ.—Ան էլ մէկ ձի կը խիծնիմ:
Յիւրտրիւ խիտ կը գառնան տուն,
Կը մնայ չիւր խը լիւսիւն:
293. Մըկէլ ինչ տըսնան.
Կը տիսնան Ադմու շահը շատ կուշում [1] ճամխիր Խանտիւթ խաթիւնի վերայ.—Խանտիւթ խաթիւն զեօռով քեշէք, բիրէք:
Խը լիւսիւն շիւտ թուզթմ կը բիրըն, «Խանտիւթ խաթիւն, կգեա՛ս, էրի՛, չգես, կուշում կգեայ, զքի զեօռով կը բիրի»:
294. Յեն տե Խանտիւթ խաթիւն կը գըրի.
—«Իս չըմ իգեայ, շա՛տ կտրըճ էք, իկէք, ըծը զեօռով տարէք»:

---

1 Թրք.=Զօրք:

Թուղթը կը դարձընի յետ. Խանտիւթ խաթիւն կրլնը ի՞նչ կէնի։

Մարդ կը ճամբեսի էն քեռասուն մարդու մօտ, կըսի.

—Ո՛ր կերթայ, կռիւ կէնի, իս պէն կառնիմ։

295. Էդա քեռասուն մարդ կըսին.

—Վրէ՞ մինք էրթանք, ո՛ր Խանտիւթ խանըմն ծիւց պառկիր ի, թը էն էրթայ կռիւ։

Էդա մարդ գառնայ կգեայ, Խանտիւթ խաթիւնըն կըսի. «Որ Խանտիւթ խաթիւնի ծիւց պառկիր ի, թը էն էրթայ»։

296. Դաւիթ կըսի —Ադէկ, իս տըլըմ, էրթամ։

—Դիւ մէրթար, իս տէրթամ, էսաց Խանտիւթ.

—Զէ՛, էսաց, իս տէրթամ, դիւ կնիկ իս։

Ամօթ չի՛ ըծը կեօրա, իս մնամ, դիւ էրթաս։

—Կերթաս գինա՛, էսաց.

Վուր քի ապանին, քիւ Ջանտակ գո՛ր գնտընիմ։

297. Զէ՛, խաչպատրաստին թիվի վերայ ի։

Սկնայ մուտ զանիս թղթի վերայ.

Էնու տեղն բայլու կէնի։

Դաւիթ թիվն կը բանայ յետ.

Կեօ՛, ինչպէս մէ խաչ թիվի վերայ։

298. Գինա՛, տըսայ, կըսի Խանտիւթ.

Կգեամ, կան կգեամ, գնտընիմ։

Դաւիթ կըսի.—Իս կերթամ.

Էդա քեռասուն մարդ խան դիւս ըդիւց.

Վուր կռիւ չէնին, վրէ՞ կանգնիր ին։

299. Խանտիւթ կգեայ էն քեռասուն մարդ խանի դիւս.

Դեալիւ բաշտան էն քեռասուն մարդն էլ կը կանգնին։

Խանտիւթ էլ դիւռ չը բանայ, խանի դիւս.

Փանճարի դիւռ կը բանայ, մէմէկ թիվքիր կը ըռնի, փանճարից կը շփռատի դիւս.

Ըզ ո՛ր կընկնի դետրն, կը մեռնի։

—Վա՛յ-վա՛յ, կըսի, էդա՛ մարդիր իկէրին, ըծը՛ տանին։

300. Խանտիւթ կգեայ.—Դաւի՛թ, կըսի. խանի դիւս։

Դաւիթ կգեայ, կրիշկի, խա՛, յեօդէն մարդ չկայ։

Խանտիւթ կըսի.—Դաւիթ, փանճարից ըրշկի։

Դաւիթ կրիշկի, ինչ փանճարից թլիր ի, ակուն տապկաց էր ի, մնացիր ի դետրն, յըմեն մեռած ի։

301. Դաւիթ յէն տե կը ծծզայ կըսի

—Փառք քի Աստուած, իմ կնիկ քան զի էլ կտրիճ ի։

Դաւիթ ձեռ կը թլի Խանտիւթի ձեռ, կը ըռնի։

Կըսի։—Դէ՛, մնացի բարեօվ։

— Էրթաս բարեօվ, Աստուած քիւ բան յաջողի։

302. Դաւիթ կգեայ զձին քեշի, Խանտիւթ կըսի.

—Վա՛յ, իմ մտէն գնացիր էր, Դաւթը ձին քէշիր էր դիւս. վուր Դաւիթ խէծնէր։

Յետիւ Դաւթըն կը վապի, կըսի.—Դաւի՛թ, Դաւի՛թ, կանգնը. իս գեամ, քիւ ձին քեշիմ դիւս։

Դաւիթ էն տե կը դադրը։

303. Խանտիւթ կը մտնի թաւէն[1], կը տըտնայ էնա քեռաուն ձին էլ փախած ի վրին քիւնճ, կծկըուած ի, չըն կշխընայ դիւս փախնըն.

Դաւթը ձին մէկ սարը կեօրա կեօ փայխը[2] մէջ կանգնիր ի. Խանտիւթ ձեռ թլից, ձիու վրկ տը բռնէր, քեշեր դիւս։

304. Զին ըրշկից, չճանչցաւ, վրկ չտուից, զգլեօխ սկնայ թլից, Խանտիւթ իրի, թռըփալին դպաւ գետին.

—Վա՛խ Դաւի՛թ, էսաց, քեօ ձին ըծը ոպանից։

Դաւիթ մտաւ ներս, զԽանտիւթ գրկից, էսաց.

—Է՛յ, ձին, Աստուած քեօ ֆէհմ կտռի. վրէ՞, մարդ կնկեան կը զարկի, դիւ չտրսար կնիկ էր. ախը իս դէաս[3] կանգնած էր։

Կըսի.—Խանտիւթ, ձեռ տո՛ւ, քեշի դիւս։

—Խա՛, կըսի, միտք ունիս ըծը քեօ ձիով տաս սպանիլ։

—Չէ՛, կըսի, ձին էլ ձէն չը տաը, քեշի դիւս. նա գտիր դիւ ուտաը էր։

Գինաց, ձեռ տուից ձիու գլեօխ, քեշից, ձին բան էլ չէրաւ, զին գրից վերայ։

Դաւիթ զինք զօլանքտիր քեշից, կապից, ըլաւ խիծաւ, գինաց կռիւ։

305. Գինաց, խասաւ կռուս մէջ։

Խանտիւթ միտք էրաց.—Ապա իս ինչ էնիմ.

Սկօն տղամարդու շուր խագեաւ, վուր սկի մարդ սկնայ շուր չը տրսիր էր։

Զին էլ քեշից դիւս, աղէկ զին ինդի վերէն, խիծաւ. յիւր թուր բռնից ձեռ. Դաւրթ ճամբխեով չգնաց, մէկ յիւրիշ կողմէ գինաց, խասաւ կօշումին։

306. Խանտիւթ կը տիսնայ զԴաւիթ, վուր ինչպէս մէկ անութի գէլ ընկնի մէջ գեառնիրուն, զգեառնիր մէ մէկ խեղդի թլի. էնպէս Դաւիթ ընկի էդա զօշումի մէջ, հրմա ճերկեով կը ջարդի, կդեայ։

Խանտիւթն ի, թամաշա կէնի։

Չէ՛, որ Դաւիթ ասկեաը կը ջարդի։

---

1 Թրք.=Գոմ։ 2 Թրք.=Ախոռ։ 3 Այստեղ։

307. Ըշկից տըսաւ զօշուն տը փախնի։

Էտևանց ըզինքն էլ գինաց, զինքն էլ մէկ եանէն ջարդից. ջարդից, դինաց, մօտացաւ Դաւթըն։

Էսաց. — Ես Դաւթը խիտ տը կռուիմ, տըսանանք Դաւիթ ինչ կտրըճ մարդ ի։

Զէ որ զատկեալ տըսաւ էն ձիաւուր. էնու յիւջիւէն փախան, որ փախնէր կընկնէր Խանտիւթը ձեռ. մէկ եանէն էլ էն կսպանէր։

308. Խանտիւթ մօտացաւ Դաւթըն։

Շատիր կէն շշկռէն Դաւթը վերէն կը փախնէն,

Շատիր կէն շշկռէն Խանտիւթը վերէն կը փախնէն։

Դաւիթն էլ փախնուղը կը գանի, կսպանի,

Խանդիւթն էլ փտխնուղը կը գանի, կ՚սպանի։

309. Դաւիթ էն տեխէն էկաւ, էդա ձիաւուր էն տեխէն,

Հա փախնուղն փախաւ, սպանուաղն էլ սպանուաւ։

Էդ Դաւիթ, էդ ձիաւուր գնացըն դախ[1] մէ մէկը. մէկ մէկը զարկին։

Էդա կնիկ ինչ շանուրդի էր։

Դաւիթ որ թուր սկնայ կը բիրէր, կնիկ զինք կը թլի Դաւթը իտև, Դաւթը թուր կը դպնը դեատին։

Էդա ձիաւուր թրը ըիրնեով չը դմշի[2] գարնի Դաւթըն, թրը քեամկով մէկ դարպ կը քեշի Դաւթը քեամակ։

Դաւիթ կը գվռի[3] վուր էնու տը զարկի մէկէլ եան. էլի կը գվռի քեամակ։

Զիւր կէս օրին սկնայ Խանտիւթ զԴաւիթն կը չարչարի։

310. Դաւթը ձին ապա չի նեղանայ, Խանտիւթը ձին քրաքնքի մէջ լուացուիր ի.

Խանտիւթ էն դեախ կը վախենայ, կը ըեօռա.

—Է՛, ձիաւուր, մարդութեն սկուն չի, վուր ձիով կռուըն. էդա մարիֆաթ ձիուն ի, քեօն չի, որ դիւ կտրըճ մարդ իս, իջնինք տակ, ձիանք թուղնընք. իս, դիւ կիւլաշ[4] կպնընք։

Կըսի. — Շատ աղէկ։ Կէջնեն տակ.

311. Էրկուս քեօշդըրա[4] կը բռնին, չիւր մութ կտայ. մէ մէկու կը տանին, բիրին։

Դաւիթ կըսի. — «Եա՛ Մաքութայ Բանձր Առապարծին, Խաչ պատրաստին վար իմ աջ թիվին», ասելու պէս զէն մարդ կը վիրցի քեամկը վերայ, կը դնի դեատին։

312. —Դաւի՛թ, կըսի էդա մարդ, ըծը մը սպանի։

---

1 Դէպի։ 2 Թրք.=Մեղքանալ։ 3 Պոռել, ժուռ գալ։ 4 Թրք.=Գօտեմարտ. կռոիվ պրծնել։

Կըսի.—Եա՛, էդա մարդ ինչ գտի իմ անուն Դաւիթ ի։

—Մարդ, դիւ ըծը կնքի՞ր, իմ անուն գտիս։

Էդա շիւշիւտ կը թլի, յիւր եախէն[1] կը բռնի, յիւր փուղ-պատ կը ճղի, դէսշ կիրիւայ,

Էրկու ծըծ կը թռնին դիւս,

Ձեռ կը թլի գլխին, գդակ մտակ կը բիրի տակ,

Էնու նմուշ էլ կիրիւայ։

Դաւիթ կրիշկի, կը տիսնայ Խանտիւթն ի, կըսի.

—Ասուած քեզ տուն աւըրի, դիւ ընչի ըծը էդքան չարչարանք տուըր։

313. Ցըն տե Խանտիւթ Դաւիթը կը պատմի։

—Դաւիթ, կըսի, էկաւ իմ խօր տուն, ըծը մէկ թագաւուրու տղը տարան. յեօդը մէջ ըծը դրըն, իմ մարդն էլ, էն էլ յէկաւ, յեօդի մէջ յիրարիւ հանաք էրընք. վուր սկօն ձեռ թլիմ, մարդի թիւ քեշիմ վուր բիրիմ, դնիմ իմ կշտը խիտ։ Համ մէջք կուտուաւ, համ թիւ ջարդաւ. մարդ ընկեաւ, մեռաւ։ Էն թագեաւուր էսաց.—Վա՛խ, էդ խարս մարդասպան ի։

Ըծը էդիւց մէ՛կ էլ ճամբխին։ Իս էկայ իմ խօր տուն. իմ աղբէրքիր իմ խիտ կռուան. «Վրէ՞ գինացիր, թագաւուրու տղէն սպանիր, զձը տնէն դիւս խանին. իմ խէր ըլաւ մէկ ձի տուրց ձը, մէկ խորճի ուսկը տուրն ըզձը, իմ խէր էսաց.—Իմ աղջիկ, գինա՛. քեզ գըլեօխ պախի, քիւ աղբէրքիր քի կոպանին։ Ան էլ էկայ էդա դաշտը մէջ իմ տուն շնի. իս ահտ[2] էրը, ըսի. «Որ կդեայ, իմ քեամակ կը դնի դետրն, իս զէն կառնիմ». յէոօր դի՛ւ էկար, զձը ըռաստ էկար, քիւ խիտ կռուայ. որ դիւ իմ քեամակ գրկիր գետրն, մկայ ըզձը դի՛ւր կը տանիս, տար. իս կդեամ քի խիտ։

314. Ըլան էկին տուն։

Էն մարդիրու քեառուն ձիանք էնտեղ ին։

Ինչ բան կէր Խանտիւթ խաթիւնը տուն յըմեն բառցին։

Վաթուն ձի էլ Խանտիւթըն կէր, էնու ձիանք էլ բառցին։

Խարիր ձին էլ բառցին, էկան դախ Սասուն։

Թ.

Բաայը Ճրէնկի։

315. Դաւիթը անուն շատ ջուջացաւ, ուր տնէն ըլաւ մէկ պատիկ թագաւուր։

---

1 Թրք.=Օձիք։ 2 Թրք.=Ուխտ, մտադրութիւն։

Ցեօվան ըլաւ, դինաց Դաւթը մօտ.
Ցեօվանի կնիկն էլ դինաց Խանտիւթ խաթիւնը մօտ, էսաց.
—Երթամ տիանիմ, վուր էսքան կը գեօվան, ինչպէս կնիկ ի. վուր Դաւիթ իբի։
Դինաց տըսաւ զԽանանիւթ, որ մէկ խօրմ՝ տ, ջիւջ կնիկ ի.
Սըրտ պատռաւ.—Էլ Դաւիթ ըծը չառնը, էսաց, ըլ բոշի։
316. Էկաւ տուն, ընկեաւ խըւանդ։
Իրիք օր խըւանդցաւ վերայ չուրսը մեռաւ։
Կնկայ կոկըծու Ցեօվան էլ մեռաւ։
Վ.ուր Ցեօվան մեռաւ, Դաւիթ շատ լացից.
Երկուան էլ տարաւ, պատարագով խուրից.
Էկաւ, միամիտ ուր տուն, նստաւ։
Մէկ տարը սկնայ ուր տուն նստիր ի.
Խապար չի ախշար ինչ կայ, ինչ չկայ։
317. Աճմու[1] շահն ի, ըլաւ թել տուից Բապը Ֆրէնկին.
Էսաց.—Մէկ մարդ Սասունայ էկաւ իմ խուղը մէջ.
Էդա մարդու անուն էլ Դաւիթ կրսին
Զիմ ասկեարն յըմեն ջարդից, ապանից.
Խանտիւթ խաթիւն կէր Խոյ քեազաք, շատ խօրսա էր.
Էդա մարդ զեօռեօվէն զԽանտիւթ առըց տարաւ։
318. Բարէ Ֆրէնկ էդա խուսքից հաւատարում չէրաց.
Կանչից, վազիր, վաքիլ ժողուի, իբի ուր գիւան,
—Շահու թուղթ, էսաց, կարդացէք,
Տիանանք, ինչ գրուկի ինե, ձի խիլք կը կտռի,
Մէկ մարդ, խարիր խազար մարդ կապանի։
Վ.ուր զթուղթ կարդացին, յըմեն էնտե ծծզացին,
—Սուտ բան ի. թագաւո՛ւր, վրէ՞ կաւատաս.
Մինք մէկ էլ չընք աւատաս. էդա ո՞ր լսիր, ո՞ր տիսիր ի։
Թագաւուրն էլ կը վիրցի.—Ջանըմ, թագաւո՛ւրն էլ սուտ կըսի։
319. —Աղէկ կըսին, մինք էլ գտինք սուտ չըսի.
Հապա խիլքի բան չի. որ սկօնի, մէկ թուղթ գրինք Սասուն,
Խարցում էնինք, սուտ ի թէ աղուրթ, էնքեախ կաւատանք։
320. Կըլնըն թուղթմ կը գրին Սասուն Դաւթըն։
—«Դաւիթ, մինք լսիրինք, դիւ զօռպա մարդմ ի։
Կգեաս էրի մի կռիւ։
Վ.ուր չրս իդեայ, ասկեար կը քեշիմ քիւ վերայ.
Քեօ երկիր քեարքեանդ կէնիմ.

---

1 Պարսիկ. անվարժ.

Ինչ կայ-չկայ թալնիմ, լսպկիմ բիրիմ։
321. Թուղթ տուրն, բիրին Սատուն, տուրն Դաւթըն.
Է՛, Դաւիթ չդիտի կարդալ։
Տանի Խանտիւթը նշանց կտայ թուղթ, կըսի.
—Խանտիւթ, էդա ի՞նչ թուղթ ի։
Խանտիւթ խաթիւն զթուղթ կը կարդայ, կըսի.
—Դաւի՛թ, էդա վո՞ւվ ի բիրի.
Կըսի.—Էրկու խատ մարդ։
Կըսի.—Տա՛ր էն էրկու մարդ յեօղէն.
Մի՛ կըտուր խիտքիր, ազէկ պատիւ էրա.
322. Դաւիթն էլ չը գտի ի՛նչ պտկաս ի,
Կը տանի, ազէկ պատիւ կէնի։
Կը մնայ չիր լիւսիւն.
Խանտիւթ թուղթ կը գրի.
—«Մինք քի գարար մը չը՛նք տուի, մինք քի չը՛նք ճանչնայ.
Մինք քի ինչ ինք էրի, վուր կգեաս մի վերայ կռիւ.
Մինք քիւ անուն չը՛նք լսի, քիւ տաւին մի խիտ ի՛նչ ի,
Մինք քի ինչ ինք էրի՛, վուր կգեաս մի վերայ կռիւ.
Վուր գիւ կգեա՛ս, մնակ մի՛ գեայ, չը՛ս կէրի Դաւթը վերայ։
Յիւրըշ թագաւուր էլ խիտ քի ըի մի վերայ,
Թը էն էլ գեայ, յեօգնի քի»։
323. Խանտիւթ զթուղթ կը ծալի, դնի փաքեթի մէջ։
Կըսի.—Դաւիթ, գինա էն էրկու մարդիւն ազէկ շուր խագցու.
Թուղթն էլ տու, տասը վուսկի էլ տու.
Էրկու ձի էլ տու, թը խիծնին, էրթան։
Սկօն ճամբխու կը դնի էդա մարդիր, կերթան։
324. Խանտիւթ Դաւթըն սկի քան չըսի. էդա ինչ թուղթ էր. էդա մարդիր զթուղթ կը տանին, կտան թագեաւուրին։
Թագեաւուր յիւր վազիր, վաքիլ կը ժողուի։
Զթուղթ կը կարդան, կը զարմանան, կըսին.
—Զիւր մկայ, հալայ շահու տակեարն ի ջարդի, մինք չընք ուստայ, մկայ կսի. «Էրկու թագեաւուր իկէք»։ Էդա ի՞նչպէս զօռպայ մարդ ի։
325. Կըսին.—Զինիմաչինայ թագեաւուրին էլ խապար տանք, գեայ, էրթանք Դաւթը վերայ կռիւ։
Վազիր, վաքիլ կըսին.—Թագեաւուր, ամութ չի.
Մինք Զինիմաչինայ թագեաւորն խապար տանք.
Էն ինչ ի. էրթանք մէկ մէկ մարդիւ վերայ կռիւ։
Թագեաւուր կըլնը շատ ասկեար կը ժողուի.

Քեանց աստղ էրկինք ասկեար կը ժողուի.
Թուղթ կը գրը, ճամբխի վար Դաւթըն.
—«Իս էկայ, մի կռիւ Մշու գաշտ տըլնը»։
326. Թուղթ կը բիրին, կտան Դաւթը ձեռ.
Դաւիթ թիւղթ կը վիրցի կտայ Խանտիւթըն.
Խանտիւթ խաթիւն ի, Դաւթըն կըսի.
—Էդա էրկու թիւղթ քիւ վերայ էրի.
Մէկ յառէջ, մէկ մկայ։
Իս գրի. «Դիւ էրկու թագեաւուր գէք, չըք կէրի Դաւթը վերայ։
Բալքու թագեաւուր վախենայ, չդեայ կռիւ.
Մկայ ասկեար առիր իկիր ի քեօ վերայ կռիւ.
Մշու գաշտ տըլնը կռիւ։
327. Դաւիթ կըսի.—Դիւ վրէ՞ ըծը շիւտ չըսէր,
Իս էրթէր, չթուզնէր Մշու գաշտ գէր։
—Իս չըր գտի տը գէն, թիւղթ էկաւ. իս քի խապար տուր։
—Դաւի՛թ, էսաց, կուզիս ինն էլ գեամ։
—Հա՛, էսաց, ասկեար ըծը թերի էրաց, դոր մնաց քի.
Դիւ տը գեաս, ի՛նչ էնիս.
Էն քեանիմ ասկեար իս չը՛մ կէրի կուտուռը։
328. Էլ Դաւիթ չը կանգնաւ.
Ըլաւ յիւր հեօղ էրաց, կռուը շուրիր խագեաւ,
Զին քեշից դիւս, զին դրից վերայ, խիծաւ.
Էսաց.—Խանտիւթ խաթիւն, մնացի բարեով։
Զըլնիմ, չիմանամ իմ յիտիւ գեաս,
Դիւ իմ յետիւ գեաս, իմ կնիկ չիս.
Աստուած օղորմած ի, մի վախենայ։
329. Դաւիթ ձին քշից տէրթէր,
Ապա Դաւիթ գտիր, Խանտիւթ խաթունին տղայ տըլնը.
Էսաց.—Խանտիւթ խաթիւն,
Վուր ըծը տղայ ըլաւ, անուն գնիս Մհեր.
Իմ պապկէ անուն գետրն չմնայ։
330. Դաւիթ ձին քշից, գնաց.
Գնաց Մշու գաշտ, ինչ տրսնայ,
Ասկեար յիռջև չատրքիր պարկած ի.
Հալա իտևէն ասկեար կգեայ։
331. Դաւիթ կրիշկի քեանց աստղ էրկինք ասկեար կգեայ.
Դաւիթն էլ էսքամ ժամանակ իկի տուն,
Տարին ղմացիր ի, կռիւ չէրի.
Բեօռաց.—«Եա՛ Մարութայ բանձր Ասպարածին,
Խաչ պատրաստին «վար իմ աջ թիւին»։

Համա քշից ատկեարը մէջ, ատկեար ոկուն կուտուրից,
Էլուն էզաւ, զՋանդակնիը քշի. կը ատանի։

332. Դաւիթ վուր էնու ատկեար կուտուրից, էն ատկեարի գլխաւորքիը թել տուքն ուրինց թագեաւորքն, թէ.—Էն մարդ զատկեար յըմեն ապանից, մի հատրին մարդ ճամբխի, մի յիմատատ[1] ճամբխի։

Թագեաւուր վուր լսից, զարմացաւ։

Լսաց.—Դարձէք յետ, կռիւ մինք էնը։

333. Ապա էնանք փախան, համա Դաւիթ ձեռ չը քեշի.
Ընկիը ի յիտիւքիը, կը կուտուրի.
Կանչի.—Է՛յ, կըսի, մի փախնէք, էլ չըմ ապանի.
Ը՛ծը ձի թագեաւուր նշանց տուէք։

Էնտե կատքն.—Գնա մի քեաղաք, էնտե մի թագեաւուր կը գնտընիս։

334. Դաւիթն էլ զձին քշի, կերթայ Բաքը Ֆրէնկի քեաղաք,
Մարդ կը ճամբխի.—Ասէք ձի թագեաւուրքն գեայ։
Թագեաւուրն ի, կըլնը, կգեայ.
Կը տինայ կեօ մէկ մարդ ձիու վերէն նատուկ ի.
Ակօն մարդ ոնչ անուն լսիր ի, ոնչ տիսիր ի.
Կը վախենայ, դառնայ վուր փախնի։

Դաւիթ ձին կը քշի վերայ, թագեաւուրն կը բռնի.
Կը զարկի, կապանի։
Մնացողը քեաղքը մէջ վուր մնացիր ի։

335. Դաւիթ էնանց խատար թագեաւուր կը գնի,
Զաթի ճիւշ մարդիր կապանի, պատիկներ տեղ կը դնի։
Կըսի.—Քեանի գիւ ժիր էք, կռիւ մինք էրթա։
Զիւր էդա քեաղաք մէկ մէկ ուր տեղ կը դնի,
Զիւր ճիւշ պատիկ կը ճանչնան,
Դաւթը չիւրա տարն կը թըմբմի։

336. Էնտե կը թամբխի[2].—Վ.ուր դիւ նեղ կընգնէք ը՛ծը թիւղթ գրէք, ճամբխէք, իս կգեամ։

Ապա էդա քեաղաք յըմեն Դաւթից կը վախանէն։

Կըսին.—Դաւիթ, չիւր մինք մեռնինք, քիւ խուսք տէնինք։
Դաւիթ կըլնը, կգեայ Սասուն։

Ժ.

337. Մի ատա, Դաւթը մի տղայ իլիր ի, չիւրա տարքն թամբմիր ի, մօր ասիր ի —«Ը՛ծը խէր չկայ»։—Ասիր ի «կայ»։—Ասիր ի. «Իմ խէր յի՞ր ի»։—Ասիր ի. «Գեացիր ի կռիւ»։

1 Թրք.=Ոգնուխին։ 2 Թրք.=Պատուիրել։

Դաւիթ կգեայ, կը խառնի Մշու գաշտ։

338. Մհեր ինչ ի էրիր. մոր մատէն գեօղուկ գնացիր,
մէկ ձի խիծիր վուր էրթայ, գխէր գնաքնի։

Մհերն ի, ձին կիւռ[1] կը քշի, էրթայ, խառնի խոր։

Կըսի. — Իմ խէր մնակ ի, խառնիմ իմ խոր, չգարկին, ապանին։

Կերթայ Մշու գաշտը կը խլացրցի։

Մէկ ճիւշ, անվէրի[2] ոտրը մէջ, մարդ չկայ, խալի ի[3]։

339. Կը տիտնայ մէկ ձիաւուր էգա ոտրից կգեայ,
Մհեր չը վախանայ, ձին կը քշի յառէջ.
Կերթայ խատ էգա ձիաւորը կռիւ կէնի.
Ապա վուր Դաւիթ խաշի անուն չատայ, չկէրի կռիւ էնի.
Դաւիթ կրնշկի, ասնայ մէկ խօրատ ազէ մի ձիուց կէջի,
Կըսի. — Էգա ազէն ղձը չը գալ,
Ռէֆահմ ի, խա զէն չըմ ապանի.
Էջնըմ, գա ազէն տը բռնըմ, ձիուքիր կապիմ,
Թլիմ ձիու թարկ, տանիմ Սասուն։

340. Դաւիթ կգեայ, ձեռ կը թլի, որ զազէն բռնի։

Մհեր Դաւթըն կը վիրցի, զարկի գեաքն.
Սկօն քեամկը վերայ կը զարկի։

Դաւիթ գտի ըզինք տապանի, կըսի.
—Կարքճ ազայ, գիւ ըզը տապանիս.
Պա գիւ իմ Մհերի ճուզաք ինչիս տը տաս։

341. Մհեր էն տե կըսի — Քիւ անուն ինչ ի.

Կըսի. — Իմ անուն Դաւիթ ի։

Կըսի. — Վուր գիւ Դաւիթն էր, գիւ գինը էր գեացիր։

Կըսի. — Գեացիր էր կռիւ խատ յիւրիշ թագեաւորի։

Կըսի. — Ապա վրէ՞ վրախաբ, էկիր։

Էսաց. — Զէ՛, չըմ վրախիր ի, էնու թագեաւորը ապանիր իմ։

Էսաց. — Որ գիւ Դաւիթն իս, քիւ տուն գինը ի։

Էսաց. — Իմ տուն Սասուն ի։

— Պա քիւ կնկեան անուն ինչ ի, քի տղայ իլիր ի, գիւ լսիր իս։

Էն գեախ Դաւթը ոբրան կառնի, էն գեախ կիմանայ,
Կըսի. — Խա, լսիր իմ։ — Անուն ինչ ի։

Էսաց. — Անուն Մհեր ի.

Էն գեախ կգուր, խոր ձեռքը կը պաղնի.
Ցիրարիւ վերայ կը խնդանան, կգեան Սասուն։

---

1 Թրք — Արագ։ 2 Ամայի, անբնակ։ 3 Խալի ընել — Անյայտանալ, կորչել։

ԺԱ.

342. Խանտիւթ խաթիւնը խէր լսիր ի, թէ Խանտիւթ գնացիր իրիկ էրիր, էնու տղայ իլիր, էնու իրիկ շատ կտրըճ ի։

Ցիւր տղէնիրուն կըսի.—Ելեցէք, գինացէք, ըրշկեցէք ձի քիւրուջ հալ ի՞նչ ի. մարդու խուռ կուրսըվի, իտիւ կան կգեայ, նա խօ ձի քիւրն ի։

343. Աղբէրքիր կը կանդնին, ուրինց հեօղ կէնին,
Կգեան Սատուն, քիւրուջ մօտ, եօթն աղբէրն էլ։
Խանտիւթ խաթիւն շատ կը խնդանայ.
Էրկու շաբաթ դատիւր չտայ որ էրթան.
Յըմեն օր, ատր կայ, Սիւ ատր, կերթան նէջիր կէնին։
344. Աւիւր մէկին Խանտիւթ կըսի Մհերին.
—Մհեր, դիւ էլ կէրի՞ս ապանիս վիրու ուխչար։
Մհեր կը ծծղայ.—Մարէ՛, կըսի, յըմեն օր իս կապանիմ.
Ապա, որ իս կապանիմ, իմ քեռիք հա կը պարկին։
—Մհեր, ուրդի՛, որ կապանիս, ա՛ռ, փախի էրի, իս աւտրնամ։
—Մարէ՛, կըսի, իս յէս օր մէ ջիւջ վէրու ուխչար բիրիմ։
345. Կըլնըն կերթան Սիվ ատր, քեռիք էն տե կը նատրն.
Մհեր կերթայ մէկ խատ ճիւշ վէրու ուխչար կը զարկի,
Որ կապանի, կառնի, կգեայ,
Քեռիք կիրիշկին Մհեր ուխչար առրց գինայ.
Կընկնին յիտևէն, կգեան, կը խատնին, կըսին.
—Մհե՛ր, դիւ մի շլկի, դիւ չրս կէրի։
Կըսի.—Ըծը բան չկայ ձի խիտ, իս կէրիմ շլկի։
Կէնին-չէնին չրն կէրի Մհերի ձեռնէն առնի։
346 Եօթն էլ զվէրու ուչխարը ձեռ կը թլին, վիրուն տփին գեարն։ Ապա քեռիքն էլ կըտրըճ մարդ ին։
Մհեր էլ կըռրկի կը հառատի,
Ձեռ կը թլի որ քեռու վոզպատին.
Համա մէմէկ կը տփի գեարն.
Որ կը տփի գեարն, չիւր մէջքը կը թազուր խուզր մէջ։
347. Զվէրու ուխչար կառնը, կգեայ տուն, կը տանը դնը մօր յառէջ։ Դաւիթն էլ քնիր ի։
Խանտիւթն էլ կըսի.—Դաւի՛թ, յըլի վի.
Կը խնդանայ, կըսի.—Դաւի՛թ, տե՛ս, Մհեր ի՞նչ վիր ու ուխչար մ՚է բիրիր։
348. Դաւիթ աչքիր կը բանայ կրիշկի, կը տիանի, մէկ զոռապա ուխչար մը ապանիր, բիրիր դրիր ի տան մէջ։

Կըսի.—Մահ՛ը, քիւ քեռիք յի՞ւր ին.
—Իս վէրու ուխչաը առը, էկայ տուն.
Իմ քեռիկ, ընկեան իմ իանէն էկին.
Էկինք, է՛, էս տե, քեաղքը գըլեօխ.
Միտ կէնին զվէրու ուխչաը ձընէ խլէն.
Իս ինչ էրիմ, ձընէ չդադարան,
Ինն էլ ամին մէկ մէ եան շվուտիմ.
Զվէրու ուխչաը տուամ էկամ տուն։
349. Դաւիթ էսաց.—Վա՜յ-վա՜յ, ձեռ զարկից չուքը վերայ,
Խանտիւթ, քիւ աղբէրքիը սպանիը ի։
Զէ՛, Դաւիթ զՄահը ճարպիր[1] ի, գտի, ինչքամ զախմ[2] ի.
Խանտիւթ չաւատաց.—Էդա ճիժ ինչդ իմ աղբէրքիը սպանի։
Դաւիթ կըլնը կը վազնի դէմ Մահըի քեռիք.
Խանտիւթն էլ Դաւթը խիտ կերթայ. որ կը մօտանայ, կըսի.—Դաւի՛թ, կեօ իմ աղբէրքիը կը ծծդան։
Զէ՛ որ Մահը զարկիը ի գետըն, զէարպեօվ ի,
Բերանքտիը բացուիը ի, ատամքտիը սպտակ կտան։
350. Խանտիւթ դըտի կը ծծդան. Դաւիթ շիւտ կը խատնի,
Ձեռ կը թիլը վուր խուզէն դիւռ քեշի.
Կը տիտնայ մեռուկ ի անիը,
Որ կը թըլի, տիտնայ, յըմեն էլ մեռուկ ի։
—Խանտիւթ, կըսի, շիւտ էրի, քիւ աղբէրքիը յըմեն մեռած ի։
Խանտիւթ կը խատնի, տիտնայ, աղբէրքիը յըմեն մեռած ի.
Ընդա կըլնըն կը դառնան տուն։
351. Դաւիթ կգեայ տուն, կը հառատի Մահըի վերայ.
Մէկ շամախ[3] կը զարկի Մահըը յիրսին, Մահըն ի, ձէն չտայ,
Մէ՛կ էլ կը զարկի, էլի ձէն չտայ Մահը։
Դաւիթ կըսի.—Իս իմ շամախ էրկըթէ թրին զարկէը,
Շուռ կառնէը, էդա տնաւիը ի՞նչքան զազմ ի.
Կը հառատի, մէկ շամախ էլ կը զարկի։
352. Մահը կըսի.—Խէրի՛կ, մէ՛կ քի խաթը, էրկուս քի խաթըը, իրիքին է՛լ ինչ խաթը։
Կըռըկի, ձեռ կը թիլի խէր.
Կը լառնը զխէրն, կը վիրցի զարկի գեաղն.
Խէր չիւ՝ մէջք կընկնը, կերթայ խուզը մէջ.
Դաւիթ կանիծի.—Վա՜յ Մահ՛ը,

---

1 Փորձել։ 2 Թրք=Ուժեղ։ 3 Թրք. Շամառ=Պատակ։

Աստուծուց կը խնդրեմ, դիւ անմախ ըլնըս.
Քիւ ժառանգ դիւս չըլնը.
Քիւ տեղն էլ քեռըը մէջ ըլնը.
Դիւ քիւ աչքեով ախշար չը տիսնաս.
Որ դիւ ախշար տիսնաս, ախշար տաւըիս։
353. Խանտիւթ կը տիսնայ Դաւիթ չուրցաւ.
Զեռ կտայ վուր զԴաւիթ խանի.
Տիսնայ, մէջք, յըմեն ուսկուր ջալդըուիր ի։
354. Խանտիւթ կը թուղնը զԴաւիթ, կըիշկի դախ Մհեր.
Մհերն էլ չկայ, Մհեր կուրսըուիր ի վերևէն.
Կըլնը զԴաւիթ խանի,
Կերթայ, մէկ մէկ զաղբէրքիր կը բիրի.
Տէրտէրքիր, իշխանքտիր կը բիրի,
Տեղ կտայ փուրիլ. յըմեն էլ կտայ խուրիլ.
Էդա Դաւթը վուսկիք կը խարճի.
Ազէկ ժամ, պատարագ էտե կէնի, զինքն էլ խաց չուտի.
Կըսի.—Աստուած քեռակի Սասուն։
355. Կըռըկի, գիւր ձին կը խիծնի.
Եալա՛, Խո՛յ, դիւր իս, էկայ քի խամար։
Սասուն էն աւիրն էր վուր աւիրուաւ։

ՉՈՉԱՆՑ ՏՈՒՆ

կամ

ՍԱՄՄԱՅ ԾՈՒԵՐ*

(Գեղեցիկ բարքաւ)

ՍԱՆԱՍԱՐ ԵՒ ԲԱՂՏԱՍԱՐ

Ա.

1. Կըլնի—չըլնի մի խայ թակեաւ որ կըլնի. տա մի ախչիկ ունի։ Էտ թակեաւորի ախչիկ շատ խօրօտ կըլնի։ Աջմուռ թակեաւորի տղայի աչք կինի Արևելից թակեաւորի ախչկան։ Աջմուռ թակեաւորն էլ շատ զօռբա կելնի խաբար կը ղրկի Արևելից թակեաւորի մօտ, որ քու ախչիկ տը տաս յըմ** տղին։

2. Մի էրկու տիր[1] խաբար տը ղրկի, կասի.—«Քիւ ախչիկ տու յըմ տղին»։ Էն էլ կասի. «Ես խայ եմ, տիւ ասցամ, ես յիմ ախչիկ չըմ ի տայ»։

3. Աջմուռ թեակեաւոր կասի.—Թէ քիւ ախչիկ չտաս եմ տղին, ձե[2] յմեն տը մորթեմ։

4. Ախչիկ որ տը լսայ, կը մտածի ինոր[3] վրէն, կասի.—Յիմ տարաբով էսա յմէն մարթ տը ոգանեն, ինանց տղեներ տը մընան յեթիմ, ձի[4] տանիծեն, վերչ զօռով ձի տը տանեն. աղէկն էն ա, որ ես յըմ կամքէօվ էրթամ, ձի չանիծեն. յըմ խօր թակեաւորութէն էլ գէնա[5] մնայ։

---

* Վէպս դրի առնող Տայր Ա.Թոռի դրաչար Յարութիւն Ա.ւչեանը չունէր ընդհանուր վերնագիր. իսկ մեր ընտրածի մասին խօսելիր կ'ունենանք յառաջաբանում։ Ս. Ա.ւչեանին այս վէպը պատմել է Գեղաշուտ Տեշոզ գիւղացի 25 տարեկան Եղիազար Յակոբեանը. վերջինս էլ լսել է Մեղանցի մի ծեր մանրավաճառից։ Ե. Յակոբեանը վէպս պատմելուց առաջ՝ մէկ–երկու տարի բանտը էր վաղարշապատում։

Ստեփան Կանայեանց.

** Այս վէպում յըմ. յիմ, յեմ ձեւերի մէջ ակզբնատառ յ-ն պէտք է հնչել գերմաներէն j-ի եւ մեր ե-ի նման իբրեւ մի վանկ։

1. Անգամ։ 2. Զեզ։ 3. Իր։ 4. Ինձ։ 5. Դարձեալ, կրկին։

5. Ախչին յէլաւ գնաց խօր գիւան, ասաց.—Բաբօ, ընչի՞ կը մտածես։

Էր պատասխան տուեց ինոր, ասաց.—Ես ինոր խամար կը մտածեմ, Աջմու թագեաւոր որ կեայ մեր թագեաւորութէն տ'առնի, զըմմէն տ'սպանի, կերի որ տանի։ Թէ յըմ ախչի՛կ տամ, էն աջամ ա, ես խայ էմ։

6. Ախչիկ ասաց.—Բաբօ, որ յաջամ որ կեայ, զըմմէն տսպանի յըմ սաքաբօվ, աղէկն էն ա, ես էրթա՛մ, թոխ մարթուպան չըլնի։ Բաբօ, ջուզաք տու աջմու թագեաւորին, կեայ ձի տանի. ես մինակ մեռնեմ աղէկ ա յըմ խօր, մօր, ախպօր թերէն[1]։

Էր չըր ուզի էտ պան. տեսաւ որ ճար չկայ, ջուաք յէօրէօխկեց աջմու թագեաւորի մօտ.—Արի քեզ խարս տաբ։ Զըր ուզի տէր, անճարաց խաւ։

7. Աջմու թագեաւոր էկաւ խարս տանի։

Ախչիկ կնաց խօր մօտ, ասաց.—Բաբօ, Աջմու թագեաւորին տա՛, ձի կը տանի, չոկ տեղ մի սարայ շինի, ձի տանի էնտեղ տնի. մէկ տարի մը[2] ձի չը կեայ, յըմ յերիս չը տեսնայ։

8.—Բաբօ, տիւ էլ մէկ վարթապետ տիր խը ձի, մէկ էլ խտամ[3], ես կերթամ. ես ինչ քեզ ասի, աջմու թագեաւորին ինթրի՛, որ նա էն պաներ կատարի։

9. Էրն էլ ախչկայ ասածը Աջմու թագեաւորին խնթրելով ասաց։ Էն էլ ուզեց էտ պան, իրան խարս տարաւ ուր քեաղաք, մէ չոկ սարայ շինեց, էնոնց խայ, կերակուր էօրէօխկեց էնտեղ։ Աջմու թագեաւորն էլ ասէր էր ինոնց, սարից տիւս չը կեաք։

10. Կէս տարի սարի մէջ մնացին, յետև ջուալ յէօրէօխկեցին թագեաւորի մօտ, թէ.—Մենք պռնաւոր ենք էտա տեղ, որ չես թողնի տանից տիւս կեանք։

Թագեաւոր ասաց.—Իրաւունք ունեն, տիւս կեան, կան կեան։

11. Տռնապաներ իրաւունք տուին, տիւս էկան կան կեաւ։ Թագեաւորի ախչին էլ ծով չէր տիսէ, թէ ինչ պան էր. կան էկան խաս ըախչի մէջ, տիւս էկաւ, տեսաւ Կապռա ծով։ Ծովի պռուկ չը տեսաւ. էտա ցեղ[4] մտածելով ծովու պերան վե կնաց. կնաց մի քարափ տեղ կայնեց, իրիշկեց, տեսաւ, որ ծովին ծէր չըկայ. նեղացաւ նստեց, ասաց։—Ա՛խ երանի մէ փշուր ճիւր կըլնէր։ Ես խմէի։

12. Մի քիչ էլ կան եկաւ։ քեարերի մէջ ճիւր չը տեսաւ.

---

1. Փոխարէն։ կողմից։ 2. Մօտ։ 3. Ադախին։ 4. Այդպէս։

լրիշկեց ծովի մէջ, տեսաւ մէկ ճոչ քեսրըմ կայ ծովու պառուկ, մէկ ուտակ ախպիւր էտ քեսրից կը թալի, ճիւրն էլ ինոր չորս պիւլէօր պռնիր էր. էնա ցեղ որ մարթ առանց խալաւ խանելիւ չէր կեանայ էրթայ էտ յախպիւր ճիւր խմի. ինք ուր շորեր խանեց կնաց էտ յախպիւր ճիւր խմեց, էկաւ: Ցետի յետի էկաւ ուր սարէն նստաւ:

13. Էտ վարթապետ խայի օրէնքի պէս ժամ կատէր, պատարաք կանէր, ախչկան սրվուրթէն կը տէր: Տարին լմընցաւ, էտ ախչկայ փորը մեծացաւ: Զուաք խասաւ ինոր կեսրէր թակեաւորին, որ քիւ խարս ազով ա:

14. Թակեաւոր կնաց տիւան նստեց, կանչեց վեզրին, թէ. —Զրս ասի, ըսկնա պան ի իլէ: Վեզիրն էլ ասաց.—Թակեաւոր ապրած կենաս, տիւ վարթապետ կը տանիս քիւ խարսաւ կուշտիւ չրս գիտի՛ վարթապետ էտա ցեզ պան կանի:

15. Թակեաւորն ասաց.—Վե՛զիր, ապա ի՞նչ անենք:

Վեզիր ասաց.—Էրկուան էլ ոպանենք: Հրամայեցին Ջալատին[1].—Կնա՛ էրկուսի վիզն էլ կտրի: Ջալատ կնաց սարէն, խարսի մօտ, ասաց.—Թակեաւոր հրաման արէ, ծէր վիզ տը կտրեմ:

16. Խարսը կասի.—Ծէր թակեաւորին տատատան չը կա՞յ, որ ազով կնկեան վիզ կտրել էրկու կաթլ[2] ա. թակեաւորին ասատատարէք, մինչև ես իմ տղէն պերեմ, էն ժամանակ սեռնանք էրեխայ ա, ի՞նչ ա, թող իմ վիզ կտրեն. ինանք էլ իմանան, թէ յըմ մեխկ ի՞նչ ա:

17. Ջալաթ կնաց թակեաւորի մօտ, ասաց.—Թակեաւոր ապրած կենայ, ծեր խարս էտա ցեզ ասաց ընձի:

18. Վեզիրներ ասին թակեաւորին.—Աղէկ ա ասէր, թոխմնայ, ինոր տղէն պիրի, էն ժամանակ վիզ կը կտրենք:

Ժամանակ տվին, մինչև ինոր տղէն պիրի:

19. Ինոր ժամանակ լմնցաւ, տղէնը պիրեց: Էրկու տղայ պիրեց, վարթապետ տղէներ կնքեց, մէկի անունը տրեց Սանասար, միւսին Բաղասար:

Խապար խասաւ թակեաւորին, որ քիւ խարս էրկու տղայ պիրեց:

20. Թակեաւոր ասաց.—Ջալատին ասէք, թող էրթայ էնանց վիզ կտրի: Ջալատ կնաց խարսի մօտ, ասաց.—Ծեր վիզը տը կտրեմ:

21. Խարս ասաց.—Ծեր թակեաւորին կանօն, նիզամ[3] չը կա՞յ, որ ծծմօր աղէք ի՞նչպէս կը շախէն, որ յըմ վիզ կը կտրեն.

---

1. Դահիճ. 2. Մարդասպանութիւն: 3. Արդարութիւն. խիղճ:

թոխ յըմ տղէք մեծանան, իմ վիզը թոխ կտրի. ես խօ էս տեղից չըմ կենայ փախի:

22. Ջալատ կնաց թակեաւորին ասաց: Թակեաւոր կանչեց վեզրին, ասաց.—Ի՞նչ խորհուրթ էր տաք էս պանի համար:

Վեզիրներ ասացին.—Տաս տարի ժամանակ ինոր, տղէք մեծանան, ինոր վիզ նոր կը կարենք. նա էս տեղից գո՞ր պիտի էրթայ, թոխ պանաւորի պէս նեղս մնան, սարից տիւս չը կեան:

Բ.

23. Լաճեր էլան խինգը տարեկան, լացին, որ մեզ տարէք տիւս: Լաճեր կեացին տիւս, ճժերի խետ խաղացին, տեսան Կապատ ծով, տպա չըն կի՛տի ինչ պան ա. վազեցին կեացին ծովի մօտ: Իրարու կատին, թէ էս ինչ աղէկ ցորենի արտ ա: Պռնաւոր են, տիւս չեն էկած, պան չեն տեսած. կեացին ծովու պերան, տեսան որ ճիւր ա. ծովի պերանով կեացին էտ քեարտին մօտեցան:

24. Սանատար ասաց.—Ա՛խպէր, տիւ կայնի էս տեղ, ես ծարաւ եմ, էրթամ էտա յախպիւր ճիւր խմեմ կեամ, դոր տիւ կնայ: Սանատար կնաց էտ ախպիւր, ճիւր խմաւ, էկաւ ախպօր մօտ:

25. Ախպեր տեսաւ Սանատարին, զարմացաւ, ասաց.—Ա՛խպէր, ի՞նչ էլաւ քեզ, որ տիւ էսքան ճոճացար:

Ասաց.—Տիւ է՛լ կնայ խմի արի՛, տիւ էլ ճոճանաս:

Բաղտասարն էլ կնաց էն ճրէն խմաւ, էկաւ ճոճացաւ: Պայց Բաղտասար շատ ծարաւ չէ՛ր, ախպօր կէտը խմեց, ախպօր կէս ուժ առեց:

26. Իրիկուն էկան տուն, մէր տեսաւ ինոր տղերքին, չըր ճանչնայ, խարցաց,—էտ ինչ էլաւ ծեր, որ էտա կիտա ճոճացար:

Սանատար ասաց.—Էն ծովի ախպրից ճիւր խմայնք, էտա կեաս ճոճացանք:

27. Մէկ օր էլ կեացին ծովի պերան կան կեալիս, խալիվոր մարթմ ըռատա էկաւ ինոց, ասաց.—Սանատար, արի ես քեզ տանեմ էս ծովու կղզին, էնտեղից քեզ կը տամ Թուր կեծակին, Փաւռկու Զալալին, Զին ու տատաֆին, Գուրզն ի Գօրոզին 2:

28. Սանատարն ախպօրը կատի.—Բա՛ղդասար, տիւ կայնի

---

1. Զափ. 2. «Գօրոզին»-ի տեղ պատմողը երբեմն «Սամուէլի» էլ էր ասում:

ըստա, ես կերթամ. թէ ես ծովի մէջ խեղտուայ, տիւ էս տեղ սաղ կը մնաս։

Բաղատասար կասի.—Ա՛խպէր, տի՛ւ կայնի էս տե, ես կէրթամ։

29. Խալիվոր կասի.—Տի՛ւ կաց ըստայ, Սանասար թոխ կեսայ խըտ ձի. նա վոժով ա, Գուրգն ու Գօրօզին կը պերի։ Խալիվոր կաւնի Սանասարին, կէրթայ ծովու կղզին. էնտեղ խալիվոր շանց կտայ Գուռկու Ջալալին, Թուր կեծակին, թամբ ատատֆին, Գուրգն ի Գօրօզին։

30. Սանասար կասի.—Պապի, էն կողմից որ էկայնք կղզին, զատ չըկար խըտ մէ, չը խթուայնք ճրի մէջ, ապա էս կողմից, էս ծանտը պաներով ի՞նչպէս պտի էրթայնք, որ չը խեխտուեյնք։ Խալիվոր ասաց.—Տիւ ծին խեծի, էտ կարծիքներ ատ։ ծեռ տու ձի, աչքերըտ խփի, Ատուած կանչի, ես քեզ կը տանեմ տիւտ։

31. Խալիվոր պերեց տիւտ, ախպոր մօտ։ Բաղատասարն խատաւ իւր ախպոր կըլէօխը պաչեց, ասաց.—Ա՛խպէր, քեանի որ տիւ կերէվեր, ես կիրիշկէի քեզ, եի տիւ չէրէվացիր, ես նստայ լացի։

Խալիվոր էտ տեղ անյայտացաւ։

32. Սանասար ասաց.—Ի՞նչ անենք, ախպէր, պերենք էս ծովի պերան, աւազի մէջ փորենք, էս ծին, էս պաներ խորենք էս տեղ։

Բաղատասար ասաց.—Լաւ, էս պաներ խորենք, պայց ծինը խորենք, կը խատնի. էս պաներ խորենք, ծինը տանենք։

Էտա պէս էլ արին։

33. Էկան թակեաւորի թաւլախանճիւ [1] տիւռ կայնան, թաւլախանապետ ինոնց խարցրեց.—Ա՛յ տղայ, ի՞նչ մարթ էք։

—Ինոնք ասին. «Խեղճ մարթ էնք»։

Թաւլախանապետ կասի.—Զէ՞ք ըլնի սէիս [2]։

Ասին.—կըլնենք, ա՛ղա։

Ասեց.—Կիտէ՞ք ծի թիմարէք։

Ասին.—խա՛։

34. Թաւլախանապետ տարա ինոնց թաւլէն, մինչև առաւօտ. առաւօտ էկաւ ասաց.—Վ.ե՞ր կացէք, ծիաներու տեղ շինէք։

Սանասար ցախաւել առեց, Բաղատասար թիակ. ծիանոց տեղ աւլեցին։ Աղէն ասաց.—Ծիաներն թիմարէք։

35. Սանասար ասաց.—Յո՞ւր ա քերոց։

Ասաց.—Էս յականատն ա։

---

1. Ախոռապետ։ 2. Զիրական։

Սանասար ձեռ տուեց, որին ձեռ տուեց, էն քերոցները ձեռաց մէջ էլաւ խաղ։

36. Աղէն կնաց քէսալարէն տաս խատ էլ առեց լպի։ Սանասար որը ձեռ առեց, ձեռաց մէջ էլաւ խաղ։ Կան էկաւ թաւլի մէջ, տեսաւ որ մէ ճաճ պղնձից շինուած քերոցի պէս մեծ մի պղինձ տրած էտ տեղ, փայինը դարտրկեց կետին, աղէնը կնաց։

37. Սանասար տռաւօտ էլաւ վե, ձիանց կեսրի խտաւ։ Էն պղինձը առեց ձեռ, ձիյեր թիմարի, որի քեամկի վերէն մէկ տիր պռտեց, կաշինը պլոկուեց, պերեց ուրից խանեց տիւս։

38. Զըմենին էտապէս արաց, ասաց.—Ա՛խպէր, կը տեսնաս, որը ես կը թիմրեմ, էնպէս ըռահաթ կը պարկի ինոր տեղ։ Բազտասարն ասաց.—Ախպէր, մեր ձին էլ թիմրի։

39. Ասաց.—Կերթամ մեր ձին էլ կը թիմրեմ։

Թիմարեց պրծաւ, էկաւ քնեցին։

Բազտասար ասաց.—Ա՛խպէր, էլի՛ կնայ, ձիաներ իրիշկի. աղէնը չի կեայ մե մլի[1] տիւս։

40. Սանասար կնաց ձիաներ իրիշկի, տեսաւ, որ զըմէն պարկեր էն իրա տեղ, իրար չէն առնի[2]։

Սանասար էկաւ ախպօրն ասեց.—Ախպեր, զըմէն պարկեր էն իրար չէն առնի, մինակ մեր ձին ա կայնէ, կեսրի կուտի։

41. Խըլրատուն[3] աղէն էկաւ, տեսաւ ձիյերը սաղ խատիր էն, կանչեց Սանասարին, ասաց.—Սա ի՞նչ ես արէ։

—Աղա, քերոցիր էմ։

—Ատուծ քիւ տուն աւրի. սաղ ապանիր էս ձիյանք։

—Աղա, խա ես քէ խիանաթ[4] չեմ. մեր ձին էլ քիւ ձիյերու պէս քերոցիր եմ. աղա՛, թէ չես ուզի՛, յըմ յէս աւուր հախ տաս, ես կերթամ։

42. Նա էլ կնաց թակեաւորին ասաց, թէ.—Էսպէս պամ ա լլէ. ի՞նչ անենք էս մարթկանց խետ, էս մարթերք ատարհար[5] էն։

Թակեաւորը ասաց.—Առաւօտ ինոր կօրօխկենք սար, վիշապի խետ կռիւ։ Էս քեաղաք ճիւր չրկայ. ամէն տարի մէկ ախճիկ կը տանք, էտ վիշապ ուտի, որ մեր քեաղաք չաւիրի. մենք էլ ինոր յախտու չենք կենայ էրթայ ճիւր պիրի մեզ խամար։

43. Սանասարին ասին.—Էս ախչիկ առէք տարէք, տուէք վիշապին ուտի, ինոր խետ կռուէք։

---

1 Արտաքսել, դուրս մղել։ 2 Զեն շարժուում։ 3. Հետ լուսուն=խետ լուսուն=խըլրատուն=Առաւօտեան։ 4 Թշնամի։ 5 Հակայ, յաղթանդամ, ուժեղ։

Սանասարը, Բաղատասարը ասին թակեաւորին.—Մենք ընչո՞վ էրթայնք կռիւ։

Թակեաւորը ասաց.—Տիւ կիտէր, թվայնքով ինոր խետ կըռուել չըլնի։

44. Սանասարը քեռպքի մէջ կան էկաւ, պատ չը աեսաւ, Բաղատասարին ասաց։—Ինչո՞վ էրթայնք կռի։ Էրթայնք էստեղ, էս ճոճ տան մէջ էրկու կլոր քեռը կայ, առնեյնք էրթայնք. էրկուսի մէջն էլ ծակ ա։ կը մտուցենք մեր թևքեր, ճանրախ չկարայ[1] կը շինենք, քեռշելով կերթայնք։

45. Ինոնք կեացին քեռրեր առին, քեռրերի տէրեր կեացին թակեաւորի մօտ կեանդեատ, թէ մենք էսքան փարա ծախսարինք, անջախ պիրինք էտ քեռրեր, իտոնք կը տանեն կը թալեն սար, էլ մենք չընք կեանայ պիրի։

46. Թակեաւոր ասաց.—Որ տանէք, էլ կը պերէ՞ք։

Ասին.—Թակեաւոր, կը տանենք, կը պերենք։

47. Ինոնք առին ախչրկան ու քեռրեր չկարայ խմելով կեացին. խատան սարի կէօխ. էն տեղ, որ ախչրկան կը կապեն, կասէն,—Կայնի ըստայ, մենք կերթանք, մէկ վիշապի վերև կը կայնենք, մէկը ներքև։

Ախչիկը մտածեց էս տեղ, թէ ես թողնեմ կը փախնեմ, թող վիշապ ինոնց ուտի։

48. Տեսան, որ ախչիկը կը փախի, վիշապը չի կեայ, ախչրկան պռնեցին կապեցին։ Սանասար ասաց.—Ես ճամխի ներքև կայնեմ, տիւ վերև, ես կը վախեմ, որ վերև կայնեմ, քեռը զանեմ, տիւ յըմ քեռը չը կենայ պռնի. ես կը կայնեմ ներքև, տիւ վերև, համա մուղիյաթ կաց[2]. քեռրերը չէրթան ծորի մէջ, կուրիսեն։

Ասաց.—Նա՛ լաւ, ախպէր։

49. Մէկ էլ տեսան, որ գըռոց ինգեաւ սարը. իրիշկացին, տեսան, մէկ ճոճ ջանաւար էկաւ. մի կէօմշի չափ պանցը, խինգ կէօմշի չապ էրկէն. էկաւ խատաւ ինոնց մօտ։ Բաղատասար քեռրըմ էզար, քեռրը պռնեց ջանաւարին չիցկեց. կանչեց ախպօր. «Ցըմ քեռը պռնի»։ Սանասար էզար ջանաւարի մէ կող կոտրեց. քեռրը չը կնայ ախպօր մօտ։ Մօտխացան քեռրերով կէօխ ճարտեցին, քեռրերը առին, էկան ախչկայ մօտ. արցկրիցին ախչրկան։

50. Բաղատասար ասաց.—Քեռրեր թալենք էնա ծոր, էրթայնք։ Սանասար ասաց.— Ա՛խպէր, խայեր մեխք էն, չըն կե՞-

---

1. Ծխաքաշ, ծխամորճ, ղալյան։ 2. Պահպանել. զգոյշ կենալ։

նայ քեռը պիրի, տանեցնք տայնք ինոնց։ Քեռերը առին, ախչըկայ խետ էկան տուն։

Ախչիկը ասաց ինոր խօր, ինչ որ տեսաւ։

51. Թակեաւորը կանչեց ասաց.—Տըղէք, էն քեռերը պիրինը։

Առին.—խա։

—Ձուր ա էն քեռերը։

—Տիւռը տրեր էնք, Թոխ ինոնց տէրերը կեան տանին, տեղը տնեն, մենք ինոնց տեղ չընք կիտի։ Ձուր ըստայ պիրիր էյնք, դօր[1] Թոխ ինոնք տանեն։

52. Թակեաւոր ասաց.—Ինոնք չըն կենայ տանի ներս։

Առին.—Բա առաչ ինչպէս էն տարեր ներս։

Ասացին.—Առաչ կէօմէշներ, ծիեր լծեր էն, էտ քեռերը պիրիր էն ինոնց տեղ, նորը ծիթխատ շինիր էն։

53. Սանատար ասաց.—Թոխ կեան խրտ ձի, տուներ պանան, տեղերը շանց տան, ես քեռերը կը տանեմ, տեղերը կը տնեմ։

Տէրերը կնացին Սանատարի խետ, շանց տուին քեռերի տեղ. Սանատար քեռերը տեղ տրեց, տուռցաւ, էկաւ Թակեաւորի մօտ։

54. Թակեաւոր ասաց —Սանատար, ասա, ինչ կուզես տամ քե։

Սանատար ասաց.—Պամ չըմ ուզի։

Թակեաւոր իրեք անքամ խարցնեց. «Ի՞նչ կուզես տամ»։

Սանատար պամ չուզեց Թակեաւորից։

55. Թակեաւորն ասաց.—Որ պամ չըս ուզի, ախչից չըխս[2] քեօն ա, արի քէ փատակեմ։

Սանատար ասաց.—Ես մկայ վախտ չունեմ փատակուել։

56. Էտ տեղից Սանատար, Բաղատասար կաց պարով արին, էկան Աջամ Թակեաւորի քեռդաք։ Ճանքախ Սանատար ասաց Բաղատասարին.—Ա՛խպէր, էն խալիւոր մարթ, որ էկաւ էն կլոր քեռը, էն քէթը[3] պան, էն ոսկէ պան իտու մե, մէյնք չընք կիտի էտ ինչ պան ա. մուռցայնք, չը խարցնեցինք, թէ իտանք ընչի՞ խամար ա։

57. Էտա ցեղ կը մտածեն ճանքախ. մէկ էլ տեսան մէկ խալիւոր մարթմ էնոնց առչև կէրթայ։ Խատան էտ մարտիւն։ Սանատար ասաց.—Ա՛խպէր, էտ էն խալիւորն ա։ Բաղատասար ասաց.—Ես չըմ ճանչընայ. կայնի, թէ էն ա, մեզ կը խարցնի, մենք էլ ինոր կը խարցնենք, թէ էտա պաներ ընչի՞ խամար ա։

58 Խատան խալիւորին, խալիւոր ասաց։—Ա՛յ տղէ՛ք, ընչի՞ կը մտածէք էտքան խոր։

---

1. Այժմ էլ։ 2. Արդեն։ 3. Կեռ, թեք։

Անտասը ասաց։ — Պապի, տիւ չէ՞ր էտ պանեը տուլը մե։

Ասաց։ — Խա՛, որտի։

— Պապի, ապա էտ պանեը ընչի՞ համար ա, որ տիւ տուլը ես մե. մենք խորեր էնք աւաղի մէջ։ Էն քէթը պանի անուն ի՞նչ ա։

59 — Որտի, էն քէթը, թուր Կեծակին ա։

— Ապա էն ի՞նչ կանեն։

— Էնի երբի էթան կռիւ անեն, կը կապեն ինանց վերէն, կերթան կռիւ։

60. Լա՛ւ, պապի, էն կլոր պա՞ն ինչ ա։

— Էնի Գուրզն ու Գօրօզին ա։

— Էն ի՞նչ կանեն։

— Էն էլ ոժով մարթեր կառնեն, կէրթան կռիւ, կը զանեն իրարու, կըսպանեն, կը զանեն պերթեր կաւիրեն։

61 — Ապա էն սրվտակ ոսկոռն ինչ ա։

— Էն էլ զէն ա, կը տնես Քուռկու Ջալալի վերէն, կը խեծնես։ Ո՛րտի, ես քեզ էլ պան կը տամ, երբի ամբեր կը մրթնեն, տիւ իմանաք, որ նեղ տեղ էք, էտա ցեղ իրարու հընդատ[1] կը խանի՛ք, ասաց, է ս կառեմ։ Պապինը անյայտացաւ։

62. Կեսցին Աջմու թակեաւորի քաղաք, մտան ինանց մօտ սարէն, տասը տարին լմընցաւ թակեաւոր օրօխկեց ջանլաթներ, էնանց վիզ կտրեն։ Մէրը էլաց, վարթապետին ասաց։ — Իլի՛ պատարաքմ արա, մեզ արիւթիւն տու, որ թակեաւոր մեր վիզն ալ կտրի յէս օր։

63. Վարթապետ պատարաք արեց, արիւթիւն առին, ջալատներ էկան։ Սանտասը, Բաղտասար նատած քիւրսիներու վերէն, կասեն, կը ծծդան. մէրը կը լայ։

Ներա մտան ջալատներ, ասաց։ — Ցէս օր ծեր վիզը ալ կտրեյնք։

64. Մէր ասաց։ — Մեր վիզը կտրէք, պայց յըմ տղէներին ծեռ կէրթա՞յ, որ վիզը կտրէք։

Ջալատի մէկը ասաց։ — Մեր ծեռն էլ չէրթայ վըր քիւ տղէներին, ապա ի՞նչ անեյնք, թակեաւոր ասէ, որ ալ կտրեյնք։

65. Մէրը լալէօվ ասաց։ — Ինչըմ յեսի զրիւցէք, յըմ տղէներ չը վախենան. մէ քիչ թոխ ծծդան, տիւ էլ նատէք, ըռա՜հաթէք։

— Չէ՛, ասաց, մե իրաւիւնք չը կայ նատել. շուտ արէք, էրթանք տիւս, թէ չէ, է ս տեղ ծեր վիզ կը կտրենք, արուն կը

---

1. Օգ ունին։

թափի սարի մէջ։ Բէօռաց, ասաց. «Նի՛ւտ արէք»։ Ինչ ընկեաւ Սանասարի ականջ, տիւռ պաց ալեց, սեռաւ մէկ քեանի մարթ թուրերով կայներ էն սարի մէջ։

66. Ասաց.—Ի՞նչ մարթ էք։

Մէրը ծածուկ աղաչեց ու ասաց.—Ցըմ աղէներին չասէք, թէ էկիր էնք, ծեր վիզ տը կտրեյնք։ Ցըմ տղէներ տանից տիւս խանենք, Ջալատըմ կայնի էն կոզ, մէկ էն կոզ, զանեն յըմ աղի վիզն թռուցեն, որ նա չը տեսնայ, վախենայ։ Ապա առաչ ձի ըսպանեյք, նոր յըմ տղերք։

67. Ջալատն ասաց.—Դէ՛, իլի էրթանք, ալուն չը թափի սարի մէջ։

Սանասար ասաց.—Մարէ, զո՞ր ա՝էրթայք։

—Մէյհ տ՝էրթայնք տիւս, տ՝իկեայնք։

68. —Մարէ ձի ասա, չուր յէս օր տիւ պանաւոր էր, յէս օր մէկ պան կա՛յ, որ քեզ կը տանեն։

Մէրը չուզեց ասել։ Սանասարը չը թողեց էրթայ, ասաց. «Մէ պան կայ ըստայ, որ ձի չը ա տի»։

69. Մօրը սրտին տիպաւ, ասաց.—Ո՛րտի, որ ըռաստ[1] կուզես, իսոնք թակեաւոր յիւրօխկէ, որ մեր վիզ կտրեն։

Ասաց.—Կտրող վո՞վ ա։

—Էս Ջալատներ.

Մօտխացաւ Ջալատին, բէօռալէօվ ասաց.—Տի՛ւ յիմ վիզ տը կտրես։

Ջալատ ասաց.—Թակեաւոր ի հրաման տուած, որ ծեր վիզ տը կտրեմ։

70. Սանասար մէկ սիլայ[2] կպցրեց Ջալատի երեսին, կլէօխը թռաւ, ջանատակ մնաց կայնուկ. մէկելներ որ տեսան, թողին փախան, կեացին թակեաւորին ասին.—Փիւ թոռ մէ սիլայ էզար Ջալատին, կլէօխ թռաւ։

Թակեաւոր ասկեար[3] յէօրէօխկեց ինոնց վերէն կռիւ։

71. Սանասար տեսաւ, որ ասկեար էկաւ կռիւ անելու, ասաց.—Ա՛խպէր, մեյնք ընչո՞վ կռուեյնք։

Բաղատասար ասաց.—Զէ՛ պապին կռիւ անելու պան տուեց մե։

Ասաց.—Ախպէր ինոր անուններ մեր մտէն կեացէ։

—Սանասար, չէ՛ տիւ կրեր էս։ Պե կարտայ, ինոր անուններ չը մոռնանք։

72. Սանասար ասաց —Ախպէր, տի՛ւ իլի, քիչ կռիւ արա՛,

---

1. Հշմարիտն։ 2. Ապտակ։ 3. Զօրք։

ես ծի խեծնեմ էրթամ էն ծովու պերան, էն պաներ առնեմ, կեամ կռիւ անեյնք։

Սանասար ծին խեծաւ, կնաց ծովի պերան, էն պաներ պերելու. մէրը տեսաւ էտ ասքարները, էլաց, մուաւ ասէն, տեսաւ Բաղտասարին մէնակ, ասաց ինոր մակի մէջ, Սանասար փախէ. էկան մե տը մութեն։

73. Բաղտասար ասաց.—Մարէ ընչի՞ կը լաս։

—Ես կը լամ, շատ ասքեար էկան, Սանասար թողէ փախէ։

Ասաց.—Մարէ, չի՛ փախէ, տիւ մի՛ վախենա։

Բաղտասար էլաւ, մինչև իրիկուն կայնեց կռիւ։ Իրիկուն քնաւ, ախպէրն էկաւ, տիւռ ծեծեց, պաց արին, էկաւ քընաւ. խլբասուն խեծաւ քուռկու Զալալին, կապեց սատաֆէ զին, առեց թուրն ու կեծակին, գուրզն ու գօրօզին, կնաց կռիւ։ Մինչև իրիկուն ասքեարների կէսը սպանեց, խլբասուն Բաղտասարն առեց էտ զէնքեր, կնաց կռիւ։ Մինչև կէսօրին կռուեց, կռիւ փայտոսա[1] արին, Բաղտասար էկա տուն։

74. Մէկել օր, մարթ չէկաւ կռիւ։

Թակեաւոր ասաց թաբիւր[2] աղասուն.—Կնա կռիւ։

Թաբիւր աղասին ասաց.—Փա՛թշահ, մեյնք չընք կէա՛նայ վրր ինոր. քիւ թակեաւորութէն կը փճացնեն. աղէյն է՛ն ա, չէրթանք կռիւ, մեր ասքեարն էլ չրսպանուեն։

Թակեաւոր մտածեց, տեսաւ որ չարա չը կայ, կռիւ ինոր փնաս ա, ասաց.—Կարծ չիւնենք ինոնց խետ։

Գ.

75. Սանասարի քաչուութիւն ընկաւ էտա պէօլէօր երկիր։ Խապար խասաւ Զինըմաչինայ թակեաւորի ախչկան՝ քեռուուն ճոզ ծամին՝ Գէօհար խանըմին։ Էտ թակեաւորն էտ ախչիկն էր, մարթ չըկար ինոր։ Էտ Գէօհար խանըմին քեռատուն խատ փալիվան կէր. էտ Գէօհար խանըմ մէկ թուխտ կրեց իտու փալիվանին, ասաց.—Տար Ալմու թակեաւորի քեռաղաք, տու Սանասարին։

76. Փալիվանը իպի տարաւ սարի մէջ, կայնեց Սանասարի, Բաղտասարի կըլխի վերէն, իրիշկաց, էրկուան էլ քնած էն. չիմացաւ որն էր Սանասար, տրեց Բաղտասարի կըլխի պարցի տակ։ Էլան շօրերը խակեան, Բաղտասարը տեսաւ թուխտըմ կայ պարցի տակ, առեց կարտաց։

---

1. Վերջացնել, կատարել։ 2. Հրամանատար. խմբապետ։

77. Թղթի մէջ կրած. «Զինքմաչինա թակեաւոր Գէօհար խանը-նըմից. Նատ պարև Սանասարին, Բաղտասարին, Սանասարին»։

Բաղտասարն ասաց.—Էս ի՞նչ պան ա. էրկու տիր պարև կիրէ Սանասարին, մէկ տիր ձի։ Լա՜. Սանասար ճոճ ախպէրն ա. յատաչ ինոր ա կիրէ. էն լաւ ա. ինչո՞ւ ա էրկու տիր կրէ ինոր։

78. Սանասար տուց էկաւ, պարև տուեց. Բաղտասար չառեց, ասաց.—Ախպէր, ընչի՞ էս նեղացե։

Ասաց.—Ապա, ինչի՞ Զինքմաչինայ թակեաւոր, Գէօհար խանը-նըմ, էրկու տիր պարև կիրէ քե, մէկ տիր՝ ձի։

79. Ասաց.—Ախպէր, քա՛ ինչ անեմ, էն ա կրէ։

—Չէ, ասաց. ես, տիւ տը կուտենք։

—Ընչի՞ կուտենք, մէ տարտակ պարևի համար։

Ասաց.—Խա՛, կուտենք։

80. Ասաց.—Ախպէր, ես չըմ զանի քև, տիւ զանի ձիկ բապանի։

Ինչքան ասաց, հնարք չիկաւ ախպօր խեատ. ասաց.—Էրթանք էն չիման տեղ, մէ քիչ խաղամ խեատ, ինոր սիրտ իչնի, կը կեանք տուն։

81. Գուրպ առին, կեացին. Սանասար կայնեց նշանտաշի կլէօխ. Բաղտասար գուրպ առեց, էզար. որտից էզար Սանասարին, որ բապանի. գուրպը կընաց կլխու վերէն. Սանասար պռնեց գուրպ, յետի էթալ չը խատուց ախպօր մօտ. ախպէր առեց՝ մէկ էլ էզար։

82. Սանասար էլ մ՝ էլ պռնեց, մէկ էլ էթալ, վոժի կեաղ չիմացաւ, գուրպը էթալ, տիպաւ ախպօր մէկ ոտաց. խելք կընաց, ընկեաւ էտա տեղ։

83. Սանասար շլկեց ախպօր, պերեց էթալ տուն, նատաւ չուր լոս էլաց։

Լոս պացուաւ, ախպօրը ուշկ էկաւ վերէն, վերկացաւ նատեց։

Սանասար ասաց.—Ախպէր, էտ ի՞նչ էլաւ, տիւ էտա ցեղ էլար։

Ասաց.—Ոտս ցաւաց, իմ խելք կնաց։

84. Սանասար ասաց.—Ախպէր, տիւ կաց ըստայ, ես կէրթամ էտ շան մօտ։ Կաց պարէօվ արաց, կընաց։ Կընաց, շատ քիչ Ատուած կիտի, մէկ էլ Զինքմաչինայ թակեաւորի խող տիւս էկաւ, տեսաւ մէկ խովիւ։

85. Մի ասի, էտա խովիւ էտ թակեաւորի խովիւն ա. էտ խովիւն էլ փալէվանեբից մէկն ա։

Էտ խովիւ կանչեց, Սանասարին ասաց.—Դո՞ր կերթաս։

Ասաց.—Կէրթամ Զինքմաչինայ թակեաւորի քեռդաք։

Ասաց խովիւ.—Աբի նոտի ըստայ, կաթմ կթեմ կի, նոր էլի կընայ։

Ասաց.—Չէ՛, ես վռազն եմ, ես կէրթամ։

86. Խովիւ ասաց.—Էս տեղէն էրթացող ելաջ չը կայ, անկաթ ուտել չըմ թողնի էրթայ։ Զէօռէօվ նստացուց. մէկ ճոճ տաշտըմ կար ինոր խէտ, որ չորս մարթ կլէօղկներ մէջն, էտ տաշտը հըլին[1] կաթ արաց, իտի[2] Սանատարի առաչև խացի խետ։ Էտ խովրվու միտկն էլ ի՛նչ ա՝ կուզի ջուրի[3] խըլլին, տեսանք ինանց ոժ քեանի՛մ ա։ Էտ կաթ ուտելով՝ էն կը խատկընայ ինանց ոժեր քեանիմ ա։ Ով որ էտ ճամխով կերթայ, էտ խովիւ էտա ցեղ կանի, ապա կը թողնի կերթան Գէօհար խանըմի մօտ. էն տեղ փալիվաներ արանց կըսպանեն, կլէօխ կը կտրէն, կանեն պերթ։

87. Խովիւ տաշտ հլին կաթ որ իտի Սանատարի առաչ ուտելու, գինք կընաց ոչխարի պիւլէօր կան կեալ։ Մէկ փաթ կան էկաւ, Սանատար բէօռաց.—Խովի՛ւ, արի քիւ կօտ վուրու, կաց պարօվ։ Ես տէրթամ։ Խովիւ էկաւ, որ տեսաւ Սանատար կաթ կկրէ, կօտ կործէ, իրը տեղ տէօզաց, ասաց.—Սանատար, կընայ պարօվ, մի՛ վախենա՛. դոր էրթաս մարթ քե չի՛ յաղթի։

88. Սանատար կընաց, խատաւ թակեաւորի տարին։ քեռաւն փալիվաներ էկան, որ վիզ տը կտրեն։

Սանատար ինոր մտկի մէջ ասաց.—Իսայնք էկան յըմ վիզ տը կտրեն. ապա ես ի՛նչ անեմ։

89. Ես յըմ ծին չը պիրի, յըմ գուրդ չը պիրի, ընչով կռիւ անեմ իսայնց խետ. թուրը մինակ պիրի։ Թուրը քեաշեց, մայտան կայնաւ։ Փալիվաներ էկան չորս պատտ պռնեցին։ Գէօհար խանըմ փանջարէն կայնէ, թամաշայ կանի։ Թուրը էգաբ փալիվաներին, վիզ կտրեց. փալիվաներ չըն կեո՛նայ ինոր մօտխընայ։

90. Մինչև իրիկուն կռուան, քոան փալիվան ըսպանեց. կիշերն էլ փալիվաներ կռիւ արին, ասին.—Կը մթնի, մենք կը զանենք ինոր կըսպանենք, կիշեր մութն ա։ Զուր խըլլըսուն տատ փալիվան էլ ըսպանեց։ Խըլլըսուանից մինչև իրիկուն կռիւ արին, խինդ էլ ըսպանեց։ Էշեր ինգեաւ չորս պիւլոր, չիմանի վերէն, արուանը կայնեց մէջտեղ։

91. Սանատար մնաց արնի մէջ. արուն Սանատարին պռնեց։ Էլ ոչ Սանատար կէրցաւ արընից տիւռ կեայ, ոչ փալիվաներ կերցան Սանատարին ապանել։ Մնացին խինդ փալիվան, չորս պիւլէօր կան կիկեան, չընկըխշնա[4] մօտխընայ Սանատարին։

Կռիւ էտա ցեղ մնաց։

---

1. Լիքը լցրած։ 2. Դրեց։ 3. Փորձել։ 4. Համարձակուել։

92. Տառնայնք Բաղատասար ախպօր վրէն։

Բաղատասար էլաւ տիւռ, տեսաւ ամբը մթներ ա. էկաւ տուն, ասաց.—Մարէ, ես տէրթամ, ըմ ախպէր նէղ տեղն ա. կամ կըսպանեն, կամ կը մեռնի։

Ասաց.—Տիւ ի՞նչըխ կլիսիս։

Ասաց.—Մէ խալխիսը մարթմ մե շանց[1] իտու, ասաց.—Եփ էս ամբը կը մթնի, տիւ էրկու ախպէր որ մէկ տեղ չէք ըլնի, իմացէք, որ մէկը նէղ տեղն ա. իրարու ընդատ խատէք։ Ես կէրթամ մարէ։

93. Մէրը ասաց.—Կընա՛, տես, քեզ ախպէր ծին, գուրզ, պան տարէ՞։

Կընաց իրիշկաց, էկաւ ասաց.—Մարէ, մէնակ թուրն ա տարէ, ես շուտ տէրթամ, մկայ ըմ ախպէր մեռե։

94. Ծին խեծաւ, մուցաւ, խաց էլ չը կերաւ։ Կընաց էն տարի մէջ, էն ժամանակ խովիւ իրիշկաց, տեսաւ, մէկ ծիաւոր էնպէս կը կեայ՝ քեռմու պէս, ասաց.—Կա՛յ, չըկայ էս Սանասարի ախպերն ա։ Կընաց առջև, ասաց.—Ծիաւոր, արի կաթմ կթեմ կի, նատի ըռըհաթի, չկարէմ՝ խմեյնք, իլի կընա։

95. Բաղտասար ասաց.—Սատանա՞յ ես տիւ. ըմ ախպէր մկայ մեռե՛, տիւ կասես, արի կաթ կի. ես կէրթամ։

Խովիւ ասաց.—Հնա՛ր չըկայ, չուր կաթ չուտես, չըմ թողայ ըս տեղէվ էրթաս. իլաջ չըկայ։

96. Բաղատասար տեսաւ, որ էտեղ կռիւ կըլնի, նստաւ։ Խովիւ էտ կոտը հլին կաթ կթեց, խացի խետ իտի Բաղտասարի առջև, զինք կընաց ոչխարի պիւլէօր կան կեալ։ Եօթ վաթ կան էկաւ ոչխարի պիւլէօր, նոր Բաղտասար էտ կաթը կերաւ, կոտը կործեց, կանչեց.—Խո՛վիւ, արի՛, կոտ վուրու, ես կէրթամ։

97. Խովիւ էկաւ Բաղտասարին ասաց.—Բաղտասար, քեզ ախպէր եօթ քիւ չափ ուժ ունի. նրան չըլնեմ խակտաւ կանես. կընա, քեզ ախպէր երեսուն խինդ փալիվան ըսպանէ, մնացէ խինդ. էն էլ տիւ կըսպանես. ետ կը տառնէք կիկէր։ Մի՛ վախենաք, մարթ չըկենայ ծե էրկու ախպորը վերէն։

98. Բաղտասար կաց պարէօվ արաց, կընաց մտաւ քեռաղաք։ Կընաց մայտան, տեսաւ, որ խինդ փալիվան չորս պիւլէօր կան կըկեան, ախպոր ըսպանեն։ Ախպէրն արնի մէջ մնացէ կայնած։ Բաղտասարը ծինը քշեց, գուռզըմ էթալ, իրեք փալիվան ըսպանեց. էրկուսը փախան։

99. Կընաց ախպոր մտա, արուն ախպոր աչքեր պռներ էր, թուր կը զանէր, կանչեց.—Սանասար մըզանի թուր։

---

1. Ցոյց տալ։

Ասաց.—Բաղտասար, տի՛ւ ես։

Ասաց —Նա՛։ Կընաց ախպօրը արընից քեաշեց տիւս, տա-տանէ օղացրեց, ախպօրը աչկերը պացուաւ։ ասաց.

—Ո՞ւր ա, խինգ վալիվան էլ մնացեր ա։

—Ես էնոնց ըսպանէր էմ, ասաց Բաղտասար։

Սանասարին տարաւ Գէօհար խանըմի մօտ։ Գէօհար խա-նըմին ասին պերին ինոնց մօր մօտ։

100. Սանասար ասաց.—Ախպէր, էս Գէօհար խանըմ տի՛ւ աս. էնի կեսխն[1] էր ձի տեր ըսպանել։

Բաղտասար ասաց.—Չէ՛, ես ինոր չեմ առնի. էնի էրկու տիր պարև կիրե քե։ Տիւ տառնես, կռիւն էլ տիւ էս արե։ ես կառնեմ էն Թակեաւորի ախչիկ, որը մենք վիշապից ազա-տեցինք։

101. Մէրը էրկու տղին վասակեց. Սանասար մենակ էլաւ էկաւ Արևելից Թակեաւորի մօտ, որ ինոր քեռխէրն էր։

Քեռխէրը եվ տեսաւ ինոր Թոռին, շատ խնտացաւ, ասաց.

—Որտի, դէ ասա տեսնեյնք, քեօ մէրը ինչրխ ա, քեօ ախպէր ինչրխ ա. որ սեղ էր կեացէ, Աչմու Թակեաւոր ինչրխ արաց. խրատ ծե կռիւ արաց, տիւ ուրիշ տեղ կռիւ խրատ ծե ա-րեր էս։

102. Սանասար, ինչ որ էնոր կլէօխ էկեր էր, ինոր քեռ-խօր ասաց մէյ-մէկ։

Քեռխէր Սանասարին ասաց.—Կաց մրա մե, մենք էլ քիւ վերէն խնդանայնք։

Սանասար ինոնց խաթր չը կոտրեց, մնաց ինոնց մօտ տարիմ։

Տառնայնք Բաղտասարի վերէն։

Դ.

103. Աչմու Թակեաւորի խաներ խորխուրթ արին, որ ի՞նչ անենք։

Խաներից մէկն ասաց.—Սանասար կեացէ, մնացէ Բաղտա-սար. ինոր ըսպանենք։

Մէկն էլ ասաց.—Մենք չընք կենայ ինոր ըսպանի. ինոր կը կանչենք ըստայ. էնքան կը խմացնեյնք, կը սանէյնք կը Թա-լեյնք մըչ էնա փոսին. փուշ, փալաշ ժողվենք վերէն, Թոխ մեռնի։

104. Կանչեցին Բաղտասարին խարնիս. ինչքան կինի պերին, մարթ չը խմաւ, զըմէն տուին Բաղտասարին։ Բաղտասար ասը-խօշցաւ, տարան Թալին փոսի մէջ, փուշ, փալաշ լցին վրէն։

1 Քիչ (ժամանակ) էր մնում

105. Մէկ օր էլ Սանասարը ուրա էկաւ ճիւր թափելու, նոր մտկի մէջ ասաց.—Ես իրիշկեմ յըմ ախպօր ամբ, տեսնայնք, ի՛նչպէս ա։ Իրիշկաց, ամբը մթներ էր, էլ լէօս չը կար ամբի մէջ, էլաց, էկաւ տուն։ Քեռխէր խաբցնեց, ասաց.—Սանասար, ընչի՞ կը լաս։

—Քեռխէր, յըմ ախպօր ամբը մթներ ա. ես ուէրթամ։

Ասաց.—Այ ջանըմ, վա՛յ կաց։ Քեռ ախպէր մկայ ըռահաթ նատէ ինոր մօր մօտ, կը խնդանայ. ուրա էլ մե խնդացիր։

106. Սանասար քեռխօր չը լսեց, էլաւ էկաւ մօր մօտ։

Մէր ասաց.—Ընչի՞ էտա ցեղ վռազ էկար։

Ասաց.—Մարէ, յըմ ախպօր ամբ մթներ էր, ես էնոր ապէօվ վռազ էկայ։ Մարէ, ո՞ւր ա Բաղտասար։

Ասաց.—Էսօր մէկ ամիս կայ, Բաղտասար Աջմու թաղեաւոր կանչեց խարսնիս, հըլա չիկե։ Դէ նատի ըռահաթի, խաց կի, քիւ ծինը տանենք զատ տայնք։

107. Ասաց.—Զէ, խաց չըմ ուտի, ծիուց էլ չըմ իկեայ տակ, յըմ թուր, յըմ գուռզ պի, ես ուէրթամ։

Մէրը ասաց.—Ես չըմ կենայ քիւ գուռզ պիրի, քիւ թուր պիրի։

Ասաց.—Մարէ, տիւ ծիու կլէօխ պռնի, ես տէրթամ պիրեմ։

108. Մէրը ծիու կլէօխ պռնեց, Սանասարը կնաց իպի ծինը, խեծաւ, կընաց քեռպքի մէջ, կան էկաւ, տեսաւ, որ ճոչ տեղմ, փուշ, փալաշ էտ տեղն ա. մէ քիչ կայնաւ, տեսաւ, որ կը պանցրանայ, կը ցածրանայ. ծիուց իջաւ, էտ փուշերը էթալ տէն, ասաց.—Ցըմ ախպէր ըսպանիր էն, խորիր էն էտ փշերի տակ. փշեր էթալ դէն, տեսաւ, որ գրուստ ինոր ախպէր փշերի տակ։ Ախպէր խանեց, իտի ծիյիւ վերէն, տարաւ տուն. պարկացուց շորերի մէջ, ախպօր մէջ շունչ կէր, ասաց.—Էրթամ կռուեմ, վախենամ յիմ ախպէր մեռնի, լեզուի ծէն չառնեմ. մնամ մրտ յըմ ախպէր, տեսնամ ինչրիս կըլնի, նոր էրթամ կռիւ։ Մնաց մինչև խլրտուն. սարխոշութիւն էթող ախպօրից, ախպէր էլաւ նստաւ։

109. Սանասար ասաց.—Ախպէր, ի՞նչ էլաւ քե, տիւ էտա ցեղ էլար։

Բաղտասար ասաց.—Ես անոշ քներ էր, տիւ ընչի՞ ձի քընիւց խանիք վե, էս անոշ շորերի մէջէն։

Սանասար ասաց.—Որ ես քե չը խանէր վե, տիւ կը մեռնէր։

—Ընչի՞ կը մեռնէր։

—Ապա քեզ խմացրիր էն, տարած էն, պարկացրած էն էն փոսի մէջ, փուշեր լցիր էն քիւ վերէն։

110. Ասաց.—Ե՛ս պիտի քե, թէ չես աւատայ, էրթայնք փշելի քեօմ, քէ շանց տամ, որտեղ քիւ կըլէօխ, ոտնէր ապած էն:

Ասաց.—Ա՛պա, որ էտա ցեղ ա, իլի էրթայնք քեսպաք, ա-ւիրանք:

Ասաց.—զէ իլի՛:

Էլան խաց կեբան, ծին խեծան, թուր, գուռզ առին, կեացին խատին քեսպաք:

111 Բաղատասար ասաց.—Ա՛խպէր, ախ շա՛տ զսխամ[1] էս, ծին, թուր տու ձի, ես խեծնեմ, ընկընեմ քեսպաքի մէջ, վիզեր կապեմ. ախ էլ գուռզով տու, քեսպաք պիր. պայց ախպէր, յիշուբ[2] կայ, որ թաղ որ ես կերթամ, էն թաղին մը գանի, շուր ես տիւս կեամ, նոր գար[3] էն թաղ: Էտա ցեղ անելով, քեսպաք տուն չը թողին, աւիրին, ծուխ մտեն կարէցին, ատուցան էկան մօր մտա: Մօրը, վարատապետին, խալպատին, ինոնց կընքատէրին առին, ատան Սրեբելից թակեաւորի քեսպաք:

112. Թակեաւոր էտա տեղ նորից ինոնց վուտակեց: Մէկ տարի մնաց, Սանատար ասաց.—Թեռխէր, ես մէ պան կը խնթրեմ քենէ:

Ասաց.—Ի՞նչ:

Ասաց.—Մէկ տեղ տաս մե, մէյհ չինենք մե տուն:

Ասաց.—Որտի, ես ապայ չունեմ. ես կը մեռնեմ, իմ թակեաւորութին ծե կը մնայ, կըլնի ծե տուն:

113 Ասաց.—Զէ, մէկ տեղ տու մե, թէ չէ կը թողնեմ կերթամ:

—Ապա որ էտացեղ ա, կընայ ցըմ խոպի մէջ կան արի, գո՛ր կուզես, էն տեղ շինի քեզ տուն:

Սանատար, Բաղատասար կեացին կան էկան, Սանայ տեղին խաւնան քեար պիրին, տունը շինին:

114. Էկան քեաղքից ուսթայ տարան, տուն շինի:

Ուսթէն տեսաւ քեարեր, ասաց.—Ես չը՛մ կենայ շինի:

Սանատար կընաց քեսպաք, ուրիշ մէկ ուսթայ էլ խպիս Ուսթէն տեսաւ ճոճ քեարեր, ասաց.—Սանատար, էս ի՞նչի տը շարենք. ես չը՛մ կենայ էս քեարեր իրար տայ:

Ապա ո՞վ կենայ:

Ուսթէն ասաց.—Մարթ չը՛կենայ իրար տայ:

Ապա ի՞նչի տը շարենք:

—Ես էլ չը՛մ կիտի:

115. Սանատար ասաց.—Դէ տիւ լարեր կապիր, տեղեր շիտակի, ձի ատա, ես քեար անեմ իրա տեղ: Էտա ցեղ էլ տուն շինեցին: Տաս տարի էտա տուն անջախ շինեցին: Պայց հաշիւը

---

1. Ուժեղ: 2. Զգոյշ: 3. Զարկել

չրկեայ, թէ քեանի ուսթայ էաս տան վերէն մեռաւ։

116. Սանասար, Բաղտասար կեացին քեռխօր մօտ, կաց պարով ասին, շնորհակալ էլան, որ էոքան տարի ինանց շախէր էր. ինանց շնած տան ծախան էլ քեռխէրն էր աւեր։

Քեռխօր, մօր, զրմէնին իրար խէս առին պերին ինանց թաժայ տուն շնախատուելիւ։

Սանասար ասայ —Քեռխէր, նատեանք, մինչև յիրիկուն նատեցին։

Քեռխէր ասայ. —Էրթանք ժամ ապօթք անենք։

117. Սանասար ասայ. —Քեռխէր, ապա ժամ մօռայիր էմ, չըմ շինէ։ որ տեղ ապօթք անենք.

Քեռիօր էլաւ ճամբու տրեց։ Թակեաւոր կընայ ուր սարէն։

Սանասար կնայ քեռաղաք, ուսթայ պիրեց, ինչպէս տնելը շինեց, էնտեղ էլ ժամ շինեց։

118. Էրկու տարի ժամը չինեց պրծաւ, կընայ կայնաւ ճամբէն վերէն, ով որ էկաւ, պռնեց իպի, ասայ. —Ցըմ տան անունը տրէք։

Մարթ չիմացաւ, ինչ ասէր։ Քեանի մարթ պէրեց էս տեղ, պերաններ փակուաւ, չիմացան ինչ ասէր։

Մէ օր հրէշտակ էլաւ խալիւոր մարթիւ պէս, էկաւ Սանասարի առչև։ Սանասար տարաւ ինորը տունը շանց տուեց, ասայ, —Պապի, մեր տան անունը ինչ կը տրնես։

119 Պապին ասայ. —Ես չըմ տեսնայ ծեր տուն քեանիմ ա, որ անունը տնեմ։

Ասայ. —Պապի, արի ես քե շլկեմ, մեր տան չորս պիլէօր կան կեամ, տիւ տես, նոր անունը տիր։

Շլկեց տան պիլէօր կան էկաւ։

Ասայ. —Էս Սասուն։

120 Ասայ. —Պապի մեր տան անուն մնայ Սասուն։ Ապա, պապի, մեր ժամու անուն ինչ կը տնես։

—Էրթայնք ժամ տեսնեյնք։

Կրնային ժամ սեսան։

Պապին ասայ. —Ի՞նչքան պա՞նցը ա. էս էլ Մարութայ Աստուածածին։

Սանասարն ասայ. —Լաւ, պապի, էս էլ էլաւ Մարութայ պանցը Աստուածածին. պէ տիւ էլ կընա։

ԴԱՒԻԹ—ՄՀԷՐ*.

121. Ընցաւ մէկ ժամանակ, Սանասարին Աստուած տուեց մէկ ազայ, Բաղտասարին՝ իրեք։ Սանասարի տղի անուն Մհէր տրին, Բաղտասարի տղեներաց՝ մէկի անուն Յէվան, մէկին՝ Վերդօ, միւսի անուն՝ Վարթան տրին ...։

122. Մհէր խօր ոժ առեց, էնոր խօր պռնաւորներ, որ պռներ էր Սասնայ մէջ, պաց էթող ...։

123. Բաղտասարի տղէն էր, պատիկ տղէն, որ անուն Վերդօ էր, ցաւառ էր, չառաջացաւ։ Ճոչ ախպէրն էլ, նա աստգաբաշխ էր, աստղէր կը ճանչնէր, էն էլ կընաց խբտ ուր աստղերի հաշուին. մնաց Սասնայ մէջ Մհէր, Յէվան։

124. Մարայ մելիքի կնիկ ... էլաւ Տաւիթ յէօրօխկեց Սասուն։ Մելիքը ինոր էրկու առաչի մարտեր, մէկի անունը Կլիճ-Բաթման, մէկի անուն՝ Քեամուռէ-Քեաշան, ինոնց ասաց.—Կը սանէք Բաթմանայ կէտի վերէն, թալէք ճրի մէջ խեխտուի, սառցէք էկէք ...։

125. Քեամուռէ-Քեաշան, Կլիճ-Բաթման ասին.—Տաւիթ, մենք կը խնթրէյնք մե մը թալի կեա, մե քեօ խօր մշակներ էյնք։ Քեօ խէր մեռաւ, նոր մեյհ կեացինք Մարա Մելիքի առջև ...։

126. Տաւիթը քընաւ, էրապի մէջ Մարութայ Աստուածածին էկաւ, ասաց Տաւիթին.—Քիւ թիւի վերէն եարայ կըլնի, չըվախենաս, տու տեղել, եարէն կը ժրի, եարի տեղ խաչ կըլնի։ էն տեղից մսէ խաչ պատրաստուաւ Տաւիթի աչ թիւին ...։

127. Զին ասաց Տաւիթին.—Մը վախենա, ինոնք խոզածին էն, քեանիմ տիւ ըսպանեա, չարա ըցկուամ։ յըմ ոտների տակ կը տրտրվեն ...։

128. Տաւիթը կայնաւ խորի պերան, թուր քեաշեց ասաց.
Կը յիշամ Մարութայ պանցը Աստուածածին,
Որ մսէ խաչ պատրաստեց Տաւիթի աչ թիւին.
Որ Տաւիթ թուր թալի, չէրթայ, քիւան ու քեամին 2 ...։

129. Տաւիթը կընաց Մշու Սուլթանին խաւնեց, Սուլթանին ասաց.—Ես քե կաւնեմ ...։

---

*. Այս ճիւղը, որ նոյնպէս Յ. Աւշեանն էր գրի առել. աւելորդ համարեցի ամբողջապէս տպագրութեան տալ, եւ միայն քաղուածք արի տամ

130. Մէկ օր Ընդու Եամանաբ թակեաւոլի ախճիկ՝ Խանդիւթ խանըմ թուխտ կրեր էր Տաւիթին.—Թէ ախ ինձի յախտեցիր, ինչ կուզես, որ տամ...:

131. Տաւիթ էլաւ վե, ծինը խեծաւ, մարթեր առեց, կընաց կռիւ:

Տաշալի մէջ տեսաւ էրկաթէ ուն անգուկ.

Ասաց ինքն իրան.—Էսա ձի Ջուրեելու[1] խամար էն կայնացուցէ:

Թուրը քեաշեց, ասաց.—Կը յիշամ Մարութայ պանցը Ասուածածին.

Մոէ խաչ պատրաստեցին Տաւիթի ուչ թիւին,
Որ Տաւիթ թուր թալի էրկաթին
Զէրթայ քիւն ու քեամին.
Թուրը էթալ ուունը կարեց.
Ուունը կալամ կալամի վերէն կայնեց:

132. Տաւիթ ասաց.—Ծեռը կոտրեր Տաւիթին,
Աչքը քեօռներ Տաւիթին, ոտը կոտրեր Տաւիթին,
Տաւիթը թուր չը թալեր, էրթեր քիւն ու քամին:

133. Որ էտա ցեղ ասաց, էլաւ կէօտ, ընգեաւ, էտա տեղ:
Մէկ ահաթ մնաց, քեամի էլաւ, կարած ուունը ընգեաւ տակ:

134. Էն կեախ ինոր կշտի մարտեր ասացին.—Տաւիթ, ախ ինչի՞ քե անիծեցիր, քիւ կարած ուուն ընգեաւ տակ:

Ասեցին,—Տաւիթ, ծեր ազկի մէջ Ասուծուց արուած ա,
Ինչ որ ասեն, կը կատարուի. քե օխնի, էլմ էլ կը ծրեա:

135. Տաւիթ ասաց.—Ծեռը կանչըներ Տաւիթին,
Աչքեր էէօտներ Տաւիթին,
Ոտներ ասպէներ Տաւիթին,
Կը յիշեմ Մարութայ պարցը Ասուածածին.
Որ լսի Տաւիթի խնթիրին...:

136. Էրկու տարուց յետև Տաւիթին մէկ ազայ կրլնի, անուն կը տնեն Մհէր. Տաւիթ ելի կերթայ ուր ազին տեսնայ, կիրիշկայ աչ ծեռին մէջ մէ կաթմ արուն կայ:

137. Տաւիթը էնտեղ կանիծի ինոր ազին, կասի.—Տիւ չարնաս, քեզնից ազայ չըլնի: Էտա ցեղ էլ կըլնի:

138. Տաւիթը կընիկ կառնի, կրպերի Ասոնայ ասուն: Պրկեա Մշու տաշտով որ ընցնի, Մշու Սուլթան կը կեայ առաչ կելի կանի: «Էտ խաչը», որ յէօրտիւմ ասէ, ինոր կը վառի, էլ չը կենայ Սուլթանի խետ կռիւ անի:

139. Պերին էտացեղ ասին. կեախակիկ[2] տարան կարմնջի վե-

---

1. Փարձելու։ 2. Գայանի։

լէն. Տաւիթը խարար չունէր։ Սամախօռի պղինձ շուռ տուին Տաւիթի վերէն, Տաւիթի կըլէօխ խաշուեց, մեռաւ։ Խանդիւթ խանըմ թոդեց կընաց Սասնայ տուն, Տաւիթի ծին, գուռզ, թուր կեծակին, Մշու Սուլթան առեց, տարաւ ինոր տարէն։

---

140 Արևելից թագաւորի աղջիկ.

Բնաւուն ճոզ ծամ — Սասնասար Բազտասար — թագաւորի աղջիկ

Մէր — ? Զէնով Յէօվան — Գեօհար. Վերդօ, Վարդան

Թլէօլ Տաւիթ — Խանդիւթ

Մէր

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

1. Յ. Աւչեանը հրատարակում է «Վաթան և Սասուն» անունով մի պատմուածք, որի յառաջաբանից մենք քաղում ենք Ջոջանց տան Սասմայ ծռերի վերաբերեալ ժողովրդական աւանդութիւններ, որ նա լսել է սասունցիներից։

2. Կիլիկիայում խռովութիւն է ծագում. այդ տեղից խոյս է տալիս «եօթն եղբայրներով մի ազգատոհմ», որ երկար թափառելուց յետոյ գալիս է Մուշ։ Երկու եղբայրը գնում են էրզրում, շատ հարստանում և հռչակ ստանում. սրբա տեսնելով հարբատահարող թուրքերին, դռաններսի շէմում մի շատ մեծ հոր փորեցին և եկողին այնուհետև հորի մէջ էին գլորում։ Մրդոն շարունակ դռան առաջ նստած էր լինում և պատահած տաճիկ հիւրին իր փոքրիկ եղբօրը՝ Գրգոյին յանձնելով՝ ասում էր. «Տղայ լաս, «թ ը լ Հ ո ր ի կ»։ Այս անունով էլ կոչւում են եղբայրներն ու իրենց տունը. հորը լցուելուց յետոյ՝ էշերը թարս նալելով և իրենց չարուխները թարս հագնելով—մի ժամանակ սասնեցոց թարս չարուխ էին ասում—գալիս են Մուշ, և յետոյ Սասունում մի գիւղ են հիմնում Թլլ-հորիկները, որ այժմեան Թլլորիկ կամ Տալորիկն է։

3. Այսոեզ շինում են մի մեծ փայտաձակ տուն. «Մի օր գերաններից մէկը ... ուժեղ ճռճռոցով կոտրուելով՝ քաշ է ընկնում, և ամենքը ... գոռում են.—Սի՛ն բերէք, սի՛ն ... Մդրոն, որ ամենից բարձրահասակն էր, ... ձեռքը վեր բարձրացրած գերանին դէմ տալով՝ ասում է. Ես «Մսա-սուն»։ Ամենքն էլ ասում են Մդրոն «մսա-սուն է, մսա-սուն», որից վայրը անուանւում է Մսա-սուն, այսինքն մսէ սիւն, որից ծագել է «Սասուն»։ Այս զրոյցի մասին մինչև իսկ երգում են.

Տունըմ շինինք դիտու բիրան, ջանիման, ջանիման.
Վրէն թալինք ջուխտմ դերան ջանիման, ջանիման.
Մէկն էր խոխի մէկ լը ծիրան ջանիման, ջանիման.
Խոխին կոտրաւ մնաց ծիրան ջանիման, ջանիման.

4. «Թորոսը Կիլիկիոյ իշխանական տոհմերից մէկի շառաւիղը լինելով՝ ԺԵ.-դ դարու կէսերում, Լևոն Զ.-ից յետոյ ... մի խումբ մարդկանց գլուխն անցած՝ վերջին անգամ հրաժեշտ տալով Կիլիկիային՝ հեռացաւ, եկաւ Սասուն։ ... Թորոսն է եղել դաւառիս իշխանն ու պետը ... ամենքին էլ հաւասարապէս դատել։ ... իսկ ժողովուրդը ... նրան մինչև այն աստիճան է յարգել, որ «Պապ» տիտղոսն է տուել և այն աստիճան սիրել, որ բոլորն էլ նրա գլխով են երդուել ու ասել—«Մըր պարու հրաւադ», Մըր խօր պարդա գլոխ»։ Եւ այսպէս երդւում են աւելի Խիզանցիք։

5. Այս աւանդութիւնը թուում է, թէ ուզում է Զոջանց տան Սասմայ Ծռերի Քեռի Թորոսին կապել Կիլիկեան Թորոսների հետ. որ մենք տարիներառաջ նախատեսել ենք։ (Արարատ. ամսագիր 1907 Դեկտեմբեր, էջ 869. Վաղարշապատ)։

ՀԱՅԿԱԶՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍՑԱՄԱՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

Ց Ա Ն Կ·

(Թուերը ցոյց են տալիս ոչ Ա. երեսները· այլ փոփոխակների անները)։

Ա. էջ 1—35։

Ամիպի կապէն. 6։
Ամլաթ քեռաղաք. 131.
— թու երկիր. 134, 136։
— թու սոլթան 135. տես Խլաթայ—։
Ակռփու քեար. 147։
Աստղիկ թագաւոր. 1. 2, 9։
—Սանայ. 8։
Բվէք ֆոնտայ. 120։
Բէք ֆոնտայ. 116, 117։
Դաւիթ. 47, տես Տաւիթ։
Թառլան Վէգօ, Վէքօ, Վիքէ. 1, 19, 41, 136, 140։
Թլէօլ Դաւիթ, Տաւիթ. 1, 27։
Խանդիւթ խաթուն. 1, 119. 126, 128, 130։
— խանում. 102–104, 108, 112, 117, 123–125։
Խլաթայ սոլթան Զմուս. 133. տ. Ամլաթու սոլթան։
Խոշապայ գեա. 68։
Ծովասար. 38, 84, 119, 141.
— րու Մարութ. 39, 82։
— րու վանք. 40։
— րու Մարութի վանք. 134։
Ծուռ Պաղտասար. 1։
Կապէն աթպին. 6։
Կաղոտ կող. 1, 123, 124։
— —դայ թագաւոր. 102—104. 113, 120, 127, 138։
Կիւլակ. տես ծիւտ Կիւլակ։
Կիւլիզար. 19։
— խաթուն. 1։
Կող Պախտին. 60, 64—66։
— Պահտին. 61։
Կոզ Պահտի. 58։
Հալապու քաղաք. 143, 145։
Զէնով Յովան. 1, 19, 32, 33, 35. 41, 46, 73. 80, 89, 99. 103, 104, 122. 123. 134, 136, 140։
Ծիւտ Կիւլակ. 1. 19։
Ծոչիկ Մհէր. 1։
Մարութ. 38, 42, 44, 48, 55, 83, 99. 118, 119, 122. տես Ծովասարու Մարութ։
— ի վանք. 54, 135, 136. տես Ծովասարու—, Ծովասարու Մարութի վանք։
Մելիք. 21. 24—29. 67, 68, 92, 93, 95—98, 100, 101. տես Մսրայ—։
Մհեր. 19—22, 32, 80, 83, 126—129, 135—143, 146, 147։
Մսրայ ասկեար. 81.
— աստղ. 69։
— գետ. 65։
— թագաւոր. 20, 48։
— խոյ. 69։
— ձի. 69։
— ճամբայ. 65։
— մելիք. 23, 29, 56, 61, 62, 66, 69։ 74, 81, 89, 90, 137։
— քաղաք. 32, 64։
Զրմուս. 131։
— սոլթան Խլաթայ. 133։
Յովան. 77. տես Զէնով Յովան։
Պաղտասար. 4, 7, 9—11, 15, 16, 18. տես Ծուռ—։
Պաղտատ. 121։
Պասրայ. 121։

Պարան Բվէք, Բէք. 116, 117, 120. տես Բվէք։
Պզտիկ Մհեր. 1։
Պշերկայ գաշտ. 68։
Պռօժ Բարան. 121։
Պռօշ Պարան. 116—118, 120։
Սանասար. 1, 4, 6, 8, 9, 10—16, 19։
Սառան խաթուն. 1, 4։
Սասուն. 8, 32, 65, 70, 71, 103, 123, 137, 145։
Սասնայ, Սասնոյ աջ. 136։
— սատ. 69։
— գեաւոր. 50. 57, 72։
— թագաւոր Ասաղիկ. 8։
— թագաւորութեն. 48։
— ձի. 69։
— Տաւիթ. 94, 112, 137։
— քաղաք, քեաղաք. 2, 20. 51, 52, 58, 60. 102։
Սինամ. 19, 22։
— խաթուն 1, 81։
Սիւռաթ, Սուռաթ խաթուն. 1, 10, 13։
Սփանայ սար. 145։
Վանայ գաշտ։
Վէգօ, Վէքօ, Վիքէ. տես Թառլան—։
Տաւիթ. 23, 24, 26, 27, 29—42, 45, 46, 52, 54, 55, 61, 62, 73—79, 81—83, 86—88, 90—102. 103—105, 107—118, 120—131, 133, 134, 137, 143։
Տղայ Դաւիթ. 1։
Փառուն ճօղ ծամ. 1։
Փեաչանց երկիր. 5. 9, 11—13, 15։
— թագաւոր. 2, 5, 9, 10, 18։
— քաղաք. 5։
Փարէկալ սար. 116, 119, 120, 123։
Փեամար Ֆէհրսի. 6։
Փիւռկու ճալալի. 6։
Ֆուրնտայ Բվէք, Բէք պարան. 116, 117, 120. տ. Բվէք։

Բ. էջ 37—101։

Արաղէն. 258։
Աթմանի գեօրտիկ. 161, 162, 174, 180։
Ասպարածին Մարութայ. 110։
Արճեշ. 258, 260։
Ահմու շահ. 293, 317։
Բարը Ֆրէնկի. 315, 317, 318, 334։ Տես Ֆրէնկի Բարը։
Բաբին. 123, 129. տ. Կուզ—։
Բաթմանայ Բիւզէն. 12, 50, 53։
Բանտը մահու. 269։
Բաւոի, Բաբին. 114, 115, 121, 123, 130, 136, 140. տես Կուզ Բաբի։
Բարձր Մարութայ Ասպարածին. 110։
Բիրկրի. 258, 260։
Բիւզէն. տ. Պաթմանայ—։
Գեօրծոթայ գաշտ. 261։
Դաւիթ. 1, 2, 4—7, 9—12. 14, 15, 17—19, 21—29. 33—37, 39, 42, 45—60, 62, 63, 67, 69—71, 73—78, 80, 81, 83—93. 95—100, 102, 104, 106, 107, 109—111, 113. 116—124. 127, 128, 132—135, 142, 144—146, 148—153, 158—161, 163—178, 180—189, 191, 193—199. 201—213, 215—221. 223—232. 234—237, 239—242, 244—257. 259, 261, 263, 265—270, 272—274, 276—281, 283, 284, 286—289, 291, 296, 297, 300—303, 305—311, 313, 315, 317, 320—337, 339—342, 347—351, 353, 354։

Իրանայ խուզ. 257։
Թուլան Դաւիթ. 174։
Խանդիւթ. 296, 298—301. 303—310. 313. 317, 321—324, 326, 344, 347, 349, 350, 353, 354։
— խաթիւն. 257, 271, 274—280. 283, 284, 286—288, 293, 314, 315. 328, 329, 342, 343։
— խանում. 295։
Խլաթ. 258, 260։
Խոյ. 258, 290, 355։
— այ քաղաք, քեպաք. 257, 270, 271, 317։
Կուզ Բատի. 113, 114, 125, 126, 128, 134, 135, 137, 139, 141—144. 148, 150. տես Բատի։
Մարութայ բարձր Ասպարածին. 110. 194, 209, 311. 331։
Մելքք, Մելիք. 5, 9, 11, 12, 14, 15—17, 19—21, 23, 24—33, 41—49, 51, 52, 54, 56. 60, 112—114, 128, 139—144, 146, 148—154, 156, 195, 199, 200, 202, 204—215, 217, 219—223, 230 . տ. Մաքրայ—։
Մեծ Դաւիթ. 1։
Մհեր. 329. 338—341. 344—349, 351, 352, 354։
Մշու դաշտ. 325—327. 330, 337, 338։
Մաքր. 1, 2, 5—7, 136, 145։
— քայ մելքք, մելիք. 1, 2, 7, 111, 116, 137, 159, 160, 171, 229։ Տես Մելիք։
Յէօվան 61, 69, 70, 73—76, 78, 79, 81, 83—85, 88—91, 95, 98, 99, 102, 103, 108, 116, 120, 156—158, 162, 163, 165, 166, 168, 171—173, 188, 190—194. 224, 226, 228, 231—235, 243, 244, 249, 252, 255. 315, 316։
Զինմաչինայ թագաւոր. 325։
Պաթմանայ կամուրջ. 55։
Պաթմանայ Բիւղէն. 54, 55, 58։
Պպաիկ Դաւիթ. 11։
Զիւջ Դաւիթ. 163։
Զոջանց տուն. 1։
Սիւ սար. 88, 92, 343, 345։
Սասուն. 1, 6, 7, 12, 53, 54, 60, 61, 113, 115. 122, 128, 129, 131, 137, 141, 143, 148, 154, 156, 174, 221, 232, 242, 246, 288, 291, 314, 317, 319—321, 336, 339, 341, 343, 354, 355։
Սիվ ջուր. 218, 220։
Վերդօ. 61, 120։
Փիւրկիկ ճալալի. 161, 162, 166, 167, 174։
Ֆրանկ, Ֆրէնկ. 50, 58։
Ֆրէնկի Բարը. 315,317,318,334։
Ֆրէնկիսատան. 50, 53, 55։

Գ. Էջ 103—123.

Արևելից թակեաւոր, 1։
Արևելք 101, 111, 140։
Աջմու թակեաւոր 1, 3, 5, 7, 9, 56, 62, 75, 101, 103, 106։
Բաղդասար 1, 13, 19, 25, 28, 31, 32, 34, 38, 39, 43, 44, 49, 50, 56, 57, 63, 71—73. 76—78, 81, 92, 95—100, 102—104, 106, 109, 111, 113, 116, 121, 123, 140։
Գեօհար խանում, 75, 77, 78, 86, 89, 99, 100, 140։
Գուրզն ի Գօրոզին, 27։
Գուրզն ու Գօրոզ, 29, 60։
Գօրոզ, 73։

Դաւիթ 121, 134։
Եամանաբ թակիաւոր 130։
Թլէօլ Տաւիթ 140։
Թուր կեծակի 27, 29, 59, 73։
Խանդիւթ խանում 130, 139, 140։
Կապուտ ծով 11, 23։
Կլիճ-Բաթման 124, 125։
Հնդու Եամանաբ թակիաւոր, 130. տես Եամանաբ։
Զէնով Յէօվան 140. տես Յէօվան, Յէվան։
Մարութայ Աստուածածին 120, 126։
— պանցր Աստուածածին 128, 131, 135։
Մհէր 121—123. 136, 140։
Մսրայ Մելիք 124, 125։
Մշու սուլթան 129, 138, 139։
Յէօվան 123, 121. տես Զէնով Յէվան, Յէօվան։
Զինըմաչինայ թակիաւոր 75, 77, 78, 84, 85։
Զոչանց տուն 1։
Զալալի քուռիկ. տես Քուռկու Զալալի։
Սասմայ ծոեր 1։
Սանասար 1, 19, 24—30, 32, 34—37, 40, 41, 43, 44. 48—50, 53—58, 63, 65, 67, 68, 70—73, 75—78, 81—88, 91, 94, 99—103, 105, 106, 108, 109, 112—118, 120, 121, 140։
Սասուն 113, 119, 120, 122—124, 138, 139։
Վարթան, Վարդան 121, 140։
Վիրդо, Վէրթо 121, 140, 123։
Տաւիթ 124, 126—132, 135—139։
Քուրկու Զալալի 27, 29, 61, 73։
Քեամուսէ-Քեաշան 124, 125։

Ցաւելուած.

Արարատ Ամսագիր 5։
Աւշեան Յարութիւն 1։
Գրգոյ 2։
Էրզրում 2։
Թըլորիկ, Թըլ-հորիկ 2։
Թորոս 4։
Լևոն Զ. 4։
Խիգան 4։
Կիլիկիա 2, 4։
Մուշ 2։
Մասուն 3։
Մգրոյ 3։
Մրդոյ 2։
Զոչանց տուն 1, 5։
Սասուն 1—4։
Սասմայ ծոեր 1, 5։
Վաղարշապատ 5։
Տալորիկ 2։
Քեոխ Թորոս 5։